- ձևավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ՝ խթանելով մասնավոր բիզնեսի ներգրավումը դեպի գիտություն և ապահովել այդ գիտելիքների նպատակաուղղված ներդրումը կրթության և տնտեսության տարբեր ոլորտներում,
- էապես ընդլայնել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցությունը,

Ելնելով նշված նպատակադրումներից, անհրաժեշտ է լուծել մի շարք կառուցվածքային և տարածքային խնդիրներ: Մասնավորապես, գիտության զարգացումը պահանջում է ինստիտուցիոնալ համակարգի նոր բարեփոխումներ: Իր գործառնական դերով կարևորվում է ՀՀ ԳԱԱ-ն, ինչպես նաև բոլոր գիտահետազոտական ինստիտուտները. այդպիսի ինստիտուտներ կան մի շարք նախարարությունների կազմում, որոնք մասնատված լինելով, հանդես են գալիս անկախ և թույլ օղակների դերում, այսինքն՝ համախմբման գաղափարը մղվում է առաջին պլան:

Համաձայն ԱՎԾ տվյալների ՀՀ նախարարություններին կից գործում են թվով շուրջ 35 գիտատեխնիկական աշխատանք իրականացնող կազմակերպություն [7]: Որպես դրանց գործունեության արդյունավետության բարձրացման ուղղություն կարելի է դիտարկել դրանց առնվազն մի մասի ընդգրկումը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կազմում: Արդյունքում այս կամ այն նախարարությանը անհրաժեշտ հետազոտությունները պետք է կիրականացվեն Ակադեմիայի կազմում գտնվող հետազոտական ինստիտուտներում (արդեն իսկ միավորված): Դա, մի կողմից, նախարարություններին կստիպի սերտ համագործակցել գիտահետազոտական ինստիտուտների հետ, և մյուս կողմից գիտական հետազոտությունների արդյունքները կվերածվեն նախարարությունների կողմից իրականացված քաղաքականության: Գիտահետազոտական ինստիտուտների ընդհանուր թիվն ունի կրճատման միտում, և 2005թ. առկա 102 ինստիտուտներից ներկայումս գործնականում մնացել է գրեթե կեսը: Նման միտումը պայմանավորված է առանձին գիտահետազոտական ինստիտուտներին հատկացվող ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև անձնակազմի և դրանց աշխատելու արտադրողականության հետ, որոնք կենտրոնացված կարգավորելն ավելի նպատակահարմար է:

Հայաստանում գիտության հիմնահարցերից է նաև գիտության տարածքային բաշխվածության գրեթե բացակայությունը կամ անհամաչափությունը: Այստեղ խնդիրներից գլխավորն այն է, որ առանձին մարզեր ներգրավված չեն հետազոտական աշխատանքների մեջ: Վերջինս հանգեցնում է նրան, որ մարզերում գիտական կադրերի պատրաստման դպրոցները պարզապես բացակայում են, իսկ մյուս կողմից հանգեցնում գիտական կադրերի ներքին միգրացիայի՝ մար-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

զերից Երևան տեղափոխվելուն: Մարզերում գիտությունը զարգացնելու համար գրեթե որևէ ծրագիր կամ աջակցություն չի իրականացվում: 2017թ. դրությամբ մարզերում են գտնվել թվով 72 գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններից միայն 10: Երեքական կազմակերպություն գործել է Կոտայքի և Արագածոտնի մարզերում, երկուսը՝ Շիրակում և մեկական՝ Արարատում և Արմավիրում:

Մնացած մարզերը չունեն գիտահետազոտական ինստիտուտներ: Պետական քաղաքականությունն այս առումով պետք է նպատակաուղղել նաև մարզերում գիտության զարգացմանը, քանի որ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմքում պետք է դրված լինի նաև գիտության տարածքային համաչափ զարգացման խնդիրը: Մյուս կողմից պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ մարզերում գիտության զարգացումը ինքնանպատակ լինել չի կարող և պետք է պայմանավորված լինի տնտեսության ճյուղային զարգացման առանձնահատկություններով: Այսպես, օրինակ՝ Սյունիքում կարող է հիմնվել հանքային և մետաղական հանածոների կորզման արդիական մեխանիզմների մշակման հետազոտական ինստիտուտ, Գեղարքունիքում՝ գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի ստացման, ձկնաբուծության և այլն: Իսկ այդ հետազոտական կենտրոնների բազայի վրա հետագայում արդեն կարելի է իրագործել ամեն մարզում մի տեխնոպարկ ունենալու ծրագիրը, որը համապատասխան մարզի համար կստեղծի նորամուծական հենքի վրա զարգացման հնարավորություններ:

Գիտատար արդյունաբերական քլաստերների ձևավորումը Հայաստանում անհրաժեշտ է սկսել ինստիտուցիոնալ բարեփոխումներից [2]՝ ձևավորելով այն կառույցների համակարգը, որոնք պետք է զբաղվեն գիտական քաղաքականության մշակմամբ, իրագործմամբ և գիտության զարգացման համար կրեն պատասխանատվություն: Ինստիտուցիոնալ համակարգը պետք է ապահովված լինի նաև այն ամբողջ իրավական բազայով, որի վրա պետք է կառուցվի և գործի գիտության համակարգը: Անհրաժեշտ է ստեղծել փոխկապակցված գիտական կազմակերպությունների միավորված համակարգ և դրանք միասնական կենտրոնից կառավարել՝ վերացնելով մասնատվածության բոլոր հիմքերը, ինչպես նաև ապահովել գիտության ապակենտրոնացում՝

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

մարզերում ստեղծելով մարզային գիտահետազոտական կենտրոններ: Կարևոր է նաև ստեղծել կապակցող կառուցակարգերի ողջ համակարգը գիտական հաստատությունների և արտադրական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների միջև, իսկ վերջինիս շուրջ նաև ամբողջացնել գիտական քլաստերի ձևավորման համար բացակայող տարրերը:

Գիտության զարգացման հիմքում դրվում է գիտության միասնականացման, գիտության զարգացման գերակայությունների և առաջնահերթությունների սահմանման խնդիրը: Գիտության զարգացումը ենթադրում է գիտության ոլորտի կառավարման հմտություններով օժտված մենեջերների (կառավարիչների) անհրաժեշտություն, ինչը լուրջ խթան կլինի ֆինանսական ռեսուրսների ներգրավման և դրանք առավել մրցունակ հետազոտական թիմերին տրամադրելու գործում:

Գիտության ոլորտում զարգացման հիմնական գերակայություններն են ոլորտի ֆինանսական ռեսուրսների ավելացումը և համակարգի կազմակերպչական բարեփոխումները: Մասնավորապես, գիտության ոլորտում ծրագիրը նպատակադրում է ավելացնել գիտությանը հատկացվող գումարները և գիտնականի աշխատավարձը հասցնել միջին աշխատավարձին: Իսկ գիտատար և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների և ծառայությունների բաժինը երկրի ընդհանուր ՀՆԱ-ի մեջ 10-15 տարվա ընթացքում պետք է դառնա գերակշռող՝ ներկայիս 0,25 տոկոսի դիմաց:

Հայաստանում գիտության զարգացման համար առաջնային օղակներից է գիտական գործունեության համար անհրաժեշտ զարգացած ենթակառուցվածքների ձևավորման խնդիրը. զարգացած հետազոտական լաբորատորիաները, նորամուծությունների մշակման կենտրոնները, տեխնոպարկերը կարող են մի շարք ծրագրեր իրականացնել, ինչպես նաև հանդիսանալ այն պլատֆորմը, որտեղ կներգրավվեն հեղինակավոր մասնագետներ, կիրականացվեն համատեղ գիտական ծրագրեր: Նման կենտրոնները պահանջում են ներդրումներ, ինչը ենթադրում է նաև պետության կողմից որոշակի աջակցություն:

Առաջավոր գիտահետազոտական կազմակերպությունների հետ համատեղ կոնսորցիումային ծրագրերի մշակումը պետք է լուծել երկու մոտեցումների միջոցով. նախ, անհրաժեշտ է ստեղծել նման ծրագրերով զբաղվող կենտրոններ, ինչպես նաև ներգրավել կադրեր, որոնք

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ունեն բավարար ունակություններ նման ծրագրեր իրագործելու, հայտեր կազմելու և միջազգային համագործակցություն իրականացնելու համար: Այս պարագայում լիարժեք կարող է միավորվել Սփյուռքի և հայ գիտնականների ներուժը:

Անհրաժեշտություն է առաջացել ստեղծել երկրում գիտատեխնիկական առաջընթացի և նորամուծական զարգացման քաղաքականություն իրականացնող կառույց, որը կհամակարգի գիտական հաստատությունների գործունեությունը, ինչը կնպաստի նաև գիտահետազոտական արդյունքների առևտրայնացմանը, կներգրավի վենչուրային հիմնադրամներ, տեխնոպարկեր և այլն: Նման կառույցին կարելի է պատվիրակել տնտեսության նորամուծական զարգացման ապահովման լիազորությունները, պատասխանատվություն ստանձնելով գիտություն-արտադրություն կապի ու համագործակցության, ըստ այդմ՝ նորամուծական զարգացման և արտադրանքի միջազգային մրցունակության համար:

Ժամանակակից գիտության և տեխնիկայի արդյունավետ զարգացումը պահանջում է գիտնականների և բոլոր շահագրգիռ անձանց համար առավել կատարելագործված հասանելիության հնարավորություններ գիտական շրջանակների թողարկած տեղեկատվության աղբյուրներից օգտվելու առումով: Ժամանակակից գիտության և տեխնիկայի ասպարեզում կարևոր է ընդգծել գիտելիքի և տեղեկատվության համատեղ օգտագործման և տարածման գործընթացների կարևորությունը: Յուրաքանչյուր համալսարան պետք է ունենա տեղեկատվական համակարգ, որում կպահպանվեն տվյալներ այդ կոլեկտիվներում իրականացվող գիտական նախագծերի մասին: Այդպիսի համակարգերի տվյալների բանկը ներառում է տեղեկատվություն, որն այդ համակարգի հետ անմիջականորեն կապված գիտական կոլեկտիվների աշխատանքի արդյունքն է: Միաժամանակ, գրադարանային կազմակերպությունների համակարգերը հնարավորություն են տալիս պահպանել տեղեկատվություն որոշակի ոլորտի գիտական հոդվածների, անձանց, թեմատիկ կատալոգների մասին: Անհրաժեշտ է նաև տարբեր աղբյուրներից տեղեկատվության կուտակման ավտոմատացում, ինչը ենթադրում է իրականացված գիտական հետազոտությունների տեղեկատվական համակարգերի տվյալների ինտեգրում:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գիտություն-տնտեսություն կապը

Պետք է նպաստել գիտության և արտադրության մեջ առկա խզված կապերի վերականգնմանը. յուրաքանչյուր արտադրական ձեռնարկության գործունեության առաջնային նպատակը պետք է լինեն նորամուծությունները, որոնք կարող են նպաստել զարգացման նոր մակարդակների ձեռքբերմանը: Այս իմաստով կարևոր նշանակություն է ստանում նոր ապրանքանիշների, նոր արդյունքների գրանցումը, ինչպես նաև արված գիտական նոր հայտնագործությունների արտոնագրումը և դրանց շուրջ տարվող առևտրայնացման քաղաքականության իրականացումը:

Երկրում գիտելիքահենք տնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի արդյունավետ գործող նորամուծական համակարգի ձևավորումը: Այստեղ հարկավոր են նաև որոշակի հստակեցումներ, ինչպես նաև մեխանիզմներ, որոնք մատնանշում են, թե նորամուծությունների ֆինանսավորման համար ինչ միջոցներ է հնարավոր ներգրավել, կամ ինչ ծավալներով և այլն:

Կարևոր է Հայաստանում ժամանակակից արտադրությունների կազմակերպումը, ինչն, իր հերթին, կբերի ստեղծված գիտական արդյունքների մրցունակության բարձրացման: Կարևորվում է նաև գիտական արդյունքների առևտրայնացման կենտրոնների ձևավորումը: Այս կենտրոնները պետք է մասնագիտանան երկու հարցում, այն է՝ հստակեցնեն՝ ինչ է անհրաժեշտ արտադրողներին, և մյուս կողմից այդ չափանիշները ներկայացնեն գիտնականներին, իսկ վերջում կատարեն միջնորդական ծառայություն և ապահովեն ստեղծված արդյունքների առևտրայնացումը:

Ամեն կերպ կխթանվի ՓՄՁ-ների նորամուծական գործունեությունը: Միաժամանակ, կարևորվում է արտադրության լոկոմոտիվ և գերակա ճյուղերի (քլաստերների) դիվերսիֆիկացիոն քաղաքականությունը, այսինքն՝ քլաստերների հիմնումը գիտության բազայի վրա, այնտեղ, որտեղ կա գիտական ներուժ, զարգացնելով այդ ոլորտը: Մյուս կողմից, անհրաժեշտ է խթանել ՓՄՁ-ների արտադրական գործունեությունը, քանի որ առևտրի ոլորտը Հայաստանի ՀՆԱ-ում տասը տոկոսից ավելին է, իսկ դա վկայում է զգալի չափով ՓՄՁ-ների առևտրային բնույթի գերակայության մասին:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մտավոր սեփականության կառավարման բնագավառում համակարգված բարեփոխումները միտված պետք է լինեն պաշտպանելու ստեղծվող մտավոր գործունեությունից ստացված արդյունքները և իրացնել դրանք առավել արդյունավետ կերպով Հայաստանում և արտերկրում՝ նպատակ հետապնդելով կատարելագործել օրենսդրական դաշտը, ազգային կադրերի պատրաստումը, ըստ տնտեսության ճյուղերի՝ գյուտարարական ակտիվության պարբերական հետազոտումը, մտավոր սեփականության մասին տեղեկատվության համակարգչային համակարգի ստեղծումը և համարժեք ենթակառուցվածքների ստեղծումը:

Քանի որ գիտության պետական հովանավորությունը նվազման միտում ունի, անհրաժեշտ է վճռականորեն կողմնորոշվել դեպի արտաքին պատվերները, մշակել մտավոր ներուժի միջազգային շուկա ներթափանցելու համալիր ծրագիր: Ներպետական կյանքում անհրաժեշտ է հարկային քաղաքականությունը դարձնել երկրի մտավոր, կրթական ներուժի պահպանման հիմնասյուններից մեկը: Հարկային խթանները պետք է դառնան հայրենի մտավոր ներուժի պահպանման ու ամրապնդման արդյունավետ միջոցը: Օրինակ, ԱՄՆ-ի հարկային օրենսդրության 171ա կետի համաձայն, մասնավոր անձանց և ֆիրմաներին թույլատրված է հարկման ենթակա եկամտից մասհանել այն ներդրումները, որոնք նպատակաուղղված են կրթության և գիտական հաստատությունների գործունեության ֆինանսավորմանը: Պետական եկամտահարկով չեն հարկվում այն գիտական և կրթական հաստատությունների եկամուտները, որոնք օգտագործվում են հօգուտ հասարակական շահերի: Հարկային արտոնություններ կտրվեն այն կառույցներին, որոնք գործնական օժանդակություն ցույց կտան գիտությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սամվել Հարությունյան, Գիտության ծերացման խնդիր ունենք, <https://news.am/arm/news/495065.html>
2. Jun Koo, Knowledge-based Industry Clusters: Evidenced by Geographical Patterns of Patents in Manufacturing August 1, 2005 Research Article,

<https://doi.org/10.1080/00420980500185249>; Roger Voyer, Knowledge-Based Industrial Clustering: International Comparisons, https://link.springer.com/chapter/10.1007/978-1-4615-5551-3_5

3. Առաջարկներ ՀՀ Կառավարության գործունեության ծրագրի վերաբերյալ, <https://www.aravot.am/2019/02/10/1017862/>
4. Մրցունակության համաշխարհային զեկույց, <https://www.panorama.am/am/news/2018/10/17>
5. <http://edu.am/index.php/am/news>
6. <https://www.ardarutyun.com/single-post/2018/10/24/2019>
7. ՀՀ ԱՎԾ, www.armstat.am

CONTEMPORARY CHALLENGES OF SCIENCE IN THE CONTEXT OF ENSURING ECONOMIC PROGRESS

Tatul Manaseryan

EU, Chair of Economics and Management, Doctor of Economics, Professor

Establishing competitive advantages on the basis of economy, science and high technology is a prerequisite for development. Development of science-based and high-tech industries can create qualitatively new factors for economic growth. In modern economy, competitive advantage is primarily based on knowledge-based products. One of the most important components of the state's socio-economic policy is the sphere of science that continues to be one of the preconditions of the country's sustainable development, preservation and reproduction of human capital. A certain decline is observed in terms of professional level of teachers, instructors and lecturers bringing the qualifications of trainers to international benchmarks.

Keywords: science, high tech, economic growth, intellectual security, knowledge-based economy, science aging, intellectual property

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ НАУКИ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ
ЭКОНОМИЧЕСКОГО ПРОГРЕССА

Татул Манасерян

ЕУ, кафедра Экономики и управления, д.э.н., профессор

Создание конкурентных преимуществ на основе экономики, науки и высоких технологий является предпосылкой развития. Развитие наукоемких и высокотехнологичных отраслей может создать качественно новые факторы экономического роста. В современной экономике конкурентное преимущество основано прежде всего на продуктах, основанных на знаниях. Одним из важнейших компонентов социально-экономической политики государства является сфера науки, которая продолжает оставаться одной из предпосылок устойчивого развития страны, сохранения и воспроизводства человеческого капитала. Определенный спад профессиональной компетенции наблюдается среди учителей, инструкторов и преподавателей. Необходимо поднять квалификацию преподавателей до уровня международных стандартов.

Ключевые слова: наука, высокие технологии, экономический рост, интеллектуальная безопасность, экономика, основанная на знаниях, старение науки, интеллектуальная собственность

Ընդունվել է փաշարոյթիս՝ 27.03.2019թ.

Գրախոսվել է՝ 15.04.2019թ.

**ՀՀ-ՈՒՄ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎՃԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ**

Սուրեն Գևորգյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, րնտր.դ., պրոֆեսոր
surengev@yahoo.com, +374 91 426472

Էկոհամակարգային ծառայությունների վճարման խնդիրը այսօր դարձել է խիստ արդիական, որպես էկոհամակարգի կառավարման և տնտեսական խթանների կարևորագույն գործիքներից մեկը:

Բնօգտագործման տնտեսագիտությունը փորձում է էկոհամակարգային ծառայությունները տեղավորել շուկայական մոդելի մեջ՝ հիմքում դնելով արդյունավետությունը: Իսկ էկոլոգիական էկոնոմիկան՝ հակառակը, ձգտում է ադապտացնել տնտեսագիտական ինստիտուտները էկոհամակարգային ծառայությունների ֆիզիկական բնութագրիչներին՝ առավելություն տալով էկոլոգիական կայունությանը և արդարացի բաշխմանը:

Աշխատանքում փորձ է արվում ներկայացնել այս երկու մոտեցումների որոշակի սկզբունքները:

Հիմնաբառեր. էկոհամակարգային ծառայություններ, վճարումներ, մեխանիզմներ, սկզբունքներ, լանդշաֆտներ, հատուկ պահպանվող տարածքներ:

Բնական էկոհամակարգերի խախտման ժամանակակից պայմաններում, հասարակության կենսապայմաններն ապահովելու համար արդիական է անվերապահորեն պահպանել դեռևս զոյություն ունեցող բնական լանդշաֆտներն ու էկոհամակարգերը և դրանց կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունները: Հետևաբար, Հայաստանի Հնարապետությունում և մասնավորապես բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում, էկոհամակարգային ծառայությունների ապահովման խնդիրը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ բուսական և կենդանական յուրաքանչյուր տեսակի եզակիությունը պայմանավորված է ոչ միայն գենոֆոնդով, այլև էկոհամակարգում դրանց ունեցած դերակատարությամբ:

Ներկայումս բնապահպանական հատուկ պահպանվող տարածքները դիտարկվում են որպես կայունության և էկոհամակարգային ծա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ռայությունների պահպանման և վերականգնման գոտիներ՝ տարածաշրջանային կենտրոններ, որոնց գործունեությունը միտված է ոչ միայն բնության հարստության պահպանմանը, այլև տեղական բնակչության բարեկեցության բարելավմանը, չքավորության նվազմանը և կայուն զարգացմանը: Դա թույլ է տալիս ձևավորել շրջակա միջավայրի ընկալման էկոհամակարգային համապարփակ մոդել, որի դեպքում բոլոր գործառույթները ուղղված են գործնական խնդիրների լուծմանը և համահունչ են երկրի սոցիալ-տնտեսական պայմաններին ու կարիքներին:

Բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում էկոհամակարգային ծառայություններից ստացված օգուտների բացահայտումը կարող է զգալիորեն նպաստել բնօգտագործման սահմանափակումներով պայմանավորված վեճերի մեղմացմանը՝ բնակչության համար ստեղծելով օրինական հիմունքներով բնական պաշարներից օգտվելու հնարավորություններ: Ընդ որում, բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոհամակարգային ծառայություններից ստացված օգուտներն անհրաժեշտ է արդարացի բաշխել՝ նպատակ ունենալով նպաստել համայնքների սոցիալական վիճակի բարելավմանը: Մյուս կողմից, օգուտների բաշխման և փոխհատուցման մեխանիզմների ստեղծումը, ինչպես նաև ծախսեր կրող ու օգուտներ ստացող համայնքների և անհատների որոշումը բավականին դժվար խնդիր է, որը կարող է լուծվել միայն էկոհամակարգային ծառայությունների խորը հետազոտության միջոցով: Էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունները հիմնականում ունեն ապահովող (սնունդ, մաքուր ջուր, թարմ օդ, վառելիք, հումք), կարգավորիչ (կլիմա, բնական աղետների և համաճարակների կանխում, ապաստաններ, կենսամիջավայր, էրոզիայի կանխում), մշակութային (գեղագիտական, կրոնական, գիտաճանաչողական, սոցիալական և հոգևոր արժեքներ, ավանդույթների ձևավորում, ռեկրացիոն ռեսուրսներ) և աջակցող (հողագոյացում, ֆոտոսինթեզ, ազոտի, ածխածին, թթվածին, ջրի շրջանառություն) նշանակություն:

Էկոհամակարգային ծառայությունները տնտեսական արժեք են ներկայացնում և պետք է ինտեգրվեն երկրի տնտեսության ընդհանուր համակարգում: Դրանց տրամադրման կամ պահպանման համար նախատեսված փոխհատուցման վճարները նոր մոտեցումներ են բնա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

պահպանության ոլորտում, որոնք խրախուսում են լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանությանն ուղղված ֆինանսական հավելյալ հոսքերի ստեղծումը: Էկոհամակարգային ծառայությունների դիմաց կատարվող փոխհատուցման վճարների մեխանիզմի ձևավորման ժամանակ պետք է հստակ նշվի էկոհամակարգային ծառայությունների տեսակը, սպառողների կողմից դրանց տրամադրվողներին ուղղվող միջոցների ծավալները, իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկություններն ու սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Հետևաբար, էկոհամակարգային ծառայությունների տնտեսական երկարաժամկետ ռազմավարությունը պետք է նպատակամղվի էկոլոգիապես արդյունավետ, ռացիոնալ, սոցիալապես արդարացի և տնտեսապես շահավետ խնդիրների լուծմանը:

Տեսականորեն բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոհամակարգային ծառայությունների պահպանման նպատակով ֆինանսական հիմնական աղբյուրներն են բնապահպանության ոլորտի պետական ծախսերը, աղտոտող կազմակերպությունների միջոցները, դոնոր կազմակերպությունները, բնօգտագործման վճարները, հողերի սեփականատերերը, հովանավորները և այլն:

Էկոհամակարգային ծառայությունների դիմաց կատարված վճարները հետագայում կարող են ձևավորել վերարտադրվող էկոլոգիական հիմնադրամներ՝ նպաստելով բնության պահպանության համար միջոցների տրամադրմանը, փոխհատուցման ֆոնդերի ստեղծմանը և կանաչ էկոնոմիկայի հիմքերի ստեղծմանը: Նշված մոտեցումները համահունչ են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. ապրիլի 25-ի «Բնապահպանական ոլորտի նորարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին» N¹16 արձանագրային որոշմանը:

ՀՀ-ում կան կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրեր և նախնական ոլորտային ռազմավարություններ կենսաբանության և էկոհամակարգային ծառայությունների կառավարման համար: Սակայն մինչ օրս դրանք չեն կարողանում դիմակայել տարբեր ոլորտների՝ անտառտնտեսության, արտավայրերի տնտեսության, գյուղատնտեսության, բնապահպանության և զբոսաշրջության հսկասական շահերից բխող մարտահրա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

վերներին: Միաժամանակ չկան տարբեր պետական և ոչ պետական դերակատարների և բնակչության խմբերի (օրինակ հովիվների և ֆերմերների) միջև համակարգվածություն: Բացի այդ գոյություն չունեն բավարար հավաստի տվյալներ տարբեր ոլորտների վերաբերյալ՝ պլանավորման և որոշումների կայացման գործընթացներին աջակցելու համար:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում ձևավորվող էկոհամակարգային ծառայությունների համալիր նշանակությունը, հատկապես նրանց կողմից կենսապայմանների ապահովումը, դեռևս չունի տնտեսական կոնկրետ գնահատում, ինչը հանգեցնում է էկոհամակարգերի խախտմանը և կենսաբազմազանության աղքատացմանը: Ներկայումս էկոհամակարգային ծառայությունների տնտեսական գնահատման մեթոդներն առավելապես կիրառվում են հանքահումքային, անտառային և ջրային ռեսուրսների, ինչպես նաև էկոզբոսաշրջության ոլորտներում:

Էկոզբոսաշրջությունը բնութագրվում է բնական միջավայրի վրա համեմատաբար թույլ բացասական ազդեցությամբ՝ հանդիսանալով էկոլոգիական գիտելիքների և տեղեկատվության տարածման, բնապահպանական և սոցիալ-տնտեսական համակարգերի միջև լարվածության թուլացման ու ինտեգրմանը նպաստող արդյունավետ միջոց: Այն ապահովում է բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համար միջոցների հավելյալ ներհոսք և ֆինանսական կայունության աճ: Էկոզբոսաշրջությունը միաժամանակ տեղական բնակչության համար կայուն եկամուտներ ստանալու, կենսամակարդակի, զբաղվածության և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման գործընթացներին մասնակցության աստիճանի բարձրացման գործունեղանակ է:

Մենք ընդունում ենք այն մոտեցումը, որ էկոհամակարգային ծառայությունները պարտադիր են, անփոխարինելի են և ցավոք վատ ընկալելի և, որ կարևոր է, նրանք ունեն իրական արժեք: Ու նաև հասկանալի է, որ ոմանք պետք է վճարեն այդ ծախքերը: Սակայն, վճարումները պետք է իրականացվեն շուկայական մեխանիզմի օգնությամբ և ամենակարևորը՝ դրանք պետք է լինեն տնտեսապես հիմնավորված: Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ շուկայական մեխանիզմները ոչ միշտ են լինում տնտեսապես հիմնավորված:

Հետևաբար, տնտեսագիտության առջև խնդիր է դրվում նախանշել այն ունիֆիկացված շրջանակները, որոնք կարող են համարժեք հաշվի առնել առանձնահատկությունները: Մասնավորապես մեր կողմից առանձնացվել են՝

1. Գնահատումը

Պետք է շարունակել մշակել էկոհամակարգային ծառայությունների գնահատման լավագույն մեթոդները և որոշել նրանց արժեքը տարբեր աստիճաններում: Միաժամանակ մենք չենք կարող սպասել որոշակիության և հստակության առկայություն, որպեսզի գործենք: Մենք պետք է սահուն շարունակենք գնահատման կատարելագործման գործընթացը, զարգացնելով այն օղակները, որոնք կարող են արդյունավետ օգտագործել այդ գնահատականները:

2. Փոխկապակցվածությունը

Զգալի էկոհամակարգային ծառայություններ հանդես են գալիս արտադրանքի, ապրանքի տեսքով համատեղ արտադրության գծով (կամ էլ հակառակը) և յուրաքանչյուր ծառայության տեսակարար ցուցանիշը փոփոխման է ենթարկվում մի համակարգից մյուս համակարգ, մի տեղանքից մյուսը: Սակայն մենք պետք է դիտարկենք ծառայությունների ողջ շրջանակը և նրանց փոխկապակցվածության բնութագրիչները, որպեսի կանխարգելվի կեղծ խթանների ստեղծումը և առավելագույնս օգտագործվի հասարակության համար օգուտները:

3. Մասշտաբների (չափերի) համաձայնեցումը

Էկոհամակարգային ծառայությունների կառավարման համար տարածային և ժամանակավոր չափերը պետք է համաձայնեցվեն էկոհամակարգային ծառայությունների հետ: Այդ նպատակով նպատակահարմար է փոխհամաձայնեցում տեղական, ռեգիոնալ և գլոբալ ինստիտուտների հետ կարճաժամկետ, միջին-ժամկետ գործունեության հետ: Դրանց նպատակը պետք է լինի ստեղծել տեղեկատվական բազա բոլոր օղակների գծով, հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի ծախսերը, օգուտները և արդյունքները:

4. Սեփականության իրավունքը

Էկոհամակարգային ծառայությունների սեփականության իրավունքի համապատասխան ռեժիմի սահմանումը կարևոր է այդ ծառայությունների արդյունավետ և արդարացի վճարման տեսանկյունից: Սակայն, հաշվի առնելով հասարակական ապրանքների էությունը և

յուրահատկությունը զգալի թվով էկոհամակարգային ծառայությունների գծով մենք կարող ենք կիրառել կամ գործող կարգը մասնավոր սեփականության նկատմամբ՝ փոխելով սեփականության իրավունքի ձևը, կամ էլ մշակել սեփականության իրավունքի համակարգ, որը կարող է կիրառվել էկոհամակարգային ծառայությունների գծով առանց մասնավորեցման: Օրինակ, ընդհանուր օգտագործման ռեսուրսների լիազորագրման կառավարման մեխանիզմի կիրառումը ընդհանուր օգտագործման ռեսուրսների գծով դրա իրացման արդյունավետ ձևերից մեկն է:

5. Բաշխման խնդիրները

Ծախսերի և օգուտների վերաբաշխումն անհրաժեշտ է մանրակրկիտ և խորությամբ հաշվի առնել: Այս համակարգը պետք է պլանավորել այնպես, որ դրա մեջ ընդգրկվեն քիչ, թույլ ապահովվածները, քանի որ նրանք մեծ չափով կախված են ընդհանուր օգտագործման էկոհամակարգային ծառայություններից: Մասնավորապես, հարուստ երկրները պետք է պաշտպանված լինեն անվճար մասնակիցների խնդրից, և դրա փոխարեն վճարեն այն ծառայությունների համար, որոնք ստանում են կենսաբազմազանության և էկոլոգիապես արդյունավետ էկոհամակարգերից առավել թույլ արդյունաբերական տեսանկյուններից զարգացած երկրներից:

6. Կայուն ֆինանսավորում

Կայունություն ապահովելու նպատակով արտադրողներին ծառայություններ մատուցելուց վճարելիս և մատուցվող ծառայությունները շարունակելիս, կամ էլ մասնավոր հողի սեփականատերերին վճարելիս, կարելի է ներգրավել ներդրումները:

7. Կառավարման հարմարվողականությունը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միշտ էլ առկա է զգալի չափով էկոհամակարգային ծառայությունների անորոշություն: Դա պայմանավորված է մոնիտորինգի, արժեքի որոշման և կառավարման ոլորտների որոշակի բացթողումներով: Դա բավականին բարդ է, քանի որ անընդմեջ հավաքել անհրաժեշտ տեղեկատվությունը, այն ինտեգրացնել ուսումնասիրման և կատարելագործման նպատակով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է գնահատել առկա ազդեցության աստիճանը և մշակել նոր համակարգեր փորձարարության

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

նպատակով, որոնց օգնությամբ հնարավոր է առավել արդյունավետ քանակապես որոշել բոլոր ցուցանիշները:

8. Քաղաքականությունը և կրթությունը

Էկոհամակարգային ծառայությունների վճարման համակարգի իրացման սահմանափակման առանցքային երկու գործոններից մեկը դա ընդհանուր կրթությունն է, թե ինչպես է աշխատում համակարգը և քաղաքական կամքի առկայությունը: Այս երկու սահմանափակումները կարելի է հաղթահարել նպատակասլաց կրթա-տեղեկատվական միջոցառումների օգնությամբ, հստակորեն տարածելով, տեղեկացնելով հաջողությունների և անհաջողությունների տվյալները, մատուցելով հասարակությանը և համապատասխան պետական կառույցներին:

9. Մասնակցությունը

Բոլոր շահագրգիռ կողմերը (տեղական, ռեգիոնալ, գլոբալ) պետք է իրենց մասնակցությունը ունենան էկոհամակարգային ծառայությունների վճարման մեխանիզմի մշակմանը և իրացմանը: Շահագրգիռ կողմերի ամբողջական տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը կնպաստեն կանոնների ճանաչման կայունությանը, որոնք էլ հենց որոշում են համապատասխան պատասխանատվությունը և այն կարող է արդյունավետ իրականացվել:

10. Քաղաքականության հետևողականությունը

Էկոհամակարգային ծառայությունների համակարգն առավել արդյունավետ է, երբ նրանք կազմում են քաղաքական միջոցառումների միասնության համաձայնեցված բաղադրիչը, որը կիրառելի է համակարգի կառավարման տեսանկյունից: Նրանք փոքր հավանականությամբ են աշխատում, երբ այլ քաղաքական գործիքները հակասական խթաններ են ներկայացնում: Օրինակ, ջրի, էներգիայի օգտագործման սուբսիդավորումը, կամ էլ, երբ օրենսդրությունը, որը կարգավորում է վերաբաշխումը, ճկուն չէ:

Այսպիսով, ներկայացվեցին էկոհամակարգային ծառայությունների կարճ, սկզբունքային մոտեցումները: Իհարկե, կան նաև այլ լրացուցիչ բնորոշումներ, չափորոշիչներ, որոնք բխում են տվյալ երկրի, ռեգիոնի էկոհամակարգային ծառայությունների առանձնահատկություններից:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Օգտագործված գրականության ցանկ

1. Էկոհամակարգային ծառայությունները Հայաստանում. ՀՀ կառավարության և տարբեր կազմակերպությունների կողմից 2011-2017թթ. Ընթացքում իրականացված գործողությունների ամփոփ նկարագիր: Նանե Շահնազգարյան, Աշոտ Հարությունյան – Երևան 2017
2. Экологическая оценка и экологическая экспертиза. О.М. Черп, В.Н. Виниченко и др. Москва – 2011г. “Социально-экологический Союз”.
3. Ariely, D. Bracha, A., Meier, S. 2009. Doing good or doing well? Image motivation and monetary incentives in behaving prosaically. *America Economic Review* 99, 555.
4. Daly, H, Farley, J. 2010. *Ecological Economics: Principles and Applications: 2nd edition*. Island Press, Washington, DC.
5. Kemkes, R.J., J. Farley ad C.J. Koliba. 2010. Development when payments are an effective policy approach to ecosystem service provision. *Ecological Economics* (this issue).
6. Norgaard, R.B. 2010. Ecosystem services: from eye-opening metaphor to complexity blinder. *Ecological Economics* 68, 1219-1227.
7. Vatn, A. 2010. An Institutional analysis of payment for environmental services. *Ecological Economics* 69, 1245-1252.

ПРИНЦИПЫ ФОРМИРОВАНИЯ МЕХАНИЗМА ОПЛАТЫ УСЛУГ ЭКОСИСТЕМЫ В РА

Сурен Геворкян

ԵՄ, կաֆեդրա Էկոնոմիկա և սարգարման, ժ.ճ.ն., պրոֆեսոր

Փառքի շարժիչները էկոսիսթեմի ծառայությունները դառնում են ավելի պոպուլյար, որպեսզի կառավարվեն էկոսիսթեմի ծառայությունները՝ օգտագործելով էկոնոմիկական խթանիչները: Երկրի էկոնոմիկայում էկոսիսթեմի ծառայությունների մատչելիությունը բարձրացնելու նպատակով կառավարության և տարբեր կազմակերպությունների կողմից 2011-2017 թվականներին իրականացված գործողությունների ամփոփ նկարագիրը ներկայացվում է:

Էկոնոմիկայում էկոսիսթեմի ծառայությունների մատչելիությունը բարձրացնելու նպատակով կառավարության և տարբեր կազմակերպությունների կողմից 2011-2017 թվականներին իրականացված գործողությունների ամփոփ նկարագիրը ներկայացվում է:

услуг экосистем, отдавая приоритет экологической устойчивости и справедливому распределению, и он требует трансдисциплинарного подхода.

В данной статье рассматриваются оба подхода и представляются некоторые инструменты за платежи услуг экосистем.

Ключевые слова – сервисы экосистем, платежи, механизмы, принципы, ландшафты, специально охраняемые территории.

THE PAYMENT TOOLS OF ECOSYSTEM SERVICES IN THE REPUBLIC OF ARMENIA

Suren Gevorgyan

EU, Chair of Economics and Management, Doctor of Economics, Professor

Nowadays, the problem of the payment of ecosystem services has become popular as one of the tools of ecosystem management and economic motivations. The natural resources economics is trying to put ecosystem fees into the market model by focusing on efficiency.

On the other side, ecological economics seeks to adapt economic institutes to the physical characteristics of ecosystem services by prioritizing ecological stability and justified distribution.

In this article, several principles of the two approaches are presented.

Keywords - ecosystem services, payments, mechanisms, principles, landscapes, specially protected areas.

Ընդունվել է տպագրության՝ 31.03.2019թ.

Գրախոսվել է՝ 19.04.2019թ.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԲՈՒՆԵՐՈՒՄ

Արմեն Ճուղուրյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, ԿԻՄ.Գ., ԿրոՖեսոր
jarmen1@yandex.ru, +374 95 097170

Կրթական ծառայությունների մատուցման շուկայում ներկայումս մրցունակ են դառնում այն բուհերը, որոնք լուրջ ուշադրություն են դարձնում շրջանավարտների կարիերայի նախագծման կառավարմանը: Այսպես հաջողություն են արձանագրում այն բուհերը, որոնք կառավարման մեկ համակարգում ներդաշնակեցնում են համալսարանական փարբեր սփորաբաժանումների գործունեությունը, դրանք թիրախավորելով շրջանավարտի աշխատանքի անցնելու սպասումների բավարարմանը: Այս առումով, կարևորվում է շրջանավարտների կարիերայի նախագծման կառավարման արդյունավետության հատուկ ցուցիչներով պարբերաբար գնահատումը բուհի վարչակազմի կողմից:

Հիմնաբառեր. շրջանավարտների միություն, կարիերայի կենտրոն, մասնագիտական հմտություններ, գործատուի պահանջներ, կարիերայի կառավարում:

Ավանդաբար, մասնագիտական կրթական ծրագրերում կարևորվել է գիտելիքի, իսկ այսօր արդեն, շրջանավարտի հմտությունների և կարողությունների ձևավորումը: Սակայն, դրան զուգահեռ, դեռևս լուրջ ուշադրություն չի դարձվում շրջանավարտի կարիերայի ընթացքի կառավարմանը: Իր ուսումնառության ընթացքում ուսանողը առավելապես կենտրոնանում է ակադեմիական գործունեության վրա, բնավ ուշադրություն չդարձնելով բուհն ավարտելուց հետո իր կարիերայի նախագծմանը: Մյուս կողմից, գործատուն նույնպես փորձում է հնարավորինս չմիջամտել անհատի ուսումնառությանը, պասիվ դիրքորոշում ունենալով համալսարանների նկատմամբ և սպասելով, թե երբ պիտի շրջանավարտը մտնի աշխատաշուկա և այնուհետև աշխատանքի անցնի իր մոտ:

Գործատուի կողմից կրթության ակադեմիական մասնաբաժինը գերակշռող չի համարվում շրջանավարտի համար: Մասնագիտական գիտելիքներից բացի, չափազանց կարևորվում են աշխատանքային միջավայրում հավասարակշռված, կողմնորոշվելու, հարիր վարքագիծ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

դրսևորելու, հաղորդակցվելու, ժամանակին և հիմնավոր որոշումներ կայացնելու ունակությունները: Ուստի ներկայումս համալսարանների առջև խնդիր է դրվում վերանայելու կրթական ծառայությունների մատուցման ուղղությունները այնպես, որ դրանով ամրապնդվի «գործատու-բուհ» կամուրջը, և հաշվի առնվեն աշխատաշուկայում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունները:

Համալսարանական կրթության առանձնահատկություններից է ուսումնառության երկարաժամկետությունը: Չորսից-վեց տարվա տևողությամբ բարձրագույն կրթությամբ մասնագետի պատրաստման ընթացքում աշխատաշուկայում էական փոփոխություններ են տեղի ունենում, և ուսանողի համալսարան «մուտքից-ելք» ժամանակահատվածում որոշակիորեն «հնանում են» ուսումնական ծրագրերը: Նման իրավիճակներում աշխատանք գտնելու հնարավորությունը բուհի շրջանավարտների համար ընդլայնվում է, երբ համալսարանները կիրառում են «խնամակալների ինստիտուտը»:

«խնամակալների ինստիտուտը» ենթադրում է գործատուի ակտիվ գործունեություն բուհական համակարգում, երբ արդեն իսկ ուսումնառության երկրորդ կամ երրորդ տարիներից գործատուն բուհական լսարաններից ընտրում է լավագույն ուսանողներին, նրանց անվանական կրթաթոշակ է տրամադրում, անգամ միջամտում ուսումնառության ծրագրի բարեփոխումներին այնպես, որ հաջորդիվ ունենա այն շրջանավարտին, որի մասնագիտական հմտություններն ու կարողությունները ընդունելի են դառնալու իր համար:

Այս առումով, բուհերը պետք է շահագրգիռ լինեն գործատուների՝ կրթական ոլորտին մասնակցության հարցում և նախաձեռնող լինեն, որ վերջիններս ավարտական կուրսերում ընտրեն լավագույն ուսանողներին՝ հետագայում աշխատանք առաջարկելու նպատակով: Գործատուն, քաջատեղյակ լինելով մասնագետների պատրաստման գործընթացին, պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերի ոչ միայն ուսումնական ծրագրերի բարելավման գործում, այլև իր «ներկայությունն» ապահովի կրթական ծառայությունների ոլորտում: Դրա իրագործման հնարավոր ճանապարհներն են՝ գործատուների կողմից լավագույն ուսանողներին խրախուսական կրթաթոշակների նշանակումը, պրակտիկաների կազմակերպումը, համալսարաններում պրոֆիլային ուսումնական ստուդիաների և ուսուցման կենտրոնների ձևավորմանը աջակցումը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մյուս կողմից, գործատուները աստիճանաբար գիտակցում են, որ առավել արդյունավետ է իրենց բաժնեմասով ռեսուրսներ ծախսել համալսարաններում կրթական ծրագրեր իրականացնելիս, քան գնալ աշխատանքի ընդունված բուհի շրջանավարտների վերապատրաստման ճանապարհով: Օգտվելով նման իրավիճակից, դոկտորանտուրայի շրջանավարտը պետք է սերտորեն համագործակցի գործատուների հետ, նպատակ ունենալով աշխատանքի անցնելու կրթությունն ավարտելուց անմիջապես հետո:

Մագիստրատուրայի շրջանավարտը, դեռևս որպես դոկտորանտուրայի դիմորդ հանդես գալով, պետք է համոզմունք ունենա, որ տվյալ մասնագիտության գծով պահանջված է լինելու աշխատաշուկայում: Այս առումով, Բոլոնիայի գործընթացի ներկա փուլում էապես ուշադրություն է դարձվում ուսումնառության թիրախավորված վերջնարդյունքերին կրթության կազմակերպմանը, երբ կրթությունը ամբողջովին հասցեագրվում է աշխատաշուկայի պահանջներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԲԿԵՏ տարածքում բարձրագույն մասնագիտությամբ շրջանավարտների գործազրկության շարժառիթների շարքում, տնտեսական ճգնաժամներից բացի, կարևոր պատճառ կարող է հանդիսանալ ուսումնառությամբ ընթացքում մասնագետի հմտությունների և կարողությունների անհապատասխանությունը՝ գործատուի պահանջներին: Այս առումով, համալսարանները պետք է ձգտեն հնարավորինս ուսումնառության վերջնարդյունքներն ուղղորդել մասնագետի այն հմտություններին և կարողություններին, որոնք պահանջվում են մասնագիտական կրթական բարձր մակարդակներում:

Եվ խնդիրը միայն այն չէ, որ շրջանավարտ մասնագետը կարող է չունենալ բավարար հմտությունների կամ կարողությունների ընդգրկուն շրջանակ, և դրանով իսկ, պահանջված չլինել գործատուի կողմից: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ կրթության ընթացքում ձեռք բերած մասնագիտական հմտությունների լայն շրջանակը չի բավարարում գործատուին, քանի որ այն «գերհագեցած է» և որոշակիորեն կիրառելի չէ աշխատանքի ընթացքում: Եվ ստացվում է այնպես, որ այդ պարագայում դոկտորանտուրայի շրջանավարտները գործատուների կողմից գնահատվում են «գերորակավորված» և արդյունքում աշխատանքի չեն անցնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արևմտյան Եվրոպայի

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

համալսարանական գործազուրկ շրջանավարտների շրջանում գործատուի համար «գերորակավորում» ունեցող երիտասարդ մասնագետների տեսակարար կշիռը տատանվում 14-35% միջակայքում: [1]

Այս առումով հետաքրքիր լուծումներ են առաջարկվում Շվեդիայի համալսարաններում: Այսպես, Ստոկհոլմի Թագավորական տեխնոլոգիական համալսարանում դոկտորանտուրան կազմակերպվում է երկու փուլով: Առաջին փուլի շրջանավարտները, որոնք սովորում են երկու տարի, ստանում են դոկտորի առաջին աստիճանի գիտական կոչում և կարող են մահայն աշխատել ինդուստրիալ շուկան սպասարկող գիտահետազոտական կառույցներում: Սակայն, եթե նրանք ցանկանում են դասավանդել և հետազոտական աշխատանք կատարել համալսարաններում, ապա ևս երկու տարի պետք է սովորեն դոկտորանտուրայում, պաշտպանեն ատենախոսություն և ունենան դոկտորի ավելի բարձր որակներ:

Հայաստանի Հանրապետությունում աշխատաշուկային միտված բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման նման ճկունություն չի ցուցաբերվում: Ավելին, ըստ պաշտոնական վիճակագրության, վերջին տարիներին գործազուրկների մեջ առավել մեծ թվաքանակ են զբաղեցնում բարձրագույն կրթությամբ անձինք (տես աղյուսակ 1), որոնք ունեն կրթական ցենզի բարձր մակարդակ և իրենց մասնագիտական հմտությունների ու կարողությունների որակով գերազանցում են գործատուների պահանջմունքների մակարդակը, և վերջիններիս կողմից գնահատվելով «գերորակավորված», պարզապես աշխատանքի առաջարկ չեն ստանում:

Աղյուսակ 1

«Հ-ում գործազուրկներն՝ ըստ կրթական ցենզի (հազ. մարդ) [2]

Կրթական ցենզը	Տղամարդ		Կին	
	2016	2017	2016	2017
Բարձրագույն, հետրուիական	29.2	31.7	31.4	33.6
Միջին մասնագիտական	20.1	26.9	29.2	16.3
Նախամասնագիտական	5.9	7.4	2.2	1.9
Միջնակարգ	54.6	54.4	37.9	37.9
Հիմնական	7.0	6.7	2.5	2.2
Տարրական	0.2	0.0	0.1	0.0

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Այս առումով, կարծիք է հայտնվում, որ չնայած ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի որոշակի ձեռքբերումներին, իրականացված բարեփոխումները հիմնականում դեռևս առնչվում են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական ծրագրերի բովանդակությանը և որակին: Դրանք, իրենց հերթին բերում են նրան, որ կրթական համակարգը, ընդհանուր առմամբ, դեռևս շարունակում է «կտրված» մնալ աշխատույակայից և ամբողջովին հաշվի չի առնում գործատուների պահանջները: Մասնագիտական կրթական ծրագրերը, հաճախ գերհագեցած են լինում շրջանավարտներից պահանջվող հմտություններին ու կարողություններին ուղղակիորեն չառնչվող դասվանդվող առարկաներով, կամ էլ չեն ընդգրկում արդիական այնպիսի առարկաներ, որոնք կգարգացնեին այսօրվա շրջանավարտի կոմպետացիաները՝ հասցեագրված գործատուի պահանջներին:


Կրթական գործընթացի կազմակերպման հարթությունում ակընհայտ է մարդկային գործոնի կարևորությունը: Բազմաթիվ են օրինակները, երբ առկա են բավարար տեղեկատվություն, հնարավորություններ, սակայն ուսանողներն ու դասախոսները չեն օգտվում, կամ չեն ցանկանում օգտվել դրանցից: Հետևաբար, համալսարանները հրատապ անցում պետք է կատարեն ուսումնառության վերջնարդյունքների հենքով կրթության կազմակերպմանը, մասնագիտական կրթական ծրագրերում հստակ նշելով՝ թե որ առարկան ի՞նչ չափով և ինչպե՞ս է առնչվում շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

Այս ճանապարհով հնարավոր կլինի բեռնաթափվելու ուսումնական ծրագիրը գերծանրաբեռնող «անուղղակի» առարկաներից՝ փոխարենը ուսումնառության գործընթացում ընդգրկելով աշխատաշուկայի պահանջարկը բավարարող վերջնարդյունքներով նոր առարկաներ: Ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումը աշխատաշուկայի պահանջներին մեծապես կբարձրացնի մասնագիտական կրթական համակարգում բարեփոխումների արդյունավետությունը:

Կարևոր ցուցանիշ է համարվում նաև բուին ավարտելուց հետո շրջանավարտի՝ աշխատանք գտնելու տևողությունը, որը ԲԿԵՏ-ում միջինը կազմում է 4 ամիս և ըստ երկրների ունի հետևյալ բաշխվածությունը (գծապատկեր 1):

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գծապատկեր 1 Համալսարանն ավարտելուց հետո շրջանավարտների աշխատանքի անցնելու տևողությունը (ամիսներ) [4]



Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական բարձրագույն կրթության երրորդ աստիճանի շրջանավարտները հիմնականում իրենց կարիերայի աճը տեսնում են համալսարանական համակարգում, համալրելով բուհերի պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարքերը: Նրանց փոքր մասն ատենախոսության պաշտպանությունից հետո շարունակում է կարիերայի աճը գիտահետազոտական կառույցներում կամ պետական գերատեսչական մարմիններում: Պատճառն այն է, որ դեռևս աշխատավարձի տարբերակումը կրթական ցենզերի միջև մեր երկրում այդքան էլ զգալի չէ, և գիտական կոչում ունեցող անձինք նախընտրում են դասախոսական աշխատանքը: Սակայն, միջազգային շուկայում շրջանավարտ դոկտորները չեն խուսափում արդյունաբերական շուկայում աշխատանքի անցնելուց, քանի որ այնտեղ գործատուների կողմից գնահատվում են նրանց առաջնորդության մասնագիտական հմտությունները:


Ինչ վերաբերում է ՀՀ բուհերի բակալավրիատի շրջանավարտներին, ապա նրանք իրենց ուսումնառության ընթացքում գրեթե չեն առնչվում կարիերայի նախագծման խնդիրների հետ և ուսումն ավարտելուց հետո բախվում են աշխատանք գտնելու դժվարություններին: Այս առումով, կարևորում ենք կարիերայի կենտրոնների գործունեությունը ոչ միայն պրակտիկաների կազմակերպման, կամ շրջանավարտների գործունեության հետադարձ կապի ապահովման շրջանա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

կում, այլև ուսումնառության տարիներին ուսանողներին աշխատաշուկայի առաջարկների տեղեկացվածության ներկայացման ոլորտում:

Այսօր արդեն, կրթական շուկայում մրցակցային են դառնում այն բուհերը, որոնք կարողանում են հաջողություններ ունենալ իրենց միջամտությամբ շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հարցում: Իսկ այդ հաջողությունը պայմանավորված չէ միայն բարձրակարգ գիտելիքի և աշխատանքային հմտությունների տրամադրամբ, այլ էականորեն փոխկապակցված է շրջանավարտի կարիերայի նախագծման գործընթացի հաջող կառավարումից: Ուստի, կարևոր ենք համարում համալսարաններում ուսանողների կարիերայի զարգացման կառավարման համակարգի գործունեությունը, որին համակցված գործունեությամբ, մասնակցելու են համապատասխան ստորաբաժանումները (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Շրջանավարտի կարիերայի նախագծման կառավարման համակարգի ձևավորումը:¹



Ուսանողի կարիերայի նախագծման համակարգի արդյունավետ գործունեության ցուցիչներ, այս դեպքում, կարող են հանդիսանալ շրջանավարտի աշխատանքի անցման արագությունը, իրենց մասնա-

¹ Կազմված է հեղինակի կողմից:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

գիտությամբ աշխատող շրջանավարտների տեսակարար կշիռը, գործազուրկ շրջանավարտների տեսակարար կշիռը, բուհի հետ համագործակցող շրջանավարտների տեսակարար կշիռը:

Օգտագործված գրականության ցանկ

1. The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 171-173
2. ԱՎԾ Տարեգիրք, 2018, էջ 64
3. Գաբրիելյան Մ., Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակարգ, // Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան
4. Eurodoc Survey I, Descriptive Report, 2009

УПРАВЛЕНИЕ ПРОЕКТИРОВАНИЕМ КАРЬЕРЫ ВЫПУСКНИКОВ В ВУЗАХ

Армен Джугурян

ЕУ, кафедра Экономики и управления, д.э.н., профессор

В рынке образовательных услуг на сегодняшний день конкурентоспособны те вузы, которые уделяют должное внимание управлению проектированием карьерой выпускников. Здесь имеют ощутимый успех те вузы, которые гармонизируют деятельность разных университетских подразделений в рамках системного управления, преследуя цель удовлетворения ожиданий выпускников в области подходящего для них трудоустройства. В этой связи, становится важным также осуществление периодической оценки эффективности управления проектированием карьерой выпускников.

Ключевые слова: союз выпускников, центр карьеры, профессиональные навыки, требования работодателей, управление карьерой.

CAREER DESIGNING MANAGEMENT OF GRADUATES IN HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS

Armen Jughuryan

EU, Chair of Economics and Management, Doctor of Economics,
Professor

In the educational service market, the universities that pay a special attention to the management of graduates' careers, are now competitive. There are tangibly successful universities as they harmonize the activities of different university departments in the framework of system management, aiming to meet the expectations of graduates in the field of suitable employment for them. In this regard, it also becomes important to carry out a periodic assessment of career management effectiveness development by graduates.

Keywords: alumni union, career center, professional skills, requirements of employers, career development management

*Ընդունվել է տպագրության՝ 01.04.2019թ.
Գրախոսվել է՝ 25.04.2019թ.*

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արմեն Հակոբյան

ՀՊՏՀ, Կոն.դ.

armen_hakobyan@hotmail.com, 055-700-815

Արմինե Մեջլումյան

ՀԱԱՀ, ասպիրանտ

mezhlumyan.armine@mail.ru

Կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է տալիս.

Առաջին. իրականացնելու տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքների մշտադիտարկում, հիմնված կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերի վրա, վերհանելով սպասվող արդյունքներից փաստացի ձեռքբերումների շեղումները և վերահսկողության թիրախային ուղղությունները:

Երկրորդ, հաղորդել ներքին վերահսկողության տեղեկատվական ապահովվածությանը նոր որակ, համակարգելով ոչ ֆինանսական գործունեության արդյունքները ըստ իրենց ձևավորման ոլորտների և գործառույթների, դրանով իսկ ընդլայնելով ոչ միայն կազմակերպության ներքին, այլև արտաքին շահակիցների կողմից իրականացվող վերահսկողության շրջանակը:

Երրորդ, իրականացնել համեմատական վերլուծություն կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքներն արտացոլող ցուցանիշների գծով, վերջիններս դարձնելով համադրելի՝ գործակցային գնահատումների միոցով: Այս դեպքում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ցուցանիշների գծով հնարավորություն կստեղծվի ապահովելու հաշվետվողականություն և ցուցանիշների փոփոխության գծով միտումների գնահատում:

Հիմնաբառեր. ոչ ֆինանսական տեղեկատվություն, կառավարչական հաշվառում, համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ, շեղումների հաշվառում և վերլուծություն:

Կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքները միշտ էլ ենթարկել են, և այժմ էլ ներկայացվում են հաշվառման, և այն էլ տարբեր հարթություններով: Այսպես, օպերատիվ հաշվառումը ներկայացնում է աշխատակիցների աշատաժամանակի օգտագործումը, կազմակերպության հումք և նյութերի ծախսը և ամենօրյա մնացորդները: Հաշվապահական անալիտիկ հաշվառումը ներկայացնում է պաշարների քանակային շարժը, հիմնական միջոցների տեղաբաշխումները, սարքավորումների ներկազմակերպական շարժունությունը, արագամաշ առարկաների քանակային փոփոխությունները, կադրերի հոսունությունը և այլն: Եվ թվում է, թե ոչ ֆինանսական տեղեկատվության տրամադրումը արդեն իսկ գործում է հաշվապահական հաշվառման համակարգում [1]:

Սակայն, կառավարչական որոշումների ընդունման տեսանկյունից տվյալ տեղեկատվությունը բավարար չէ, նամանավանդ, երբ խոսքը վերաբերում է հաշվետվությունների արտաքին օգտագործողների շահերին և կազմակերպությունների գործարարության մրցունակության գնահատումներին: Որպես կանոն, հաշվապահական հաշվառման ոչ ֆինանսական ավանդական հաշվետվողականությունը նպատակաուղղվել է կազմակերպության ներքին շահերի բավարարմանը, ակտիվների պաշտպանությանը, արտադրական գործընթացի անխափանությանն ուղղված որոշումների կայացմանը:

Այդ իսկ պատճառով, տեղեկատվության արտաքին օգտագործողներին հասցեագրված տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքների հաշվետվողականությանը առանձնակի ուշադրություն չի դարձվել, մինչև որ վերջին տասնամյակում դրա անհրաժեշտությունը չզգացվեց կազմակերպությունների մրցակցային դիրքերի ապահովման ոլորտում: Վերջին տասնամյակում արդեն իսկ, կազմակերպությունների գործունեության արտաքին շահակիցներին սկսեցին հետաքրքրել ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշները, այլև կայուն զարգացում և մրցակցային դիրքերի ամրապնդում հուսադրող ոչ ֆինանսական հաշվետվողականությունը, կապված բիզնեսին առնչվող նեղ տնտեսական, նաև հանրային շահերի բավարարման հետ, ինչպիսիք են բնապահպանական խնդիրները, սոցիալական ոլորտը, պետության նկատմամբ կազմակերպությունների ստանձնած հանրային պարտավորությունների կատարումը, համայն-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

քային խնդիրների լուծումները, գործընկերների նկատմամբ դրսևորվող գործարարության վարքագիծը և այլն: Հենց այս շարժառիթներով ներկայումս խնդիր է դրվում կազմակերպելու ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառում և դրանից բխող համապատասխան հաշվետվությունների ներկայացում:

Միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների կազմման շրջանակում հստակ պահանջ չի դրվում ներկայացնելու կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների տեղեկատվություն: Սակայն, դրան զուգահեռ, տարեկան հաշվետվությունների փաթեթը կարող է ներկայացնել ոչ միայն կորպորատիվ շահերին հասցեագրված ոչ ֆինանսական ոլորտից բացատրություններ, այլև հանրային շահեր հետապնդող ոչ ֆինանսական արդյունքներ, որոնք առնչվում են կազմակերպության գործունեությանը: Դրանք հիմնականում ղեկավարության մեկնաբանություններն են, որոնք նպատակ են հետապնդում ամրապնդելու կազմակերպության բարի համբավը կազմակերպության ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Եվ այդ իսկ պատճառով նման ճանապարհով ներկայացվող ոչ ֆինանսական տեղեկատվությունը համակարգային բնույթ չի կրում և շատ հաճախ ներկայացվում է կազմակերպության գործունեության դրական կողմերով՝ շրջանցելով բացասական դրսևորումները: [2]

Հաշվի առնելով այս ամենը, մեր կողմից առաջարկվում է կառավարչական հաշվառման ենթարկել կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական թե դրական, և թե բացասական արդյունքները, դրանով իսկ տեղեկատվական հիմք ստեղծելով մրցունակության բարձրացման ուղղությամբ կառավարչական որոշումների ընդունման համար: Սակայն մյուս կողմից, եթե կառավարչական հաշվառման համակարգ են ներառվում ոչ ֆինանսական արդյունքներ, ապա դրանք պետք է համադրելի լինեն միատեսակ չափիչներով, ունենան նույն չափայնությունը, որպեսզի հաշիվներում ենթարկվեն կրկնակի գրանցման: Իսկ հիմնականում, տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքները ներկայացվում են տարբեր չափիչներով (կգ, մ, լիտր, մրադ/օր, ժամ և այլն), որը դժվարացնում է դրանց ներկայացումը համադրելի դաշտում, առավել ևս՝ համակարգային հաշվառումը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Այս առումով, կազմակերպությունների տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքների հաշվառման նպատակով մեր կողմից առաջարկվում են իրականացնել հետևյալ հաջորդական քայլերը.

- հստակեցնել ոչ ֆինանսական տեղեկատվության շրջանակը, խմբավորելով հաշվառման ենթակա ցուցանիշները ոլորտային կտրվածքով,
- ոչ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացնել համադրելի, ներկայացնելով տնտեսական գործունեության արդյունքները մեկ համընդհանուր չափիչով,
- կառավարչական հաշվառման մեթոդաբանություն կազմակերպել ոչ ինտեգրացված սկզբունքով, ներմուծելով նոր հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որոնցով հնարավորություն կլինի համակարգելու կազմակերպության ոչ ֆինանսական տեղեկատվության հոսքերը,
- ոչ ֆինանսական արդյունքները արձանագրել կրկնակի գրանցման սկզբունքով, դրանով իսկ համակարգելով դրանք համընդհանուր հաշվում և հնարավորություն ստեղծելով ներկայացնելու համախմբված հաշվետվություն:

Կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքները իրենց առաջնահերթություններով կարող են տարբեր լինել, ելնելով գործարարության առանձնահատուկ բնույթից: Այսպես, եթե գործարարությունը առնչվում է հանքարդյունաբերության հետ, ապա կազմակերպության բնապահպանական գործունեության հետ կապված ոչ ֆինանսական տեղեկատվությունը պետք է ունենա իր հաշվետվողականությունը:[3] Իսկ երբ կազմակերպության գործարարության ոլորտը ագրոտուրիզմն է, ապա գործունեության ոչ ֆինանսական արդյունքները առավելապես կապված են համայնքի սոցիալական զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման հետ:[4] Բաժնետիրական ընկերությունների ոչ ֆինանսական գործունեության արդյունքների հաշվետվողականությունը կարող է ընդգրկել այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կորպորատիվ կառավարման արդյունավետությունը, բաժնետերերի բավարարվածության աստիճանը, կորպորատիվ մշակույթի առկայությունը և այլն:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 1

Ագրոպարենային ոլորտում ընդգրկված կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների շրջանակը

Նշանակում	Ցուցանիշներ	Ցուցանիշի գնահատման մոտեցումները
	Կորպորատիվ շահերի բավարարում	
X ₁₁	Բաժնետերերի իրավունքների պաշտպանվածություն	Բաժնետերերի շրջանում կորպորատիվ կառավարման իրավունքների կենսագործման հարցումների արդյունքներ
X ₁₂	Բաժնետերերի կառավարչական որոշումներին մասնակցություն	Բաժնետերերի շրջանում կառավարչական որոշումների մասնակցության գծով հարցումների արդյունքներ
	Սոցիալական գործարարության վերջնարդյունքների ստացում	
X ₂₁	Սոցիալապես խոցելի խմբերի ներգրավում բիզնեսում	Սոցիալական խոցելի խմբերի տեսակարար կշիռը աշխատակիցների կազմում
X ₂₂	Լրացուցիչ աշխատատեղերի ձևավորում	Կազմակերպության աշխատատեղերի տարեկան հավելածր
X ₂₃	Աշխատողների եկամուտների ավելացում	Կազմակերպության աշխատողների եկամուտների տարեկան հավելածր
	Գործարարության վարքագծի համբավի պահպանում	
X ₃₁	Գործընկերային պարտավորությունների պատշաճ կատարում	Կազմակերպության արտաքին գործընկերների շրջանում հարցումներ
X ₃₂	Վարկային պատմության դրական պատմություն	Դրական վարկային պատմությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

X ₃₃	Հաճախորդակենտրոն գործունեություն	Հաճախորդների (գնորդների) շրջանում սոցիոլոգիական արդյունքներ
	Թողարկվող արտադրանքի որակի ապահովում	
X ₄₁	Բրենդինգի ձևավորում	Նոր շուկաների շրջանակի ընդլայնում
X ₄₂	Մրցակցային որակի ապահովում	Գնորդների շրջանում հարցումներ
	Բնապահպանական գործունեության արդյունքների ստացում	
X ₅₁	Բնօգտագործման վնասների վերականգնում	Բնօգտագործման ծախսերի տեսարակար կշիռը հնքնարժեքում
X ₅₂	Բնապահպանական գործունեության ընդլայնում	Բնապահպանական ծախսերի տեսակարար կշիռը հնքնարժեքում

Ագրոպարենային ոլորտում ընդգրկված կազմակերպությունների ոչ ֆինանսական գործունեության արդյունքները նույնպես ձևավորման առանձնահատուկ շրջանակ ունեն, որոնք ներկայացված են աղյուսակ 1-ում: Ընդ որում, ոչ ֆինանսական ցուցանիշների այդ շրջանակը հաստատուն չէ, և կարող է փոփոխման ենարկվել, կապված գործարարության մրցակցային միջավայրի կտրուկ փոփոխությունների հետ:

Գործնականում հիմնախնդիր է հանդիսանում նաև ոչ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացումը համադրելի չափիչներով և դրանց գնահատումը մեկ համընդհանուր ցուցանիշով (տես գծապատկեր 1): Ոչ ֆինանսական արդյունքների վերահսկողության արդյունավետությունը զգալիորեն բարձրանում է, երբ դրանց առնչվող տեղեկատվական հոսքերը դառնում են համադրելի, առավել ևս, երբ այդ հոսքերով հնարավորություն է ստեղծվում ձևավորելու ագրեգատային ցուցանիշ, որտեղ կամփոփվեն կազմակերպությունների ոչ ֆինանսական գործունեության արդյունքները:

Մեր կարծիքով, որպես ոչ ֆինանսական արդյունքների համընդհանուր չափիչներ կարող են հանդես գալ հարաբարական ցուցանիշները՝ գործակիցները կամ տոկոսները: Այս առումով, նպատակահարմար ենք համարում տարբեր չափիչներով ներկայացվող կազմակա-


ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կերպությունների գործունեության ոչ ֆինանսական ցուցանիշները փոխակերպել հարաբերական ցուցանիշներով՝ մասնավորապես գործակիցներով, որը հնարավորություն կստեղծեր դրանց տեղափոխելու համադրելի դաշտ: Ընդ որում, այս դեպքում նպատակահարմար ենք գտնում կիրառելու առավելագույնին ձգտման սկզբունքը, ըստ որի կոնկրետ ցուցանիշի գծով հաշվարկվող ցուցանիշը որքան մոտենում է մեկին, այնքան այն ձգտում է նպատակադրման առավելագույն մակարդակին: Այդ սկզբունքով ոչ ֆինանսական արդյունքների ներկայացումը ձևավորում է վերլուծական միջավայր, որտեղ համադրելի են դառնում գնահատվող ցուցանիշները և հնարավորություն է ստեղծվում դրանք կրկնակի գրանցմամբ համակարգված հաշվառելու՝ ընդգրկելով կառավարչական հաշվառման հաշիվներում:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ոչ ֆինանսական տեղեկատվության հաշվառման համար կիրառելու կառավարչական նոր հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որնոնք գործելու են ֆինանսական հաշվառման շրջանակից անկախ՝ ոչ ինտեգրացված մոտեցմամբ: Այս առումով, մեր կողմից առաջարկվում է ոչ ֆինանսական արդյունքների յուրաքանչյուր ցուցանիշի գծով բացելու առանձնացված կառավարչական հաշիվ, որտեղ կրկնակի գրանցմամբ կարձանագրվեն սպասելիքների առավելագույն և փաստացի մեծությունները, որոնց համեմատմամբ կբացահայտվեն կազմակերպության գործունեությանն առնչվող ոչ ֆինանսական ցուցանիշների շեղումները: Այս շեղումների համակարգված հաշվառման տեղեկատվությունը հիմք կհանդիսանա ոչ ֆինանսական արդյունքների հաշվետվողականության կազմակերպման, ինչպես նաև՝ հիմնավոր կառավարչական որոշումների կայացման համար:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գծապատկեր 1. Ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերի կառավարչական հաշվառման առաջարկվող մեխանիզմը



Այսպես, գծապատկեր 1-ում ներկայացված են ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման առաջարկվող տեղեկատվական հոսքերի կառավարչական հաշվառման մեխանիզմը, որտեղ գործում են հատուկ հաշիվներ, բացված կազմակերպության գործունեության ոչ ֆինանսական արդյունքների տեղեկատվությունը (կորպորատիվ շահեր, սոցիալական սպասումներ, գործարարության վարքագիծ, որակի ապահովում և այլն) ամփոփելու համար: Ընդ որում, այդ հաշիվները հաշվետու ժամանակաշրջանի ավարտին փակվում են, նրանցում արտացոլված տեղեկատվությունը ներկայացնելով հետևյալ ձևաչափով.

սպասելիքներ = փաստացի ձեռքբերում (+,-) շեղումներ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 2

Ագրոպարենային ոլորտում ընդգրկված կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների հարաբերական ցուցանիշները

Նշանակում	Ցուցանիշներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ		Հասանելիության գործակից	Շեղումներ
		ակնկալվող	փաստացի		
X ₁₁	Բաժնետերերի իրավունքների պաշտպանվածություն	95%	81%	0,85	0,25
X ₂₁	Սոցիալապես խոցելի խմբերի ներգրավում բիզնեսում	7%	2%	0,28	0,72
X ₃₁	Գործընկերային պարտավորությունների պատշաճ կատարում	100%	94%	0,94	0,06
X ₄₂	Մրցակցային որակի ապահովում	100%	92%	0,92	0,08
X ₅₂	Բնապահպանական գործունեության ընդլայնում	4%	4%	1,0	0

Այսպես, աղյուսակ 2-ում ներկայացված են պանրի արտադրության ագրոպարենային համալիրում ընդգրկված կազմակերպությունների գործունեությանը առնչվող ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշները, արդեն իսկ փոխակերպված և հաշվարկված գործակցային արժեքներով, որը թույլ է տալիս դրանք ընդգրկելու մեր կողմից առաջարկվող կառավարչական հաշվառման համակարգ: Այս տեղեկատվությունը հիմք է հանդիսանում ձևակերպել համապատասխան հաշվային թղթակցություններ, համակարգելով ոչ ֆինանսական արդյունքների տեղեկատվությունը «նախատեսված արդյունքներ և դրանցից շեղումներ» կտրվածքով.

1. Ձևակերպել է բաժնետերերի իրավունքների պաշտպանության նախատեսված նախատեսված արդյունքը
 Դո Ոչ ֆինանսական արդյունք (X₁₁).....1,0
 Կո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ1,0

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2. Ձևակերպվել են բաժնետերերի իրավունքների պաշտպանության փաստացի արդյունքները
Դո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0,85
Կո Ոչ ֆինանսական արդյունք (X_{11}).....0,85
3. Ձևակերպվել են բաժնետերերի իրավունքների պաշտպանության նախատեսված արդյունքներից շեղումները
Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{11}).....0,25
Կո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0, 25
4. Ձևակերպվել է սոցիալապես խոցելի խմբերի ներգրավման նախատեսված արդյունքը
Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{21}).....1,0
Կո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ1,0
5. Ձևակերպվել են սոցիալապես խոցելի խմբերի ներգրավվածության փաստացի արդյունքները
Դո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0,28
Կո Ոչ ֆինանսական արդյունք (X_{21}).....0,28
6. Ձևակերպվել են սոցիալապես խոցելի խմբերի ներգրավման նախատեսված արդյունքներից շեղումները
Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{21}).....0,72
Կո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0, 72
7. Ձևակերպվել է գործընկերային պարտավորությունների պատշաճ կատարման նախատեսված առավելագույն արդյունքը
Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{31}).....1,0
Կո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ1,0
8. Ձևակերպվել են գործընկերային պարտավորությունների կատարման փաստացի արդյունքները
Դո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0,94
Կո Ոչ ֆինանսական արդյունք (X_{31})0,94
9. Ձևակերպվել են գործընկերային պարտավորությունների կատարման նախատեսված արդյունքներից շեղումները
Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{31}).....0,06
Կո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0, 06
10. Ձևակերպվել է մրցակցային որակի ապահովման նախատեսված արդյունքը

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{42}).....1,0
 Կտ Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ1,0
11. Ձևակերպվել են մրցակցային որակի ապահովման փաստա-
 ցի արդյունքները
 Դո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0,92
 Կտ Ոչ ֆինանսական արդյունք (X_{42}).....0,92
12. Ձևակերպվել են մրցակցային որակի ապահովման նախա-
 տեսված արդյունքներից շեղումները
 Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{42}).....0,08
 Կտ Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0, 08
13. Ձևակերպվել է բնապահպանական գործունեության ընդ-
 լայնման նախատեսված արդյունքը
 Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{52}).....1,0
 Կտ Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ1,0
14. Ձևակերպվել են բնապահպանական գործունեության ընդ-
 լայնման փաստացի արդյունքները
 Դո Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ1.0
 Կտ Ոչ ֆինանսական արդյունք (X_{52}).....1.0
15. Ձևակերպվել են բնապահպանական գործունեության ընդ-
 լայնման նախատեսված արդյունքներից շեղումները
 Դո Ոչ ֆինանսական արդյունք (X_{52}).....0
 Կտ Համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ0

Գծապատկեր 2-ում ներկայացված է մեր կողմից կառավարչական հաշվառման համակարգում հարաբերական ցուցանիշներով ազրոպարենային համալիրի գործունեության համախմբված ոչ ֆինանսական արդյունքների ամփոփումը, որը տեղեկատվական հիմք է հանդիսանում արդյունավետ վերահսկողության իրականացման համար: Այսպես, առաջարկվող կառավարչական հաշվի կրեդիտային շրջանառությունը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում դիտարկվել են կազմակերպությունների ոչ ֆինանսական գործունեությունն արտացոլող հինգ ոլորտ: Իսկ դեբետային շրջանառությունը ներկայանում է ոչ ֆինանսական գործունեության փաստացի արդյունքների և նախատեսվածից շեղումների կտրվածքով, որով հնարավորություն է ստեղծվում գնահատելու յուրաքանչյուր ոլորտում կազմակերպության ձեռքբերումներն ու բացթողումները և տրամադրվում է

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

տեղեկատվություն՝ կառավարչական որոշումների համար: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին, ավարտելով կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների համախմբումը, կառավարչական հաշիվը փակվում է (տես գծապատկեր 3.3.3) և վերաբացվում է հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար

Գծապատկեր 2 Կառավարչական հաշվառմամբ հարաբերական ցուցանիշներով պանրագործության ագրոպարենային համալիրի կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների համախմբում¹

Հարաբերական ցուցանիշներով համախմբված ոչ ֆինանսական արդյունքներ

	0,85 (X_{11})	1,0
շեղում	0,25 (X_{11})	
	0,28 (X_{21})	1,0
շեղում	0,72 (X_{21})	
	0,94 (X_{31})	1,0
շեղում	0,06 (X_{31})	
	0,92 (X_{42})	1,0
շեղում	0,08 (X_{42})	
	1,0 (X_{52})	1,0
շեղում	0 (X_{52})	
	5,0	5,0

Օգտագործված գրականության ցանկ

1. What is non financial reporting and why is it important for corporate transparency? <https://www.access-info.org/cos/12195>
2. Five reasons why you should report non-financial information, <https://sustainalize.com/be/nl/2018/10/five-reasons-why-you-should-report-non-financial-information>

¹ Կազմված է վերոնշյալ հաշվային թղթակցությունների հիման վրա:

3. Բնապահպանական վնաս և պատասխանատվություն, կառուցվածք, չափիչներ, կիրարկում, 2018, http://recc.tk/assets/pub_1404812427.pdf
4. Социальное предпринимательство в России и в мире. Практика и исследования.– Москва:ГУ ВШЭ, 2011. 14-15с.

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА НЕ ФИНАНСОВЫХ РЕЗУЛЬТАТОВ ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНИЗАЦИИ

Армен Аюкян

АГЭУ, д.э.н.,

Армине Меджлумян

НАУА, аспирант

В статье предлагается новая методика управленческого учета нефинансовых результатов деятельности организации, что дает возможность:

Во-первых, проводить мониторинг нефинансовых результатов хозяйственной деятельности организации, с выявлением отклонений от возможных ожиданий и слабых звеньев, подлежащие внутреннему контролю.

Во вторых, повысить качество внутреннего контроля деятельности организации, консолидируя нефинансовые результаты по местам и сферам их формирования, тем самым расширяя круг информационного обеспечения управленческих решений бенефициаров.

В-третьих, проводить сравнительный анализ результатов нефинансовой деятельности организации, трансформируя разнообразные показатели на единое измерение, какими являются коэффициенты.

Ключевые слова: нефинансовая информация, управленческий учет, консолидация нефинансовых показателей, учет и анализ отклонений.

THE ISSUES OF MANAGERIAL ACCOUNTING FOR NON-FINANCIAL
RESULTS IN ORGANIZATIONS

Armen Akopyan

ASUE, Doctor of Economics,

Armire Mejlumyan

ANAU, Post-graduate Student

The article proposes a new methodology of managerial accounting for non-financial performance in the organization, which makes it possible to:

Firstly, to monitor non-financial results of organization's business, with deviations from possible expectations and weak links, that are subject to internal control.

Secondly, to improve the quality of internal control of the organization, consolidating non-financial results in places and areas of their formation, thereby expanding the range of information support for beneficiaries' management decisions.

Third, to conduct a comparative analysis of the results of non-financial activities of the organization, transforming various indicators into a particular dimension, which are the coefficients.

Keywords: non-financial information, managerial accounting, consolidation of non-financial indicators, accounting and analysis of deviations.

Ընդունվել է տպագրության՝ 25.03.2019թ.

Գրախոսվել է՝ 18.04.2019թ.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Նարինե Կիրակոսյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, Կոն. Թ., դոցենտ
kirakosyannarine@yahoo.com, +374 93 260705

Հովհաննես Անգոյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող
angtyan08@gmail.com +374 98 917575

Թիմերը ժամանակակից կազմակերպությունների հիմնական մասն են, բայց ոչ բոլոր թիմերն են արդյունավետ գործում: Հաճախ թիմերը չեն օգտագործում իրենց ամբողջ պոտենցիալը կամ չեն արդարացնում մենեջերների հույսերը: Սակայն լավ լիդերները օգնում են թիմին հասնել հաջողության:

Արդյունավետությունը բարդ հասկացություն է, որի հստակ և բոլորի կողմից ընդունված սահմանում գոյություն չունի: Այն բնութագրում է նպատակահարմարություն, որակ, օգտակարություն և այլն: Լայն իմաստով արդյունավետությունը բնութագրում է համակարգի որակը, նպատակների ճիշտ ժամանակին հասնելը: Ավելի նեղ իմաստով՝ համակարգի արդյունավետությունը բնութագրվում է համակարգի գործունեության արդյունքների և ծախսերի հարաբերակցությամբ:

Հիմնաբառեր. թիմ, թիմային աշխատանք, լիդեր, աշխատակից, թիմային աշխատանքի արդյունավետություն, խոտորոնյան փորձարկում

Թիմերը ստեղծվում են որոշակի նպատակներ իրականացնելու համար և նրանց գործունեության քանակական արդյունքը որոշիչ է: Հետևաբար, թիմը համարվում է հաջողության հասած, եթե այն հասել է իր նպատակին:

Այսպիսով թիմային աշխատանքի արդյունավետության գլխավոր հատկանիշը թիմի նպատակներին հասնելու մակարդակն է: Ցանկացած նպատակին հասնել պահանջում է թիմի անդամների որոշակի գործունեություն: Եթե թիմի գործունեությունը ամբողջովին կամ մասնակի բերում է դրված նպատակներին, ապա այն արդյունավետ է: Թիմի նպատակներին հասնելուն՝ արդյունավետության բարձրացման, հասնում են այն դեպքում, երբ բոլոր անդամները ճանաչում են այդ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

նպատակները ինչպես անձնական, մասնագիտական, այնպես էլ հոգևոր տեսանկյունից: Սա հնարավոր է միայն ամբողջ կոլեկտիվի և նրա անդամներից յուրաքանչյուրի հասունության բարձր մակարդակի դեպքում:

Թիմի արդյունավետությունը՝ նրա ունակությունն է հասնելու հետևյալ 4 նպատակներին՝ նորարարությունների ներդրում (փոփոխություններին հարմարում),

արտադրողականության աճ, ապրանքների և ծառայությունների բարձր որակի ապահովում, աշխատակիցների պահանջմունքների բավարարում [1, c.289]:

Նորարարություններին հարմարվել ասելով նկատի ունենք, որ կազմակերպության համար կարևոր նշանակություն ունի արտաքին միջավայրի պահանջներին և դրանց փոփոխություններին թիմի արագ արձագանքը: Արտադրողականությունը կորպորատիվ նպատակներին նվազագույն ռեսուրսներով հասնելն է: Որակը նշանակում է խոտանների բացակայություն և ապրանքների և ծառայությունների համապատասխանություն սպառողի սպասումներին: Աշխատակիցների պահանջմունքների բավարարումը թիմի ունակությունն է հասնելու նրա անդամների լոյալությանը, ոգեշնչմանը:

Թիմի արդյունավետության հետ խիստ կապված է *երեք ոլորտ*.

1. միասնականությունը կամ համախմբվածությունը,
2. առաջադրանքների կատարումը և սոցիալ-էմոցիոնալ դերը,
3. լիդերի անձնական ազդեցությունը թիմի վրա:

Միասնականությունը և թիմի արդյունավետությունը: Թիմի համախմբվածությունը նրա անդամների միությունն է, նրանց ձգտումը դեպի ընդհանուր նպատակ: Համախմբված թիմի անդամները ոչ միայն խորապես նվիրված են նրան, այլ նաև զգում են, որ զբաղված են ինչ որ նշանակալի բանով, ինչպես նաև նրանք ուրախություն են ապրում ընդհանուր հաջողության հասնելիս: Երբ մարդկանց մեջ չկա միասնականություն, նրանք այնքան էլ մտահոգված չեն թիմի ծաղկունքով: Համախմբվածությունը թիմի դրական բնութագրիչ է:

Թիմային համախմբվածության գործոնները: Լիդերները կարող են կիրառել որոշակի գործոններ, որպեսզի հասնեն թիմային համախմբման: Այդ գործոններից մեկը *փոխադարձ ազդեցությունն* է: Որ-

քան շատ շփում կա թիմի անդամների միջև, որքան շատ ժամանակ նրանք անցկացնեն միասին, այնքան ավելի ուժեղ է թիմի համախընդրվածությունը: Երկրորդ գործոնը *ընդհանուր նպատակներն* են: Եթե թիմի անդամները համաձայնվում են թիմի նպատակներին, ապա նրանք դառնում են միասնական: Դա թույլ է տալիս ստեղծել միատեսակ մտածողների կոլեկտիվ: Երրորդ գործոնը *թիմի գրավչությունն* է, ինչը նշանակում է, որ նրա անդամներն ունեն միևնույն սկզբունքները և նրանց դուր է գալիս միասին աշխատել: Այս դեպքում աշխատակիցները միմյանց վերաբերվում են համակրանքով և հարգանքով: Թիմային համախմբվածության վրա ազդում է նաև *կազմակերպչական կոնտրեքստը*: Երբ մի թիմ մրցում է մյուսի հետ, նրա համախմբվածությունը մեծանում է, քանի որ մրցման երկու մասնակիցներն էլ ձգտում են հաղթանակի: Եվ վերջապես *հաջողությունը* և *այլ անձանց դրական գնահատականը* էլ ավելի է ուժեղացնում թիմի միությունը: Երբ թիմը հաջողությամբ կատարում է առաջադրանքը և կազմակերպության մյուս անդամները ընդունում են նրա հաջողությունները, թիմի անդամներն էներգիայի ներհոսք են զգում, և նրանց լոյալությունն աճում է:

Թիմային համախմբվածության հետևանքները: Թիմային միասնականության հետևանքները կարելի է բաժանել երկու կատեգորիայի՝ հոգևոր և նյութական: Որպես կանոն թիմի մարտական ոգին բարձր է միասնական թիմերում, քանի որ հենց համախմբվածությունն է լավացնում թիմի անդամների շփումը, խթանում ընկերական մթնոլորտի ստեղծմանը, մշտական կապի պահպանմանը, լոյալության ուժեղացմանը և որոշումների կայացման գործընթացում աշխատակիցների ավելի ակտիվ մասնակցությանը: Միասնական թիմն ավելի լավ է բավարարում իր անդամների պահանջմունքները:

Ինչ վերաբերվում է արտադրողականությանը, ապա սովորաբար համախմբվածությունը դրական ազդեցություն է թողնում դրա վրա՝ չնայած, որ հետազոտությունների արդյունքները միանշանակ չեն: Միասնական թիմերում աշխատակիցները խիստ մոտիվացված են, այդ պատճառով առավելագույն ջանքեր են գործադրում հաջողության հասնելու համար: Սակայն այստեղ կարող է առաջանալ սոցիալական խթանման էֆեկտը, երբ ինչ-որ մարդու ներկայությունը ոգեշնչում է թիմի անդամներին: Հետազոտությունները ցույց են տվել, որ միասնականությունը էապես ազդում է աշխատանքի արդյունքների վրա, եթե

թիմի փոխադարձ կախվածությունը բարձր է, այսինքն, երբ թիմի անդամները պետք է սերտորեն փոխգործակցեն և կոորդինացնեն իրենց աշխատանքները:

Արտադրողականության վրա ազդող այլ կարևորագույն գործոն է թիմի և թուփ-մենեջերների միջև փոխհարաբերությունները: Մի հետազոտությունում 200 թիմերի օրինակով գնահատվել է աշխատանքի արդյունքների և միասնականության կոորելյացիան: Պարզվել է, որ համախմբված թիմերն ավելի արտադրողական են, երբ թիմի անդամները զգում են վերին օղակի ղեկավարների սատարումը, և պակաս արտադրողական, երբ թուփ-մենեջերները ցուցաբերել են թշնամանք: Լիդերների կողմից սատարվելը օգնել է թիմերին ավելի բարձր նորմաներ գրանցել, իսկ լիդերների թշնամանքը նորմաների իջեցում է առաջացրել:

Առաջադրանքը և սոցիալ-հոգեբանական պահանջմունքները:

Որպեսզի թիմն արդյունավետ լինի անհրաժեշտ է հավասարակշռություն հաստատել կորպորատիվ առաջադրանքների կատարման և աշխատակիցների սոցիալ-էմոցիոնալ պահանջմունքների բավարարման միջև: Այստեղ տեղին է հիշել ղեկավարման ոճերը՝ առաջադրանքի կամ մարդկանց վրա կենտրոնացած: Առաջադրանքի վրա կենտրոնացումը հիմնականում կապված է բարձր արտադրողականության հետ, իսկ մարդկանց վրա կենտրոնացումը՝ փոխհարաբերությունների և աշխատակիցներ պահանջմունքների բավարարման: Որպեսզի թիմը երկարաժամկետ լավ արդյունքներ ցույց տա, այն պետք է ոչ միայն կատարի իր առջև դրված խնդիրները, այլ նաև բավարարի իր կազմում ընդգրկված մարդկանց պահանջմունքները: Այս պայմանները բավարարվում են լիդերի մասնակցությամբ, որը խաղում է երկու հիմնական դերերից մեկը՝ կա՛մ մասնագետի դերը, կա՛մ սոցիալ-հոգեբանակ դերը[1, c.293]:

Մասնագետի դերը կապված է նոր մտքերի և խնդիրների լուծման միջոցների, ինչպես նաև թիմի արդյունավետության գնահատման հետ: Այս դերը կատարողն ուսումնասիրում է փաստերը, առաջարկներ է ներկայացնում, գտնում է անհրաժեշտ տեղեկատվություն, որպեսզի պարզեցնի առաջադրանքը, գումարում է տվյալները և ոգեշնչում աշխատակիցներին: Սոցիալ-էմոցիոնալ դերն իր մեջ ներառում է վարքագծի այնպիսի ձևեր, ինչպիսին են խնդիրների լուծման գործընթացում թիմի անդամների ներգրավումը, այլ մտահաղացումների

ընդունում, անհամաձայնությունների և կոնֆլիկտների հարթեցում, աշխատակիցների զգացմունքների և պահանջմունքների հանդեպ ուշադիր վերաբերմունք: Այս դերը կատարողը մյուսների համար օրինակ է ծառայում: Նա սահմանում է վարքագծի նորմեր և ստեղծում է փոխգործակցություն և համագործակցություն թիմի անդամների միջև՝ օգնելով նրանց հաղթահարել դժվարությունները:

Իդեալական դեպքում թիմի լիդերը այս երկու դերը կատարում է միաժամանակ, ինչով հարգանք և հիացմունք է վայելում: Սակայն երբեմն անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել որևէ դերի վրա, օրինակ, եթե թիմի անդամները բավականին կենտրոնացած են առաջադրանքի վրա, լիդերը կարող է հիմնականում սոցիալ-էմոցիոնալ դեր կատարել: Եվ հակառակը, երբ թիմի անդամները կենտրոնացած են փոխհարաբերությունների վրա, լիդերը պետք է մասնագետի դեր կատարի՝ բացատրելով առաջադրանքը և սահմանելով նպատակները: Լիդերի ջանքերը ուղղված են այնպիսի պայմանների ապահովմանը, որոնցում թիմի անդամները կկարողանան բավարարել այդ երկու տիպի պահանջմունքները: Լավ հավասարակշռված թիմերն ունակ են երկարաժամկետ հեռանկարում հաջող աշխատել, եթե յուրաքանչյուր աշխատակից բավարարում է իր հիմնական պահանջմունքները և կատարում է իր առջև դրված առաջադրանքները:

Լիդերի անձնական դերը: Թիմի հաջողությունների մեծ մասը կախված է նրա լիդերի արդյունավետությունից և պրոֆեսիոնալիզմից: Հարվարդի բիզնես դպրոցի դասախոսները, հետազոտելով սրտաբանների թիմին, նկատեցին, որ լիդերի գործողությունները ամբողջ թիմի արդյունավետության կարևորագույն գործոնն են: Շատ մարդիկ ունակ են յուրացնելու թիմի լիդերի համար անհրաժեշտ հմտությունները, չնայած, որ այդ հմտությունների ձեռքբերումը ոչ միշտ է հեշտ տրվում: Որպեսզի արդյունավետ լիդեր դառնալ, պետք է ձգտել փոխվել, ձգտել սեփական հարմարավետության սահմաններից դուրս գալ: Ահա փոփոխությունների երեք ձև, որոնք թույլ են տալիս դառնալ թիմի իրական լիդեր: Դրանք են՝ ընդունել ընդհանուր նպատակների և արժեքների նշանակությունը, կարողանալ ընդունել սեփական սխալները և լինել թիմի անդամների ընդդիմախոսը և սատարել նրանց:

Պետք է նշել, որ թիմային աշխատանքը դեռևս չի նշանակում արդյունավետության աճ: Բազմաթիվ հետազոտությունների արդյուն-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

քում առանձնացվում են մի շարք բնութագրեր, որոնք առկա են արդյունավետ թիմերում: Դրանք են՝

Հստակ նպատակներ: Բարձրարտադրողական թիմերը բնութագրվում են իրենց նպատակի հստակ գիտակցմամբ և այն համոզմամբ, որ դա կբերի օգտակար կամ կարևոր արդյունքների:

Անհրաժեշտ հմտություններ և կարողություններ: Արդյունավետ թիմերը ձևավորվում են իրազեկ, բարձր որակավորում ունեցող մասնագետներից, ովքեր տիրապետում են յուրահատուկ հմտությունների և ունակությունների:

Փոխադարձ վստահություն: Արդյունավետ թիմերին բնորոշ է վստահության բարձր մակարդակը: Այսպիսի թիմերի անդամները հավատում են իրենց գործընկերների ազնվությանը և ունակություններին:

Ընդհանուր հակվածությունը: Սրան բնորոշ է թիմի անդամների մեծ նվիրվածությունը նրա նպատակներին և մարդկանց պատրաստակամությունը ծախսելու մեծ քանակի էներգիա դրանց հասնելու համար:

Սերտ փոխկապվածությունը: Արդյունավետ թիմերը բնութագրվում են շփման բարձր մակարդակով: Այսպիսի թիմերի անդամները ունակ են միմյանց տեղեկատվություն փոխանցել պարզ ու հասկանալի ձևով:

Պայմանավորվելու ունակություն: Արդյունավետ թիմերն անընդհատ ձգտում են ճկունության բարձրացման և իրենց անդամների աշխատանքային առաջադրանքներում ներդնում են հնարավոր բոլոր շտկումները և փոփոխությունները: Այդպիսի ճկունությունը թիմի անդամներից պահանջում է միմյանց հետ պայմանավորվելու լավ ունակություն:

Արդյունավետ դեկավարում: Արդյունավետ դեկավարը կարող է թիմին ստիպել հետևել իրեն՝ հաղթահարելով ամենադժվար խոչընդոտները: Ինչպե՞ս: Նա հստակ բացատրում է առաջադրանքը և հրստակ նպատակներ է սահմանում:

Ներքին և արտաքին աջակցություն: Արդյունավետ թիմերի վերջին բնութագրիչը սատարող մթնոլորտն է: Եթե խոսենք ներքին իրավիճակից, ապա այս թիմերում պետք է ձևավորվի ամուր ենթակառուցվածք: Իսկ Եթե խոսենք արտաքին սատարման մասին, ապա կա-

ռավարող անձնակազմը պետք է թիմին ապահովի բոլոր ռեսուրսներով, որոնք անհրաժեշտ են նրան հանձնարարված աշխատանքի իրականացման համար [2, c.726]:

Այսպիսով, թիմային աշխատանքի արդյունավետության ուսումնասիրությունն անհրաժեշտ է սկսել դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրմամբ: Դիտարկելով և պարզելով յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը՝ կարելի է ազդել այդ գործոնի վրա՝ կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Խոտորոնյան փորձարկման դերը աշխատողների աշխատունակության բարձրացման գործում: Աշխատողների աշխատունակության բարձրացման նպատակով իրականացված ամենահայտնի փորձակումներից է Խոտորոնյան փորձարկումը: Այն իրականացվել է 1994 թվականի նոյեմբերին, երբ հետազոտողների մի խումբ սկսեց փորձարկում Վեսթերն Էլեկտրիկ ընկերությանը պատկանող Խոտորոնի գործարանում՝ Իլինոյս նահանգի Չիչերո քաղաքում: Դրա սկզբնական նպատակը աշխատանքի ֆիզիկական պայմանների և աշխատանքի արտադրողականության միջև եղած կախվածության որոշումն էր: Այս փորձարկումը «գիտական մենեջմենթի» տեսության տրամաբանական զարգացումն էր, որն այն ժամանակ գերակշռող էր: Ինչպես շատ հաճախ պատահում է մեծ հայտնագործությունների հետ՝ չստացվեցին այն արդյունքները, ինչ սպասում էին գիտնականները: Անսպասելիորեն նրանք նկատեցին ինչ-որ ավելի կարևոր բան, որն անուղղակիորեն բերեց մենեջմենթում «մարդկային հարաբերությունների» տեսության առաջացմանը:

Հարկ է նշել, որ վերը նշված փորձարկումն իրականացվել է չորս փուլով:

Փորձարկման *առաջին փուլի* էությունը կայանում էր նրանում, որ բացահայտվեր լուսավորության ազդեցությունը աշխատողների աշխատանքի արտադրողականության վրա: Այս փուլում աշխատողները բաժանված էին երկու խմբի՝ վերահսկողության և փորձարարական: Ի զարմանս հետազոտողների, երբ նրանք մեծացրեցին լուսավորությունը փորձարարական խմբում, երկու խմբերի աշխատանքի արտադրողականությունն էլ աճեց: Նույնը տեղի ունեցավ նաև այն ժամանակ, երբ լուսավորությունը կրճատվեց: Հետազոտողները եզրակացրեցին,

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

որ լուսավորությունը աննշան ազդեցություն է թողել աշխատանքի արտադրողականության վրա: Նրանք հասկացան, որ փորձարկումը չհաջողվեց այնպիսի գործոնների պատճառով, որոնք իրենց վերահսկողությունից դուրս էին: Պարզվեց, որ նրանց վարկածը ճիշտ էր, բայց բոլորովին այլ պատճառներով:

Երկրորդ փուլում խմբին միացավ Էլթոն Մեյոն, ով այն ժամանակ արդեն Հարվարդի համալսարանի լավագույն գիտնականներից էր: Այս փուլում իրականացվեց ռեյեներ հավաքողների լաբորատոր փորձարկում: Այս անգամ վեց կամավորներից բաղկացած փոքր խումբը առանձնացվեց մնացած անձնակազմից և իր աշխատանքի համար ստացավ արտոնյալ վճար: Աշխատողներին տրվեց ավելի մեծ շփման ազատություն, քան սովորաբար ընդունված էր գործարանում: Դրա արդյունքում նրանց միջև առաջացան ավելի սերտ փոխհարաբերություններ: Սկզբնական շրջանում արդյունքները հիմնավորում էին նախնական վարկածը: Երբ, օրինակ, աշխատանքում մտցվեցին լրացուցիչ ընդմիջումներ, աշխատանքի արտադրողականությունը աճեց: Գիտնականները դա բացատրեցին հոգնածության ավելի ցածր աստիճանով: Այդ իսկ պատճառով խումբը շարունակում էր նմանատիպ փոփոխություններ կատարել աշխատանքի պայմաններում՝ կրճատելով աշխատանքային օրը և աշխատանքային շաբաթը: Իսկ աշխատանքի արտադրողականությունը շարունակում էր աճել: Երբ գիտնականները վերադարձրեցին աշխատանքի սկզբնական պայմանները, աշխատանքի արտադրողականությունը շարունակեց մնալ նախկին բարձր մակարդակում: Այն ժամանակաշրջանի կառավարման տեսության համաձայն, այդպիսի բան պետք է տեղի չունենար, բայց այդպես եղավ: Այդ պատճառով հարցում անցկացվեց մասնակիցների շրջանում՝ այդ երևույթի պատճառների բացահայտման համար: Հետագայում գիտնականները պարզեցին, որ ինչ-որ մարդկային տարր ավելի մեծ ազդեցություն ունի աշխատանքի արդյունավետության վրա, քան տեխնիկական և ֆիզիկական պայմանների փոփոխությունը:

Փորձարկումների *երրորդ փուլը* սկզբնապես մտածված էր որպես մարդկանց անմիջական ղեկավարման կատարելագործման պարզ պլան: Սակայն արդյունքում պլանը վեժաճեց մեծ ծրագրի, որը բաղկացած էր ավելի քան քսան հազար աշխատակիցների հետ զրույցնե-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

րից: Հավաքվեց մեծ ծավալի տեղեկատվություն իրենց աշխատանքի նկատմամբ աշխատակիցների վերաբերմունքի վերաբերյալ: Արդյունքում հետազոտողները պարզեցին, որ յուրաքանչյուր աշխատակցի արտադրողականությունը և կարգավիճակը կազմակերպությունում կախված էր ինչպես հենց աշխատակցից, այնպես էլ աշխատանքային կոլեկտիվից:

Որպեսզի ուսումնասիրեն կոլեգաների ազդեցությունը աշխատակիցների աշխատանքի արտադրողականության վրա, գիտնականները որոշեցին իրականացնել չորրորդ փորձարկումը: Ենթադրվում էր, որ *չորրորդ փուլը* կբացահայտեր աշխատանքի թիմային արդյունավետության վրա հիմնաված նյութական խթանման ծրագրերի ազդեցության աստիճանը: Գիտնականները տրամաբանորեն հիմնվում էին այն վարկածի վրա, որ այն աշխատողները, ովքեր մյուսներից արագ էին աշխատում և մոտիվացված էին ավելի շատ վաստակելու ցանկությամբ, կստիպեն ավելի դանդաղաշարժներին մեծացնել թողարկումը: Բայց այս անգամ ևս գիտնականներին անակնկալ էր սպասվում: Իրականում ավելի արագաշարժ աշխատակիցները հակված էին կրճատել իրենց աշխատանքի տեմպը, որպեսզի դուրս չմնային թիմի սամանած շրջանակներից: Նրանք չէին ցանկանում, որպեսզի իրենց համարեն ընդունված ռիթմի խախտողներ, կամ իրենց մեջ թիմի մյուս անդամների բարեկեցության համար վտանգ տեսնեն: Սակայն նրանք, ովքեր մյուսներից դանդաղ էին աշխատում, այնուամենայնիվ փորձում էին բարձրացնել իրենց արտադրողականությունը:

Խոտորոնյան փորձարկման եզրակացությունները: Խոտորոնյան փորձարկումը տվեց տվյալների այնպիսի ծավալ, որ դա հնարավորություն տվեց կատարել բազմաթիվ գիտական հայտնազործություններ: Հիմնական հայտնազործություններն էին՝ վարքագծային գործոնների կարևորությունը, ղեկավարների հետ փոխհարաբերությունները և այն, ինչ այժմ անվանում են Խոտորոնյան էֆֆեկտ: Խոտորոնյան էֆֆեկտը այն պայմաններ են, որոնց ժամանակ նորամուծությունը, փորձարկման նկատմամբ հետաքրքրությունը կամ տվյալ հարցի նկատմամբ ուշադրության բարձրացումը բերում է խեղաթյուրված, մասնավորապես չափազանց բարենպաստ արդյունքի: Փորձարկման մասնակիցները իսկապես ավելի ջանասիրաբար էին աշխատում շնորհիվ միայն այն գիտակցման, որ մասնակցում են փորձարկման: Եվ այժմ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

գիտնականները, որոնք զբաղվում են վարքագծային գործոնների ուսումնասիրությամբ, լավ գիտեն Խոտորոնյան էֆֆեկտի մասին և իրենց ծրագրերն այնպես են կազմում, որ խուսափեն դրանից: Սակայն ավելի հաճախ են այն դեպքերը, երբ փորձարկման ավարտից հետո գիտնականները նկատում են Խոտորոնյան էֆֆեկտի առկայությունը: Ակնհայտ է, որ Խոտորոնյան էֆֆեկտը ազդել է աշխատանքի արդյունքների վրա, սակայն դա գործոններից միայն մեկն էր: Գիտնականների կարծիքով, աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա ազդող ևս մեկ կարևոր գործոն է վերահսկողության ձևը: Փորձարկման ժամանակ ղեկավարները շատ հաճախ ավելի քիչ էին վերահսկում աշխատողներին, քան սովորաբար:

Օգտագործված գրականության ցանկ

1. “Уроки лидерства”; Дафт Р. Л. /при участии Лейн П./; Москва; 2006 г.
2. "Менеджмент"; 8-ое издание; Роббинз С. П., Коултер М.; Москва, С. Петербург, Киев; 2007г.
3. “Организационное поведение: от теории к практике”; Дж. Гринберг, Р. Бейрон; Москва; 2004 г.
4. “Психология менеджмента”; В. Л. Полукаров, В. И. Петрушин; Москва; 2008 г.
5. “Психология управления”; В. Н. Машков; Санкт-Петербург; 2002 г.

WAYS OF RAISING TEAM WORK EFFECTIVENESS

Narine Kirakosyan

EU, Chair of Economics and Management, PhD in Economics, Associate Professor

Hovhannes Angtyan

EU, Student

Teams are the essential part of modern organizations, but not all teams work effectively. Often, teams do not use their full potential or do not meet the manager's expectations. A true leader helps the team to

ՎԱՌՎԱՐՈՒՄ

succeed. Effectiveness is a complex concept, which does not have a specific definition accepted by everyone. It describes expediency, quality, usefulness, etc. In a broad sense productivity describes system's quality and achievement of goals at the right time. In a narrower sense, the system's efficiency is characterized by the ratio of system performance and costs.

Keywords: team, teamwork, leader, employee, team work efficiency, Hawthorne effect

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ КОМАНДНОЙ РАБОТЫ

Нарине Киракосян

ЕУ, кафедра Экономики и управления, к.э.н, доцент

Оганнес Ангтян

ЕУ, студент

Команды являются основной частью современных организаций, но не все они работают эффективно. Часто команды не используют весь свой потенциал и не оправдывают ожидания менеджера. Но хорошие лидеры помогают добиться успеха.

Эффективность - это сложное понятие, которое не имеет конкретного определения, принимаемой всеми. Оно описывает целесообразность, качество, полезность и т. д. В широком смысле производительность представляет качество системы и достижение целей в правильное время. В более узком смысле эффективность данного подхода характеризуется соотношением производительности системы и затрат.

Ключевые слова: команда, работа в команде, лидер, работник, эффективность работы команды, Хоторнский эффект

Ընդունվել է րաշադրութային՝ 25.03.2019թ.

Գրախոսվել է՝ 17.04.2019թ.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԻՄԻՋԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Կարինե Սարգսյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, փն.թ. թ.
karinesarg@yahoo.com, +374 99 110190

Վահե Ղազարյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանող
vahegh@mail.ru +374 77 957776

Ժամանակակից շուկայական հարաբերությունների զարգացման ներկա փուլը բնութագրվում է ուժեղ մրցակցությամբ, շուկայի որևիցե սեգմենտում առաջատար դիրք զբաղեցնելու համար: Նման պայմաններում հաջող շուկայական գործունեություն ծավալելու կարևորագույն գործոններից են իմիջը և հեղինակությունը, ինչպես ընկերության, այնպես էլ ապրանքների և ծառայությունների: Ներկայումս բազմաթիվ կազմակերպություններ մեծ ֆինանսական միջոցներ են ծախսում դրական իմիջ ստեղծելու համար, սակայն ճիշտ իրականացնելու դեպքում, այդ ծախսերը միանշանակ արդարացված են: Մյուս կողմից, կազմակերպությունները իրենց գործունեության հիմքում դնում են ռազմավարություն, որը ձևավորվում է բազմաթիվ գործոնների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: Իմիջը ունենալով մեծ ազդեցություն կազմակերպության հաջողությունների վրա, չէր կարող ազդեցություն չունենալ նաև կազմակերպության ռազմավարության ձևավորման վրա, ինչն էլ հանդիսացել է այս հոդվածի ուսումնասիրության առարկան:

Հիմնաբառեր. իմիջ, ռազմավարություն, կազմակերպության կառավարում, ռազմավարական կառավարում, կորպորատիվ իմիջ:

Վերջին շրջանում շուկայական հարաբերությունների զարգացման, տնտեսության, գիտության, մշակույթի և կրթության մեջ նորարարական գործընթացների հետ կապված շատ մեծ հետաքրքրություն է առաջանում, ինչպես ընդհանուր կազմակերպության իմիջի բովանդակության և ձևավորման առանձնահատկությունների, այնպես էլ կազմակերպության իմիջի հանդեպ, հատկապես սոցիալ-մշակութային բնագավառում: Կազմակերպությունների ամենակարևոր խնդիր-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ներից է ստեղծել ներքին և արտաքին դրական իմիջ, դրա նպատակն է ամրապնդել և մեծացնել շուկայում իր դիրքը, ներգրավել նոր բանիմաց աշխատակիցների, մոտիվացնել աշխատակիցներին, իրենց արտադրողականությունը բարձրացնելու և առավել արդյունավետ աշխատելու համար: Կազմակերպության մեջ ուժեղ իմիջ ձևավորելու խնդրի նկատմամբ աճող ուշադրությունը պատահական չէ: Ուժեղ կորպորատիվ իմիջը դառնում է անհրաժեշտ պայման, որպեսզի կազմակերպությունը կարողանա հասնել կայուն և շարունակական գործնական հաջողությունների: Դա ունի շատ խելամիտ բացատրություն: Նախ՝ ուժեղ իմիջը թույլ է տալիս կազմակերպությանը ձեռք բերել կայուն դիրք շուկայում, ինչը թույլ է տալիս սահմանել ցանկալի գներ և վարել գնային քաղաքականություն: Երկրորդ՝ ուժեղ իմիջը նվազեցնում է ապրանքների փոխարինման հնարավորության աստիճանը, հետևաբար պաշտպանում է կազմակերպությունը մրցակիցներից, ամրապնդում է նրա դիրքերը փոխարինող ապրանքների հանդեպ: Երրորդ՝ ուժեղ իմիջը ավելի հասանելի է դարձնում ընկերությունների համար ռեսուրսների տարբեր տեսակները:

Կազմակերպության իմիջի գնահատականը տալիս են շրջապատող մարդիկ, հիմնվելով իրենց սեփական փորձի, անձնական արժեքների, համընդհանուր նորմերի, չափանիշների, սկզբունքների հիման վրա: Կերպարի գնահատման ճշգրտությունը ուղիղ համեմատական է նրա ունեցած գիտելիքների խորությանը, որոնք ձևավորվում են հենց այդ բնագավառում:

Բավականին հետաքրքիր են նաև կորպորատիվ իմիջի մի շարք առանձնահատկություններ, որոնք ըստ ամերիկացի հետազոտող Դ.Բուրստինի իրականում գործնականորեն են ձևավորվում [2]: Ներկայացնենք դրանք ստորև:

Նախ իմիջը պետք է լինի սինթետիկ, այսինքն պլանավորվի այնպես, որ թողնի որոշակի տպավորություն՝ իր ապրանքանիշի, բրենդի, ապրանքի բազմազանության միջոցով:

Երկրորդ՝ կազմակերպության իմիջը պետք է լինի ճշգրիտ, հավաստի, որպեսզի վստահություն առաջացնի մարդկանց մոտ և ասոցացվի կոնկրետ կազմակերպության կամ մարդու հետ:

Երրորդ՝ իմիջը պետք է լինի պայծառ ու հստակ, որպեսզի ազդի մարդկանց զգացմունքների վրա:

Չորրորդ՝ այն պետք է լինի պարզ ու հիշվող:

Հինգերորդ՝ իմիջի կարևոր նշաններից մեկը նրա անորոշությունն է, իմիջը պետք է ձևավորվի զգացմունքների, սպասելիքների և իրականության միջև, որպեսզի կանգուն մնա անսպասելի իրավիճակներում, դիմակայի մարդկանց ճաշակների փոփոխություններին [3,306 շ.]:

Հայտնի է, որ յուրաքանչյուր կազմակերպություն իր կյանքի ընթացքում անցնում է չորս փուլերի միջով.

1. Կազմակերպության ձևավորման փուլ, որը բնորոշվում է շուկայի որոշակի սեզմենտի վրա ուղղվածությամբ,
2. Զբաղեցրած դիրքերի ամրապնդման և համեմատաբար կայուն գոյության փուլ,
3. Կազմակերպության նորարարության փուլ, որի նպատակը շուկայի ընդլայնումն է կայուն դիրքեր զբաղեցնելու դեպքում:
4. Կազմակերպության ձևափոխման փուլ, որը բերում է կամ ոչնչացման (օրինակ՝ սնանկացում, դանդաղ լճացում), կամ էլ հերթական նորարարական հեղափոխության և վերածննդի [4]:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր փուլ պետք է ունենա սեփական իմիջային քաղաքականություն՝ արտաքին և (գուցե՝ նախնառաջ) ներքին, որը նախատեսված է զարգացման տվյալ փուլում առավելագույն շահույթ ապահովելուն և հաջորդ փուլ անցնելու համար «ցատկահարթակ» պատրաստելու համար: Իմիջային քաղաքականության նշված գործոններից պարզ է, որ նրան բնորոշ է որոշակի ուշացում, այսինքն, եթե մենք սկսում ենք անհանգստանալ այս փուլի իմիջի համար հենց այդ փուլում էլ գտնվելով, ապա մենք արդեն ուշացել ենք:

«Կորպորատիվ իմիջ» ռազմավարական ասպեկտ» հոդվածի հեղինակ, Ի.Վ. Ալոշինան նշում է, որ կորպորատիվ իմիջի կառավարումը թե՛ տեսականորեն և թե՛ գործնականում սկսվել է քննարկվել ԱՄՆ-ում ավելի քան կես դար առաջ: Այսօրվա դրությամբ, այս ոլորտում ձևավորվել է հայեցակարգային մոտեցումը: Ստորև ներկայացված են նրա հիմնական տարրերը.

- Տեսլականը՝ կազմակերպության պատկերացումն է ներկայիս և ապագայի իրականության մասին: Տեսլականի ձևավորումը կազմակերպության ղեկավարի գլխավոր պարտականություն-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


ներից մեկն է: Նավը շուկայական անորոշ և անկայուն իրավիճակներում ճիշտ ուղղությամբ տանելու համար, նավապետը պետք է իմանա, թե ուր է լողում:

- Կորպորատիվ առաքելությունը այն նշանակալից կարգավիճակն է, որին ձգտում է կազմակերպությունը, նրա սոցիալական նշանակության դերը: Առաքելությունը կարելի է դիտարկել որպես ռազմավարական գործիք, որը որոշում է նպատակային շուկան և կողմնորոշում է տալիս բիզնեսին կամ արտադրությանը:
- Կորպորատիվ յուրօրինակությունը ընկերության մեջ տարածված արժեքների, դատողությունների և վարքագծի նորմերն են, որոնք որոշում են անհատական կորպորատիվ մշակույթի էությունը: Կորպորատիվ յուրօրինակությունը իրականում դա հենց ինքը կազմակերպությունն է, անձի անհատականության անալոգիա:
- Կորպորատիվ ինքնությունը դա այն է, ինչը կազմակերպությունը հաղորդում է իր մասին, իր անհատականության մասին: Այն ամենը, ինչը որ կազմակերպությունը ասում, անում և ստեղծում է, ձևավորում է նրա ինքնությունը:

Ինչպես գիտենք կորպորատիվ ինքնության կառավարման հիմնական նպատակը բարենպաստ կորպորատիվ իմիջ և հաճախորդի հավատարմություն ձեռք բերելն է:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ հասկացությունների փոխկապվածությունը կարելի է ցուցադրել գծապատկերի տեսքով (տես գծապատկեր 1).

Գծապատկեր 1. Իմիջի ձևավորման մեխանիզմ [5]



Ինչպես նշել էինք, այսօր իմիջը հանդիսանում է կազմակերպության ամենակարևոր բնութագրիչներից մեկը և ունի շատ կարևոր դեր նրա մրցունակության բարձրացման և հաճախորդներ ու գործընկերներ գրավելու գործում: Իմիջը հանդես է գալիս որպես խնդիրները լուծելու գործիք, միջոց: Սակայն նրա ամենակարևոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ինքն իրենով կառավարման օբյեկտ է:

Երբ խոսում ենք կազմակերպության գործունեության մասին, պետք է նշենք նաև, որ ցանկացած գործունեություն իրականացնելիս, ցանկացած կազմակերպության կենսագործունեության փուլ անցում կատարելիս ընկերությունը պետք է ունենա որոշակի ռազմավարություն, նպատակ, նպատակին հասնելու գործողությունների շղթա, ժամկետներ և այլն:

Ռազմավարությունը դա կազմակերպության ընտրած զարգացման ուղղությունն է: Նրա գործունեության տեսակի, միջոցների և բնագավառի, կազմակերպության ներսում փոխհարաբերությունների, նաև շրջակա միջավայրում նրա զբաղեցրած դիրքի վերաբերյալ որոշումներն են, որոնք թույլ են տալիս կազմակերպությանը հասնել իրենց նպատակներին:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կազմակերպության ռազմավարությունը իր առաջ ունի դրված մի շարք խնդիրներ, որոնցից գլխավորը կազմակերպության կայուն զարգացումն է և հիմնական նպատակի՝ շահույթի ապահովումը: Այս հիմնական գործոնների վրա իր բացարձակ ազդեցությունն ունի կազմակերպության իմիջը:

Նախևառաջ կազմակերպությունը ռազմավարության մշակման փուլում իրականացնում է ընկերության համալիր ՈւԹՀՍ ուսումնասիրություն և վերլուծություն, որի ժամանակ բացահայտված ուժեղ կողմերի և հնարավորությունների օգտագործման շնորհիվ փորձում է ապահովել առավելագույն արդյունք:

Կազմակերպության դրական իմիջը հանդիսանում է կազմակերպության ուժեղ կողմերից մեկը, որը կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ սպառողների գիտակցության վրա, քան օրինակ ապրանքի գինը: Մյուս կողմից կազմակերպության դրական իմիջը ապահովում է կայուն և ամուր կապեր գործընկերների հետ, այդ թվում՝ մատակարարների, միջնորդների, ինչը թույլ է տալիս օգտվել դրա բոլոր առավելություններից՝ սկսած գնային քաղաքականությունից, մինչև մատուցվող ծառայությունների արագություն և որակ:

Եթե վերլուծության արդյունքում կազմակերպության ընթացիկ իմիջը հանդիսանում է տվյալ պահին ընկերության թույլ կողմը, ապա դա կազդի ոչ միայն սպառման վրա, որը կազմակերպության կենսագործունեության հիմնական պայմանն է, այլ նաև նաև գործընկերների հետ հուսալի հարաբերություններ ստեղծելուն:

Երբ կազմակերպությունը ունի դրական իմիջ, ըստ այդմ նաև կայուն սպառողների խումբ իր շուկայական սեգմենտում և հուսալի գործընկերային հարաբերություններ, ապա կազմակերպության ռազմավարությունը կարող է ուղղված լինել կազմակերպության «ագրեսիվ» զարգացմանը և առաջընթացին, նոր շուկաների գրավմանը, նոր ոլորտներ ներթափանցելուն և այլն:

Իսկ եթե կազմակերպությունը հասարակական ընկալման տեսանկյունից ունի բացասական կամ ոչ դրական իմիջ, ապա ռազմավարությունը կարող է լինել «պաշտպանվողական», ուղղված շուկայում բացասական իմիջ ունենալու պատճառների բացահայտմանն ու դրանց վերացմանը, դրական իմիջի ձևավորմանը, որից հետո միայն զարգացմանը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կազմակերպության իմիջի դրական կամ բացասական լինելը ոչ միայն ազդում է ընկերության ռազմավարության տեսակի ընտրության վրա, այլ նաև ժամկետների:

Դրական իմիջը թույլ կտա կազմակերպությանը իրականացնել երկարաժամկետ ռազմավարական կառավարում, իհարկե, առավելագույնս հաշվի առնելով շուկայի, ներքին և արտաքին միջավայրների փոփոխությունները:

Իմիջի մակարդակը ազդում է նաև կազմակերպության ֆինանսական ռեսուրսների բաշխման վրա:

Երբ կազմակերպությունը ունի դրական իմիջ ընկերությունը ֆինանսական ռեսուրսների ավելի մեծ ծավալը կներդնի արտադրանքի բարելավման կամ արտադրության ընդլայնման ուղղությամբ՝ նոր տեխնոլոգիայի ներդնում, ապրանքի որակի բարելավում, ապրանքատեսակի ընդլայնում և այլն:

Իսկ երբ կազմակերպության իմիջը գտնվում է ցածր մակարդակի վրա, ապա կազմակերպությունը ֆինանսական ռեսուրսներից ստիպված են մեծ հատկացումներ անել իմիջի բարձրացման ուղղությամբ, այդ թվում՝ մարքեթինգային և գովազդային ծախսերի ավելացում:

Այսպիսով, կազմակերպության իմիջը մեծ ազդեցություն ունի ընկերության ռազմավարության ընտրության, ռազմավարական որոշումների կայացման, ռազմավարական ուղղությունների հաստատման, ժամկետների, ֆինանսական ռեսուրսների բաշխման, ուստի և ողջ ռազմավարության վրա: Ուստի, կազմակերպությունը ռազմավարություն մշակելիս, պետք է տեղեկատվության հավաքագրման, մշակման և վերլուծության փուլում հիմնական ուսումնասիրվող կատեգորիաների կազմում ներառի նաև կազմակերպության իմիջը և դրա ազդեցությունը կազմակերպության ռազմավարությամբ սահմանվող նպատակին հասնելու գործողությունների վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Перельгина Е.Б. Психология имиджа, 2002
2. <https://studfiles.net/preview/2015073>, формировании имиджа предприятия, վերջին դիտում 12.02.19թ
3. Королько В.Г. Основы публичных рилейшенз, 2000

4. https://studbooks.net/1362283/medzhment/tehnologii_rol_sozdanii_pozhitelnogo_imidzha_organizatsii, PR-технологии и их роль в создании положительного имиджа организации, վերջին դիտում 20.01.19թ
5. <https://studfiles.net/preview/2015073>, формировании имиджа предприятия, վերջին դիտում 12.02.19թ

ВЛИЯНИЕ ИМИДЖА НА ФОРМИРОВАНИЕ СТРАТЕГИИ ОРГАНИЗАЦИИ

Карине Саргсян

ЕУ, кафедра Экономике и управления, к.э.н

Варе Казарян

ЕУ, студент

Современный этап развития современных рыночных отношений характеризуется сильной конкуренцией в том, чтобы занять лидирующие позиции в любом сегменте рынка. В таких условиях одним из важнейших факторов успешной деятельности на рынке является имидж и репутация как компании, так и товаров и услуг. В настоящее время многие организации тратят огромные деньги на создание позитивного имиджа, но в случае правильной реализации эти затраты определенно оправданы. Из других компонентов организации основывают свою деятельность на стратегии, которая формируется в результате изучения и анализа многих факторов. Имея представление об огромном влиянии на успех организации, он не может повлиять на стратегию организации, которая была предметом данной статьи.

Ключевые слова: имидж, стратегия, управление организацией, стратегический менеджмент, корпоративный имидж.

IMAGE INFLUENCE ON STRUGGLE FOR ORGANIZATION STRATEGY

Karine Sargsyan

EU, PhD in Economics

Vahe Ghazaryan

EU, Student

The current stage of market relations development is characterized by a strong competition to occupy a leading position in any segment of the market. In such circumstances, one of the most important factors of successful market activity is the image and reputation of both the company and the goods and services. At present, many organizations spend a great deal of money to create a positive image, but in case of the right implementation, these costs are definitely justified. On the other hand, organizations base their activities on a strategy that is shaped based on the study and analysis of many factors. The idea that the image which has great influence on the organization's success, it cannot have an impact on the organization's strategy, has been the subject matter of the present article.

Keywords: image, strategy, organization management, strategic management, corporate image.

Ընդունվել է տպագրության՝ 25.03.2019թ.

Գրախոսվել է՝ 19.04.2019թ.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մանուշար Սիմոնյան

*ԵՀ, Գավառի մասնաճյուղ, Կոն. թ.
simonyan.manuchar@mail.ru, 094111913*

Հոդվածում քննարկվել է ռազմավարական այլընտրանքների ընտրության չափանիշները: Հեղինակը ուսումնասիրել է մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող տարբեր տեսակետները և բացահայտել մրցակցային առավելության հասնելու ուղիները, մասնավորապես՝ բազային և ֆունկցիոնալ ռազմավարությունները:

Քննարկվել են վերջին տարիներին միջազգային տնտեսական պրակտիկայում լայն տարածում գտած՝ հավանական տնտեսական ներգործության մեթոդը, որը ըստ հեղինակի, հնարավորություն կտա կազմակերպություններին ապահովելու մրցակցային առավելություն և հասնելու միտված նպատակին:

Հիմնաբառեր. շուկա, ապրանք, ռազմավարություն, ռազմավարական այլընտրանք, մրցակցություն, մրցունակություն:

Գործող կազմակերպության արտաքին միջավայրի, ներքին ռեսուրսների և հնարավորությունների վերլուծությունը հետապնդում է կրկնակի նպատակ՝ որոշել հնարավոր ռազմավարական այլընտրանքները և ձևակերպել լավագույն տարբերակի ընտրության չափանիշը:

Ապրանքային շուկայում ներդրման ռազմավարությունը սահմանում է ներդրումային որոշումը և պատասխանում այն հարցին, թե որտեղ մրցակցել: Անհրաժեշտ է արդյոք գոյություն ունեցող բիզնեսի ոլորտը ընդլայնել կամ փոքրացնել (Բոստոնի խորհրդակցական խմբի մատրիցան):

Ինչպիսի՞ աճի ուղղությամբ իրականացնել ներդրումները:

Առաջացե՞լ է արդյոք նոր, գրավիչ ոլորտ բիզնեսում (Անտոֆֆի մատրիցան «ապրանք-շուկա»):

Մրցակցային առավելության հասնելու ռազմավարությունը տալի՞ս է պատասխան այն հարցին, թե ինչպե՞ս մրցակցել:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մրցակցային առավելության հասնելու ո՞ր բազային ռազմավարությունն է լիովին համապատասխանում շուկայում ստեղծված իրավիճակին և կազմակերպության հնարավորություններին:

Ինչպիսի՞ն պետք է լինի դիրքավորման ռազմավարությունը, ապրանքների առաջխաղացումը դեպի շուկա՝ ապրանքայի՞ն, գնայի՞ն, թե՞ այլ ռազմավարություն:

Ինչպիսի՞ ռեսուրսներ և գործունեության ոլորտ է անհրաժեշտ ընդգրկել, որպեսզի իրացվի ռազմավարությունը:

Ապրանքային շուկայում ներդրման ռազմավարություն
Հեռանալ շուկայից («շուն» ապրանքների համար)
«Վերցնել սերուցքը» Բոստոնի
 («Կով» ապրանքների համար)խորհրդատվական
 Իրեն պահպանել շուկայում խմբի
 («Հիմնախնդիրներ» ապրանքների համար) մատրիցան
 Մուտք գործել շուկա /ան («Աստղ» ապրանքների համար)

Շուկայի զարգացումը
Նոր շուկաներ Անսոֆֆի
Նոր ապրանքներմատրիցան
Դիվերսիֆիկացիա

Մրցակցային առավելության հասնելու ռազմավարություն
Բազային ռազմավարությունները.

- ցածր ծախսեր,
- շերտավորում,
- կիզակետում,
- առաջինը մուտք գործողը,
- սիներգիզմ:

Ֆունկցիոնալ ռազմավարություններ (ԳՀՓԿԱ, արտադրություն, առաքում, մարքեթինգ, ֆինանսներ և այլն):

Ռեսուրսներ և գործունեության ոլորտներ.

Ընտրության չափանիշները,

Հնարավորությունների հակազդում /արտաքին միջավայրի սպառնալիքները/:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մրցակցային առավելության ապահովումը.

- ֆիրմայի ուժեղ կողմերի և մրցակիցների թույլ կողմերի օգտագործումը,
- ֆիրմայի թույլ կողմերի և մրցակիցների ուժեղ կողմերի չեզոքացումը:

Կազմակերպության նպատակներին համապատասխան.

- հասնել տրված երկարաժամկետ ցուցանիշներին,
- նպատակների և առավելությունների համատեղության ապահովում:

Ռազմավարության իրագործում.

- առկա ռեսուրսների բավարար քանակություն,
- ռազմավարության և ներքին կազմակերպման համատեղություն:

Ձեռնարկության մյուս ռազմավարությունների հետ փոխադարձ կապի հաշվառում.

- պորտֆելային հաշվեկշռի հանելը,
- ռազմավարության իրագործելիության հաշվառում,
- սիներգիկ արդյունավետության օգտագործումը:

Մրցակցային ռազմավարության ընտրության ժամանակ կարևոր հիմնախնդիր է հանդիսանում ֆունկցիոնալ և այլ ռազմավարությունների համաձայնեցումը, դրանց ուղղվածությունը ընդհանուր նպատակին հասնելու համար: Կազմակերպությունը իր զարգացման համար կարող է ունենալ մի քանի այլընտրանքներ արտաքին միջավայրի փոփոխության այս կամ այն տարբերակի համար: Այս դեպքում որպես ներքին սահմանափակում կարող են հանդես գալ կազմակերպության պոտենցիալ հնարավորությունները, ապրանքի կենսացիկլը, արտադրական համակարգերի վիճակը և կազմակերպության տնտեսական զարգացման մակարդակը, ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը. մենեջերների և ողջ անձնակազմի պատասխանատվությունը մշակված ռազմավարության իրացման գործընթացում: Բացի սրանցից՝ մեծ է կազմակերպության կառավարման կուլտուրայի, կառավարիչների՝ ռազմավարական որոշումների իրացման փորձի և այլ գործոնների դերը: Պարզ է, որ փոփոխությունները, որոնք ազդում են ռազմավարության ընտրության վրա, պրակտիկայում դժվար են ենթարկվում քանակական արտահայտությանը, դրանց փոխադարձ կա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

պը վատ է վերահսկվում, և անորոշության ու դիսկի գնահատումը բարդ է: Իրական կյանքում կազմակերպության ռազմավարության հնարավոր տարբերակները, որպես կանոն, չեն բացառում մեկը մյուսին և կարող են տարբեր ձևով զուգակցվել: Այլընտրանքային որոշումների ընդունման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կազմակերպության հնարավորությունները, քանի որ հնարավոր է, որ չբավարարեն ռեսուրսները մի շարք այլընտրանքներ միաժամանակ մշակելու համար: Բացի դրանից, մանրամասն հաշվարկը և մի քանի այլընտրանքների պլանավորումը կարող են լինել արդյունավետ, եթե անհրաժեշտ է ընդունել միայն մեկ որոշում: Այդ դեպքում կարելի է սկսել աշխատանքները երկու-երեք այլընտրանքների ուղղությամբ, բայց դրանք իրագործել միայն նախագծային մակարդակում: Դա, մեր կարծիքով, հնարավորություն կտա հավաքել մեծ քանակությամբ փաստացի տվյալներ և կենտրոնանալով մեկ տարբերակի վրա՝ ավելի ճիշտ գնահատել ընտրված այլընտրանքը: Սկզբունքորեն հնարավոր է նաև այլ մոտեցում, որի դեպքում խորությամբ մշակվում է մեկ այլընտրանքային ռազմավարություն: Եթե հետագայում այն ինչ որ պատճառով կարող է լինել անբավարար, իրականացվում է անցում այլ ռազմավարության մշակման և այլն:

Ակնհայտ է, որ նշված մոտեցումներից ոչ մեկն էլ չի երաշխավորում, թե հնարավոր է գտնել կատարյալ որոշում: Սակայն իրական կյանքում ընտրությունը իրականացվում է սահմանափակ ժամանակային, ֆինանսական, մարդկային և այլ գործոնների ազդեցության պայմաններում: Որոշումը կատարյալ կարող է լինել հասանելիության սահմաններում, բայց ժամանակը կամ անհրաժեշտ ծախսերը կարող են խոչընդոտել դրան [2, շ. 94-95]: Հաճախ ռազմավարության զարգացման առաջին քայլը կարող է հանդիսանալ կազմակերպության առաքելությունը, որի դերն այն է, որ առաքելության որոշման գործընթացում առաջադրում և քննարկում են տարբեր առաջարկություններ, այսինքն՝ առաքելությունը կարող է լինել ռազմավարական այլընտրանքի վերարտադրման և ընտրության միջոց: Սովորաբար առաքելության սահմանմանը տրամաբանորեն հետևում է արտաքին միջավայրի և կազմակերպության գործունեության վերլուծությունը:

Սակայն հաճախ օգտակար է սկզբում որոշել առաքելությունը.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- արտաքին միջավայրի վերլուծության ընդգրկման մակարդակը ճշգրտել առաքելությունը սահմանելուց հետո,
- առաքելության սահմանումը պատկերացում է տալիս կազմակերպության չափանիշների և աճի ուղղությունների վերաբերյալ:

Ռազմավարական այլընտրանքների ձևավորման համար առաջին հերթին անհրաժեշտ է վերլուծել կարևոր ռազմավարական գործոնները՝ ելնելով ընթացիկ իրավիճակից: Այդ աշխատանքների արդյունքում հնարավոր է բացահայտել կազմակերպության ընթացիկ նպատակների առաքելությունը ճշտելու անհրաժեշտությունը:

Պրակտիկան հավաստում է, որ կազմակերպությունը պետք է հնարավոր կերպով վերլուծի իր գործունեության այն ոլորտը, որտեղ կարող է իրականացնել իր մրցակցային առավելությունը և ապահովել բարձր եկամուտ: Այսպիսի վերլուծության արդյունքում հնարավոր է կայացնել որոշում բիզնեսի մի շարք ոլորտներից դուրս գալու և համապատասխան ակտիվների վաճառքի վերաբերյալ կամ՝ հակառակը, ընդլայնել բիզնեսի որոշ ուղղություններ՝ ավելացնելով նմանատիպ կազմակերպություններ կորպորատիվ պորտֆելում: Այս դեպքում բիզնես-պորտֆելը պետք է լինի հավասարակշռված օգտագործման հետ (օրինակ՝ Բոստոնի խորհրդատվական խմբի մոտեցումը):

Հարկ է նշել, որ կազմակերպությունից առանձին բիզնես-միավորների առանձնացման կամ էլ վաճառքի պատճառ կարող են հանդիսանալ.

- հարմարվածությունը նոր շուկայական ռազմավարության սահմաններում տնտեսական իրավիճակների փոփոխությանը,
- երբ բիզնես-միավորը հնարավոր չէ օգտագործել արդյունավետ, այնպես՝ ինչպես առանձին ընկերություն հանդես գալու դեպքում,
- նախկինում ոչ ճիշտ ընդունված ներդրումային որոշման ուղղման փորձը,
- նախկինում ձեռք բերված անեկամտաբեր կազմակերպության շահավետ վաճառքի որոշումը, որի արժեքը աճել է մենեջմենթի արվեստի կամ այլ գործոնների հաշվին,
- ազատվելը վնասաբեր բիզնեսից,

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- դրամական միջոցների պահանջարկը, որը կարող էր ստացվել վաճառքից:
- Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի կլանման և միաձուլման տեսություն, որտեղ բացահայտվում են բիզնեսի ընդլայնման արտաքին պատճառները: Դրանք են՝
- ռիսկի փոքրացումը, ծախսեր կամ ժամանակ շուկայի բաժինն ընդլայնելու համար,
- այլ ֆիրմաների լրացուցիչ հնարավորություններից օգուտ ստանալը,
- ազատ մուտքի հնարավորություն կարևորագույն ռեսուրսների և պորտֆելների նկատմամբ,
- մեծ օգուտ ստանալ, քան «գրոյից» նոր բիզնես ստեղծելը՝ գոյություն ունեցող կազմակերպության շրջանակներում:

Եթե նախատեսվում է կլանում, ապա ռազմավարությունը պետք է հանգի բացահայտելու բարենպաստ հնարավորությունները և կլանման թեկնածուի որոշումները: Սկսվում է գործարքի տակտիկայի մշակումը, որից հետո մշակվում է գործունեության ամբողջացման և կազմակերպչական կառուցվածքի միաձուլման ռազմավարությունը, որպեսզի իրացվի միջոցառման օգուտը: Ամբողջացումը կարող է դառնալ բարդ խնդիր, քանզի կազմակերպությունների միավորումը, թեև լրացնում է միմյանց ռազմավարական տեսակետից, սակայն դրանք կարող են ունենալ կորպորատիվ կուլտուրայի, կառավարման ռճի. կազմակերպչական կառուցվածքի մեծ տարբերություններ:

Հետևաբար, ամեն մի կազմակերպությունում գոյություն ունեն բազմաթիվ ռազմավարական այլընտրանքներ, որոնց ընդունումը նույնպես հանդիսանում է դժվարին խնդիր: Այլընտրանքների ռազմավարական որոշումների ընդունման հնարավոր չափանիշները կարելի է միավորել վեց խմբերում:

Ռազմավարական այլընտրանքները անհրաժեշտ է գնահատել այն նպատակով, որ բացահայտվի՝ համապատասխանո՞ւմ են արդյոք դրանք արտաքին միջավայրի հնարավորություններին և սպառնալիքներին (արտաքին վերլուծություն):

Մրցակցային առավելության հասնելու համար, որը հանդիսանում է ռազմավարության մասը կամ հիմքը, անհրաժեշտ է օգտագործել ռեսուրսները և կազմակերպության գործունեության ոլորտը: Այդ պատ-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ճառով ընտվրած ռազմավարությունը պետք է համապատասխանի արտաքին միջավայրին, կազմակերպության նպատակին, լինի իրացնելի և չհակասի կազմակերպության մյուս ռազմավարություններին: Կազմակերպությունում ռազմավարության ընտրության ժամանակ, ինչպես նշում է Ի. Անտոֆֆը [1, c. 126], «Առաջանում են հակասություններ երեք խումբ կողմնորոշիչների միջև՝ երկարաժամկետ, կարճաժամկետ շահութաբերության և վաճառքի ծավալի ցուցանիշների, շահութաբերության և կառավարման ճկունության, կառավարման ճկունության և սիներգիզմի»:

Ինչպե՞ս է ընդունվում լավագույն մրցակցային ռազմավարական որոշումը.

1. Հնարավոր է, որ առավել կարևոր չափանիշ հանդիսանա այն, թե նախատեսվող ռազմավարությունը ինչպես է հարաբերակցվում ռազմավարական գործոնների հետ, որոնք ստացվում են SWOT վերլուծության արդյունքում: Եթե ռազմավարական այլընտրանքները չեն օգտագործում արտաքին հնարավորությունները և կազմակերպության առանցքային ուժեղ կողմերը, բացի դրանից հաշվի չեն առնվում արտաքին սպառնալիքները և կազմակերպության թույլ կողմերը, ապա այն հավանական է, որ դատապարտված լինի անհաջողության:

2. Ռազմավարության ընտրության ժամանակ կարևորվում են հետևյալ հարցերը, հնարավոր է, արդյոք, ռազմավարական այլընտրանքը ապահովի նախկինում առաջադրած նպատակների իրագործումը, գտնվում է, արդյոք, այն համապատասխանության մեջ կորպորատիվ առաքելության հետ:

3. Անհրաժեշտ է համոզվել, որ ֆունկցիոնալ ռազմավարությունները, որոնք օժանդակում են տվյալ ռազմավարական այլընտրանքին, փոխկապակցված են:

4. Հաջորդ հարցի էությունն այն է, թե բավարա՞ր է, արդյոք, ռազմավարական պլանի շրջանակներում ենթադրվող շուկայի բաժինն օժանդակի ապահովելու ներդրումից ստացվելիք եկամտի և շահույթի մակարդակը:

5. Անհրաժեշտ է գնահատել տվյալ ռազմավարական այլընտրանքի ռիսկի աստիճանը, եթե խոսվում է խոշոր ակտիվների ներգրավման մասին:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

6. Անհրաժեշտ է գնահատել տվյալ միկրոմիջավայրում տարբեր շահագրգռված խմբերի հակազդեցությունը տրված ռազմավարական այլընտրանքի նկատմամբ:

Վերջին տարիներին լայն տարածում է ստացել հավանական տնտեսական գործունեության գնահատման մեթոդը, ուստի ընկերության ապագան կանխորոշող ամեն մի այլընտրանքի համար մանրամասն մշակվում է տեսարան, որտեղ նախատեսվում է իրավիճակի փոփոխության երեք դեպք՝ լավատեսական, հոռետեսական և հավանական:

Եթե տեսարանները համապատասխանորեն արտացոլում են մենեջմենթի վերաբերմունքը, ռիսկային, արտաքին և ներքին միջավայրի ազդեցությունը, վերին օղակի կառավարիչների անձնական շահերը, ապա դրանք հանդիսանում են արդյունավետ գործիք, օգնում են մենեջերներին ընտրելու ռազմավարական այլընտրանք և լավագույն ձևով նպաստում հասնելու ընկերության նպատակին:

Պարզ է, որ նշված մեթոդների կիրառումը հնարավորություն կտա ընդունելու այնպիսի կառավարչական որոշումներ, որոնք կբարձրացնեն ռազմավարական կառավարման արդյունավետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. И. Ансофф, “Стратегическое управление” - М., Экономика, 1989
2. Ю. В. Гусев, “Стратегическое управление” - Новосибирск, 1995
3. А. Стрикленд, “Стратегический менеджмент” - М., ИНФРА-2001
4. Ժամանակակից մարքեթինգ (փորձ և հիմնախնդիրներ): Վ. Առաքելյան, Հ. Սուքիասյան, Գ. Գրիգորյան, Գ. Սարգսյան - Եր., «Նահապետ», 2008:

**ВОЗМОЖНЫЕ КРИТЕРИИ ВЫБОРА СТРАТЕГИЧЕСКИХ
АЛЬТЕРНАТИВНЫХ РЕШЕНИЙ**

Манучар Симонян

Филиал ЕУ в г. Гавар, к.э.н.

В статье обсуждались вопросы выбора возможных критерий в содействии разработки стратегических альтернатив на рынке сбыта.

Через анализ подходов, которые представлены в специализированной литературе, автор выявил и предъявил критерии выбора возможных стратегических альтернатив продвижения на рынке сбыта.

По мнению автора, предложенные подходы выбора критерий позволят организациям создать эффективную стратегию в области обеспечения конкурентного преимущества.

Ключевые слова: рынок, товар, конкурентоспособность, стратегических альтернатив, конкуренция, стратегия.

POSSIBLE CRITERIA OF CHOOSING AN ALTERNATIVE STRATEGY

Manuchar Simonyan

EU, Gavar branch, PhD in Economics

The article discussed the choice of possible criteria in the promotion of the development of strategic alternatives in the sales market. The author developed and proposed a procedure for developing a competitive strategy based on the critical analysis of the existing literature. The experience of developed countries in application of these practices should be adopted by the industry of RA.

Keywords: product, production, market, competition, competitiveness, strategy, sales, final result, useful properties.

Ընդունվել է պայագրությամբ՝ 01.04.2019թ.

Գրախոսվել է՝ 25.04.2019թ.

ՀՀ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ռաֆայել Մանուկյան

*ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ
rafayelmanukyan@yahoo.com, +374 43 421111*

Ներկայումս ՀՀ-ում կենտրոնացման, ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման հարաբերակցությունները գնահատելու, ինչպես նաև ապակենտրոնացման ու ապահամակենտրոնացման արդյունավետության աստիճանը որոշելու և դրա բարձրացման ուղղությամբ համարժեք քաղաքականություն և կառուցակարգեր մշակելու համար անհրաժեշտ է կատարել պետական կառավարման համակարգի մարմինների գործառույթների համալիր վերլուծություն: Այդպիսի գործառույթային-կառուցվածքային վերլուծության անհրաժեշտություն է զգացվում և՛ ապակենտրոնացման, և՛ ապահամակենտրոնացման համար: Նման վերլուծության միջոցով կարելի է պարզել, թե որքանով է հիմնավորված գործառույթների բաշխման այժմյան համակարգը, ճի՞շտ են արդյոք որոշված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, որքանով են արդյունավետ գործում տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակված, պարտադիր և կամավոր լիազորությունները, ինչպիսի հնարավորություններ ու ուղղություններ են ուրվագծվում գործառույթների նոր վերաբաշխման համար:

Հիմնաբառեր. *պետական գործառույթներ, կենտրոնացում, ապակենտրոնացում, ապահամակենտրոնացում, տեղական ինքնակառավարում, պետական կառավարման համակարգ, գործադիր իշխանություն:*

Պետական կառավարման մարմինների գործառույթային վերլուծության շնորհիվ կարելի է վեր հանել կառավարման մարմինների գործառույթների միջև գոյություն ունեցող կրկնորդումներն ու զուգահեռականությունը, կրճատել ավելորդ օղակները, լուծել համակարգային և ինստիտուցիոնալ խնդիրներ, ինչը պայմաններ կստեղծի կառավարման կազմակերպական կառուցվածքներն արդիականացնելու համար:

«Հ պետական կառավարման մարմիններում գործառույթային վերլուծության նպատակը ՀՀ պետական կառավարման կազմակերպական այնպիսի մոդելի ձևավորումն է, որը հնարավորություն կընձեռնի պետական կառավարման մարմիններին առավել արդյունավետ իրականացնել իրենց վերապահված միայն անհրաժեշտ գործառույթները:

Մի շարք երկրների միջազգային փորձը [1. 2], վկայում է, որ պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացումը պետք է սկսել պետական կառավարման մարմիններում գործառույթների նկարագրման և վերլուծության գործընթացով, որի իրականացման համար կիրառվում է «Գործառույթային վերլուծության համընդհանուր մեթոդիկան [1, սր 24-44]»: Այս մեթոդիկան է կիրառվել նաև ՀՀ պետական կառավարման բարեփոխումների հանձնաժողովի կողմից 1999-2001թթ., ինչպես նաև մեր կողմից 2018թ. ՀՀ պետական կառավարման մարմինների գործառույթների հետազոտության և վերլուծության ժամանակ:

Համաձայն «Գործառույթային վերլուծության համընդհանուր մեթոդիկա»-ի գործառույթները դասակարգվում են.

- **«Ա» - քաղաքականության և ռազմավարության մշակման գործառույթներ՝** այդ թվում, քաղաքականության վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ռազմավարական պլանավորումը, օրենքների իրավական ակտերի նախագծերի կազմումը, պայմանագրերի, չափորոշիչների և նորմերի մշակումը, Այս գործառույթները պետք է իրականացվեն նախարարությունների կենտրոնական ապարատի՝ մասնագիտական հմտություններ ունեցող աշխատակիցների միջոցով:

- **«Բ» - ծառայությունների մատուցման գործառույթներ:** Այս խմբի մեջ են մտնում պետական մարմինների կողմից պետական այլ մարմիններին, անհատներին ու իրավական-կազմակերպական այլ կառույցներին տարբեր բնույթի ծառայությունների մատուցում: Ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման արդյունքում նմանատիպ գործառույթները պետք է իրականացվեն պետական տարբեր գերատեսչությունների՝ գործակալությունների և տեսչությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

- **«Գ» - կանոնակարգող և կարգավորիչ գործառույթներ,** որոնց մեջ մտնում են արտոնագրումը, լիցենզավորումը, քվտավորումը, ստուգումը, ֆինանսական աուդիտը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

• «Դ» - համակարգման, վերահսկողության, և կատարողականի գնահատման (մոնիտորինգի) գործառույթներ: Այս խմբի մեջ են մտնում աշխատանքների համակարգումը, աշխատանքների ընթացքի վերլուծությունը և տարբեր արդյունքների համադրումը, սահմանված ժամկետներում և աշխատանքների որակով կատարման ընթացքի վերահսկումը, աշխատանքների կատարողականի մոնիտորինգը:

• «Ե» - Օժանդակող (սպասարկող) գործառույթներ, որոնց թվում են տեղեկատվական համակարգերի, հասարակայնության հետ կապերի, ենթակառուցյունների և քարտուղարական ծառայությունների գործառույթները:

2000թ. ՀՀ պետական կառավարման բարեփոխումների հանձնաժողովի կողմից «Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում իրականացվել է ՀՀ պետական կառավարման մարմինների գործառույթների վերլուծություն [3, էջ 22-26]:

2018թ. մեր կողմից իրականացված ՀՀ նախարարությունների գործառույթների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տալիս, որ 2008-2018թթ. ընթացքում պատկերը որոշակի փոխվել է (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1¹

2018թ. ՀՀ նախարարություններում իրականացված գործառույթային վերլուծության արդյունքները

Նախարարության անվանումը	Ընդամենը՝ գործառույթների քանակը	Ըստ տեսակների գործառույթների թիվը և տեսակար կշիռը(%)									
		Ա		Բ		Գ		Դ		Ե	
		Ցիկլային	Մոսկոս	Ցիկլային	Մոսկոս	Ցիկլային	Մոսկոս	Ցիկլային	Մոսկոս	Ցիկլային	Մոսկոս
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	63/7	34	54	3	5	10	16	13	20	3	5
ՀՀ ֆինանսների նախարարություն	79/8	25	32	12	15	20	25	11	14	11	14

¹ Աղյուսակը կազմված է մեր կողմից

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարարություն	31/6	7	23	10	32	7	23	5	16	2	6
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	27/0	3	11	5	19	9	33	4	15	6	22
ՀՀ արդարադատության նախարարություն	27/2	5	19	9	33	7	26	3	11	3	11
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	37/1	13	35	4	11	8	21,5	8	21,5	4	11
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	40/5	15	37,5	2	5	11	27,5	10	25	2	5
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	61/11	23	38	7	11	8	13	19	31	4	7
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	35/5	11	31	3	8,5	10	28,5	8	23	3	9
ՀՀ սփյուռքի նախարարություն	28/6	12	43	1	3,5	5	18	9	32	1	3,5
ՀՀ բնապահպանության նախարարություն	34/2	21	62	2	6	6	17	2	6	3	9
ՀՀ մշակույթի նախարարություն	40/5	15	37,5	3	7,5	14	35	3	7,5	5	12,5
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	28/0	11	39	3	11	7	25	3	11	4	14
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	36/2	16	44	8	22	7	20	3	8	2	6

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՀ առողջապահության նախարարություն	29/7	13	45	2	7	4	14	8	27	2	7
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	32/2	19	59	1	3	4	13	5	16	3	9
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	35/12	17	49	0	0	4	11	12	34	2	6
Ընդամենը	662	260	39	75	12	141	21	126	19	60	9

Փաստորեն, 2018թ. մեր կողմից իրականացված ՀՀ պետական կառավարման մարմինների գործառույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ 18 տարվա բարեփոխումների արդյունքում դեռևս պատկերը չի փոխվել՝ ՀՀ նախարարությունները էլի հիմնականում իրականացնում են քաղաքականության և ռազմավարության մշակման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները: Նույնն է պատկերը նաև ծառայությունների մատուցման և սպասարկող, օժանդակող գործառույթների մասով՝ դրանք նախարարությունների գործառույթներում շատ ցածր տոկոս են կազմում (տե՛ս, աղյուսակ 1):

ՀՀ վերոնշյալ պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործառույթների ընդհանուր ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետության պետական կառավարման մարմիններում այսօր էլ դեռևս հստակ չեն դրանց բաժանման ու բաշխման սկզբունքները: Այս հիմնախնդրի վերաբերյալ 2018թ. և 2000թ. ՀՀ նախարարություններում անցկացված ուսումնասիրությունների ամփոփ արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 2

ՀՀ նախարարությունների կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառույթի տեսակարար կշիռը գործառույթների ընդհանուր թվաքանակի մեջ 2000թ. և 2018թ.

Գործառույթի տեսակը	2000թ. [4, էջ 20]		2018 ² թ.	
	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը
(Ա) Քաղաքականության և ռազմավարության մշակման գործառույթ	310	39%	260	39%
(Բ) Ծառայությունների մատուցման գործառույթ	79	10%	75	12%
(Գ) Կանոնակարգող և կարգավորիչ գործառույթ	123	15%	141	21%
(Դ) Համակարգող և կատարողականների մոնիտորինգի գործառույթ	198	25%	126	19%
(Ե) Օժանդակող/ սպասարկող/ գործառույթ	92	11%	60	9%
Ընդամենը՝	802	100	662	100

Ըստ 2001թ. տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է. Օրոյանի [4, էջ 20] դիտարկումների՝ մոտ 200 գործառույթ (գործառույթների ընդհանուր թվաքանակի մոտ 25%-ը) ենթակա է ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման դեպի տեղական ինքնակառավարման մարմիններ և կառավարման ստորին օղակներ: Սակայն, Աղյուսակ 3-ից երևում է, որ 2000-2018թթ. ընթացքում նախարարությունների կողմից իրականացվող ընդհանուր գործառույթների թիվը նվազել է 17,5%-ով (140): Ավելին, եթե դիտարկենք նաև այն փաստը, որ 2018թ. գործող նախարարությունների ցանկում բացակայում են մի շարք նախարարություններ (ՀՀ պետական եկամուտների նախարարություն, ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, ՀՀ սեփականաշնորհման նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն), որոնք ներկայումս ՀՀ կառավարությանը առընթեր մարմիններ են, ապա կարելի է եզրակացնել, որ

² Տվյալները վերցված են մեր հետազոտության արդյունքներից (տե՛ս, աղյուսակ 2)

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

17,5%-ով գործառույթների նվազումը հիմնականում պայմանավորված է նշված նախարարությունների կարգավիճակի փոփոխությամբ: Ընդ որում, եթե հաշվի առնենք, որ կառավարության առընթեր մարմինների գործառույթները գրեթե չեն տարբերվում նախարարությունների գործառույթներից, ապա այս փաստը ևս հաստատում է, որ գործառույթների թվաքանակի կրճատումը տեղի է ունեցել նախարարությունների թվի կրճատման հետևանքով: Առավել ևս, որ 2000թ. ուսումնասիրված 17 նախարարությունների ցանկում ընդգրկված չեն ՀՀ պաշտպանության, ՀՀ արտաքին գործերի նախարարությունների գործառույթները, իսկ 2018թ. մեր կողմից իրականացված հետազոտություններում նշված նախարարությունները ընդգրկված են:

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ և 2000թ. և 2018թ. ընդհանուր գործառույթների մեջ քաղաքականության մշակման գործառույթներն ունեն ամենամեծ տեսակարար կշիռը, իսկ ամենացածրը՝ 2000թ. ծառայությունների մատուցման գործառույթներն են, իսկ 2018թ.՝ օժանդակող (սպասարկող) գործառույթներն են:

Այսպիսով, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար կարող է իրականացվել ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման այն մոդելը, որի կիրառման դեպքում պետական կառավարման ավելի բարձր կանգնած կենտրոնական մարմինները իրականացնում են միայն պետական քաղաքականության և ռազմավարության մշակման, դրա իրականացման համակարգման գործառույթը, ինչպես նաև ընթացիկ աշխատանքների մշտադիտարկումը, իսկ կոնկրետ աշխատանքների իրականացումը, բնակչությանը պետական ծառայությունների մատուցումը, սպասարկումը, կանոնակարգումը, կարգավորումը իրականացնում են պետական կառավարման ստորին մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները: Օժանդակող գործառույթների մասով էլ կարող ենք ասել, որ վերջիններս առանձին դրսևորումներով գոյություն են ունենալու պետական կառավարման բոլոր մակարդակի մարմիններում:

Ըստ մեր դիտարկումների՝ մոտ 300 գործառույթ (գործառույթների ընդհանուր թվաքանակի մոտ 45%-ը) ենթակա է ապակենտրոնացման և ապահամակենտրոնացման դեպի տեղական ինքնակառավարման մարմիններ և կառավարման ստորին օղակներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Перестройка государственных структур: Методы и подходы, посткоммунистические страны в переходный период. Информационно-просветительские материалы, ПРОН/RBEC(Regional Bureau for Europe and the CIS) 2001
2. Ռաֆայել Մանուկյան, «Պետական կառավարում. սկզբունքներ և գործառույթներ» գիտական հոդված, Եվրոպական համալսարան, N9, Երևան 2018թ.
3. Ա. Խուդավերդյան, Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Սարվարդ հրատարակչություն 2008
4. Ապակենտրոնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Պետական ծառայություն» հրատ., 2001

THE OPERATIONAL ANALYSIS OF THE EXECUTIVE POWER OF THE REPUBLIC IF ARMENIA

Rafael Manukyan

EU, Chair of Economics and Management, Researcher

Currently, a complex analysis of the functions of public administration bodies should be carried out to assess the correlation of concentration and decentralization in Armenia, as well as to determine the degree of effectiveness of decentralization and to develop adequate policies and mechanisms for its enhancement. There is a need for such functional-structural analysis for decentralization and for decentralization. This analysis shows how accurate the current system of distribution of functions is, whether the powers of public administration and local self-governing bodies are functional, to what extent local authorities' delegated, mandatory and voluntary powers are effective, what opportunities and directions are outlined for new redistribution of functions.

Keywords: state functions, concentration, decentralization, decentralization, local self-governance, public administration system, executive power.

АНАЛИЗ ФУНКЦИОНАЛЬНЫХ ОРГАНОВ ИСПОЛНИТЕЛЬНОЙ
ВЛАСТИ РА

Рафаэль Манукян

ЕУ, кафедра Экономики и управления, соискатель

В настоящее время необходимо провести комплексный анализ функций органов государственного управления, чтобы оценить соотношение концентрации, децентрализации и деконцентрации в Армении, а также определить степень эффективности децентрализации и разработать адекватную политику и механизмы для ее усиления. Необходим такой функционально-структурный анализ для децентрализации и деконцентрации. Этот анализ может показать, насколько хорошо действующая система распределения функций является правильной, являются ли полномочия органов государственного управления и органов местного самоуправления правильными, в какой степени делегированы эффективные местные органы власти, обязательные и добровольные полномочия, какие возможности и направления определены для нового перераспределения функций.

Ключевые слова: государственные функции, концентрация, децентрализация, деконцентрация, местное самоуправление, система государственного управления, исполнительная власть.

Ընդունվել է փաշտոնաթղթի՝ 29.03.2019թ.

Գրախոսվել է՝ 23.04.2019թ.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Մհեր Ֆրանգուլյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ
mherfrangulyan1987@gmail.com, +374 77 376850

Ուսումնասիրելով ՀՀ-ում հարկային մարմնի գործառույթները, ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ դրանք միտված են հարկային մարմնի գլխավոր առաքելության՝ պետական բյուջեի եկամուտների ապահովման, իրականացմանը: Այս տեսանկյունից, հարկային մարմնի գրեթե բոլոր գործառույթները շարժառեկ անտեսում են ստվերային տնտեսության առկայությունը՝ գերնպաստակ սահմանելով եկամուտների հավաքագրումը: Արդյունքում հարկային մարմնի գործառույթների իրականացումը ոչ միայն չի նպաստում ստվերային տնտեսության կրճատմանը, այլև գործառույթների անարդյունավետ գնահատման հետևանքով ի հայտ են գալիս մի շարք պատճառներ, որոնք հարկ վճարողներին ստիպում են հայտնվել ստվերում:

Հիմնաբառեր. հարկային քաղաքականություն, հարկային ծառայողներ, ստվերային տնտեսություն, հարկային եկամուտների ապահովում, հարկային մարմնի առաքելություն, հարկային մարմնի գործառույթներ, հարկային հսկողություն:

Գաղտնիք չէ, որ ցանկացած պետության տնտեսական զարգացման կարևորագույն խոչընդոտներից մեկը ստվերային տնտեսության առկայությունն է: Խոսելով ստվերային տնտեսության մասին՝ տնտեսության վերաբերյալ քիչ թե շատ գաղափար ունեցող յուրաքանչյուր անձ նախ և առաջ իր ուշադրությունը կենտրոնացնում է պետության հարկային քաղաքականության վրա: Սա պատահական չէ և պայմանավորված է հարկեր - ՀՆԱ այն ուղիղ կապով, որին ժամանակին անդրադարձել է հայտնի տնտեսագետ Լաֆերը: Վերջինս պնդում էր, որ տնտեսության մեջ հարկային բեռի անընդհատ բարձրացումը ի վերջո հանգեցնելու է կա՛մ տնտեսության կրճատմանը կա՛մ ստվերային տնտեսության առաջացմանը: Սա փաստ է, որը առանձնակի ու-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

շաղրության պետք է արժանանա ցանկացած պետության կողմից՝ տնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ:

Ստվերային տնտեսության գոյությունը կարևորագույն հիմնախնդիր է ցանկացած պետության համար, որի կրճատման արդյունավետ տարբերակների որոնմամբ էլ պայմանավորված է թեմայի արդիականությունն ու հրապատությունը:

Տնտեսության մեջ ստվերային տնտեսության առկայությունը որպես տնտեսական զարգացման կարևորագույն խոչընդոտ և հիմնախնդիր դիտարկելիս՝ յուրաքանչյուր պետության համար առաջնահերթ ուսումնասիրության կենտրոնում են հայտնվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումը և ստվերային տնտեսության առաջացման պատճառների բացահայտումը: Այլ կերպ ասած, հիմնախնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու և լուծման արդյունավետ տարբերակներ որոնելու նպատակով՝ նախ և առաջ անհրաժեշտ է օբյեկտիվ պատկերացում կազմել հիմնախնդրի մասշտաբների և դրա առաջացման պատճառների վերաբերյալ: Այս համատեքստում կարելի է պնդել, որ միայն ստվերային տնտեսության առաջացման պատճառների բացահայտման միջոցով պետությունը կարող է մշակել միջոցառումների այնպիսի համակարգը, որը կբացառի ստվերային տնտեսության գոյության հիմքերն ու կնպաստի դրա մասշտաբների կրճատմանը:

Եվ չնայած, որ ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումը բարդ գործընթաց է, իսկ գնահատման արդյունքում ստացված ցուցանիշները կարող են ճշգրիտ չարտահայտել ստվերի իրական չափը, այնուամենայնիվ, միջազգային մի շարք կազմակերպություններ մշակել են մեթոդների մի ամբողջություն, որոնք շնորհիվ կարողանում են գնահատել տարբեր երկրներում առկա ստվերային տնտեսության մասշտաբները: Այլ է պատկերը ստվերային տնտեսության առաջացման պատճառների հարցում: Այլ կերպ ասած, եթե ինչ-որ տեսանկյունից հնարավոր է գտնել ստվերային տնտեսության գնահատման ընդհանրացված մեխանիզմներ և մեթոդներ, որոնք կիրառելի կլինեն գրեթե բոլոր երկրների համար, ապա ստվերի առաջացման պատճառները տարբեր են և կախված են տվյալ երկրի ազգային առանձնահատկություններից: Ահա թե ինչու, ստվերային տնտեսություն ունե-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ցող յուրաքանչյուր երկրի համար ստվերային տնտեսության մասշտաբների գնահատումից զատ, առանձնահատուկ նշանակություն ունի ստվերի առաջացման պատճառների բացահայտումը:

Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից 2018թ.-ի հունվարին հրապարակված փաստաթղթի՝ Հայաստանի Հանրապետությունում 1991-2015թթ.-ներին ստվերային տնտեսության միջին ցուցանիշը գնահատվել է 42,6% [7]: Առավել ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ 1991թ.-ից մինչև 2015թ.-ը ընկած 25-ամյա ժամանակահատվածում ստվերային տնտեսության գնահատականը ենթարկվել է աննշան փոփոխությունների՝ տատանվելով միջին ցուցանիշի շրջակայքում: Սա փաստում է այն մասին, որ անկախացումից ի վեր Հայաստանում տնտեսության գրեթե կեսը գտնվում է ստվերի մեջ, իսկ հարկային քաղաքականության գործիքները եղել են նարդյունավետ, քանի որ չեն նպաստել ստվերային տնտեսության կրճատմանը: Դեռ ավելին, ստվերային տնտեսության նման բարձր ցուցանիշը հիմքեր է տալիս կարծելու, որ հարկային քաղաքականության տեսանկյունից լիազոր մարմնի՝ հարկային մարմնի, գործառույթները չեն ենթարկվել արդարացի և օբյեկտիվ գնահատականի, չեն բացահայտվել այդ գործառույթների անարդյունավետության պատճառները, միջոցառումներ չեն մշակվել թերությունների հայտնաբերման և դրանց շտկման ուղղությամբ: Իսկ որպես արդյունք, հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատումը հնարավորություն չի տվել բացահայտել և համապատասխան գնահատականի արժանացնել ստվերային տնտեսության առաջացման պատճառները: Այլ կերպ ասած, հարկային մարմնի գործառույթների գնահատումը եղել է անարդյունավետ, քանի որ չեն հայտնաբերվել այն բոլոր պատճառները, որոնց առկայության պարագայում մարդիկ կամա թե ակամա հայտնվել են ստվերում, թաքցրել են իրենց տնտեսական գործունեության ցուցանիշները և այլն: Ահա թե ինչու, այս տեսանկյունից, կարելի է պնդել, որ ստվերային տնտեսությունը արդյունք է հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատման:

ՀՀ-ում հարկային մարմնի գործառույթների գնահատման մասին խոսելիս՝ կարիք կա վերլուծության ենթարկել ՀՀ հարկային մարմնի կողմից իրականացվող գործառույթները, բացահայտել դրանց իրականացման արդյունքում առաջացող բացասական հետևանքները, ո-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

րոնք էլ հենց առիթ են հանդիսանում ստվերային տնտեսության պատճառների ի հայտ գալուն և հետևաբար ստվերային տնտեսության առաջացմանը: Ահա այդ իսկ պատճառով փորձենք քննարկել հարկային մարմնի մի շարք գործառույթներ, որոնց իրականացման, ոչ համարժեք ու աննարդունավետ գնահատման արդյունքում ի հայտ են գալիս ստվերային տնտեսության առաջացման ռիսկեր:

ՀՀ-ում հարկային մարմնի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ), գործառույթները սահմանվում են ՀՀ ՊԵԿ կանոնադրությամբ, որը հաստատվում է ՀՀ Կառավարության կողմից [8]: Մասնավորապես ՀՀ ՊԵԿ կանոնադրությամբ է սահմանվում ՀՀ ՊԵԿ նպատակները, խնդիրներն ու գործառույթները: Եվ չնայած, որ ՀՀ ՊԵԿ վերոնշյալ կանոնադրությամբ սահմանվում են բազմաթիվ գործառույթներ, այնուամենայնիվ, փորձենք վերլուծել մի շարք գործառույթներ, որոնց իրականացումը ուղիղ կապվածություն ունի ստվերային տնտեսության առաջացման պատճառների հետ: Մասնավորապես ՀՀ ՊԵԿ գործառույթների շարքից կարելի է առանձնացնել նմանատիպ երեք գործառույթ.

- ✓ Պետական հարկերի և վճարների հավաքագրման կազմակերպումը, ինչպես նաև հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը:
- ✓ Հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը:
- ✓ Հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ հանրային իրազեկումը:

Պետական հարկերի և վճարների հավաքագրման կազմակերպման գործառույթի իրականացումը ուղղակիորեն կապված է ՀՀ ՊԵԿ առաքելության հետ [9]: Մասնավորապես այս գործառույթի իրականացումը նպատակ ունի նպաստել ՀՀ պետական բյուջեի եկամուտների ապահովման առաքելության իրականացմանը: Այլ կերպ ասած, պարզ երևում է, որ, պետական բյուջեի եկամուտների ապահովման առաքելությունը առաջնահերթություն համարելով, հարկային մարմինը հարկերի հավաքագրման կազմակերպման գործառույթի իրականացման նպատակով կամա թե ակամա ստիպված է կիրառել այնպիսի մեթոդներ ու մեխանիզմներ, որոնք միտված են այդ եկամուտների ապահովմանը: Դեռ ավելին, պարզելու համար թե ինչքանով է իրա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

կանացվել ՀՀ ՊԵԿ առաքելությունը և որքանով են ճիշտ կազմակերպվել հարկերի հավաքագրման աշխատանքները ու ովքեր են թերացել իրենց աշխատանքում, հարկային մարմինը ուզած թե՛ չուզած հարկային ծառայողների գնահատման չափանիշներից մեկը պետք է սահմանի հարկերի հավաքագրման ցուցանիշը: Ցուցանիշ, որը ցույց կտա, թե տվյալ գործառույթով զբաղված հարկային ծառայողներից յուրաքանչյուրը որքանո՞վ է ապահովել համամասնորեն իրեն հանձնարարված պետական եկամուտների հավաքագրումը: Այս համատեքստում ակնհայտ է, որ հարկերի հավաքագրման կազմակերպման գործառույթ իրականացնող հարկային ծառայողի աշխատանքը ամբողջությամբ պետք է միտված լինի «ամեն գնով» հարկային եկամուտների ապահովմանը: Սա առավել տեսանելի է, երբ գործառույթի իրականացումը փորձ է արվում դիտել պետական ապարատում տեղի ունեցող կրճատումների ֆոնի ներքո: Մասնավորապես, քանի որ պետական ապարատի կրճատումների ժամանակ շատ հաճախ հիմք է ընդունվում այն ցուցանիշը, թե որքանով է հարկային ծառայողը իրականացրել իրեն վերապահված գործառույթները, ապա հարկերի հավաքագրման գործառույթ իրականացնող հարկային ծառայողին այլ ելք չի մնում, քան «ամեն գնով» ապահովել հարկային եկամուտների հավաքագրումը: Առաջին հայացքից արդյունավետ թվացող, հարկերի հավաքագրման կամակերպման գործառույթի նման կերպ իրականացումը, ունի բացասական ազդեցություն սովերային տնտեսության տեսանկյունից: Այլ կերպ ասած, հարկային եկամուտների ապահովման առաքելությանը միտված գործառույթը ի սկզբանե անտեսում է սովերային տնտեսության գործոնը: Հարկերի հավաքագրման կազմակերպման գործառույթի տեսանկյունից կարևորվում է դրանց հավաքագրումը և ոչ թե սովերի կրճատման արդյունքում դրանց ավելացումը: Գործառույթի նման կերպ իրականացման ապացույցը տարիներ շարունակ սովերի 42,6 տոկոս ցուցանիշն է և պետական բյուջեի եկամուտների գրեթե 30 տոկոսի չափով, տարբեր աղբյուրներում հրապարակված հարկային եկամուտների գերավճարների ցուցանիշը: Այս ցուցանիշների մեծությունը թույլ է տալիս ենթադրել, որ հարկային եկամուտների ապահովումը որպես առաքելություն իրականացվել է գերավճարների առաջացման հաշվին, իսկ սովերային տնտեսության կրճատման խնդիրները մղվել են երկրորդական պլան:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացման գործառույթը իրենից ենթադրում է հարկային ստուգումների իրականացում, որի արդյունքում առաջադրվում են տուգանքներ: Այս գործառույթի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել ստուգման արդյունքների կապը սովորային տնտեսության կրճատման հետ: Այս նպատակով փորձենք վերլուծության ենթարկել հարկային ստուգումների վերաբերյալ ՀՀ ՊԵԿ հրապարակած հաշվետվությունները [10]: Համաձայն այդ հաշվետվությունների, ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից տարեկան իրականացվում է 7000-10000 ստուգում, որոնց գրեթե 70-73 տոկոսը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում է¹: Մասնավորապես, համաձայն 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված (ավարտված) ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության, 10615 ստուգումներից 7608 ստուգումները հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ են, որոնք կազմում են ընդհանուր ստուգումների 71,6 տոկոսը: Ընդ որում հատկանշական է նաև այն հանգամանքը, որ, հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ստուգումների համար սահմանված տուգանքի չափը, պարզ է դառնում, որ ընդհանուր ստուգումների 70 տոկոսը հանդիսացող հսկիչ դրամարկղային մեքենաների ստուգումների արդյունքում առաջադրված ընդհանուր տուգանքի գումարը չի կարող գերազանցել 2 մլրդ դրամը, որը կազմում է պետական բյուջեի եկամուտների մոտ 0,1 տոկոսը: Այս ցուցանիշների համադրումից պարզ է դառնում, որ հարկային հսկողության նպատակով իրականացված ստուգումների գերակշիռ մասը նպատակ չունի նպաստել հարկային եկամուտների հավաքագրմանը, քանի որ հարկային եկամուտների մեջ շատ չնչին մաս են կազմում: Սակայն որքանով է այն նպաստում սովորային տնտեսության կրճատմանը: Այս տեսանկյունից ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված (ավարտված) ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվությունների համադրությունից պարզ է դառնում, որ հարկային ստուգումների, հատկապես հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման

¹ Ստուգումների առանձնացումը կատարվել է ըստ ստուգման հիմքերի և խախտված իրավական ակտերի հոդվածների վերաբերյալ նշումի:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ճշտության ստուգումների, մոտ 40-50 տոկոսը տարբեր տարիների ընթացքում իրականացվել է նույն տնտեսվարող սուբյեկտների մոտ: Տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ-ում գրանցված հարկ վճարողների մոտ 5-10 տոկոսը միշտ գտնվում է ստվերում և մեկանգամյա ստուգում իրականացնելուց հետո չի փոխում իր վարքը, այլ շարունակում է գործել ստվերում, քանի որ տարիների ընթացքում ստուգումների կեսը իրականացվում է հենց նրանց մոտ: Սա այն պարագայում, երբ ստվերային տնտեսության վերաբերյալ միջազգային կազմակերպությունների գնահատականը կազմում է մոտ 42,6 տոկոս: Այս համատեքստում կարելի է ենթադրել, որ հարկային հսկողության գործառույթը ամենևին էլ միտված չէ ստվերային տնտեսության կրճատմանը, այլ նպատակ ունի միայն որպես գործառույթ իրականացմանը: Պատկերը էլ ավելի հստակ է դառնում, երբ հսկողական գործառույթ իրականացնող հարկային ծառայողի աշխատանքի գնահատական է ընտրվում ստուգումների իրականացումն ու դրա արդյունքում խախտումների հայտնաբերում: Այլ կերպ ասած, միանգամայն պարզ է, որ հսկողական գործառույթ կատարող հարկային ծառայողի աշխատանքի գնահատման նպատակով, հարկային մարմինը կամա թե ակամա ստիպված է գնահատման ցուցանիշ սահմանել իրականացված ստուգումների քանակն ու դրա արդյունքում խախտումների հայտնաբերումը: Այս տեսանկյունից, հսկողական գործառույթ իրականացնող ծառայողին այլ բան չի մնում, քան անտեսել ստվերային տնտեսության գործոնն ու «լծվել ամեն գնով ստուգումների ցուցանիշը ապահովելու գործին»:

Հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ հանրային իրազեկման գործառույթը ենթադրում է հարկ վճարողների կողմից իրավական ակտերի խախտման դեպքերի կանխարգելում: Ենթադրվում է, որ այս գործառույթի միջոցով հարկային և մաքսային մարմինները պետք է հնարավորինս տեղեկացնեն և զգուշացնեն հարկ վճարողներին խախտումների վերաբերյալ՝ թույլ չտալով և ետ պահելով նրանց խախտում կատարելուց: Շատ հաճախ կանխարգելման և իրազեկման միջոցառումները կարող են առավել արդյունավետ լինել, քան խախտման արդյունքում տուգանքների նշանակումը: Սակայն իրականում ՀՀ հարկային օրենսգրքում առկա որոշ դրույթները ոչ միայն հստակ չեն, այլև հայտնի

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

չեն քաղաքացիներից շատերին: Մասնավորապես մեկ տարվա ընթացքում քաղաքացու կողմից երկու և ավելի գույքի օտարման դեպքում հարկերի վճարման օրենսդրական դրույթը մինչ գործարքի կատարումը անհայտ է շատ քաղաքացիների: Ընդ որում շատ հաճախ հարկման այս դաշտում հայտնվում են այնպիսի քաղաքացիներ, որոնք օտարման գործարքները իրականացրել են կարիքից դրդված: Ահա թե ինչու որոշ դեպքերում հարկ վճարողները, մի կողմից ելնելով հարկային ծանր բեռից, իսկ մյուս կողմից իրազեկվածության ցածր մակարդակից, ստիպված հայտնվում են ստվերում, իսկ, հարկի մասին տեղեկանալով, անակնկալի են գալիս ու փորձում են թաքցնել գործարքների իրական շրջանառությունը: Հարկ վճարողների կողմից ստվերում հայտնվելու վարքագիծ է դրսևորվում նաև նոր բիզնես գործունեություն ծավալելու ժամանակ: Մի կողմից հարկ վճարողի պետական գրանցման հետ կապված անտեղյակությունը, ու հարկ վճարողի հաշվառման հետ կապված փաստաթղթերի բարդությունը, մյուս կողմից նոր ստեղծվող բիզնեսի նկատմամբ անորոշությունն ու օրենսդրությամբ նոր ստեղծվող բիզնեսի նկատմամբ արտոնությունների բացակայությունը, հարկ վճարողներից շատերին ստիպում են ուզած թե չուզած հայտնվել ստվերում:

Ընդհանուր առմամբ, չնայած, որ ստվերային տնտեսության գոյությանը նպաստող պատճառները բազմաթիվ են, այնուամենայնիվ ՀՀ-ում մեծ հաշվով դրանք արդյունք են հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատման:

Օգտագործված գրականության ցանկ

1. IMF Working Paper, Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, Prepared by Leandro Medina and Friedrich Schneider, 2018 International Monetary Fund, WP/18/17
2. «ՀՀ ՊԵԿ կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ» ՀՀ վարչապետի 2018թ.-ի հունիսի 11-ի N 702-L որոշում
3. ՀՀ ՊԵԿ առաքելություն, <http://www.petekamutner.am/as.aspx?itn=asMission>
4. 2018թ.-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված (ավարտված) ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվություն, <http://www.petekamutner.am>

5. 2017թ.-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված (ավարտված) ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվություն, <http://www.petekamutner.am>
6. 2016թ.-ի ընթացքում ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված (ավարտված) ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվություն, <http://www.petekamutner.am>
7. IMF Working Paper, Shadow Economies Around the World: What Did We Learn Over the Last 20 Years?, Prepared by Leandro Medina and Friedrich Schneider, 2018 International Monetary Fund, WP/18/17
8. «ՀՀ ՊԵԿ կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ» ՀՀ վարչապետի 2018թ.-ի հունիսի 11-ի N 702-Լ որոշում
9. ՀՀ ՊԵԿ առաքելություն, <http://www.petekamutner.am/as.aspx?itn=asMission>
10. ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացված (ավարտված) ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվություն, <http://www.petekamutner.am>

SHADOW ECONOMY AS A RESULT OF THE INEFFECTIVE ASSESSMENT OF THE TAX SERVICE' FUNCTIONS

Mher Frangulyan

EU, Chair of Economics and Management, Researcher

By studying the tax service functions in Armenia, in general, it can be argued that they are aimed at ensuring the main mission of the tax service, such as to provide incomes to the national budget. From this point of view, almost all the functions of the tax service often ignore the existence of a shadow economy. They aim to provide tax incomes. As a result, the implementation of the tax service functions does not contribute to the reduction of the shadow economy. In this case, the ineffective assessment of the functions creates many conditions which force taxpayers to operate in the shadow economy.

Keywords: tax policy, tax servants, shadow economy, the effectiveness of tax policy, the mission of tax service, the functions of tax service.

ТЕНЕВАЯ ЭКОНОМИКА КАК РЕЗУЛЬТАТ НЕЭФФЕКТИВНОЙ
ОЦЕНКИ ФУНКЦИЙ НАЛОГОВОЙ СЛУЖБЫ

Мгер Франгулян

ЕУ, кафедра Экономики и управления, соискатель

Исследуя функции налоговой службы в Армении, в целом можно утверждать, что они направлены на обеспечение основной миссии налоговой службы, такой как обеспечение доходов национального бюджета. С этой точки зрения почти все функции налоговой службы часто игнорируют существование теневой экономики. Целью функций является предоставление налоговых доходов. В результате реализация функций налоговой службы не способствует сокращению теневой экономики. В этом случае неэффективная оценка функций создает множество причин, которые заставляют налогоплательщиков появляться в теневой экономике.

Ключевые слова: налоговая политика, налоговые инспекторы, теневая экономика, эффективность налоговой политики, миссия налоговой службы, функции налоговой службы.

*Ընդունվել է քաղաքացիական՝ 01.04.2019թ.
Գրախոսվել է՝ 26.04.2019թ.*

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վլադիմիր Վահանյան

ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ
vahanyan83@mail.ru +374 99 315601

Ճգնաժամային կառավարման գործառույթները հանդես են գալիս հեղուկ առանձնահատկություններով:

Առաջին, կառավարման գործառույթների կազմում գերակշռում են ռիսկերի գնահատումներն ու վրանգների ձևավորման հավանական օջախների վերհանումները, որոնք կառավարչական ավանդական հմտություններից բացի, պահանջում են նաև ճգնաժամային իրավիճակների կանխարգելման մասնագիտական կարողություններ:

Երկրորդ, ճգնաժամային կառավարման գործառույթները հարվում են արտակարգ իրավիճակների, տեխնիկական անվտանգության, ինչպես նաև տեխնածին աղբյուրների կառավարման շրջանակի գործողությունների հետ, ուստի այստեղ կարևորվում է ոչ միայն գործառնական կրկնությունների, այլև կառավարչական միջամտությունների արդյունավետության բարձրացումը:

Երրորդ, ճգնաժամային կառավարման համակարգը շատ ավելի ընդգրկուն է, և առնչվում է ինչպես միկրո, այնպես էլ մակրոմիջավայրային ոլորտների հետ, միաժամանակյա գործառույթներ իրականացնելով «տնային տնտեսություններ – կազմակերպություններ – հանրային ոլորտ – միջպետական հարաբերություններ» շղթայում:

Հիմնաբառեր. ռիսկերի կառավարում, արտակարգ իրավիճակ, հակաճգնաժամային կառավարում, կառավարչական որոշումներ:

Ճգնաժամային կառավարումը տեսության մեջ դիտարկվում է տնտեսական անկայունության կարգավորման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներից վնասների կանխարգելման տեսանկյունից: Տնտեսական գործունեության ոլորտում տեսաբանները կիրառում են “հակաճգնաժամային կառավարում” եզրույթը, այն դեպքում, երբ թիրախավորվում են միկրոմակարդակով կազմակերպությունների սննկացման, իսկ մակրոմակարդակով՝ մակրոտնտեսական հավասարակշռության խախտման ռիսկերը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների կառավարման պարագայում տեսության մեջ և գործնականում հիմնականում ուսումնասիրվում են բնակչության կյանքի, առողջությանը, սեփականությանը, պետական ունեցվածքի պաշտպանությանը սպառնացող ռիսկերը, որի նպատակով իրականացվում են իրավական, կազմակերպչական, իրազեկվածության և ինժեներատեխնիկական միջոցառումների համալիր գործողություններ:

Այս առումով, ճգնաժամային կառավարման համակարգը իր նպատակադրումներով գտնվում է ինչպես հակաճնաժամային, այնպես էլ արտակարգ իրավիճակների, տեխնածին վթարների ռիսկերի կանխարգելման գործառույթների շրջանակի հատույթում (տե՛ս գծապատկեր 1): Սակայն, դրա հետ մեկտեղ, ճգնաժամային կառավարման գործառույթները իրենց առանձնահատուկ դրսևորումներն են ստանում վերը թվարկված ոլորտներում:

Այսպես, արտակարգ իրավիճակի նախագուշացումը այն միջոցառումների ամբողջությունն է, որոնք անցկացնում են արտակարգ դրության գործադիր իշխանության մարմինները և դրանց սուբյեկտները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների կամ դրանց հետևանքների կանխման համար: Իսկ, արտակարգ իրավիճակի կանխումը՝ իրավական, կազմակերպչական, տնտեսական, ինժեներատեխնիկական, էկոլոգիական պաշտպանության, սոցիալական միջոցառումների ամբողջությունն է, որն ուղղված է շրջակա բնության միջավայրի, հնարավոր վտանգավոր օբյեկտների վերահսկողությանը, վիճակագրության և արտակարգ իրավիճակի աղբյուրի առաջացման կանխորոշման և արտակարգ իրավիճակի նախապատրաստմանը և վերացմանը [1]:


Իր հերթին, տեխնիկական անվտանգության կառավարումը ուղղվում է արտադրական և սպասարկման ոլորտի օբյեկտներում տեխնածին վթարներից, արտադրական պատահարներից և դրանց հետևանքներից հասարակության և անհատի կենսականորեն առավելագույն պաշտպանվածության ապահովմանը:[2]

Բնականաբար, ճգնաժամային կառավարման համակարգը չի կարող ամբողջությամբ ընդգրկել հակաճգնաժամային տնտեսական, արտակարգ իրավիճակների կամ տեխնածին աղետներից ակնկալվող

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

վնասների կանխարգելման ամբողջական գործառույթների շրջանակը, և այդ իսկ պատճառով, հանդես է գալիս դրանց հատույթով (տե՛ս գծապատկեր 1): Եվ հենց այստեղ է, որ տեսության մեջ հիմնախնդիր է առաջանում հստակ սահմանագծելու փոխհատվող գործառույթների այդ շրջանակը, քանի որ դրանով է մեծամասնորեն պայմանավորվում ճգնաժամային կառավարման համակարգի արդյունավետ գործունեությունը: [3]

Գծապատկեր 1 Ճգնաժամային կառավարման շրջանակի ձևավորումը¹




Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ կառավարման համակարգը հնարավորություն ունենա հնարավորինս ներդաշնակեցելու հակաճգնաժամային, արտակարգ իրավիճակների կամ տեխնաժին աղետների կանխարգելման և հետիրադարձային արդյունքների կարգաբերման գործառույթները, և դրանով իսկ, բացասական երևույթների վնասաբերությունը հասցվի նվազագույնի (տես գծապատկեր 2): Այս առումով, կարևորվում է հակաճգնաժամային կառավարման նպատակադրումների շրջանակի հստակեցումը: {3}

¹ Կազմված է հեղինակի կողմից:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գծապատկեր 2 Հակաճգնաժամային կառավարման համընդհանուր գործառույթները²




Աղետներն ու արտակարգ իրավիճակները ձևավորման անսպասելիության բնույթ ունեն և դրանց փաստի արանագրումը մեծ կամ փոքր հավանականություն ունի: Ուստի, ճգնաժամային իրավիճակների կառավարման նպատակադրումներում առավելապես կանխարգելիչ, քան հետադեպային ժամանակահատվածի վնասների վերականգնման գործառույթներ են ընդգրկված: Եվ այս նկատառումներով, կառավարման գործառույթները առավելապես ֆինանսավորվում են նա-

² Կազմվել է հեղինակի կողմից:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

խապատրաստական, միջավայրի պաշտպանության ապահովման, մոնիտորինգի անցկացումների գծով (տես գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Արտակարգ իրավիճակների նախարարության 2019 թվականի բյուջեի հոդվածները՝ ըստ ծրագրերի (մլն դրամ) [5]




Հետևաբար, հակաճգնաժամային կառավարման գործընթացի առաջին փուլը առնչվում է ճգնաժամերի ձևավորման ռիսկերի հավանականության գնահատմանը, երբ պարբերաբար միջավայրային մոնիտորինգ է իրականացվում, կազմակերպվում են փորձագիտական աշխատանքներ, հավաքագրվում և վերլուծվում է բազմաբնույթ աղետների հավանական ձևավորմանը առնչվող տեղեկատվություն: Այսպես, արտադրական վտանգավոր օբյեկտները հաշվառելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները գրառելու, վերլուծելու և դրա արդյունքում լիազոր մարմինն ամփոփ տեղեկատվություն տրամադրելու նպատակով Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը վարում է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը:[2] Ռեեստրում գրառվում են տեղեկություններ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկատեխնոլոգիական տվյալների, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքների մասին:

Ճգնաժամային կառավարման գործընթացի հաջորդ փուլը առնչվում է կանխարգելիչ գործառույթների հետ, երբ ռիսկերի գնահատման արդյունքում վերհանվում են հավանական աղետների ձևա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

վորման օջախները և կառավարչական որոշումներ են ընդունվում դրանց վերացման ուղղությամբ: Որպես կանոն, նախազգուշական, կանխարգելիչ գործառույթները անընդհատ բնույթ են կրում և ճգնաժամային կառավարման համակարգում հստակ ներգործություն են ունենում փուլային հաջորդիվ գործառույթների իրականացման ուղղությունների վրա (տես գծապատկեր 4):

Գծապատկեր 4 Հակաճգնաժամային կառավարման գործառույթների փուլային փոխկապակցումը:³



Օգտագործված գրականության ցանկ

1. ԵՊՀ Քաղաքաշտպանության ամբիոն, ՔՊ և ԱԻ հիմնահարցեր, ուսումնական ձեռարկ, Երևան – 2006, «Երևանի համալսարանի հրատարակություն»
2. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, 2005թ., հոդ. 4
3. Антикризисное управление организацией: учебное пособие / А.П. Добровинский; Национальный исследовательский Томский поли-

³ Կազմվել է հեղինակի կողմից:

технический университет.– Томск: Изд-во Томского политехнического университета, 2013

4. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, 2005թ., հոդ. 4
5. Արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայք, <http://mes.am/hy/>

ОСОБЕННОСТИ ФУНКЦИЙ КРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ

Ваганян Владимир

ЕУ, кафедра Экономики и управления, соискатель

Функции антикризисного управления имеют следующие особенности.

Во-первых, в системе управления преобладают функции оценки рисков, которые, помимо традиционных умений управления, требуют специальных навыков для предотвращения кризисных ситуаций.

Во-вторых, антикризисное управление функционирует в чрезвычайных ситуациях, обеспечивает техногенную безопасность и управление стихийными бедствиями, поэтому становится важным не только исключение функциональных повторов, но и повышение эффективности управленческих вмешательств.

В-третьих, система антикризисного управления является гораздо более всеобъемлющей и относится как к микро-, так и к макросреде, в которой одновременно выполняются взаимосвязанные функции в цепочке «домохозяйства - организации - общественные сферы - межгосударственные отношения».

Ключевые слова: управление рисками, чрезвычайное положение, антикризисное управление, управленческие решения:

THE FEATURES OF CRISIS MANAGEMENT FUNCTIONS

Vladimir Vaganyan

EU, Chair of Economics and Management, Researcher

The functions of crisis management have the following features.

First, risk management system is dominated by risk assessment functions that, in addition to traditional management skills, require special skills to prevent crises.

Secondly, anti-crisis management functions in emergency situations, provides technological safety and disaster management, therefore it becomes important not only to exclude functional repetitions, but also to increase the effectiveness of management interventions.

Thirdly, crisis management system is much more comprehensive and refers to both the micro and macro environment, which simultaneously performs interrelated functions in the chain “households - organizations - public spheres - intergovernmental relations”.

Keywords: risk management, emergency situation, crisis management, management decisions:

Ընդունվել է տպագրության՝ 23.03.2019թ.

Գրախոսվել է՝ 19.04.2019թ.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒՔՅԵԿՏԻՎ ԻՄԱՍՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

Մանուկ Մուրադյան

*«Նսրիկանության կրթահամալիր, ի. գ.թ., դրցենդ,
manukmuradyan@rambler.ru, +37494106610*

Սույն աշխատանքում հստակեցված է իրավունքը սուբյեկտիվ և օբյեկտիվ իմաստներով ներկայացնելու և վերջիններիս հարաբերակցության գնահատման անհրաժեշտությունը: Խնդրի համակողմանի լուսաբանման համար աշխատանքում վերլուծվել են հիմնահարցի հետ կապված հայրենական, արևմտյան և ռուսական իրավագիտության շրջանակներում տեղ գտած տեսակետները: Հոդվածում էական ուշադրության է արժանացել օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների իրավական պաշտպանության հիմնահարցը:

***Հիմնաբառեր.** սուբյեկտիվ իրավունք, օբյեկտիվ իրավունք, հարաբերակցություն, իրավական պաշտպանություն:*

Իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստների հարաբերակցության խնդիրը մինչև օրս գտնվում է հայրենական և արտասահմանյան գիտնականների ուշադրության կենտրոնում¹: Ժամանակակից իրա-

¹ Տես՝ Алексеев С. С. Восхождение к праву. Поиски и решения. М., 2001 г. С. 89-98, Керимов Д.А. Проблемы общей теории права и государства: В 3 т. Т. 1. Социология права. - М.: Современный гуманитарный университет, 2001. С. 43-56. Александров Н.Г. Сущность права. К вопросу о сущности исторических типов права / Александров Н.Г. - М.: Госюриздат, 1950. Фарбер И.Е. О сущности права. Учебное пособие / Отв. ред.: Зейдер Н.Б. - Саратов: Изд-во Саратов. ун-та, 1959. Иоффе О.С., Королев А.И. Сущность социалистического государства и права, 1963. Марксистско-ленинская общая теория государства и права. Основные институты и понятия / Братусь С.Н., Гулиев В.Е., Денисов А.И., Казимирчук В.П., и др.; Редкол.: Гулиев В.Е., Манов Г.Н. (Отв. ред.), Фарберов Н.П., Халфина Р.О. - М.: Юрид. лит., 1970. Марксистско-ленинская общая теория государства и права. Социалистическое право / Айзенберг А.М., Александров Н.Г., Алексеев С.С., Лукашева Е.А., и др.; Редкол.: Лукашева Е.А. (Отв. ред.), Мицкевич А.В., Самощенко И.С., Фарберов Н.П., Шهبанов А.Ф. - М.: Юрид. лит., 1973. Васильев А.М. Правовые категории: Методологические аспекты разработки системы категорий теории права, Юридическая литература, М. 1976. Братусь С.Н. Явич Л.С. Сущность права. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1985. Теория государства и права: Курс лекций / Под ред.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վաբանական գրականության մեջ արդեն վաղուց գաղտնիք չէ, որ իրավունքն ընկալվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով: Սույն աշխատանքի նպատակն է ցույց տալ դրանց հարաբերակցության եզրերը՝ շեշտադրում կատարելով վերջիններիս իրավական պաշտպանության խնդրի վրա: Իրավաբանական գրականության մեջ կատարված հետազոտությունները [1, էջեր՝ 25-34] թույլ են տալիս արձանագրելու, որ իրավական իրականությունը երկու տարբեր անկյունների տակ դիտարկելը նպատակ ունի, մի դեպքում ընդգծել իրավունքի՝ որպես հանրային իշխանության կողմից սահմանված և պետական հարկադրանքով ապահովված համապարտադիր նորմերի համակարգի (օբյեկտիվ իրավունք [2, էջ 445]), իսկ երկրորդ դեպքում՝ անհատին ընձեռնված վարքագծի ընտրության հնարավորության դերակատարությունը (սուբյեկտիվ իրավունք[3, էջ 22]²):

Բացի վերը նշված հանգամանքը, իրավունքն օբյեկտիվ և սուբյեկտիվ տեսակների տարանջատելու անհրաժեշտությունը կարևորվում է նաև լեզվական հարթությունում: Օրինակ, անգլերենում նման խնդիրը բացակայում է, քանզի օբյեկտիվ իրավունքի տակ արտաբերվում է «*law*»³, իսկ սուբյեկտիվ իրավունքի պարագայում՝ «*right*» եզրույթները, ինչի պայմաններում բացակայում է լեզվական իմաստով օբյեկտիվ և սուբյեկտիվ տերմինների ներմուծումը: Իսկ, օրինակ, հայերենում՝ «*իրավունք*», իտալերենում՝ «*diritto*», գերմաներենում՝ «*Recht*», ֆրանսերենում՝ «*droit*», ռուսերենում՝ «*право*»․ առանց «*իրավունք*» բառին բովանդակային որակ տվող եզրույթի (համապատասխան դեպքում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ) չես կարող հասկանալ

Н.И. Матузова и А.В. Малько. – 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001. Теория государства и права / Отв. ред. В.М. Корельский и В.Д. Перевалов. М., Издательство: ИГ Инфра-М – НОРМА, 1997. Венгеров А.В. Теория государства и права: Учебник для юридических вузов. 3-е изд. Юриспруденция, М., 1998. Сырых В.М. Теория государства и права: Хрестоматия. В 2-х т. /Авт.-сост. В. В. Лазарев, С. В. Липень. - М.: Юристъ, 2001. Спиридонов Л.И. Теория государства и права: Учебник. - М.: ПБОЮЛ 2001. Нерсесянц В.С. Теория права и государства. Краткий учебный курс. М., 2001. Лазарев В.В. Теория права и государства. Учебник. - 3-е изд., перераб. и доп. - М.: Юристъ, 2001, 2002. Марченко М.Н. Теория государства и права. М., 2002. Общая теория права / Под ред. А.С. Пиголкина. М., 2003.

² Մանրամասն տե՛ս Maurer, Allgemeines Verwaltungsrecht, S.164, Մուրադյան Մ.Ն.՝ տես՝ նշված աշխատությունում՝ էջ՝ 24:

³ Անգլերենում «*law*» բառը թարգմանաբար նշանակում է նաև «օրենք»:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թե տվյալ դեպքում խոսքը գնում է իրավական նորմերի համակարգի, թե անձին տրված և դատական (կամ արտադատական) կարգով պաշտպանության ենթակա *իրավական ուժի մասին*:

Իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստների հարաբերակցության մասին խոսվել է պատմական տարբեր ժամանակահատվածներում՝ սկսած հռոմեական իրավունքից, որը հետագայում զարգացում ստացավ մայրցամաքային և ամերիկյան իրավական համակարգերում: Սակայն հիմնախնդիրը որոշակիություն ստացավ գերմանական դոկտրինալ աղբյուրներում:

Օբյեկտիվ իրավունքի լույսի ներքո սուբյեկտիվ իրավունքի հերքման փորձեր կատարվել են խորհրդային իրավագետների կողմից: Ռուսական իրավունքի զարգացման այդ փուլում սուբյեկտիվ իրավունքը հռչակվեց սովետական իրավունքի հետ անհարիր կամ, ինչպես ընդունված էր անվանել, սոցիալիստական հարաբերություններին չհամապատասխանող եզրույթ: Պետության և իրավունքի տեսության որոշ դասագրքերում նույնիսկ բացակայում էին սուբյեկտիվ իրավունքի մասին հիշատակումները [4, Շ. 105]: Ընդգծվում է, որ սուբյեկտիվ իրավունքը բուրժուական շքեղություն է և անհրաժեշտ է պայքարել դրա դեմ՝ ի պաշտպանություն պետության շահի: Այս կապակցությամբ Գ. Ֆ. Շերշենևիչը սուբյեկտիվ իրավունքի դերն ընդգծող իր հետազոտություններում նշում է, որ ցավոք սուբյեկտիվ իրավունքի հետազոտման շեղումն արդեն մենք բախվում ենք իրավաբանական գրականության մեջ առկա վերջինիս հերքման փորձերին: Հեղինակն արդարացիորեն նշում է նաև, որ իրավաբանական գրականության մեջ առկա սուբյեկտիվ իրավունքին դիմադրությունը ոչ այլ ինչ է, քան «պայքար փղի դեմ», այլ ոչ թե նրա էության [5, Շ. 600]:

Ավելի ուշ, սուբյեկտիվ իրավունքի վերաբերյալ հերքում պարունակող տեսակետները չստացան համապատասխան աջակցություն: Առաջ քաշված մոտեցումներում ընդգծվում էր սուբյեկտիվ իրավունքի կարևորությունը՝ բացառելով վերջինիս հերքման փորձերը [6, Շ. 11]: Ավելին, Ս. Ֆ. Կեչեկյանն ընդգծեց, որ սուբյեկտիվ իրավունքը, այսինքն՝ առանձին անհատների իրավունքը, իրավունքի համակարգի և իրավագիտության համար անհրաժեշտ հասկացություն է [7, Շ. 48]: Արդեն անցյալ դարի սկզբներին առանձին տեսաբաններ սուբյեկտիվ իրավունքը գնահատում էին որպես իրավազորությունների ամբողջու-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թյուն, որոնք պատկանում էին անհատին օբյեկտիվ իրավունքի հիման վրա, որը և հնարավորություն է տալիս ճանաչել անհատի հետաքրքրությունները և ապահովում է դրանց իրավական պաշտպանության հնարավորությունը [8, Շ. 28]:

Արժեքավոր պետք է համարել սուբյեկտիվ իրավունքի վերաբերությամբ Լ. Դյուգի կողմից սեփական հայեցակարգային դիրքորոշման վերանայմանն ուղղված փորձը, որի շրջանակներում հիմնախնդիրը տևականորեն հերքելուց հետո, տեսաբանն ընդգծեց, որ «օբյեկտիվ իրավունք» և «սուբյեկտիվ իրավունք» հասկացությունների տարանջատումը անհրաժեշտ է, և հիմնախնդրային համարվող անորոշությունները հստակեցվում են և հարմար են: Տեսաբանն ափսոսանք էր հայտնում այն բանի համար, որ ֆրանսիացի գիտնականները չէին տեսնում այստեղ անհրաժեշտ տարբերություններ [9, Շ. 1]:

Իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարանջատումը ոչ մի պարագայում չի կարելի համարել դոկտրինալ պատահականություն: Նման տարանջատումը, ի թիվս այլ պատճառների, պայմանավորված է նաև միմյանց փոխլրացնող, սակայն չնույնացվող երևույթների սոցիալական նշանակության ընդգծման անհրաժեշտությամբ:

Օբյեկտիվ իրավունքի սոցիալական նշանակությունը բխում է իրավունքի էությունից, որն էլ արտահայտվում է հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ՝ ելնելով արդարության, ազատության և հավասարության գաղափարներից՝ ծառայելով հասարակության բարօրությանը և նրա շահերին:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ իրավունքի սոցիալական նշանակությանը, ապա իրավաբանական գրականության մեջ առավել հիմնավոր է այն մոտեցումը, համաձայն որի, սուբյեկտիվ իրավունքի սոցիալական նշանակության տակ անհրաժեշտ է հասկանալ այն նպատակները, որոնց հասնելու համար սուբյեկտիվ իրավունքի կրողին տրամադրվում են այդ իրավագործությունները, սակայն այդ նպատակները չպետք է հակասության մեջ մտնեն իրավական կարգավորման նպատակների հետ[10]:

Այս տեսանկյունից, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկվող եզրույթների հարաբերակցության հարցի անդրադարձ կատարել նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների իրավական պաշտպանության տեսանկյունից: Ինչպես գիտենք պետության գործառույթների իրաց-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ման ձևերից է վերահսկողությունը, որն առաջին հերթին ծառայում է օբյեկտիվ իրավունքի պաշտպանությանը: Իրավակիրառը միշտ կաշկանդված է օբյեկտիվ իրավունքով, որի սահմանադրական լուծումները ամրագրված են ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Օբյեկտիվ իրավունքի միայն այն տարրերն են առաջացնում սուբյեկտիվ իրավունքներ, որոնք իրավատիրոջը տալիս են իրավաբանական հնարավորություն պահանջելու պետությունից համապատասխան վարքագիծ: Ոչ բոլոր իրավական նորմերն են նման հնարավորություն ընձեռում սուբյեկտիվ իրավունքի կրողին: Սուբյեկտիվ իրավունքը պրակտիկ նշանակություն է տալիս սահմանադրական իրավունքով երաշխավորված մարդու արժանապատվությանն ու անհատականությանը՝ հնարավորություն ընձեռելով ինքնուրույն հանդես գալ պետության դեմ և պահանջել իրեն վերաբերող օրենքի կատարում [11, էջեր. 358 – 361]:

Իրավական պաշտպանվածության տեսանկյունից իրավունքը սուբյեկտիվ որակ է ստանում միայն այն դեպքում, երբ անհատին տրված է այն դատական (կամ արտադատական՝ վարչական) կարգով պաշտպանելու իրավական հնարավորություն:

Այս իմաստով կարևորվում է սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության մեխանիզմի հստակեցման հարցը [12, Շ. 3]: Ամենաընդհանուր բնորոշմամբ, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության մեխանիզմ ասելով անհրաժեշտ է հասկանալ իրավական միջոցների ամբողջությունը, որը կոչված է ապահովելու խախտված սուբյեկտիվ իրավունքների վերականգնումը, օրինական շահերի պաշտպանությունը, յուրիսդիկցիոն վարույթի սահմաններում սոցիալ-իրավական վեճերի լուծումը և իրավունքի իրացման ճանապարհին այլ արգելքների վերացումը:

Սուբյեկտիվ իրավունքները միայն կոնկրետ իրավունքի կրողին են տալիս իրավական հնարավորություն պահանջելու որոշակի վարքագիծ: Այս իմաստով սուբյեկտիվ իրավունքն առկա է, երբ իրավունքն օբյեկտիվ հանրային ազդեցությունից բացի, նախատեսված է ծառայելու առանձին անհատների շահերին [12, Շ. 168]:

Սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը կարևորվում է դրա հրացման համար անհրաժեշտ, հասցեատիրոջ վրա դրված պարտականությունների կատարման ապահովման տեսանկյունից: Կարճ ասած, սուբյեկտիվ իրավունքն իրավագորություններ է տրամադրում իրավունքի սուբյեկտին և համապատասխանաբար պարտավորեցնում իրավունքի հասցեատիրոջը:

Իրավունքը սուբյեկտիվ և օբյեկտիվ իմաստներով ներկայացնելիս, իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ կարող ենք հանդիպել այնպիսի ձևակերպումների, որ մի դեպքում այն **պատկանում է** սուբյեկտին, մեկ այլ դեպքում՝ ոչ [13, Ը. 759]: «**Պատկանելիություն**» եզրույթը հստակեցման կարիք ունի: Դրա տակ պետք է հասկանալ այն որակները, որ սուբյեկտը պետք է ունենա նաև իր իրավունքը չիրացնելու, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առարկան ոչ իրավաչափ միջամտությունից պաշտպանելու իրական իրավական հնարավորություն, իսկ օբյեկտիվ իրավունքի պարագայում «**սուբյեկտին չպատկանող**» եզրույթի տակ անհրաժեշտ է հասկանալ որ այն կախված չէ սուբյեկտի կամքից և վերջինիս հայեցողությունից, և, վերջապես, օբյեկտիվ իրավունքը չի կարող ունենալ այն պաշտպանության առարկան, որը բնութագրական է սուբյեկտիվ իրավունքին, ինչը պաշտպանելու համար նվազագույնն անհրաժեշտ է սուբյեկտի առկայություն, իրավունքի կրողի գոյություն և այն պաշտպանելու իրական իրավական հնարավորություն:

Ոլորտին վերաբերող հետազոտություններում հաճախ կարելի է հանդիպել այն տեսակետին, որ սուբյեկտիվ իրավունքը, որպես սուբյեկտի կամքից կախված սոցիալ-իրավական երևույթ, բնութագրվում է որպես դիսպոզիտիվ իրավունք, իսկ օբյեկտիվ իրավունքը կրում է իմպերատիվ, իշխանահրամայական բնույթ և կախված է իրավաստեղծի կամքից [14, Ը. 28]: Սուբյեկտիվ իրավունքի դեպքում «կամք» ասելով հասկացվում է այն վարքագիծը, որն իրավատերն իրացնում է սուբյեկտիվ իրավունքի օգտագործման ժամանակ (իրավունքի իրացման կամահայտություն՝ վարքագծի տեսակի և չափի ընտրության իրավաբանական հնարավորության սահմաններում): Իսկ օբյեկտիվ իրավունքի պարագայում, փորձելով հիմնախնդիրը ևս բացահայտել «կամք» բառի միջոցով, այս դեպքում պետք է նկատի ունենալ **իրավաստեղծ**

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կամքը, այլ ոչ թե սուբյեկտիվ իրավունքին, դրա իրացմանը բնութագրական **ազատության սահմանները**:

Ինչ վերաբերում է դիսպոզիտիվության և իմպերատիվության խնդրին, ապա, կարծում ենք, որ այն պիտանի չէ սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքների հարաբերակցության հարցի քննարկման դեպքում: Հիմնահարցի այդ անկյան տակ դիտարկելն առավել հիմնավոր և պիտանի է սուբյեկտիվ իրավունքի և սուբյեկտիվ պարտականության հարաբերակցության գնահատման տիրույթում, ինչի մասին խոսվել է նախորդ պարագրաֆի շրջանակներում:

Եթե փորձենք ամենաընդհանուր ձևով համակարգել օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների հարաբերակցության հիմնախնդիրը, ապա կունենանք հետևյալ պատկերը՝

1. օբյեկտիվ իրավունքը հանրային իշխանության կողմից սահմանված և պետական հարկադրանքով ապահովված համապարտադիր նորմերի համակարգ է, իսկ սուբյեկտիվ իրավունքը՝ օբյեկտիվ իրավունքի միջոցով անհատին ընձեռված իրավագործություն,

2. առանձին իրավական համակարգերում տարանջատման անհրաժեշտությունը պայմանավորված է լեզվաօգտագործման առանձնահատկություններով (տեխնիկական հիմնավորում),

3. սուբյեկտիվ իրավունքն իրավագործությունների ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս ճանաչել անհատի հետաքրքրությունները և ապահովում է դրանց իրավական պաշտպանության հնարավորությունը, իսկ օբյեկտիվ իրավունքն իրավանորմերի ամբողջություն է, որին հետևելու պարտականությունը կախված չէ պահանջի իրավունքից,

4. իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստների տարանջատումը պայմանավորված է վերջիններիս սոցիալական նշանակության տարբերությամբ,

5. իրավական պաշտպանության տեսանկյունից օբյեկտիվ իրավունքը գտնվում է հանրային իշխանության վերահսկողության տիրույթում, իսկ սուբյեկտիվ իրավունքն իրավագործություններ է տրամադրում իրավունքի սուբյեկտին և պարտավորեցնում իրավունքի հասցեատիրոջը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մուրադյան Մ.Հ. Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր/ – Եր., Ա/Ձ 1, Արման Ասմանգուլյան, 2016 (մաս 1)
2. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. Խումբ: Գիտ. Խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.– Եր.: Լուսարաց հրատարակչություն, 2014
3. Միխայել Չազու Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքներ: Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական իրավունքում / -Եր.: Տիգրան Մեծ, 2012
4. Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько.– 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001. О состоянии юридических наук // Вопросы философии. 1953. № 1.
5. Шершеиевич Г.Ф. Общая теория права, М., 1910-1912
6. Теория государства и права: Курс лекций / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – 2-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001. Советское государство и право 1995. №3.
7. Кечекьян С.Ф. Правоотношения в социалистическом обществе. М.: Издательство АН СССР, 1958
8. Вишняк М.В. Личность в праве. Партия социалистов-революционеров. № 35. Издание второе. Пг. Типография П.П. Сойкина. 1917г
9. Дюги Л. Конституционное право Общая теория права / государства. М., 1908.
10. Яценко Т.С. О социальном назначении субъективного гражданского права.
http://www.rusnauka.com/9_KPSN_2011/Pravo/9_81568.doc.htm
(15.05.2015թ).
11. Maurer, Allgenmeines Verwaltungsrecht, ՀՀ ընդհանուր վարչական իրավունք / Խմբ՝ Հ. Թովմասյան, Օ. Լուխթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ Ռայմերս, Ռ. Ռուբել.– Եր.: Բավիդ, 2011
12. Жилин Г. А. Правосудие по гражданским делам: актуальные вопросы. М., 2010.; Марченко М.Н. Судебное правотворчество и судебское право. Проспект, 2011
13. Головистикова А.Н., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права: Учебник. ЭКСМО.– М., 2005. Хропанюк В. Н. Теория государства и права. Хрестоматия. Учебное пособие.– М., 1998.

14. Матузов Н. И. Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права / Матузов Н.И. - Саратов: Изд-во Саратов. ун-та, 1972.

ПРОБЛЕМА СООТНОШЕНИЯ ПРАВА В ОБЪЕКТИВНОМ И СУБЪЕКТИВНОМ СМЫСЛЕ

Манук Мурадян

Образовательный комплекс полиции РА
к.ю.н., доцент

В рамках данной работы выясняется необходимость представления и оценки права в объективном и субъективном смыслах. Для всестороннего освещения проблемы в работе были проанализированы научные взгляды и позиции отечественной, западной и российской правовой мысли. В статье особое внимание уделяется проблеме правовой защиты объективного права и субъективных прав.

Ключевые слова: субъективное право, объективное право, правовая защита.

THE PROBLEM OF CORRELATION LAW IN THE OBJECTIVE (LAW) AND SUBJECTIVE (RIGHTS) MEANINGS.

Manuk Muradyan

Police Educational Complex of RA
PhD in Law, Associate Professor

In the framework of this article, the necessity to present and evaluate the law from objective and subjective (right) meanings has been clarified. For a comprehensive study of the issue the scientific approaches and views of local, western and Russian jurisprudence have been analyzed in the article. The article also focuses on the issue of legal protection of objective law (law) and subjective rights (right).

Keywords: law, objective meaning, rights, subjective meaning, legal protection, jurisprudence.

*Ընդունվել է փաշտոնաթղթի 25.03.2019թ.
Գրախոսվել է՝ 22.04.2019թ.*

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Վահե Թորոսյան

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ.
vaxinak91@mail.ru, +374 94 400070

Աշխարհաքաղաքական իրադարձությունների կիզակետում կրոնի ունեցած ազդեցության և դրա սահմանների ընդլայնման մարտահրավերներով պայմանավորված՝ կրոնի ինստիտուտները առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է գտնվում պետության և հասարակության հետ ունեցած փոխհարաբերությունների տեսանկյունից: Մարդկային գիտակցության, աշխարհայացքի ձևավորման վրա կրոնի ազդեցությունը նախ և առաջ սկսվում է կրոնական կրթությունից: Կրթության աշխարհիկության սկզբունքը որպես աշխարհիկ պետության հայեցակարգի և մասնավորապես՝ մարդու խղճի և կրոնի ազատության իրավունքի կարևորագույն բաղադրիչ, անխզելիորեն կապված է կրոնական կրթության հետ: Կրոնական քարոզչությունից և պարտադրանքից զերծ կրթությունը՝ անհատի աշխարհահայացքի ազատ ընտրության և իրացման հուսալի երաշխիքներից է:

Հիմնաբառեր: Կրթության աշխարհիկություն, Հայ եկեղեցու պարամություն, կրոն, կրոնական կրթություն:

Հայաստանի Հանրապետությունը լինելով աշխարհիկ պետություն, հատուկ ուշադրություն է դարձնում կրթության աշխարհիկությանը՝ ամրագրելով այն խնդրո առարկա ոլորտը կարգավորող իրավական ակտերում: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, որոնցից մեկն էլ հանդիսանում է ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը [5, 5-րդ հոդվ.], [6, 4-րդ հոդվ.], [7, 5-րդ հոդվ.]:

Այսօր կրթության աշխարհիկությունը շատ հաճախ ընկալվում է որպես եկեղեցու կողմից կրթական համակարգի վրա ունեցած որևէ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ազդեցության բացառում, ինչը միանգամայն չափազանցված և միակողմանի մոտեցում է աշխարհիկ պետության հայեցակարգի ընկալման տիրույթում:

Կրթության աշխարհիկության կենսագործման հիմնահարցի ուսումնասիրությունը առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում հատկապես Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու փոխգործակցության համատեքստում: Ընդ որում, պետությունը բարձր գնահատելով ազգային եկեղեցու դերը հայ ժողովրդի մշակույթի զարգացման գործում, բավական սերտ համագործակցության դաշտ է ձևավորել վերջինիս հետ կրթության բնագավառում:

Այսպես, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհի հանդիսացող առաքելությունների իրագործմանը, մասնավորապես՝ «ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում...» [4, 17-րդ հոդված, գ) կետ]:

Անշուշտ, «Հայաստանի Հանրապետության ողջ տարածք» արտահայտությունը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու դավանանքը տարածելու և քարոզելու իմաստով, չի վերաբերում հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններին, քանի որ, հակառակ պարագայում, ակնհայտորեն տեղի կունենա կրթության աշխարհիկ սկզբունքի էության աղճատում, և վերջինս, ինքնին կկրի սոսկ հոչակագրային բնույթ:

Հիմնահարցի քննարկման հայրենական փորձը դիտարկելիս՝ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում, պաշտոնապես ճանաչված կրոնական առարկա, որպես այդպիսին, գոյություն չունի:

2002 թվականին ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարանների ուսումնական ծրագրում ներմուծվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան¹: Ընդ որում, նշված առարկայի դասագրքերի մշակումը, ֆինանս-

¹ Համաձայնագիրը կնքվեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ի կողմից: Այն վերահաստատվեց Վե-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

սավորումը և հրատարակումը պետք է ապահովեր ազգային եկեղեցին, իսկ դրանց ստեղծման աշխատանքների գիտամեթոդական ղեկավարումը և այլ պարտավորություններ վերապահվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանը²:

հաժառ Հայրապետի և ՀՀ ԿԳՆ նախարարի միջև 2005թ. կնքված համաձայնագրով: 2003-2004թթ. ուսումնական տարվա ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ներդրվեց 4-րդ և 5-րդ դասարաններում: 2005թ. առարկան ընդգրկվեց հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարանների ուսումնական պլանում:

- ² Սկսած 2005թ. առարկայի ուսուցման հետ կապված խնդիրների վերահսկողությունը ստանձնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը (ՔԴԿ), իսկ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը հանձնարարվեց ՔԴԿ-ին, ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, Ազգային կրթության ինստիտուտին և Հայաստանի աստվածաշնչային ընկերությանը: Տե՛ս, մանրամասն՝

<http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=16853&pid=16849>:

Միաժամանակ հաստատվեցին հանրակրթական հիմնական դպրոցի (5-9-րդ, 10-11-րդ դասարաններ) «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչը և ծրագիրը, ինչպես նաև սահմանվեցին դասընթացի հետևյալ ընդհանուր նպատակները. ա) ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը, բ) աճող սերնդին հեռու պահել դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապակառուցողական), միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներից, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և արմատավորվելու, գ) մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակականություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն, դ) ամբողջացնել հայագիտական առարկաների՝ Հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները // Տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի 17.08.2012թ. թիվ N 708-Ա/Ք հրամանում փոփոխություններ կատարելու մասին 06.09.2013թ. թիվ 1075-Ա/Ք և «Հանրակրթական հիմնական դպրոցի 10-11-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչը և ծրագիրը հաստատելու մասին» 17.07.2012թ. թիվ 709 Ա/Ք հրամանները // <http://lib.armedu.am/resource/2176>:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուշագրավ է, որ առարկայի պարտադիր ներառումը դպրոցական ուսումնական ծրագրում հասարակության որոշ շերտերի կողմից ընդունվեց բուն հակազդեցությամբ՝ մասնավորապես կրոնական քարոզչության ենթադրյալ տարրեր պարունակելու³, այլադավանության նկատմամբ անհանդուրժողականություն դրսևորելու տեսանկյունից [22]: Դիտարկումներ եղան առ այն, որ առարկան նույնականացնում է ազգային և կրոնական պատկանելությունը, առաջարկներ եղան Հայ եկեղեցու պատմություն առարկան դարձնել ոչ պարտադիր [21]:

Հիշյալ դասընթացի վերաբերյալ վիճելի հարցադրումներից մեկն էլ այն էր, որ, ըստ ընդդիմախոսների, դասընթացը աշակերտների մոտ Հայաստանում գործող կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ձևավորում է բացասական վերաբերմունք [20, էջ՝ 40]: Ավելին, որոշ դեպքերում էլ «Հայ եկեղեցու պատմություն» առարկային վերագրվեցին ծայրահեղական գնահատականներ [18] կամ չարդարացված ցանկություններ⁴: Այս ամենը հանգեցրեց աշխարհիկ պետության սկզբունքի իրագործման թերահավատությանը⁵:

Անդրադառնալով հիմնախնդրին, ՀՀ կառավարությունը 2010 թվականի թիվ 439-Ն որոշմամբ հաստատեց հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը, որի թիվ 2 հավելվածում ամրագր-

³ Առանձին հեղինակների դիտարկումների համաձայն, Հայ եկեղեցու պատմություն առարկայի ուսուցման շրջանակներում որոշ ուսուցիչներ դասընթացը սկսում են Տերունական աղոթքով, որի ժամանակ աշակերտները ոտքի են կանգնում, իսկ վերջում՝ խաչակնքում: Տե՛ս Եվրասիա համագործակցության հիմնադրամ, Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները, խմբ.՝ Գ. Տեր-Գաբրիելյան, Եր., 2014թ. էջ՝ 25:

⁴ Որքան էլ զարմանալի և նույնիսկ զարհուրելի թվա առաջարկվում էր «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերում ներառել աշխարհում արդիական դարձած այնպիսի թեմաներ ինչպիսիք են դիակիզարանների, էֆթանազիայի և միասեռ ամուսնություններին վերաբերող խնդիրները: [20, էջ 29]:

⁵ Հարկ է ուշադրություն դարձնել «Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական առարկայի ծրագրում շարադրված սկզբունքներին, որտեղ ասվում է. «Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ» // [15]:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ված տարրական և հիմնական կրթության հանրակրթական ծրագրերի բովանդակության ներկայացվող նվազագույն պահանջների մեջ սահմանվեց «հասարակություն, հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառի՝ կրոնական բազմազանության նպատակաուղղվածությունը [11]: Հատկանշական է, որ որոշման հավելվածում միջնակարգ (ավագ) դպրոցի ծրագրային չափորոշիչների մեջ կրոնական բազմազանության մասին որևէ հիշատակում չկա:

Միաժամանակ, անդրադառնալով կրոնական բազմազանության ապահովման հիմնահարցին՝ հարկ է շեշտադրել, որ «Հայոց եկեղեցու պատմություն» դպրոցական առարկայի շրջանակում ազգային եկեղեցու պատմության, դավանաբանական ուղղության և, առհասարակ, քրիստոնեական ուսմունքի վերաբերյալ գիտելիքներից զատ, տեղեկություններ է տրամադրվում նաև կենդանու և բույսի պաշտամունքի (տոտեմիզմ), հին հայկական կամ նախաքրիստոնեական հավատքի, հինդուական, բուդդայական, զրադաշտական, մահմեդական կրոնների, հունահռոմեական դիցարանի մասին՝ այդ կերպ հանդես գալով, նաև, զանազան կրոնների ուսուցման յուրօրինակ աղբյուր:

Հարկ է ընգծել, որ կրթության աշխարհիկությունը ամենևին չի պահանջում կրթության բնագավառում կրոնի ուսուցման անթույլատրելիություն: ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» հաստատվում է. «կրթությունը պետք է նպաստի փոխըմբռնմանը, հանդուժողականությանը և բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը...» [2]: Հռչակագրի սույն դրույթները թույլ են տալիս հանրակրթական դպրոցներում դասավանդել կրոնի և էթիկայի ընդհանուր պատմություն, եթե այն անցկացվում է անկողմնակալ և օբյեկտիվ [25]: Ավելին՝ կրոնի բացառումը պետական կրթական համակարգից, նույնիսկ, որոշ իմաստով, հակադրության մեջ է մտնում «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունք հռչակված համամարդկային արժեքների առաջնայնության [5, 5-րդ հոդվ 1-ին մաս], ինչպես նաև 11-րդ հոդվածով սահմանված դրույթների հետ, համաձայն որի՝ «կրթության բովանդակությունն ապահովում է՝ 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան, 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կութային արժեքների յուրացումը»[5, 11-րդ հոդված 2-րդ մաս]: Վերջինս անխուսափելիորեն ենթադրում է նաև կրոնների պատմության ուսուցում՝ որպես տարբեր ազգերի հոգևոր կյանքի կարևորագույն բաղադրիչ և մշակութային արժեք: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ կրոնների՝ որպես աշխարհընկալման ուրույն համակարգի, ուսուցումը անհրաժեշտ է երեխայի և առհասարակ մարդու լայնախոհության և աշխարհաճանաչման, համամարդկային արժեքներին հաղորդակից լինելու համար:

Այլ հարց է որ, կրոնագիտական առարկայի ուսուցումը՝ ելնելով կրթության աշխարհիկ սկզբունքից, պետք է հիմնված լինի ժողովրդավարության անկյունաքար հանդիսացող բազմակարծության և լայնախոհության վրա և չվերածվի որևէ դավանաբանական ուղղության քարոզչության և կրոնական անհանդուրժողականության սերմանման: Այս իրավաընկալումից բխում է, որ որևէ պարագայում հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնական քարոզչությունը անհամատեղելի է կրթության աշխարհիկ սկզբունքի էության հետ, նույնիսկ դոմինանտ կամ տիրապետող դավանանքի պարագայում: Այս առումով փոքր ինչ խնդրահարույց է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի բովանդակությունը, որից հետևում է, որ կրթության աշխարհիկությունը բացարձակ չէ, և օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել ուսումնական հաստատություններում կրոնական քարոզչության բացառիկ թույլատրելիության հնարավորություն[6, 4-րդ հոդվ., 8-րդ կետ]: Հավելենք միայն, որ աշխարհիկ կրթությունը, նույնիսկ բացառության կարգով, չի կարող նախատեսել կրոնական քարոզչության ծավալում ուսումնական հաստատություններում:

Սույն մտահոգություններով պայմանավորված՝ հարկ է հիշատակել աշխարհիկ մոտեցումների վրա հիմնված Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքները, որը թեև պարտադիր կատարման փաստաթուղթ չէ և կրում է սոսկ խորհրդատվական բնույթ, այնուամենայնիվ արժեքավոր կողմնորոշիչներ է պարունակում⁶: Այդ սկզբունքների համաձայն՝

⁶ Իսպանիան ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կրոնի կամ հավատքի ազատության խորհրդատվական խորհրդի հետ համատեղ նախաձեռնեց Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքների միասնական ձեռնարկի մշակումը, որը հիմնարար սկզբունքներ է սահմանում ԵԱՀԿ մասնակից երկրների հանրային դպրոցներում ուսուցանվող կրոնա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կարևորվում է կրթության աշխարհիկ բնույթը, առարկաների դասավանդման անկողմնակալությունն ու օբյեկտիվությունը, ինչպես նաև ուսումնական ծրագրերի կազմման, ուսուցիչների վերապատրաստման, համապատասխանությունը կրթության աշխարհիկության, ժողովրդավարության և մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին:

Հարկ է շեշտադրել այն փաստը, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում հանրակրթական դպրոցներում տարբեր կրոնների և դավանանքների նկատմամբ հանդուրժողականության ապահովման համար նախատեսվում էր տպագրել Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքները և այն տարածել հատկապես «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների և կրթության ոլորտի պատասխանատուների շրջանում [9]:

Այստեղից հետևում է այն ողջամիտ հարցադրումը, որ եթե «Հայոց եկեղեցու պատմությունը» հայագիտական ուղղվածության աշխարհիկ բնույթի առարկա է, ապա ինչո՞ւ է կրոնների և հավատքների դասավանդմանը վերաբերող ձեռնարկի տպագրումը և տարածումը կարևորվում այդ ոլորտի պատասխանատուների համար: Խնդիրը, ըստ էության, կայանում է նրանում, որ կրոնական կազմակերպությունների վերաբերյալ պատմական տեղեկանքը, ինչպիսին էլ որ այն լինի, կարող է իր մեջ կրոնական քարոզչության, խտրականության դրսևորման հնարավոր վտանգներ պարունակել: Հետևաբար, Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքների տեղայնացումը աշխարհիկ կրթության անշեղ իրացման համատեքստում օգտակար առաջնահերթություն է:

Միաժամանակ պատեհ է արձանագրել այն փաստը, որ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը՝ որպես «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման խնդիրների առն-

կան ուղղվածության առարկաների դասավանդման չափանիշների վերաբերյալ: Թոլեդոյի ուղեցուցային սկզբունքների հիման վրա սահմանվել են կրոնների դասավանդման և ուսումնական ծրագրերի պատրաստման մեթոդաբանական ուղե-նիշները, որոնց հիմքում դրված է կրոնի կամ հավատքի ազատ դավանության համընդհանուր իրավունքը՝ հիմնված փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության և միջդավանական կոնֆլիկտների բացառման վրա // [26]

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

չությամբ վերահսկողություն իրականացնող մարմին, պարբերաբար այցելություններ է կատարում դպրոցներ, մասնակցում դասալսումների, բարձրացնում անհամապատասխան ուսուցչի փոխարինման հարցը: Գտնում ենք, որ առավել արդարացված կլինի, եթե այս վերահսկողական գործառույթները վերապահվեն բացառապես պետական իրավասու մարմնին:

Անշուշտ, դասագրքերի մշակման, դրանց հետագա բարելավման աշխատանքներում ազգային եկեղեցու ներգրավվածությունը ողջունելի է, և իրապես բխում է պետություն-եկեղեցի հարաբերությունների ամրակայման անհրաժեշտությունից, սակայն, աշխարհիկ կրթական հաստատություններում հոգևոր սպասավորների կողմից որևէ դասընթացի նկատմամբ վերահսկողությունը, մեր կարծիքով, համատեղելի չէ կրթության աշխարհիկ սկզբունքի էության հետ:

Համակարծիք ենք այն դիտարկումներին, որ դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակներով, դավանած համոզմունքներով և արժեքներով պայմանավորված՝ ազգային հոգևոր կառույցի պատմության ուսուցումը իր սահմանած սկզբունքներից և նպատակներից կարող է շեղվել՝ կանխորոշելով կրոնաքարոզչական տարրի գերակայությունը:

Ասվածի համատեքստում հարկ է նշել, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակների մեջ, լայն իմաստով, մտնում է ազգային եկեղեցու պատմության փոխանցումը աշակերտներին, այլ ոչ թե կրոնական հավատի կամ հակակրոնական աշխարհայացքի սերմանումը: Այդ պատճառով հրատապ է այնպիսի կառուցակարգերի ներդրումը, որպեսզի առարկայի ֆորմալ գործառույթը փաստացի կիրարկման մեջ չվերածվի կրոնական քարոզչության, և դրանով իսկ, չխոչընդոտի աշխարհիկ պետության գաղափարի կենսագործմանը, որը անառարկելիորեն պահանջում է աշխարհիկ կրթական հաստատություններում գերծ մնալ մի կողմից՝ աթեիստական գաղափարներ սերմանելուց, մյուս կողմից՝ կրոնական դոկտրիններ տարածելուց և քարոզելուց:

Հաջորդ կարևոր հարցադրումը վերաբերում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի պարտադիր ուսուցմանը: Արդյո՞ք դասընթացից հրաժարվելու ընթացակարգի բացակայությունը խախտում է

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

սեփական համոզմունքներին համապատասխան կրթության իրավունքի իրացումը:

Թերևս, անհրաժեշտ է նկատել, որ «Հայոց եկեղեցու պատմությունը» պաշտոնապես աշխարհիկ առարկա է, այդուհանդերձ արտաքին դիտարկումն էլ բավարար է նկատելու դասագրքերում առկա քրիստոնեական ուսմունքի ճնշող գերակայությունը:

Հայաստանի Հանրապետությունում կրթության աշխարհիկության հետազոտման շրջանակներում հարկ է դիտարկել տվյալ հիմնախնդրին առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական պրակտիկան՝ ստորև ներկայացված գործերի շրջանակում, մասնավորապես՝

Ա) «Ֆուգերոն և այլք ընդդեմ Նորվեգիայի» գործով 29.06.2007թ. կայացրած որոշումը[23], որի նախապատմությունը հետևյալն է. 1997 թվականին Նորվեգիայի տարրական դպրոցներում պարտադիր կարգով, ներմուծվեց «Քրիստոնեություն, կրոն և փիլիսոփայություն» միասնական առարկան, որը չէր նախատեսում դասընթացից ամբողջական հրաժարվելու ընթացակարգ: Նորվեգիայի «Մարդասիրական ասոցիացիայի» անդամ հանդիսացող մի խումբ ծնողներ դիմում էին ներկայացրել դպրոցի տնօրինությանը՝ իրենց երեխաներին դասընթացից ազատելու համար, որը սակայն մերժվել էր: Հայցվորները ներպետական դատական ատյանները սպառելուց հետո հայց էին ներկայացրել Եվրոպական դատարան հայտնելով, որ առարկայից ամբողջական հրաժարվելու հնարավորության բացակայությունը խախտում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված իրենց մտքի, խղճի և կրոնի ազատության, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը: Դատարանի պալատը քննելով գործը եզրակացրել է, որ առկա է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի խախտում՝ միաժամանակ արձանագրելով, որ առարկան ինքնին հենվել է հիմնականում քրիստոնեության ուսուցման վրա և չի ապահովել համընդհանուր չեզոքություն:

Բ) Հասանը և Էլեն Ջենգին ընդդեմ Թուրքիայի գործով 09.10.2007թ. որոշումը [24]: Այս գործի նախապատմությունը հանգում է հետևյալին. Թուրքիայի քաղաքացի Էլեն Ջենգին՝ լինելով ավելի քան հետևորդ, սովորում էր Ստամբուլի հանրակրթական դպրոցում, որտեղ պարտադիր կարգով ուսուցանվում էր «Կրոնական մշակույթ և բարոյագիտություն» առարկան: Հայրը՝ Հասան Ջենգին խնդրել էր ազատել դստերը հիշյալ դասընթացից, քանի որ այն հիմնականում պարունակում էր սունիական ուղղվածության գիտելիքներ և, դրանով իսկ, խախտում իր երեխայի համոզմունքներին համապատասխան կրթություն ապահովելու իրավունքը: Դատարանը գործը քննելով՝ միաձայն արձանագրեց Կոնվենցիայի թիվ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի խախտում: Համեմատելով «Կրոնական մշակույթ և բարոյագիտություն» դասընթացի վերաբերյալ Թուրքիայի կրթության նախարարության սահմանած մեթոդաբանական ուղեցույցները և առարկայի դասագրքերը դատարանը արձանագրեց, որ Թուրքիայի կրթական համակարգը համարժեք մոտեցում չի ցուցաբերում կրոնական կրթությանը, այլ առարկայի ծրագրում առաջնահերթությունը վերապահելով իսլամին՝ անտեսում է մյուս կրոնական ուղղությունները:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները փաստում են, որ մեկ կրոնի գերապատվության վրա հիմնված պարտադիր կրոնական ուսուցումը անհամատեղելի է Կոնվենցիայի հռչակած ծնողների՝ իրենց զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքի հետ:

Անհրաժեշտ է հավելել, որ կրոնական և փիլիսոփայական համոզմունքները հարգելու իրավունքը պատկանում է երեխայի ծնողներին, այլ ոչ թե իրեն՝ երեխային: Այդ համոզմունքները հարգելու պարտականությունը, այդուհանդերձ, ենթակա է երեխայի՝ կրթություն ստանալու ուղղակի իրավունքին [17]:

Բնավ չարժեզրկելով քրիստոնեության դերը հայ ժողովրդի և պետության քաղաքակրթական առաջընթացի ապահովման գործում, հարկ է շեշտադրել, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի պարտադիր ուսուցումը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում չի կարող իր բովանդակային իմաստով համատեղելի լինել երեխայի ծնողների կրոնական համոզմունքներին համա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պատասխան կրթության իրավունքի հետ, եթե չեն նախատեսում ֆակուլտատիվ ընթացակարգեր:

Կարևոր է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ազգային եկեղեցու հետ հարաբերությունները կարգավորող իրավանորմերի բովանդակությունից է բխում կրոնական կրթության կամավորության սկզբունքը [3]:

Անշուշտ, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից հրաժարվելու ընթացակարգի սահմանումը, չի կարող նսեմացնել կրթության բնագավառում ազգային եկեղեցու անգնահատելի դերն ու առաքելությունը: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան նախ և առաջ հայագիտական ուղղվածության առարկա է, որում արտացոլված է ազգային եկեղեցու պատմությունը, նրա տեղն ու դերը ազգային ինստիտուտների շարքում: Ազգային հոգևոր կառույցի 1800 տարվա պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է և, անշուշտ, հրամայական է առանձին առարկայի շրջանակներում այդ պատմության դասավանդումը:

Իրավացի է այն տեսակետը, ըստ որի՝ Հայ եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման անհրաժեշտությունը, ըստ էության, պայմանավորված է ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման Եկեղեցու առաքելությամբ [19, էջ՝ 15]:

Անշուշտ, հարկ է կարևորել ազգային ավանդույթների, նկարագրի, աշխարհայացքի դերը նաև կրթության բնագավառում՝ դիտարկելով ազգային մշակույթը և կրոնը՝ որպես կրթության և դաստիարակության բաղադրիչ: Այս առումով, արդարացված է նաև, թե՛ ազգային եկեղեցու պատմության, թե՛ քրիստոնեական գաղափարախոսության նկատմամբ պետական իշխանության հոգատար վերաբերմունքը, որը բխում է ազգային եկեղեցու մատուցած ազգանվեր ծառայություններից:

Սակայն, պետք է կարևորել նաև այլադավան փոքրամասնության իրավունքներն ու շահերը, որոնց կրոնական համոզմունքները տարբերվում են «Հայոց եկեղեցու պատմության» շրջանակներում հռչակված կրոնաբարոյական մոտեցումներից: Այս իմաստով, անհրաժեշտ է ողջամտորեն համադրել աշխարհիկ պետության նվազագույն պահանջները ազգային եկեղեցու հետ սերտ փոխգործակցության շրջանակներում:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սույն հիմնախնդրի քննարկան համատեքստում հարկ է հիշատակել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի 2013 թվականի ամփոփիչ դիտարկումները՝ Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ, որտեղ Հանձնաժողովը առաջարկել է «վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ դրանում արտացոլելով բոլոր երեխաների կրոնի ազատությունը, վերացնելով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի պարտադիր դասավանդումը» [27]:

Այսպիսով, ամփոփելով սույն ենթագլխում կատարված վերլուծության արդյունքները, ամփոփ ձևով կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները՝

1) աշխարհիկ պետության սկզբունքի կարևոր բաղադրիչներից է կրթության աշխարհիկությունը: Այն հանդիսանում է աշխարհիկ պետությունում կրթական միջավայրի չեզոքության, կրոնական համոզմունքների հիմքով խտրականության բացառման անհրաժեշտ նախապայման, որը ենթադրում է կրոնական քարոզչության, կրոնական պատկանելությամբ պայմանավորված խտրականության և պարտադրանքի անթույլատրելիություն,

2) Հայաստանի Հանրապետությունում կարևոր նշանակություն վերապահելով կրթության աշխարհիկության սկզբունքին, ինչպես նաև հաշվի առնելով Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի իրավական կարգավորման այն պահանջը, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, այնուամենայնիվ, անհրաժեշտ է՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի գծով ուսումնական գործընթացների վերահսկողության գործառույթները վերապահել բացառապես պետական իրավասու մարմնին, իսկ այդ առարկայի պարտադիր ուսուցումը և դրանից հրաժարվելու ընթացակարգերի բացակայությունը կարող են խղճի ու կրոնի ազատության իրացման պատնեշ հանդիսանալ այլադավանների շրջանում և աղճատել ինչպես պետության աշխարհիկության, այնպես էլ՝ կրոնական բազմակարծության սկզբունքի նշանակությունը:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 06.12.2015թ., Սկզբնաղբյուրը՝ <http://www.president.am/hy/constitution-2015/>:
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել է հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն:Սկզբնաղբյուրը՝ http://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf
3. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը, ընդունվել է 22 փետրվարի, 2007թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2007.03.28/17(541) Հոդ.359:
4. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ.): Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ԳԽՏ 1991/12:
5. Հայաստանի Հանրապետության օրենքը «Կրթության մասին», (ընդունվել է 14 ապրիլի 1999թ.):
6. Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրակրթության մասին»՝ (ընդունվել է 10.07.2009թ.): Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2009.08.05/39(705) Հոդ.901:
7. Հայաստանի Հանրապետության օրենքը «Նախադպրոցական կրթության մասին»: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2005.12.23/80(452) Հոդ.1534:
8. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ նախագահի թիվ ՆԿ-159-Ն Կարգադրություն, ընդունվել է՝ 29.10.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2012.11.07/54(928) Հոդ.1157:
9. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ N 303-Ն որոշումը (ընդունվել է 27 փետրվարի, 2014թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2014.04.02/16(1029) Հոդ.239:
10. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» 13.07.2017թ. N 30 արձանագրային որոշումը: Սկզբնաղբյուրը՝

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=91088&sc=%20>:

11. ՀՀ կառավարության «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 08.04.2010թ. N 439-Ն որոշումը: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2010.05.06/19(753) Հոդ.489:
12. ՀՀ կրթության և գիտության նախարարի 17.08.2012թ. թիվ N 708-Ա/Ք հրամանում փոփոխություններ կատարելու մասին 06.09.2013թ. թիվ 1075- Ա/Ք հրամանը: Սկզբնաղբյուրը՝ <http://lib.armedu.am/resource/2176>:
13. ՀՀ ԿԳ նախարարի «Հանրակրթական հիմնական դպրոցի 2-4-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» («Քրիստոնեական կրթություն») առարկայի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 830-Ա/Ք հրամանը, ընդունվել է 07.09.2012թ.: Սկզբնաղբյուրը՝ <http://www.aniedu.am/>:
14. ՀՀ ԿԳ նախարարի «Հանրակրթական հիմնական դպրոցի 10-11-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչը և ծրագիրը հաստատելու մասին» 17.07.2012թ. թիվ 709 Ա/Ք հրամանը, Սկզբնաղբյուրը՝ <http://www.aniedu.am/>:
15. ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.09.2013թ. թիվ 1075-Ա/Ք և 17.07.2012թ. թիվ 709 Ա/Ք հրամանների հավելվածները:
16. Հանրակրթական հիմնական դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» («Քրիստոնեական կրթություն») առարկայի ծրագիր, հաստատվել է 07.09.2012թ. Սկզբնաղբյուրը՝ <http://www.aniedu.am/>:
17. Մուրդոք Զ. Մոքի, խղճի և կրոնի ազատություն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրականացման ուղեցույց, խմբ.՝ Վ. Ենգիբարյան, Եր.: «Անտարես», 2008թ., 88 էջ:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

18. Սանասարյան Հ., Հայոց Եկեղեցու պատմությունը թե՛ հուդայականության ձեռնարկ, երկրորդ վերամշակված հրատարակություն, հեղինակային հրատ., Եր., 2010թ., 152 էջ:
19. Անանյան Շ. վարդ., Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին և ՀՀ օրենսդրությունը, (քննարկման նյութեր), Սբ. Էջմիածին, 2013թ., էջ՝ 7-18:
20. Հովհաննիսյան Հ., Դավթյան Ա., Հայոց Եկեղեցու պատմություն դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծությունն ու դրանց ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա, Եր., 2013թ., 48 էջ:
21. «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն, «Կրոնի և Հավատամքի ազատության իրավունքի հիմունքներով խտրականությունը Հայաստանում», զեկույց 2015թ.: Սկզբնաղբյուրը՝ <http://religions.am/article/>
22. ԱՄՆ Պետդեպարտամենտի՝ Կրոնական ազատությունների մասին զեկույցը, 2015թ., Հայաստան: Սկզբնաղբյուրը՝ https://www.usa.am/announce/irfr2015_arm.pdf:
23. Case of Folgero And Others v Norway: ECHR 29 Jun 2007. December 12, 2017 (Application no. 15472/02). Սկզբնաղբյուրը՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-81356>:
24. Case of Hasan and Eylem Zengin v. Turkey 9 October 2007, (Application no. 1448/04). Սկզբնաղբյուրը՝ <http://echr.ketse.com/doc/1448.04-en-20071009/view/>
25. CCPR General Comment No. 22: Article 18 (Freedom of Thought, Conscience or Religion) Adopted at the Forty-eighth Session of the Human Rights Committee, on 30 July 1993. Սկզբնաղբյուրը՝ <http://www.refworld.org/docid/453883fb22.html>:
26. Toledo Guiding Principles on Teaching about Religions and Beliefs in Public Schools OSCE/ODIHR 2007:
27. Committee on the Rights of the Child, Concluding observations on the combined third and fourth periodic reports of Armenia, adopted by the Committee at its sixty-third session, 27.05–14.06 2013, CRC/C/ARM/CO/3-4: Սկզբնաղբյուրը՝ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

**ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕПОДАВАНИЯ ИСТОРИИ АРМЯНСКОЙ
ЦЕРКВИ В СВЕТЕ СВЕТСКОСТИ ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ**

Vahe Torosyan

ЕУ, кафедра правоведения, к.ю.н

В центре геополитических событий и вызовы расширения ее границ институт религии находится в центре особенного внимания с точки зрения взаимоотношений государства с обществом. Влияние религии на человеческий разум, формирование мировоззрения в первую очередь начинается с религиозного образования. Принцип светскости образования как наиважнейшего компонента концепции светского государства и в частности права на свободу совести и религии человека, неразрывно связан с религиозным образованием. Образование, свободное от религиозной пропаганды и принуждения, является одной из самых надежных гарантий свободного выбора и реализации мировоззрения человека.

Ключевые слова: Светскость образования, История армянской церкви, религия, религиозное образование.

**LEGAL ISSUES OF TEACHING THE HISTORY OF THE
ARMENIAN CHURCH IN THE LIGHT OF SECULARITY OF EDUCATION
IN THE REPUBLIC OF ARMENIA**

Vahe Torosyan

EU, Chair of Jurisprudence, PhD in Law

Due to the influence of religion in the center of geopolitical events and the challenges of expanding of its borders, the institution of religion is at the center of special attention in terms of the relationship between the state and society. The influence of religion on the human mind, the formation of a worldview, first of all, begins with religious education. The principle of secularity of education as the most important component of

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

the concept of secular state and in particular the right to freedom of conscience and religion of a human is inextricably linked with religious education. Education, free from religious propaganda and coercion, is one of the most reliable guarantees of free choice and realization of a human's world outlook.

Keywords: Education secularity, History of the Armenian Church, religion, religious education.

Ընդունվել է տպագրության՝ 01.04.2019թ.

Գրախոսվել է՝ 25.04.2019թ.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ ԱԶԱՏ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՈՐՊԵՍ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻ

Վարդանուշ Պողոսյան

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ.
varduhipogosyan@yahoo.com, +374 91 4158 11

Ուսումնասիրությունը թույլ է տալիս վերլուծել էվթանագիան որպես համալիր սոցիալ-իրավական ինստիտուտ, բացահայտել նրա հատկանիշները, ձևերը և տեսակները: Կյանքի իրավունքը դա մարդու անձեռնմխելիության պաշտպանության և այն ազատ տնօրինելու իրավական նորմերով երաշխավորված իրավունք է: Վերջինս ունի բարդ կառուցվածք, որի հիմնական բաղադրիչներից մեկը պետք է համարվի ազատորեն տնօրինելու իրենց կյանքը:

Հոդվածում հիմնավորվում է, որ Հայաստանում օրենքով սահմանված չէ մարդու մահանալու իրավունքը, սակայն e-draft.am կայքում դրված է «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ [5], որով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում էթթանագիան արգելվում է: Միննույն ժամանակ սահմանվում են այն չափանիշները կամ ցուցիչները, որոնց առաջացման պարագայում առողջապահության բնագավառում բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործունեություն իրականացնողի կողմից միակողմանի որոշմամբ դադարեցվում են պացիենտի վերակենդանացման և արհեստական կենսապահովման միջոցառումները: Այսինքն՝ ըստ էության արգելվում է միայն ակտիվ էվթանագիան, իսկ պասիվ էվթանագիան թույլատրվում է:

Մենք համամիտ չենք հայեցակարգի այս մոտեցման հետ և հաշվի առնելով ինչպես տարբեր պետությունների, այնպես էլ ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան, այդ ոլորտում, Հայաստանի Հանրապետությունում պետք է թույլատրվի նաև ակտիվ էթթանագիան, հստակ սահմանելով չափորոշիչները, որպեսզի այն չհանգեցնի հանցագործության:

Հիմնաբառեր- մարդու իրավունք, իր կյանքը ազատ տնօրինելու իրավունք, էվթանագիա, մահանալու իրավունք

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անձի կյանքը ազատ տնօրինելը համարվում է կյանքի իրավունքի բաղադրատարր: Կյանքի իրավունքի սահմանափակումը անձի ծանր հիվանդ լինելու հանգամանքով պայմանավորված անվանում են էֆթանագիա¹: Առաջինը «էֆտանագիա» տերմինը օգտագործել է Ֆրենսիս Բեկոնը 16-րդ դարում՝ «լավ մահ» իմաստով: Որոշ գիտնականներ գտնում են, որ. «Մահանալու իրավունքը միևնույն բնական իրավունքն է ինչպես կյանքի իրավունքը, և էֆթանագիան պետք է համարվի որպես մարդու մահվան իրավունքի իրականացման տեսակ» [1] էջ. 210.]: «Մահվան իրավունքը մարդու բացարձակ, բնական, անքակտելի, օրենքով պաշտպանված անձի իր կամքով իր կյանքը դադարեցնելու իրավունքն է: Նա իրավասու է ինքնուրույն որոշել կյանքի սահմանափակման մեթոդները [2][էջ 16]:

Զիգմունդ Ֆրեյդը, 1939 թվականի սեպտեմբերի 23-ին իր Լոնդոնյան բնակարանում բժիշկ Շուրի օգնությամբ էֆտանագիա կատարեց, որպեսզի չտառապի քաղցկեղի ցավերից: ԱՄՆ-ում 1989-1998 թվականներին բժիշկ Ջեք Գևորգյանը օգտագործելով իր ստեղծած «մերսիտրոն» սարքը (թույնի մահացու քանակ ներարկող սարք) 130 հոգու օգնել է վերջ տալ կյանքին: Ներկայումս էֆտանագիան օրինականացված է եվրոպական մի շարք երկրներում, մասնավորապես, Բենիլյուքսի պետություններում, Շվեյցարիայում, իսկ Ֆրանսիայում, Իտալիայում ու Միացյալ Թագավորությունում մահացու հիվանդ մարդկանց թույլ են տալիս հրաժարվել բուժումից:

Առանձնանում են էֆտանագիայի երկու տեսակ՝ պասիվ և ակտիվ: Պասիվ է համարվում, երբ մահացու հիվանդին դիտավորյալ դադարեցնում են դեղամիջոցներ տալ կամ անջանտում են կյանքի ապահովման սարքը: Ակտիվ է համարվում հիվանդին մահացու դեղամիջոց ներարկելը կամ մահ առաջացնող ուրիշ գործողություններ, որոնց արդյունքում վրա է հասնում անցավ և արագ մահ:

Գոյություն ունեն նաև էֆտանագիայի կամավոր և ոչ կամավոր տեսակներ: Կամավոր էֆտանագիան իրականացվում է հիվանդի համաձայնությամբ, կամ նախապես ձևակերպված իրավական պայմանավորվածությամբ (նախատեսված է անդարձ կոմայի դեպքում): Ոչ

¹ Էֆթանագիա բառը հունարեն է և նշանակում է լավ մահ, մարդուն կյանքից զրկելու պրակտիկա, երբ նա անբուժելի հիվանդ է

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կամավոր էֆտանագիան իրականացվում է անկախ հիվանդի կամքից, եթե նա անգիտակից է և անկարող է իր կամքը արտահայտել:

2002թ. ՄԻԵԴ-ն իր վճիռներից մեկում, հայցվորի այն պնդմանը, որ կյանքի իրավունքը ներառում է մահանալու իրավունքը դատարանը պատասխանեց, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված է կյանքը պաշտպանելու պետության պարտականությունը և այն չի առնչվում սեփական կյանքը տնօրինելու որոշումներին և 2-րդ հոդվածը չի կարող առանց լեզվական աղավաղումների մեկնաբանվել այնպես, որ ընձեռնի տրամագծորեն հակադարձ իրավունք՝ մահանալու իրավունք²:

Գեորգ Պուպպինկի³ ուսումնասիրելով ԵԽ անդամ պետությունների պրակտիկան նշեց, որ որոշ պետություններ չեն պահպանում էֆթանագիայի արգելքը և նույնիսկ թույլատրում են կիրառել էֆթանագիա: Պուպպինկի կարծիքով շատ պետություններ ցանկանում են պարտադրել ՄԻԵԴ-ին ընդունել «մահանալու իրավունքը» կամ «ինքնասպանության իրավունքը»: Արդեն 2011թ. ՄԻԵԴ-ը թույլատրեց էֆթանագիան և ինքնասպանությունը⁴ և հիմնավորեց, որ դա բխում է անձի Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքից: Մասնավորապես նշեց, որ մարդը կարող է ինքը որոշել, թե ինչպես և որ պահին իր կյանքը ավարտի, եթե նա ի վիճակի է ինքնուրույն ընդունել այդպիսի որոշում⁵: Սակայն սա վերաբերվում էր միայն այն դեպիքն, երբ հիվանդը ի վիճակի է արտահայտել իր կարծիքը այդ հարցի շուրջ:

Այնուհետև՝ 2012թ. ՄԻԵԴ դիրքորոշումը փոխվեց, հետևյալ երկու գործերի՝ Կոխը ընդդեմ Գերմանիայի և Գրոսսը ընդդեմ Շվեյցարիայի⁶ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Էվթանագիայի խնդիրը իրեն չի սպառել և նորից ուսումնասիրության կարիք ունի: Մասնավորա-

² ՄԻԵԴ, Փրիթթին ընդդեմ Մեծ Բրիտանիայի [Pretty v. the United Kingdom] (թիվ 2346/02), 29 ապրիլի 2002թ., Հայցվորը տառապում էր շարժական-ներյոնային մահացու դեգեներատիվ հիվանդությամբ, որը նրան պարալիզել էր վզից ներքև: Նա ցանկանում էր, որ ամուսինն իրեն օգնի ինքնասպանություն գործելու հարցում:

³ Օրենքի և արդարության համար Եվրոպական կենտրոնի տնօրեն, Ստրասբուրգ

⁴ Հասան ընդդեմ Շվեյցարիայի

⁵ Հասսը բիոպոլյար հոգեկան հիվանդությամբ էր տառապում 20 տարի, և երկու անգամ ինքնասպանության փորձ էր կատարել: Գտնում էր, որ իր հիվանդությունը շատ երկար բուժման կարիք ունի և բացառում է արժանավայել կյանքը:

⁶ 19.07.2012թ. Կոխը ընդդեմ Գերմանիայի, բողոք 497/09 և 14.03.2013թ. Գրոսսը ընդդեմ Շվեյցարիայի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պես, դատարանը Կոխը ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով մերժեց դիմումատուներին՝ ինքնասպանությանը օգնելու թույլտվություն տալը⁷, իսկ Գրոսսը ընդդեմ Շվեյցարիայի գործով՝ ընդհակառակը՝ թույլատրեց մարդու նկատմամբ կիրառել էվթանագիա, նույնիսկ այն դեպքում, երբ նա մահացու հիվանդ չէր⁸: Երկու գործերն էլ վերաբերվում են այն դեպքին, որք հիվանդները պետության աջակցությունն են ուզում իրենց կյանքից զրկելու գործում:

2012թ. հունվարի 25-ին Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը 1859 հանձնարարական ընդունեց՝ «Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանություն, հաշվի առնելով հիվանդի ցանկությունները» որում ասվում էր, որ Էֆթանագիան դա անգործունակ մարդու նկատմամբ, իբր թե իր շահերի համար դիտարկությամբ կատարված սպանություն է, որը ուղեկցվում է գործողություններով և անգործությամբ⁹: Սա արդեն առաջընթաց էր, քանի, որ մինչ այդ ԵԽԽՎ-ի ընդունած հանձնարարականները արգելում էին անբուժելի հիվանդին ինքնասպանության հարցում օգնելը¹⁰:

Արդեն 2013թ. ՄԻԵԴ-ը ուսումնասիրեց ևս մի գործ¹¹, որտեղ խստվում էր Շվեյցարիայի օրենսդրության մեջ այն հստակ սկզբունքների բացակայության մասին, որով կորոշվեր հնարավոր է էվթանագիայի իրականացումը և ինչ պայմաններում, այն դեպքում, երբ դիմողը ոչ թե մահացու հիվանդ է, այլ հոգնել է կյանքից [6]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԵԽԽՎ և Եվրոպայի Խորհրդի 47 անդամ-պետությունների մեծ մասը սկզբում դատապարտում էին Էֆթանագիան և միայն Բենիլյուքսի պետությունները և Շվեյ-

⁷ Կոխը պարալիզացված հիվանդ էր և իր ամուսինը ցանկանում էր բժիշկներից: մահացու դեղամիջոց վերցնել և մերժում ստացավ: Մադամ Կոխը և իր ամուսինը խնդրի լուծում չստանալով Գերմանիայում մեկնում են Շվեյցիա, որտեղ և կազմակերպեցին նրա ինքնասպանությունը:

⁸ Մադամ Գրոսսը ծերացման բնական պրոցես է ապրում, սակայն նա ուժ չունի դիմադրելու: Նա ցանկանում է, որ բժիշկները իրեն տան մահացու դեղ՝ և գտնում է, որ դա բխում է իր արժանապատվության իրավունքից և պետությունը պարտավոր է ապահովել իր համար ինքնասպանության բոլոր պայմանները և անցավ ու անվտանգ մահ:

⁹ 25.01. 2012թ. ԵԽԽՎ 1859 հանձնարարական

¹⁰ ԵԽԽՎ 1418 (1999) հանձնարարական, Մարդու իրավունքների պաշտպանության և անբուժելի հիվանդի արժանապատվության մասին

¹¹ Գրոսսը ընդդեմ Շվեյցարիայի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դիան ընդունում և իրականացնում էին այն, սակայն վերջերս էվթանազիայի կողմնակից են շատ պետություններ:

2002թ. ապրիլի 1-ին աշխարհում առաջին անգամ Նիդեռլանդներում ընդունվեց էֆթանազիայի մասին օրենք, որում նշվեց, որ էֆթանազիան կարելի է կիրառել 12 տարեկանից մեծ հիվանդների մոտ, միայն իրենց պահանջով և միայն այնպիսի անբուժելի հիվանդությունների դեպքում, երբ ցավն անտանելի է և դիմանալ հնարավոր չէ: Հիվանդի այդպիսի ախտորոշումը պետք է հաստատեն առնվազն երկու բժիշկ: 2018թ. Նիդեռլանդներում էֆթանազիայի միջոցով կյանքից հեռացավ Աուրելիա Բրաուվարսը, որը անբուժելի հիվանդ չէր, հոգեկան հիվանդ էր, սակայն կյանքից հեռացավ իր կամքով [7]¹²:

Բելգիան աշխարհում երկրորդ պետությունն էր, որ 2002թ. սեպտեմբերին ընդունեց օրենք [8], որի համաձայն մարդուն կարելի է բժշկական միջամտությամբ կյանքից զրկել միայն եթե նա տառապում է անտանելի ֆիզիկական և հոգեբանական ցավերից: Հիվանդը պիտի լինի չափահաս և նրա կայացրած որոշումը՝ կամավոր, գրավոր և լավ մտածված [9]:

2009թ. մարտին էֆթանազիան օրինականացրեց Լյուքսեմբուրգը [10], որի համաձայն անբուժելի հիվանդների նկատմամբ էֆթանազիա կատարող բժիշկների նկատմամբ չի կարելի քրեական գործ հարուցել, ինչպես նաև քաղաքացիական գործ հարուցել դատարանում:

2014թ. Բելգիայի պառլամենտը ընդունեց օրենք Մանկական էֆթանազիայի մասին [4], որտեղ նշվում էր, որ եթե երեխան հիվանդ է անբուժելի հիվանդությամբ և տառապում է ցավից, ապա կարելի է նրա նկատմամբ էֆթանազիայի գործողություն սկսել: Այս օրենքի ընդունմամբ Բելգիան դարձավ առաջին պետությունը աշխարհում, որը վերացրեց էֆթանազիայի տարիքային սահմանափակումը:

ԱՄՆ-ում էֆթանազիայի կողմնակիցներից է Ջեք Գևորգյանը, որը 1989թ. ստեղծեց հատուկ սարք, որի միջոցով օգնում էր ինքնասպանություն գործել այն անձանց, ովքեր ի վիճակի չէին ինքնասպանություն գործել ինքնուրույն, բայց շատ ցանկանում էին դա անել: Նա միջամտեց ավելի քան 130 մարդու կյանքի, որի համար 1991թ. նրան

¹² Նա գրել էր մահից առաջ. "Мне 29 лет, и я решила добровольно уйти из жизни. Я приняла такое решение, потому что у меня много психических проблем, я страдаю невыносимо и безнадежно. Каждый мой вздох - пытка".

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գրկեցին բժիշկ աշխատելու իրավունքից, իսկ 2000թ. դատապարտեցին 25 տարով ազատագրկման, 2007թ. [11] նա ազատ արձակվեց վատառողջ լինելու պատճառով, իսկ 2011թ. մահացավ [12]: 2001թ. ԱՄՆ գլխավոր դատախազը կարգադրություն ընդունեց, համաձայն, որի բոլոր այն բժիշկները, որոնք կօգնեն անձանց կատարել ինքնասպանություն, կդատապարտվեն քրեական օրենսգրքով սահմանված կարգով: 2006թ. ԱՄՆ գերագույն դատարանը այդ կարգադրությունը ճանաչեց հակաօրինական: Վերջին տարիներին ԱՄՆ-ում փորձ է արվում էֆթանազիայի օրինականացման ուղղությամբ: ԱՄՆ Կալիֆորնիա նահանգում 1976թ.-ից ԱՄՆ գերագույն դատարանի որոշումից հետո լայն կիրառություն ուներ պասիվ էֆթանազիան: 1977թ. հանրաքվեով ընդունվեց օրենք Մարդու մահանալու իրավունքի մասին: ԱՄՆ-ում էֆթանազիան օրինականացվեց 1998թ. Օրիգոնա, իսկ 2009թ. Վաշինգտոն նահանգներում: Որոշումները երկու դեպքերում էլ ընդունվեցին հանրաքվեով [13]:

Շվեյցարիայում էֆթանազիան արգելվում է, բայց բժիշկները կարող են օգնել հիվանդներին, նրանք կարող են անբուժելի հիվանդին մահացու դեղամիջոց տալ, որը հիվանդը պետք է ներարկի ինքնուրույն [14]: Կարելի է օգնել ոչ միայն Շվեյցարիայի քաղաքացիների, այլ նաև շրջագայության մեկնածներին¹³: Այս երկրում էֆթանազիայի մասին օրենքի բացակայությունը նրանք պայմանավորում են նրանով, որ յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պատկանում է իրեն և յուրաքանչյուրը ինքը կարող է որոշել, թե ինչպես հեռանա կյանքից և պետությունը այս հարցում չի կարող միջամտել: Շվեյցարիայում գործում են էֆթանազիան իրականացնող՝ մարդկանց «օգնող» բազում կազմակերպություններ, մասնավորապես՝ Dignitas and Exit (արժանապատվություն և ելք) [15]: 2011թ. Ցյուրիխ կանտոնի բնակիչները քվեարկեցին էֆթանազիայի օրինականացման օգտին: Շվեյցարիայի կանտոններից շատերում լայն կիրառություն ունեցավ պասիվ էֆթանազիան, երբ ոչ թե օգնում են հիվանդին մահանա, այլ չեն օգնում, որ ապրի, կարող են խնդրել, որ անջատեն մարդու կյանքը ապահովող սարքավորումները:

Ֆրանսիայում նույնպես գոյություն ունի օրենք, որը թույլ է տալիս չխանգարել հիվանդին մահանալ [16]: 2014թ. Ֆրանսիայի Բարձրա-

¹³ Жители Цюриха проголосовали за "суицидальный туризм" в Швейцарии

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գրյուն վարչական դատարանը թույլատրեց բժշկական էֆթանագիան [17]¹⁴:

2006թ. Իսրայելում ընդունվեց օրենք, որը թույլատրում էր անբուժելի հիվանդներին հրաժարվել սարքավորումների կիրառումից, այսինքն պասիվ էֆթանագիան, իսկ ակտիվ էֆթանագիան արգելվում էր [3]: Հիվանդը կարող է հրաժարվել էլեկրաշոկից, թթվածնի դիմակից, ցանկացած տիպի ռեանիմացիայից, սակայն այդ մասին կամ նա կարող է ուղղակի ասել, ուղղակի ասելու անհնարինության դեպքում պետք է նախօրք գրած լինի այդպիսի ցանկություն ունենալու մասին կամ այդպիսի ցանկություն հայտնեն նրա մոտ ազգականները, որոնց նա նախօրք խնդրել էր:

2010թ. Շվեդիայի առողջապահության նախարարությունը հայտարարեց, որ հիվանդը կարող է հրաժարվել ռեանիմացիա իրականացնող սարքավորումներից [18]: Շվեդիայի բժիշկները կարող էին անջատել սարքավորումները միայն հիվանդի կամքով, որովհետև շվեդական մեկնաբանության համաձայն հետագա բուժօգնությունից հրաժարվելու իրավունքը հիվանդի իրավունքն է և բժիշկները պարտավոր են հաշվի առնել հիվանդի ցանկությունը:

2010թ. ԳԴՀ վերաքննիչ դատարանը որոշում ընդունեց, որ անբուժելի հիվանդների կյանքի ապահովման սարքավորումների անջատումը հանցագործություն չէ, եթե կատարվել է հիվանդի ցանկությամբ [19]: Սա չի վերաբերվում ակտիվ էֆթանագիային, որը մինչև այժմ էլ ԳԴՀ-ում համարվում է հանցագործություն և սահմանված է ազատագրկում մինչև հինգ տարի ժամկետով:

ՌԴ-ում ՌԴ քաղաքացիաների առողջության պահպանության մասին 2011թ. ընդունված օրենքը արգելում է և՛ ակտիվ և՛ պասիվ էֆթանագիան:

Այժմ անդրադառնանք Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող մոտեցմանը: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, որը փոփո-

¹⁴ 40 ամյա Վենսան Լամբերը մոտոցիկլով վթարից հետո 7 տարի գտնվում էր կոմայի մեջ: Ֆրանսիայի բարձրագույն վարչական դատարանը թույլատրեց անջատել սարքավորումները, որից հետո ՄԻԵԴ-ն հաստատեց Ֆրանսիական դատարանի որոշումը: «Նա կյանքից ոչևէ բավականություն չի ստանում» ասաց նրա կինը, որը ցանկանում էր, որ սարքավորումները անջատեն:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

խության է ենթարկվել 06.10.15 ՀՕ-113-Ն-ով. «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Էվթանազիան՝ պացիենտի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով:

Այն անձինք, ովքեր պացիենտին գիտակցաբար դրդում են Էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Մինչ այժմ ՀՀ Քրեական օրենսգիրքը որևէ ձևով չի անդրադարձել էֆթանազիա եզրույթին, օրենսգրքի տրամաբանությունից երևում է, որ այն դիտարկվել է որպես հասարակ սպանություն: Միայն 62-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ կարեկցանքի շարժառիթով կատարելը համարվում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Այժմ e-draft.am կայքում դրված է ՀՀ Քրեական օրենսգրքի նոր նախագիծ, որի 71-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն նույնպես հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը համարվում է պատիժը մեղմացնող հանգամանք: Սակայն նախագծի 162-րդ հոդվածը սահմանել է տուժողի խնդրանքով սպանություն արտոնյալ հանցակազմը, որի համաձայն. «Անձի սպանությունը նրա գիտակցված և կամովին արտահայտված խնդրանքով՝ նրան ֆիզիկական տառապանքից ազատելու նպատակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով»: Ակնհայտ է, քրեական օրենսգիրքը դանդաղ քայլեր է կատարում էֆթանազիան ապաքրեականացնելու ուղղությամբ:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, որը փոփոխության է ենթարկվել 06.10.15 ՀՕ-113-Ն-ով. «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Էվթանազիան՝ պացիենտի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով:

Այն անձինք, ովքեր պացիենտին գիտակցաբար դրդում են Էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Հայաստանում օրենքով սահմանված չէ մարդու մահանալու իրավունքը, սակայն e-draft.am կայքում դրված է «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ [20], որում սահմանված է, որ Հայաստանում

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տանի Հանրապետությունում էֆթանազիան արգելվում է: Միևնույն ժամանակ սահմանվում են այն չափանիշները կամ ցուցիչները, որոնց առաջացման պարագայում առողջապահության բնագավառում բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործունեություն իրականացնողի կողմից միակողմանի որոշմամբ դադարեցվում են պացիենտի վերականգնման և արհեստական կենսապահովման միջոցառումները: Այսինքն՝ ըստ էության արգելվում է միայն ակտիվ էվթանազիան, իսկ պասիվ էվթանազիան թույլատրվում է:

Մենք համամիտ չենք այս մոտեցումների հետ և հաշվի առնելով ինչպես տարբեր պետությունների, այնպես էլ ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան և այդ ոլորտում Հայաստանի Հանրապետությունում պետք է թույլատրվի նաև ակտիվ էֆթանազիան, հստակ սահմանելով չափորոշիչները, որպեսզի այն չհանգեցնի հանցագործության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Красиков А.Н. Указ соч.
2. Фомичев Е.К. Эвтаназия как форма реализации права на смерть (общетеоретический аспект): Автореф. дисс. канд. юрид. наук. Тамбов, 2006.
3. <https://ria.ru/society/20061215/56988156.html>
4. https://www.bbc.com/russian/society/2014/02/140213_belgium_euthanasia_parliament
5. <https://www.e-draft.am/projects/735/about>
6. «Гросс против Швейцарии» (Gross v. Switzerland, жалоба N 67810/10). Постановлением от 14 мая 2013 года, <http://europeancourt.ru/2013/10/08/13438/#more-13438>
7. <https://www.bbc.com/russian/features-45137239>
8. <https://ria.ru/society/20020923/230443.html>
9. <https://ria.ru/society/20020517/146869.html>
10. <https://ria.ru/society/20090317/165187094.html>
11. <https://ria.ru/society/20070601/66438823.html>
12. <https://ria.ru/world/20110603/383833425.html>
13. <https://ria.ru/society/20081106/154534330.html>
14. <https://ria.ru/world/20110516/375206911.html>
15. https://www.bbc.com/russian/international/2010/07/100702_switzerland_assisted_suicide_law.shtml

16. https://www.1tv.ru/news/2011-08-16/119897-vo_frantsii_vracha_skoroy_pomoschi_obvinyayut_v_prichastnosti_k_gib_eli_patsientov
17. https://www.bbc.com/russian/society/2014/06/140624_france_euthanasia_court_case
18. <https://ria.ru/world/20100427/227272077.html>
19. https://www.bbc.com/russian/international/2010/06/100625_germany_euthanasia_legalised.shtml
20. <https://www.e-draft.am/projects/735/about>

ПРАВО ЧЕЛОВЕКА НА СВОБОДНОЕ РАСПОРЯЖЕНИЕ СВОЕЙ ЖИЗНЬЮ КАК СТРУКТУРНЫЙ ЭЛЕМЕНТ ПРАВА НА ЖИЗНЬ

Вардануш Погосян

ЕУ, кафедра правоведения, к.ю.н

Проведенное исследование позволило проанализировать эвтаназию как комплексный социально-правовой институт, выявить ее признаки, формы и виды. Право на жизнь - это естественная, неотъемлемая возможность защиты неприкосновенности человеческой жизни и свободы распоряжения ею, гарантированная нормами права. Последнее имеет сложную структуру, в качестве одного из основных элементов которой следует рассматривать право на свободное распоряжение своей жизнью.

Право на свободное распоряжение своей жизнью означает возможность добровольного принятия лицом решения о подвержении своей жизни опасности положения, обусловленное свободным волеизъявлением, направленным на достижение некоей положительной цели личного или общественного характера.

В работе обосновано положение, связанное с отсутствием законодательно закрепленного права на смерть в РА, обуславливающее отсутствие права на эвтаназию исходя из того, что человек не имеет права распоряжаться ни своей, ни тем более чужой жизнью с целью ее прекращения, так как подобные действия, независимо от их мотивации, нарушают внутренний порядок, присущий общественным отношениям по охране жизни.

Переход вопроса о легализации эвтаназии в практическую плоскость порождает тот плюрализм мнений, который существует в со-

временной правовой литературе. Исследователи высказывают и обосновывают противоположные точки зрения: от абсолютного запрета эвтаназии до ее полной легализации.

Ключевые слова: право человека, право на свободное распоряжение своей жизнью, эвтаназия, право на смерть

THE RIGHT TO FREELY DISPOSE OF A PERSON'S LIFE AS A STRUCTURAL ELEMENT OF THE RIGHT TO LIFE

Vardanush Poghosyan

EU, Chair of Jurisprudence, PhD in Law

The present study has enabled us to analyze euthanasia as a complex social and legal phenomenon, to identify its characteristics, forms and types. The right to life is a natural, inalienable opportunity to protect the integrity of human life and the freedom to dispose of it, guaranteed by the rule of law. The latter has a complex structure, one of the main elements of which should be considered the right to freely dispose of lives.

The right to freely dispose of one's life means that a person may voluntarily make a decision to put his life in a dangerous situation, conditioned by free expression of will, aimed at achieving a certain positive goal of a personal or social nature.

The paper substantiates the provision related to the absence of a statutory right to death in the RA, which determines the absence of the right to euthanasia; holding the position that a person does not have the right to dispose of his own life, nor even of a stranger, with a view to terminating it, since such actions, regardless of their motivation, violate the internal order inherent in social relations for the protection of life.

The issues related to legalization of euthanasia gives rise to various opinions that exist in modern legal literature. Researchers express and justify opposing views: from the absolute prohibition of euthanasia to its full legalization.

Keywords: human rights, the right to freely dispose of one's life, euthanasia, the right to die

Ընդունվել է փրկագրության՝ 29.03.2019թ.

Գրախոսվել է՝ 22.04.2019թ.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՄԱՎՈՐ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աիդա Թադևոսյան

*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ.
aida.tad_15@mail.ru, +374 93 548432*

Սույն հոդվածը նվիրված է ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ հանդիսացող պարտապանների կամավոր սնանկության վարույթի առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Հոդվածի շրջանակներում հետազոտության առարկա են դարձել կամավոր սնանկության հիմքերը, պարտապանին սնանկ ճանաչելու դատավարական ընթացակարգը, ինչպես նաև կամավոր սնանկության վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերությունների կարգավորման արդի հիմնախնդիրները:

Սույն հոդվածում քննարկվել են առկա օրենսդրական բացերը, փորձ է արվել առաջարկել դրանց լուծմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Հիմնաբառեր. սնանկություն, անվճարունակություն, կամավոր սնանկություն, վճարային պարտավորություն, պարտապան, պարտատեր:

Տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումը, տնտեսվարող սուբյեկտների համար գործունեության արդյունավետ միջոցների ապահովումը ժամանակակից պետությունների առաջնահերթություններից է: Զարգացող տնտեսական հարաբերությունների մասնակիցների վարքագծում, այնուամենայնիվ, երբեմն լինում են «շեղումներ», որոնց վերացման, տնտեսական համակարգում կառուցվածքային փոփոխությունների ապահովման գործում անժխտելի է սնանկության ինստիտուտը, որը պետական միջամտության յուրահատուկ իրավական մեխանիզմ է [1, էջ 23]: Սնանկության ինստիտուտի օգնությամբ հնարավոր է տնտեսական համակարգից հեռացնել գույքային շրջանառության անբարեխիղճ մասնակիցներին և իրականացնել նրանց պատկա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նող նյութական միջոցների վերաբաշխում՝ հասարակական հարաբերությունների բարեխիղճ մասնակիցների միջև [2, էջ 90]:

Հետազոտության առարկա դարձած ինստիտուտը, ըստ էության, տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման գործում պետության միջամտության առանձնահատուկ դրսևորում է:

Արդի ժամանակաշրջանում տարբերակվում են սնանկության վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերությունների կարգավորման երկու ինքնուրույն համակարգ [3, էջ 21]՝

ա) Պրոկրեդիտորական համակարգ, որի առաջնային նպատակը պարտատերերի շահերը պաշտպանելն է: Այս համակարգին են հարում Մեծ Բրիտանիան, Գերմանիան:

բ) Պրոդեբիտորական համակարգ, որի հիմնական նպատակը պարտապանի վճարունակությունը վերականգնելն է: Այս համակարգին են պատկանում Ամերիկային Միացյալ Նահանգները, Ֆրանսիան:

Սնանկության վարույթի իրավական կարգավորման գործող կառուցակարգերը միմյանցից տարբերվում են այն նախանշված նպատակներով, որոնք իրենց առջև դնում են տարբեր պետությունների օրենդիրները, մասնավորապես՝

1. առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները,
2. փրկել գոյատևման ենթակա տնտեսվարող սուբյեկտներին,
3. միջոցներն արդարացի բաժանել կողմերի միջև,
4. վերակազմավորել դեռևս չլուծարված ընկերությունը և այլն [4, էջ 34]:

Այսպիսով, մի իրավական համակարգի առաջնային խնդիրն է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները (Մանֆրեդա Բալցի մոդելը), մյուսինը՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների փրկությունը և աշխատատեղերի պահպանումը (անգլիական մոդել) [5, էջ 41]: Հայ օրենսդիրը հարում է երրորդ մոդելին, որը նախապատվություն է տալիս պարտատերերի և պարտապանների շահերի հավասարակշռված պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդյունքում 2018թ. փետրվարի 7-ին ընդունվել և 2019թ. ապրիլի 9-ին ուժի մեջ է ՀՀ դատական օրենսգիրք

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սահմանադրական օրենքը, որի ուժով 2019թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում սկսել է գործել մասնագիտացված նոր դատարան՝ ՀՀ սնանկության դատարանը: Նման պայմաններում ՀՀ սնանկության դատարանի արդյունավետ գործունեությունը երաշխավորող իրավական կառուցակարգերի մշակումը, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների երաշխավորումն ապահովող օրենսդրական հիմքերի հետազոտությունը դառնում է առավել, քան արդիական:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունն անուղղակիորեն պայմանավորում են սնանկության ինստիտուտի իրավական մանրամասն կարգավորման անհրաժեշտությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի համակողմանի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ օրենսդիրը տարբերում է սնանկության վարույթի երկու տեսակ՝ կամավոր և հարկադրված:

Կամավոր սնանկության վարույթի շրջանակում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հանդիսացող պարտապանը կամավորությամբ, սեփական նախաձեռնությամբ իրեն սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմում է ներկայացնում դատարան: Հատկանշական է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը տարբերակում է կամավոր և հարկադրված սնանկության հիմքերը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերի համաձայն՝ դատարանը կարող է պարտապանին սնանկ ճանաչել սեփական նախաձեռնությամբ, եթե պարտապանի պարտավորությունները, այդ թվում՝ հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները, օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը:

Օրենսդիրը սահմանել է պարտապանին սնանկ ճանաչելու որոշակի դատավարական ընթացակարգ: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտապանի կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունելու պահից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում դատավորն առանց դատական նիստ հրավիրելու

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ է կայացնում, եթե առկա են օրենքով ամրագրված համապատասխան հիմքեր:

Ի տարբերություն կամավոր սնանկության վարույթի՝ հարկադրված սնանկության դեպքում օրենսդիրը սահմանել է պարտապանին սնանկ ճանաչելու երկու տարաբնույթ դատավարական ընթացակարգ՝ չսահմանելով դրանց կիրառման դեպքերը. մի դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, դատավորը նշանակում է դատական նիստ, որի ընթացքում քննում է ներկայացված դիմումը և պարտապանին սնանկ ճանաչելու կամ դիմումը մերժելու մասին դատարանը վճիռ է կայացնում, իսկ մյուս դեպքում՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու հաջորդ օրը դատարանը պարտապանին ուղարկում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը՝ առաջարկելով տասնհինգօրյա ժամկետում գրավոր վիճարկել իր սնանկությունը, հակառակ դեպքում՝ տասնվեցերորդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, և միայն պարտապանի կողմից գրավոր առարկություն ստանալու դեպքում դատարանը հրավիրում է դատական նիստ:

Օրենսդիրի կողմից առաջարկվող նման հակասական կարգավորումներ, մեր կարծիքով, անհասկանալի են: Կարծում ենք՝ հարկադրված սնանկության վարույթի դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող դատավարական ընթացակարգն ընդունելի է, քանզի պարտապանի կողմից համապատասխան առարկության բացակայության դեպքում դատարանը կարող է առանց դատական նիստ հրավիրելու քննել դիմումը և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում համապատասխան վճիռ կայացնել, մինչդեռ կամավոր սնանկության վարույթի պայմաններում դատարանը կաշկանդված է եռօրյա ժամկետում, առանց պարտատերերի դիրքորոշումը հաշվի առնելու, վճիռ կայացնել կամ դիմող-պարտապանին սնանկ ճանաչելու, կամ դիմումը մերժելու մասին: Ավելին, եռօրյա ժամկետում ողջամտորեն հնարավոր չէ նաև կամավոր սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին ծանուցել պարտատերերին և ստանալ վերջիններիս դիրքորոշումը

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դրա վերաբերյալ: Այս դեպքում, փաստորեն, դատարանը, կաշկանդված լինելով առկա օրենսդրական պահանջով, սեփական նախաձեռնությամբ անձին սնանկ ճանաչելու դիմումը քննելիս իրականացնում է միակողմանի քննություն՝ այդպիսով ակամա ոտնահարելով պարտատերերի արդար դատաքննության իրավունքը:

Նման պայմաններում, առաջարկում ենք կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն, որը հնարավորություն կընձեռոի դատարանին կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունելուց հետո հրավիրել դատական նիստ՝ ապահովելով դիմումում նշված պարտավորների՝ դատական նիստի մասին պատշաճ ծանուցումը: Այս դեպքում, ըստ էության, կապահովվի նաև պարտավորների կողմից սնանկության դիմումի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և իրենց օրինական շահերը պաշտպանելու հնարավորությունը:

Օրենսդիրը կամավոր սնանկության վարույթ հարուցելիս դիմող-պարտապանի վրա դրել է դատավարական պարտականություն՝ դիմումին կից ներկայացնել պարտապանի պարտատերերի ցուցակ՝ նշելով վերջիններիս հանդեպ ունեցած պարտավորությունների չափը, դրանց կատարման ժամկետը և այլ անհրաժեշտ տեղեկություններ («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ):

Կարծում ենք՝ դատարանի վրա պետք է դնել պարտապանի նշած պարտատերերին կամավոր սնանկության վարույթի առկայության մասին ծանուցելու պարտականություն, որի դեպքում պարտատերերը ոչ միայն հնարավորություն կունենան իրենց դիրքորոշումը հայտնել դիմումի վերաբերյալ, այլև հետագայում՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, չեն զրկվի օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում դատարան պահանջ ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունից:

Պարտատերերին պատշաճ կարգով կամավոր սնանկության վարույթի վերաբերյալ իրազեկելու կառուցակարգերի սահմանումն ունի առանձնակի կարևորություն: Այսպես. ՀՀ օրենսդիրը պարտատերերի կողմից իրենց պահանջները դատարան ներկայացնելու համար սահմանել է մեկամսյա ժամկետ¹, որից դուրս դատարան պահանջ ներկա-

¹ Պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակում են <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և փակցվում դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

յացնելը պարտատերերի համար առաջացնում է որոշակի անբարենպաստ իրավական հետևանքներ: Ավելին, սնանկության վարույթի ընթացքում պարտատերերի կողմից իրենց պահանջները չներկայացնելը հանգեցնում է նրան, որ վերջիններս զրկվում են հետագայում պարտապահին պահանջ ներկայացնելու հնարավորությունից: Հատկանշական է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 27.01.2015թ. կայացրած ՍԴՈ-1189 որոշմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը՝ ֆինանսապես առողջացած պարտապահի նկատմամբ պահանջ ներկայացնելու իրավունքը սահմանափակելու մասով, ճանաչել է 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր: Փաստորեն, ֆինանսապես առողջացած պարտապանը չի ազատվում սնանկության վարույթի շրջանակներում դատարան պահանջներ չներկայացրած պարտատերերի պահանջների կատարումից:

Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ պարտատերերը, գիտակցելով, որ պարտապանը սնանկության վարույթի ընթացքում ֆինանսապես չի կարողանալու բավարարել իրենց պահանջները, դատարան պահանջ չարամտորեն չներկայացնեն՝ նպատակ ունենալով պահանջի բավարարում ստանալ ապագայում: Սնանկության գործով պարտատերերի պահանջների բացակայությունը հիմք է, որպեսզի պարտապանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանի կողմից կայացրած վճռի հիման վրա ճանաչվի ֆինանսապես առողջացած: Այդ իրավիճակում, ըստ էության, կամավոր սնանկության վարույթի իմաստն արժեզրկվում է:

Մեր կողմից ուսումնասիրվել են կամավոր սնանկության առանձին գործեր, որոնք ավարտվել են քննարկվող հիմքով: Օրինակ՝ Արման Սենիկի Ներսիսյանի վերաբերյալ ՍԴ2/0064/04/17 կամավոր սնանկության գործով ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 25.07.2017թ. սնանկության գործն ավարտել է սնանկության գործով կառավարչի միջնորդության հիման վրա՝ պարտատերերի կողմից պահանջ ներկայացնելու հիմքով, և վճռի եզրափակիչ մասով սահմանել է, որ Արման Սենիկի Ներսիսյանն ազատվում է բոլոր դրամական պարտավորությունների կատարումից, բա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ցառությամբ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասով և 97-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների և ՀՀ Սահմանադրական դատարանի 27.01.2015 թվականի թիվ ՍԴՌ-1189 որոշմամբ արձանագրված դեպքի:

Հատկանշական է, որ վերոգրյալ հիմքով ավարտվել են նաև կամավոր սնանկության այլ գործեր, մասնավորապես՝ ԵԱՔԴ/0379/04/16, ԱՐԴ/0008/04/14, ԵԱԴԴ/0063/04/12, ԱՐԱԴ/0007/04/12 սնանկության գործերը:

Նման պայմաններում առաջարկվում է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություն, որի պայմաններում պարտավորերի կողմից կամավոր սնանկության վարույթի մասին իրազեկ լինելու դեպքում դատարան պահանջ չարամորորեն չներկայացնելը հիմք հանդիսանա, որպեսզի վերջիններս զրկվեն պարտապանի նկատմամբ հեղազայում պահանջ ներկայացնելու իրավունքից: Բնականաբար, այն պարտավորերը, որոնք օրենքով սահմանված կարգով ծանուցված չեն լինի պարտապանի սնանկության վարույթի մասին (պարտապանի կողմից դիմումին կից ներկայացված պարտավորերի ցուցակում ներառված չլինելու, դատարանի կողմից ուղարկված ծանուցումը չստանալու և այլ ողջամիտ հիմքով), չեն զրկվի պարտապանի նկատմամբ հեղազայում պահանջ ներկայացնելու իրավական հնարավորությունից:

Ավելին, կարծում ենք, որ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետից դուրս դատարան պահանջ ներկայացնելու պարտավորերի իրավունքները համապատասխան օրենսդրական փոփոխության կատարման միջոցով երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է սահմանել կամավոր սնանկության վարույթի տևողության նվազագույն ժամանակահատված, որը, մեր կարծիքով, չի կարող մեկ տարուց պակաս լինել:

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները՝ առաջարկում ենք.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ. «1. Դատարանը կամավոր սնանկության մասին դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ փասնհինգօրյա ժամկետում, հրավիրում է դատական նիստ, որի վերաբերյալ պատշաճ կեր-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պով ծանուցվում են դիմող-պարտապանը և դիմումում նշված բոլոր պարտավորերը»:

2. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Պարտապանի կամավոր սնանկության վարույթը չի կարող ավարտվել պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում»:

3. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածը լրացնել 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «2.1 Պարտապանի կամավոր սնանկության վարույթի մասին դատարանի կողմից պատշաճ ծանուցված պարտավորերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի»:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և դատական ակտերի ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններ, 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/):
2. ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքը (07.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368)):
3. Սնանկության մասին ՀՀ օրենք (25.12.2006թ., ուժի մեջ է մտել 10.02.2007թ., ՀՀՊՏ 2007.01.31/7(531)):
4. ՀՀ սահմանադրական դատարանի 27.01.2015թ. կայացրած թիվ ՍԴՈ-1189 որոշումը:
5. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.07.2017թ. ՍԴ2/0064/04/17 սնանկության գործն ավարտելու մասին վճիռը:
6. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2018թ. ԵԱՔԴ/0379/04/16 սնանկության գործն ավարտելու մասին վճիռը:
7. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.10.2014թ. ԱՐԴ/0008/04/14 սնանկության գործն ավարտելու մասին վճիռը:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

8. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.12.2015թ. ԵԱԴԴ/0063/04/12 սնանկության գործն ավարտելու մասին վճիռը:
9. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.05.2013թ. ԱՐԱԴ/0007/04/12 սնանկության գործն ավարտելու մասին վճիռը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Пирогова Е. С., Правовое регулирование несостоятельности (банкротства): учебник для бакалавриата и магистратуры /Е. С. Пирогова, А. Я. Курбатов. – М.: Издательство Юрайт, 2015.– 291 с.:
2. Гуц Д. О., Банкротство – инструмент исполнения денежных обязательств –М.: ПРИОР, 1998. – 109 с.:
3. Карелина С.А., Механизм правового регулирования отношений несостоятельности (банкротства): Автореф. дис. ... канд. юрид. наук. – М., 2008. – 28 с.:
4. Исик Л. В., Банкротство и финансовое оздоровление / Л.В. Исик.- М.: Дело и сервис, 2017. - 272 с.:
5. Кобозева Н. В., Банкротство. Учет, анализ, аудит / Н.В. Кобозева.- М.: Инфра-М, Магистр, 2017. - 208 с.:

ОСОБЕННОСТИ ПРОИЗВОДСТВА ДОБРОВОЛЬНОГО БАНКРОТСТВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Աիդա Թադեվոսյան

ԵՄ, кафедра правоведения, к.ю.н

Данная статья посвящена исследованию особенностей производства добровольного банкротства физических лиц, индивидуальных предпринимателей и юридических лиц.

В рамках статьи предметом изучения стали основы добровольного банкротства, процедурный порядок объявления должника банкротом, а также актуальные вопросы, возникающие при производстве добровольного банкротства.

В статье также выявлены существующие законодательные проблемы, предпринята попытка предложить соответствующие решения.

Ключевые слова: банкротство, несостоятельность, добровольное банкротство, платежное обязательство, должник, кредитор.

THE CHARACTERISTIC FEATURES OF PROCEEDINGS OF VOLUNTARY BANKRUPTCY IN THE REPUBLIC OF ARMENIA

Aida Tadevosyan

EU, Chair of Jurisprudence, PhD in Law

This article is devoted to the study of the peculiarities of the proceedings of voluntary bankruptcy of individuals, individual entrepreneurs and legal entities.

Within the framework of this article, the basics of voluntary bankruptcy, the procedural process for declaring a debtor bankrupt, as well as relevant issues, arising during the production of voluntary bankruptcy, have become the main object under study.

Available legislative blemishes are discussed in the article. In addition, an attempt has been made to propose scientifically grounded recommendations addressed to their solutions.

Keywords: bankruptcy, insolvency, voluntary bankruptcy, payment obligation, debtor, creditor.

Ընդունվել է տպագրության՝ 28.03.2019թ.

Գրախոսվել է՝ 23.04.2019թ.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արփինե Բիշարյան

*ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ
a.bisharyan@mail.ru, +374 77 31 01 89*

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումը կարևոր քայլ էր ժողովրդավարական արժեքների իրականացման և ամրապնդման համար: Օրենսդրական կարգավորումների արդյունքում տեղական ինքնակառավարման կազմակերպումը իրականացվեց մասնակցային ժողովրդավարության ակտիվ ձևի՝ ընտրությունների միջոցով, որն աննախադեպ էր նորանկախ պետության պետականակերպման ճանապարհին:

Հոդվածում ներկայացված են տեղական ինքնակառավարման կազմակերպման, ընտրությունների անցկացման կարգը, իրավական հիմքերն ու առանձնահատկությունները:

Հիմնաբառեր. *ընտրական համակարգ, ՏԻՄ ընտրություններ, համամասնական ընտրակարգ, ինքնաառաջադրում, ուղղակի և անուղղակի ընտրություն:*

Տեղական ինքնակառավարման համակարգը իր բնույթով քաղաքացիական նախաձեռնությունների արդյունքում ձևավորված և սեփական կարիքների բավարարմանն ուղղված քաղաքացիների կազմավորման ձև է [1, էջ 9]: Այլ կերպ, տեղական ինքնակառավարումը ժողովրդի իշխանության կազմակերպման և իրականացման առավել ժողովրդավարական, միջազգայնորեն ընդունված և արդյունավետ ձևերից մեկն է: Տեղական ինքնակառավարման համակարգի առջև դրված կարևոր խնդիրներից մեկը ՏԻՄ-երի կազմակերպումն է, որն առաջին հերթին նշանակում է նրա ներքին կառուցվածքի ձևավորում՝ պայմանավորված ընտրական գործընթացներով:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ տեղական ներկայացուցչական մարմինները հանդիսանում են հիմնական տարրը ժամանակակից տեղական ինքնակառավարման համակարգում, նրանց է պատկանում առաջատար դերը[2]: Արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ առավել տարածված է այն մոտեցումը,

համաձայն որի՝ հենց ընտրություններն են հանդիսանում հասարակական-քաղաքական գործընթացների հիմնասյունը՝ ժողովրդավարական հասարակարգերում [3, c. 56]: Այսպես, Ա.Ե. Պոստնիկովը գտնում է, որ ընտրություններն ապահովում են պետական և տեղական իշխանության վերարտադրությունը, նորացումը ժողովրդավարական հիմքի վրա՝ քաղաքացիական հասարակության կողմից ձևավորվող առավել նշանակալի քաղաքական շահերին համապատասխան [4, c. 21]: Արդարացի է այն միտքը, ըստ որի՝ «ժողովրդի կամքը պետք է լինի իշխանության իրականացման հիմքում, այդ կամքը պետք է իր արտահայտումն ունենա պարբերական և չկեղծված /արդար/ ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն ընդհանուր և հավասար ընտրական ճանապարհով, գաղտնի քվեարկության ճանապարհով կամ այլ բազմիմաստ ձևերի միջոցով, որոնք ապահովում են քվեարկության ազատությունը» [5, c. 37]: Մեկ այլ բնութագրմամբ՝ ընտրությունները պարբերաբար տեղի ունեցող ոչ միայն իրավական-ինստիտուցիոնալ, այլ նաև հասարակական-քաղաքական, սոցիալական հիմք և տնտեսական երանգավորում ունեցող գործընթաց են, որոնց հիմքով ձևավորվող պետական և տեղական ներկայացուցչական մարմինները ստանում են իրենց գործունեության համար անհրաժեշտ իրավասությունը [6, c. 28]:

Ընտրությունները, ըստ էության, ժողովրդավարության անհրաժեշտ բաղկացուցիչն են: Ընտրական համակարգը քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասն է, պետական իշխանության լեգալ կայացման և լեգիտիմ գործառնության գործուն մեխանիզմը:

Թերևս, տեղական ինքնակառավարման կազմակերպման լեգիտիմ և ժողովրդավար ձևը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպումն է: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական համակարգերը կոչված են ապահովելու տեղական ընտրությունների ժողովրդավարությունը և այդ ընտրությունների միջոցով ընտրված իշխանությունների լեգիտիմությունը և ընտրությունների սոցիալ-քաղաքական նշանակությունը: Տեղական համայնքների մեծամասնությունում անմիջական ժողովրդավարության միակ ձևը, որը իրականում կողմնորոշված է և կիրառվում է համապատասխան համայնքի բնակչության կողմից, հանդիսանում է հենց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այլ կերպ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները հիմնականում հանդիսանում են տեղական իշխանության վրա բնակչության ազդեցության միակ միջոցը: Ընտրությունները ապահովում են պետական և տեղական իշխանության վերարտադրությունը և թարմացումը ժողովրդավարական հիմունքներով, որը ձևավորվում է քաղաքացիական հասարակության կողմից: Դրանում է կայանում նրանց սոցիալ-քաղաքական նշանակությունը: Տեղական ընտրությունները համարվում են քաղաքացիների քաղաքական ինքնահաստատման էական երաշխիքներից մեկը, քաղաքացիական հասարակության քաղաքական ինքնակազմակերպման ձևերից մեկը, որն ապահովում է նրա ինքնավարությունը՝ հնարավորությունն տալով դառնալու հանրային իշխանության ինքնուրույն սուբյեկտ:

Իրավական և սոցիալ - քաղաքական բնութագրիչների ամբողջությունը թույլ է տալիս առանձնացնել տեղական ընտրությունների հետևյալ հիմնական գծերը՝

1. ուղղակի ժողովրդավարության, բնակիչների անմիջական կամահայտնության և հանրային կադրային որոշումների ընդունման հիմնական ինստիտուտներից մեկն է,

2. ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարության ինստիտուտներից մեկն է,

3. թույլ են տալիս բնակիչներին անմիջականորեն իրենց մունիցիպալ կազմավորման գործերի կառավարմանը, իրականացնել իրենց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ընդ որում՝ ոչ միայն նրանք, ովքեր անմիջականորեն կապված են ընտրական տեխնոլոգիայի հետ,

4. իրենից ներկայացնում են համամունիցիպալ միջոցառում (իրենց մասշտաբներով, տեղական բնակչության տարբեր շերտերի լայն մասնակցությամբ) քաղաքացիական հասարակության կառուցման դեր են կատարում՝ հանդես գալով որպես տարբեր խմբի տեսակետների, շահերի արտահայտումը սնուցող միջոց և միաժամանակ այդ խմբի կողմից փոխզիջումային որոշումներ որոնման միջոց [7, c. 5, 8]:

Ժամանակակից ընտրական համակարգերի կարևոր առանձնահատկությունը տեղական մակարդակում հանդիսանում են համընդհանուր ընտրական իրավունքի, փակ գաղտնի քվեարկության սկզբունքները, որոնք ներթափանցում են տեղական ինքնակառավար-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ման մարմինների ընտրությունների ողջ բազմամակարդակ նորմատիվ-իրավական հիմքերը, սկսած սահամանադրական կարգից՝ վերջացրած տեղական ինքնակառավարման մարմինների տեղական բնույթի նորմատեղծ ակտերով [8, c. 137]:

Տեղական ինքնակառավարման նորմատիվ արժեքները Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար հիմնականում սահմանված են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում: Խարտիան հիմնված է այն կանխավարկածի վրա, որ արդար ընտրություններով ձևավորված ՏԻՄ-երը, ունենալով օրենքով իրենց վերապահված համապատասխան լիազորություններ և ավելի մոտ գտնվելով բնակչությանը, կարող են այնպիսի գործունեություն ծավալել և ծառայություններ մատուցել, որոնք առավել արդյունավետ են՝ հաշվի առնելով բնակչության կարիքները:

Հայաստանի Հանրապետությունը, 2002թ.-ին վավերացնելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, պարտավորություն է ստանձնել զարգացնելու մասնակցային ժողովրդավարությունը: Եվրոպական խարտիայի նախաբանում տեղական ինքնակառավարման մարմինները համարվում են ցանկացած ժողովրդավարական ռեժիմի հիմնական հիմքերից մեկը, իսկ պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը անդամ պետությունների համար դասվում է ժողովրդավարական սկզբունքների շարքը, որն անմիջականորեն կարող է իրականացվել տեղական մակարդակով՝ ընտրությունների միջոցով:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման իրավունքը իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամները ընտրված են ազատ փակ գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խարտիայի այս դրույթը ինչպե՞ս են տեսցվել է ՀՀ Սահմանադրության 7-րդ և Ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածներում: Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ՏԻՄ ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ (բացառություն են կազմում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքները և ի տարբերություն այլ համայնքների, Երևանի, Գյումրիի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

և Վանաձորի քաղաքապետը, չի ընտրվում ուղղակի ընտրակարգով, այլ՝ ավագանու կազմից, ավագանու որոշմամբ):

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ընտրությունների նորմատիվ իրավական կարգավորումն ու ընտրական համակարգերի կազմակերպումը իր մեջ է ներառում երեք միմյանց փոխկապված մակարդակ՝

1. միջազգային իրավունքի և միջազգային պայմանագրերի համընդհանուր սկզբունքներն ու նորմերը,

2. սահմանադրական և օրենսդրական իրավական ակտերը,

3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը, որոնք պարունակում են նորմեր ընտրությունների մասին [8, c. 53]:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սույն հոդվածը թույլ է տալիս ենթադրելու ժողովրդի՝ իշխանության պատկանելության և այդ իշխանությունը անմիջականորեն կամ ընտրովի մարմինների միջոցով իրականացնելու սահմանադրական իրավունքի մասին:

Հայաստանի Հանրապետությունը, որդեգրելով եվրոպական ժողովրդավարական արժեքները, օրենսդրական փոփոխություններ կատարելիս, հաշվի է առնում Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի ցուցումները և դիրքորոշումը (Վենետիկի հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի փորձագետներից կազմված խորհրդատվական մարմին է, որը գործում է ժողովրդավարական ինստիտուտների, մարդու իրավունքների, սահմանադրական փոփոխությունների, ընտրական գործընթացների կազմակերպման ուղղություններով):

ՀՀ պետական ընտրական գործընթացները, նաև տեղական ինքնակառավարման ընտրությունների կազմակերպումը կարգավորում են Ընտրական օրենսգրքով: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 5-րդ և 6-րդ բաժինը նվիրված է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում ընտրությունները անցկացվում են հրապարակայնության սկզբունքով [9, էջ 94]: Հրապարակայնության իմաստը կայանում է նրանում, որ ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են հրապարակայնորեն:

Ընտրական գործընթացը ՀՀ-ում ներառում է օրենքով սահմանված փուլերի համակցություն, որոնք բաղկացած են որոշակի հստակ ընտրական գործընթացներից: Ընտրական գործընթացի փուլերը՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման փուլերն են, որոնց սահմաններում իրականացվում են օրենքով նախատեսված ընտրական գործողությունները, ինչպես նաև ընտրական գործընթացները, որոնք ապահովում են ՀՀ քաղաքացիների և ընտրության այլ մասնակիցների ընտրական իրավունքի իրականացում:

Ընտրական գործընթացի կարևորագույն փուլերից մեկը հանդիսանում է ընտրությունների նշանակումը: Ընտրությունների կազմակերպման գործընթացի այս փուլի էությունն ընտրությունների անցկացման իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից համապատասխան որոշում կայացնելու և ժամկետներ նշանակելու մեջ է:

ՀՀ 1995թ. Սահմանադրության ընդունումից հետո տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունն անցկացվեց միայն 1996թ. նոյեմբերի 10-ին [10]: Սա առաջին և վերջին դեպքն էր, երբ ՀՀ բոլոր համայնքներում նույն օրն անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները [11, էջ 69]: Հետագայում, համայնքի ղեկավարի ու ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերի կիրառմամբ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման մեկ միասնական օրը խախտվեց, բնականաբար այն պայամանավորվեց անձնական, իրավա-քաղաքական գործունեության անհնարիտության և մի շարք այլ գործոններով: Այսօր ոչ Սահմանադրությամբ, ոչ էլ Ընտրական օրենսգրքով հերթական ընտրությունների ստույգ օր նշված չէ: Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Համայնքի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունները նշանակում է մարզպետը, իսկ արտահերթ ընտրությունը՝ ՀՀ կառավարությունը:

Ժողովրդավարական հասարակարգերում ընտրական գործընթացի հիմնական շահառուները ընտրողներն են:

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

1. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված,

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):

Ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությանը կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում սահմանվում է մեկ քաղմամանդատ մեծամասնական ընտրատարածք:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները ձևավորվում են հետևյալ կերպ՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների առաջադրմամբ: Թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցությունները իրենց համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանումների որոշմամբ, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այս ամենի հետ մեկտեղ կարծում եմ նաև, որ ապրիլյան մարտերը սթափեցնող ազդեցություն ունեցան ալիևյան կլանի վրա: Որքան էլ, որ Բաքվում մարտերի ելքը ներկայացնեն որպես հաղթանակ, այնուամենայնիվ ենթադրում եմ, որ ալիևյան նեղ շրջանակում մեր հանդեպ իրական հաղթանակի հանդեպ հավատը սասանվեց:

Իհարկե նախագահ Ալիևը չի հրաժարվել ագրեսիվ նկրտումներից: Ըստ ամենայնի Բաքվում արվել է հետևություն առ այն, որ հարկավոր է ավելի լավ պատրաստվել հաջորդ հարվածը հասցնելուն: Այդուհանդերձ վստահ եմ, որ ապրիլյան մարտերի ելքը ճնշող տպավորություն թողեց նախագահ Ալիևի և իր շրջապատի վրա՝ մասնավորապես խորացնելով հետագայում ձախողվելու մտավախությունը: Ակրնհայտ է, որ ապագայում նախագահ Ալիևին շատ ավելի դժվար է լինելու մարտական գործողությունների վերսկսման հրաման տալը, խորանալու է բարձրաստիճան զինվորականների հանդեպ թերահավատությունը, մասնավորապես, վերջիններիս կողմից իրականությունը աղճատված՝ ցանկալին որպես իրականություն ներկայացնելու վերաբեր-

յալ կասկածը: Վստահաբար կարելի է ասել նաև, որ Բաքվի համար անսպասելի էր մարտական գործողությունների նման ընթացքն ու ելքը: Այստեղ տեղին է մանրամասնել:

Կարծում եմ ագրեսիա սանձազերծելու պահին նախագահ Ալիևը չուներ իրականությանը համարժեք պատկերացում Արցախի ՊԲ և սեփական զինված ուժերի մարտունակության վերաբերյալ: Բաքվում պարզապես չէին սանձազերծի մարտական գործողությունները, եթե բարձրաստիճան զինվորականությունն իր գերագույն – գլխավոր հրամանատարին օբյեկտիվորեն ներկայացնեի ուժերի հարաբերակցության իրական պատկերը, և որ ամենակարևորն է, եթե նախագահ Ալիևը գոնե մոտավորապես պատկերացներ մարտական գործողությունների իրական ելքը: Ըստ ամենայնի, Բաքվում ագրեսիայի որոշումը կայացվել է ցանկալին որպես իրականություն ներկայացնելու տրամաբանությամբ զեկույցների հիման վրա: Ավտորիտար համակարգերում հաճախ է այդպես պատահում, երբ ղեկավարի ցասումից վախենալով զեկույցվում է այն, ինչ ցանկալի է նրա համար:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Ադրբեյջանի զինված ուժերում արդեն կորպուս օղակից բարձր վերադաս հրամանատարությանը ներկայացվում են իրականությունից էապես տարբերվող տեղեկություններ, որոնք վերջնականապես աղճատվում են, հղկվում՝ հագենալով ցանկալի շեշտադրումներով գերագույն գլխավոր հրամանատարին ներկայացվելու պահին: Ըստ այդմ՝ նախագահ Ալիևին ներկայացվում է ցանկալի պատկեր, որը իրականությունից բավական հեռու է: Որքան էլ, որ ասենք, թե Բաքվում զինվորականության կյանքն արժեք չունի, այդուհանդերձ չեմ կարծում, թե նման համեստ արդյունքի՝ մի քանի հենակետերի համար նախագահ Ալիևը պատրաստ կլիներ զոհել իր ամենապատրաստված անձնակազմերը: Փաստ է, որ Բաքվում ակնկալում էին շատ ավելի մեծ արդյունքներ: Այս առումով մեր մի քանի հենակետերի գրավումը բառի բուն իմաստով փրկեց նախագահ Ալիևի դեմքը:

Իսկ ինչպե՞ս որակել ապրիլյան մարտերի ելքը: Անշուշտ այն բնորոշել որպես լիարժեք հաղթանակ ճիշտ չէր լինի: Մարտական գործողությունների ելքը մեզ համար հաջող էր, և ընդհանուր առմամբ, որոշ վերապահումներով այն կարելի է որակել որպես հաղթանակ: Արվել է այն, ինչ հնարավոր է եղել անել երեք ու կես օրվա ընթացքում: Ի վեր-

ջո, պետք է հաշվի առնել, որ շատ կարճ ժամանակահատվածում կանխվել է «մեծ պատերազմ»: Եթե պատկերավոր կերպով արտահայտվելու լինենք, ապա թշնամին գրավել է մի քանի հենակետ, բայց տանուլ է տվել կոհվր, իսկ մենք կորցրել ենք մի քանի հենակետեր, բայց հաղթել ենք կոհվր:

Այո՛ մեզանում այդ մի քանի հենակետերի կորուստը ցավոտ ընկալվեց: Հանրության այդ ռեակցիան միանգամայն առողջ պետք է համարել: Անշուշտ, «մեծ պատերազմի» սպառնալիքի պայմաններում որքան ավելի առաջ մղված լինեն մեր դիրքերն, այնքան ավելի կարճ ժամանակում հնարավոր կլինի կոտրել հակառակորդի հարձակման թափը: Սակայն տվյալ դեպքում սկզբունքորեն կարևոր է շեշտել, որ գրավելով պաշտպանության առաջին էշելոնի մի քանի հենակետ ադրբեջանական կողմը մեր հանդեպ վճռորոշ առավելություն չի ստացել: Պաշտպանական համակարգի ամբողջականությունը պահպանվել է, պետական սահմանի ուրվագիծը փոխվել է աննշան: Այս ամենն իհարկե չի նշանակում, թե այդ հենակետերը մեզ այլևս պետք չեն: Նշեմ, որ այդ կորուստը սկզբունքորեն վերականգնելի է, և առավել քան վստահ եմ, որ պատեհ առիթի դեպքում մերոնք չեն վարանի «վերականգնել արդարությունը»: Իսկ հակառակորդը կտա նման առիթ: Ընդ որում, տվյալ դեպքում սկզբունքորեն կարևոր է մարտական խնդիրը անկորուստ, կամ նվազագույն կորուստներով լուծելը:

Ապրիլյան մարտերը միանգամայն տեղին է որակել որպես **երկրորդ ադրբեջանական ագրեսիա Արցախի դեմ**. ագրեսիա, որը կրկին ձախողվեց: Սանձազերծելով Արցախի դեմ երկրորդ ագրեսիան, և կրկին ձախողվելով՝ պաշտոնական Բաքուն լեգիտիմացրեց Արցախի ներկա սահմանները: Հատկապես ընդգծենք՝ Արցախի ներկա սահմանները գծվել են ադրբեջանական երկու ագրեսիա հետ մղելու արդյունքում: Ահա այս համատեքստում անշուշտ մադրիոյան սկզբունքներն այժմ արդեն ժամանակավրեպ են, և բնականաբար վաղ թե ուշ պետք է բեկանվեն: Պետությունների սահմանները գծվում, ապա միջազգային ճանաչում են ստանում ուժի օրենքով: Ապրիլին Արցախի պետական սահմանը վերահաստատվեց հենց այդ՝ ուժի օրենքով:

Հատկապես ընդգծենք, որ Արցախի իրավասուբյեկտության ճանաչումը գրոշի արժեք չունի առանց ներկա սահմանների [3, 241-257 էջեր]: Թուրք – ադրբեջանական ագրեսիվ նկրտումների հաստատուն

լինելու ֆոնին հայոց պետականության կենսունակության գրավականը ներկա սահմաններում Արցախի իրավասությունների կտրուկ ճանաչումն է, ինչը բարդ, ժամանակատար, սակայն իրականանալի նպատակ է [5]: 2016-ի ապրիլին այդ ուղղությամբ կարևոր քայլ արվեց: Ըստ այդմ՝ Արցախի Պաշտպանության բանակի կողմից երկրորդ անգամ ադրբեջանական ագրեսիան հետ մղելն ու Արցախի սահմանների վերահաստատումը 2016 թ. ապրիլյան մարտական գործողությունների հիմնական ռազմաքաղաքական արդյունքն է: Երկու տարի առաջ արցախահայությունը՝ համայն հայության օգնությամբ վաստակեց իր արժանապատիվ ապրելու իրավունքը իր պատմական հայրենիքի մի բեկորի վրա՝ ներկա սահմաններում, ստիպեց աշխարհին հաշվի նստել Արցախի հայապատկանության հետ:

Եվս մեկ սկզբունքային հարց. ապրիլյան մարտական գործողություններից հետո նախագահ Ալիևը կորցրեց իր շանտաժի հիմնական գործիքը՝ ռազմական ներուժով, արագ հաղթական պատերազմով վախեցնելու խաղաքարտը: Ապրիլին հստակ երևաց, որ ադրբեջանական բանակի մարտունակությունը մեղմ ասած խիստ չափազանցված է եղել:

Ի դեպ տեսակետն առ այն, որ Ադրբեջանի ռազմական ներուժը բավարար չէ Արցախի տարածքն օկուպացնելու համար՝ տիրապետող է նաև ռուսական և ռուսալեզու փորձագիտական հանրության շրջանում (Յ. Կեղմի, Մ. Խոդոբյոնոկ և ուրիշներ) [7, 8]: Բնավ չքերազնահատելով հանդերձ թշնամուն՝ այնուամենայնիվ ակնհայտ է, որ նախագահ Ալիևը հետայսու այլևս չի կարող համոզիչ լինել՝ ուժի դիրքերից հանդես եկողի կարգավիճակում: Սա թերևս ադրբեջանական ապրիլյան ագրեսիայի ծախողման հաջորդ ռազմաքաղաքական արդյունքն է:

Եվս մեկ նկատառում: Այն, որ հակառակորդը կրկին պարտվել է արդեն պարզ էր ապրիլի 4-ին, երբ հյուսիս-արևելյան ուղղությամբ պետական սահմանը մասամբ վերականգնվել էր, Ակնայի ուղղությամբ լայնամասշտաբ հարձակումը կանխվել, իսկ հակառակորդի հարձակման ռետուրը գրեթե սպառվել [9]: Եվ դա այն դեպքում, երբ հակառակորդը մարտի էր նետել իր ամենապատրաստված անձնակազմերը: Ապրիլի 4-ից հետո հակառակորդը խնդիր ուներ ամեն գնով պահել իր ձեռքն անցած մեր մի քանի հենակետերը: Ըստ այդմ՝ Ապրիլի 4-ին, 5-ին մարտական գործողությունների, առանց չափազանցության, ամեն ժամն ա-

վելի ու ավելի ծանր էր դարձնում պարտության հետևանքները: Հենց այդ հանգամանքի գիտակցումն էլ ստիպեց հակառակորդին հրադադար խնդրել: Իրողությունն այն է, որ ապրիլի 5-ին՝ հրադադարի կնքման պահին, ադրբեջանական հարձակողական խմբավորումներն արդեն կորցրել էին իրենց մարտունակությունն ու կատարում էին զուտ պաշտպանական խնդիրներ: Հետևաբար, աներկբայելի է այն տեսակետը, որ ապրիլի 5-ին հրադադարի կնքումը հարկ է դիտարկել որպես հայկական կաղմի կատարած մեծ փոխզիջում:

Այսպիսով՝ ադրբեջանական երկրորդ ագրեսիայի ծախտողմից հետո հայկական կողմի դիրքերը բանակցային գործընթացում էապես ամրապնդվել են: Այժմ ուժի դիրքերից հանդես գալու մենաշնորհը պատկանում է հայկական կողմին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Այվազյան Ա., Հայ ռազմավարական մտքի ձևավորման հրատապությունը /Ռազմավարության և անվտանգության հարցեր, Երևան, 2007
2. Ջամալյան Դ., Թուրք – ադրբեջանական վտանգը և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները, Երևան, 2016
3. Балаян З., Карабах: Любой непродуманный шаг приведет к новому кровопролитию.// Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Վերլուծական և փաստական նյութերի ընտրանի, Երևան, 2006
4. Клаузевиц Карл фон, О Войне,- М.: Эксмо, 2013.
5. Мелик-Шахназарян Л., О войне и победе, том 2. Ереван, 2015
6. Hoffman, Frank G. Hybrid warfare and challenges. – JFQ: Joint Force Quarterly, 2009.
7. <https://www.youtube.com/watch?v=gJNkAINnCJk>
8. <https://www.youtube.com/watch?v=DgRjIn49J6E>
9. 2016թ. ապրիլյան մարտական գործողությունների ժամանակագրությունը տես՝ <https://razm.info/99426>

MILITARY - POLITICAL RESOURCE OF APRIL MONTH'S FIGHTING

Davit Jamalyan

YSLU, Chair of Pedagogy and Language Learning Methodology

PhD in Psychology, Associate Professor

The article analyzes the new qualitative realities emerging in the region as a result of the 2016 fighting from the view of political science and military psychology. The military actions in April 2016 are viewed as one of the military cycles of the lasting conflict with Azerbaijan (and not the last one), taking into consideration the stability of Turkish-Azerbaijani aggressive claims.

Keywords: fighting, military aggression, psychological preparedness, battle readiness, victory, military defeat

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЙ РЕСУРС АПРЕЛЬСКИХ БОЕВЫХ ДЕЙСТВИЙ

Давит Джамалян

ЕГЛУ, кафедра Педагогики и методики преподавания

иностраннных языков, к. п.н., доцент

В статье анализируются новые реалии, сформированные в результате боевых действий 2016 года, с точки зрения военной психологии и политологии. Апрельские военные действия рассматриваются как один из очередных циклов военного противостояния с Азербайджаном (вовсе не последним), учитывая устойчивость турецко-азербайджанских притязаний.

Ключевые слова: боевые действия, военная агрессия, психологическая готовность, боеготовность, победа, поражение

Ընդունվել է քաղաքագրության՝ 31.03.2019թ.

Գրախոսվել է՝ 17.04.2019թ.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սիլվիա Թարջումանյան,

*ԵՊՀ, Ընդհանուր հոգեբանության ամբիոն, ասպիրանտ
silvitarjmanyanyan@yahoo.com, 091-79-62-62*

Հոդվածում ներկայացված է անձի առողջ հոգեկան զարգացման հիմնախնդիրը, որն, ինչպես առհասարակ, այնպես էլ ներկայումս հասարակության կարևորագույն խնդիրներից է: Առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դեպրիվացիան, որի հետ անձը բախվում է վաղ փարիքում, որի հետևանքները կարող են դրսևորվել հասուն ժամանակ: Աշխատանքի նպատակն է բացահայտել դեպրիվացիայի հետևանքները և կանխման ուղիները:

Առավելագույն արդյունավետություն ստանալու համար անհրաժեշտ է խմբային աշխատանք տանել, համագործակցել մի շարք մասնագետների հետ՝ մանկաբույժ, մանկական հոգեբույժ, հոգեբան, սոցիալական աշխատող, մանկավարժ, նյարդաբան և այլն: Պեք է հաշվի առնել այն, որ դեպրիվացիայի ժամանակին բացահայտումից է կախված թերապևտիկ և վերականգնողական միջոցառումների արդյունավետությունը:

Հիմնաբառեր. անձ, դեպրիվացիա, տագնապայնություն, խոցելիություն, պրոակտիվ եղանակ:

Հաճախ հասուն տարիքում անձի առողջ հոգեկան զարգացումը կախված է այնպիսի երևույթներից ինչպիսին է մանկական դեպրիվացիան: Այդ իսկ պատճառով հոգեբանական դեպրիվացիան մանկական տարիքի հոգեախտաբանության, դպրոցական դաստիարակության մեջ մեծ տեղ է զբաղեցնում: Դեպրիվացիան այն հոգեկան վիճակն է, որն առաջանում է կյանքի այնպիսի պայմաններում, երբ անհատին որոշակի ժամանակահատվածում հնարավորություն չի ընձեռվել բավարարելու իր որոշ հիմնական հոգեկան պահանջմունքները բավարար չափով: Ըստ մասնագետների պնդման՝ երեխան վաղ տարիքում պետք է դաստիարակվի սիրո և հոգատարության ջերմ մթնո-

լորտում և հուզական կապ ունենա ծնողների՝ մասնավորապես, մոր հետ: Այն իրադարձությունները, որոնց ժամանակ երեխան տանջվում է այդ հուզական կապի պակասից, բերում են հոգեկան առողջության մի շարք խախտումների [2, 67-78 էջեր]:

Դեպրիվացիայի երևույթը առանձնապես սուր է դրսևորվում այն երեխաների մոտ, ովքեր ներգրավված են սոցիալական օգնության տարատեսակ կազմակերպություններում: Շատ հետազոտողներ, դասական ժամանակահատվածից սկսած ենթադրում էին, որ գոյություն ունի դեպրիվացիայի հետևանքների միայն մի պատկեր: Նրանք խոսում էին հոսպիտալիզմի, անալիտիկ դեպրեսիայի, պսիխոպատության կամ ուղղակի «դեպրիվացիոն համաախտանիշ»-ի մասին [1, 25 էջ]: Սակայն բազմաթիվ հետազոտությունների արդյունքում այդ ենթադրությունները չհաստատվեցին: Վաղ հասակից նույն հաստատություններում ապրող երեխաների մոտ անձի տարբեր զարգացումներ են նկատվում, նույնիսկ որոշակի հոգեկան գործընթացների զարգացման մեջ: Տարբերությունը ավելի ցայտուն է երևում այն երեխաների մոտ, ովքեր տարբեր հասակում են դեպրիվացվել, տարբեր պատճառներով, դեպրիվացիայի տարբեր տիպերի արդյունքում: Դեպրիվացիայի հետևանքը կարող է արտահայտվել նորմալ հուզական պատկերի սահմաններից դուրս չեյնող փոքր տարօրինակություններով մինչև շատ խորը մտածողության և բնավորության զարգացման վնասով: Դրանք կարող են լինել նյարդային, հոգեկան և նույնիսկ սոմատիկ շեղումներ: Մենք կատարել ենք հետազոտություն, որպեսզի պարզենք, թե ինչ հետևանքներ և ազդեցություններ է թողնում դեպրիվացիան անձի վրա և՛ մանկական տարիքում, և՛ արդեն հասուն ժամանակ:

Դեպրիվացիայի հետևանքների ուսումնասիրության փորձ

Հոգեբանական ախտորոշման մեթոդաբանական զարգացման շնորհիվ ներկա ժամանակներում ավելի հեշտ է երեխայի խորացված ուսումնասիրություն կատարել, միևնույն ժամանակ ուսումնասիրելով ծնողներին կամ այլ դաստիարակներին՝ գնահատման սանդղակի, պրոյեկտիվ թեստերի և հարցաթերթերի միջոցով կամ էլ հետազոտելով ընտանիքի հուզական միջավայրը: Այսպիսի մեթոդներով կարելի է

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

պարզել երեխայի վերաբերմունքը ծնողների նկատմամբ և հակառակը:

Փորձ է կատարվել էմպիրիկ հետազոտության ենթարկել դեպրիվացիայի խնդիր ունեցող երեխաներին: Հետազոտությունը կատարվել է ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ»-ում, 20 երեխաների հետ: Կիրառվել են հոգեբանական զրույցի, դիտման, թեստերի («գոյություն չունեցող կենդանի» թեստ) և նկարչական մեթոդը: Զուգահեռաբար միևնույն մեթոդիկաների կիրառմամբ ուսումնասիրվել են նույնքան երեխաներ՝ ստուգիչ խմբից ստացված տվյալներ ունենալու նպատակով:

Նկարների աշխատանքը վեր հանեց երեխաների հոգեվիճակի հետ կապված հետաքրքիր տվյալներ, մասնավորապես՝ երեխաների կյանքում սիրո, ջերմության, ծնողական հոգատարության կարոտը:

Հոգեբանական զրույցների ընթացքում նկատեցինք մի շատ հետաքրքրական երևույթ: Հաստատությունում գտնվող երեխաների մոտ առկա էին խոսքի զարգացման հապաղումներ: Կախված դեպրիվացիայի հետևանքների մակարդակից երեխաների մոտ նկատվում են տարբերություններ զրույցը սկսելու և պահպանելու ցանկության մեջ: Սոցիալապես գերակտիվ երեխաները գոռում- գոչում են, շատ արագ և բարձր խոսում են, այսինքն ամեն կերպ փորձում են ուշադրություն գրավել: Երեխաները, որոնք ունեն ավելի շատ առարկայական հետաքրքրություններ, սակավախոս են:

Բացի խոսքի զարգացման հապաղումից, դեպրիվացված երեխան աչքի է ընկնում նաև սոցիալական և հիգիենիկ հմտությունների ուշացմամբ: Դրանք են օրինակ՝ մարմնի մաքրությանը հետևելը, սեփական ցանկությունների արտահայտումը, որոնց զարգացման համար հարկավոր է երեխայի մշտական շփումը մեծահասակի հետ:

Շատ կարևոր է դեպրիվացված երեխայի հետ աշխատանքը կազմակերպել գրագետ և ընտրել թերապիայի ճիշտ ուղին՝ հետազայում դեպրիվացիայի հետևանքներից խուսափելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ որքան խորն ենք մենք ճանաչում երեխային, այդքան ավելի խորը ազդեցություն կունենան շտկողական աշխատանքները, նաև այն, որ ինչքան շատ մենք դրա հանձն առնենք, այդքան հաջողության հասնելու ավելի շատ հույս կա: Դեպրիվացիայի ազդեցությունը կարելի է բաժանել 4 մակարդակի. ապաստիվացում, ա-

պաղեղուկտիվ ուսուցում, երկակի մեթոդներ, ապաստոցիալականացում:

1. Եթե վաղ դեպրիվացիան հոգեկան գործընթացների ակտիվացման մակարդակի խախտումներ է առաջացրել, ապա պետք է բավարար քանակությամբ դրդապատճառներ ապահովել շրջակա միջավայրից: Մեթոդաբանության տեսանկյունից այստեղ տեղին կլինեն սոցիալ-հոգեբանական հարմարման (ադապտացիոն) թերապիան:

2. Դեպրիվացիայի որոշ հետևանքներից հնարավոր է ազատվել հատուկ ուղղիչ նպատակաուղղվածություն ունեցող ուսուցմամբ, այսինքն՝ նորից սովորեցնելով: Երեխան ստանում է ցանկալի վարքագիծը հաստատող չափավորված դրդապատճառներ: Այսինքն խոսքը նոր, ավելի նպատակահարմար գիտելիքների ստեղծման մասին է՝ հին, ոչ պիտանի, դեպրիվացված հմտությունների փոխարեն:

3. Որոշ խանգարումներ հնարավոր է շտկել, առաջին հերթին, ապահովելով երեխայի հարաբերությունների համար սոցիալական անհրաժեշտ միջավայր: Մեթոդոլոգիայի տեսանկյունից այդտեղ կարելի է հոգեթերապիա կիրառել, քանի որ պետք է վերակառուցել երեխայի անձնային որակները՝ ապահովելով նրա համար հոգեբանական հասունություն ապահովող պայմաններ:

4. Ամենաբարձր մակարդակում անհրաժեշտ է երեխային ներառել սոցիալական միջավայրում և թույլ տալ նրան որոշակի դերեր ստանձնել այնտեղ: Սոցիալական միջավայրում և սոցիալական միջավայրի շնորհիվ երեխան ազատվում է դեպրիվացիայի հետևանքներից և ստեղծում է նոր, բարեհաջող հարաբերություններ:

Երբ ուսումնասիրում ենք դեպրիվացված երեխաներին, հատկապես հաստատություններում, տեսնում ենք, որ նրանք դեպրիվացիայի տարբեր մակարդակներում են գտնվում, որոնց հետ աշխատելիս անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ: Օրինակ՝ չափազանց ուժեղ արտահայտված սոցիալական հետաքրքրությամբ երեխաները կարևոր չէ ազդեսիվ, հրահրիչ վարքագիծ են հանդես բերում, թե՛ մակերեսային մասնակցություն են ունենում տեղի ունեցող սոցիալական իրադարձություններում, նրանք ոչ թե հատուկ ակտիվացման կարիք կունենան, այլ այն գործոնների, որոնք իրենց ակտիվությունը իմաստով կլցնեն: Խնդիրն այդտեղ ոչ թե կոնտակտ հաստատելն է, այլ հարաբերությունների խորացումը այնքան, միջև երեխան հուզական հա-

մոզվածություն ձեռք բերի և կարողանա հանգիստ սոցիալական գործունեություն ծավալել՝ խաղալ, սովորել, ստեղծագործական աշխատանքով զբաղվել: Այստեղ տեղին կլինի հոգեթերապիան և սոցիոթերապիան:

Մեր նպատակն էր նաև պարզել, թե կարո՞ղ են արդյոք դեպրիվացիայի հետևանքով անձի մոտ առաջանալ որոշակի բացասական փոփոխություններ, մասնավորապես, տազնապայնության բարձր մակարդակ. այդ իսկ պատճառով մեր կողմից հետազոտություն է անցկացվել նաև մեծահասակների շրջանում: Հետազոտությանը մասնակցել է քառասուն հոգի, քսանչորսը՝ կին, տասնվեցը՝ տղամարդ Առանձնացվեց երկու խումբ՝ քսանը դեպրիվացիա ապրած անձինք, իսկ մյուս քսանը՝ ոչ դեպրիվացված: Հետազոտությունը ցույց տվեց, որ գոյություն չունի պատճառահետևանքային կապ դեպրիվացիայի փաստի և անձնային տազնապայնության մակարդակի միջև:

Թվում է, թե պարադոքսալ արդյունք է, բայց զրույցի մեթոդի կիրառումը թույլ տվեց ստացված արդյունքները մեկնաբանել՝ հիմնվելով որոշակի գործոնների վրա: Քանի որ կյանքի ընթացքում անձը ստիպված է բախվել բազմաթիվ դժվարությունների հետ, նրան օգնության են գալիս բազմաթիվ հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ: Դեպրիվացված անձանց դեպքում փոխհատուցող մեխանիզմն այնքան ուժեղ է աշխատել, որ նրանց օգնել է ադապտացվել կյանքի պայմաններին:

Դեպրիվացիան ճակատագիր չէ և նրա ազդեցությունները պարտադիր չէ, որ շատ խորը լինեն անձի մեջ: Ինչպես վերը նշված, այնպես էլ այլ մեխանիզմների շնորհիվ հնարավոր է հասնել անձնային հոգեվիճակի բարելավման:

Թեև դեպրիվացված անձանց անձնային տազնապայնության մակարդակը ցածր էր, այնուամենայնիվ նրանք տազնապներ, նույնիսկ վախեր ունեին կյանքի որոշակի հատվածների՝ ընտանեկան կյանքի նկատմամբ: Չունենալով լիակատար ընտանիքի մոդել՝ նրանք տազնապներ ունեին կին-ամուսին, ծնող-երեխա հարաբերությունների նկատմամբ:

Դեպրիվացիայի մասին դասական աշխատությունները բավականին հոռետես եզրահանգման են գալիս [3, 25-30 էջեր]: Այն է՝ երկարատև հոգեբանական դեպրիվացիայի հետևանքները վաղ հասակում

շատ խորն են, դրանք մնայուն և գրեթե անփոփոխ են մինչև հասունություն: Սակայն հետագա աշխատությունները ցույց են տալիս, որ նախորդ նկատառումները լիովին հիմնավորված չեն: Պարզվում է, որ առաջընթաց է երևում արդեն իսկ երիտասարդության ժամանակ և վաղ հասունության տարիքում՝ կապված հոգեկանի փոխհատուցող /կոմպենսատոր/ մեխանիզմների ակտիվ աշխատանքի հետ:

Եթե կարծիքները ընդհանրացնենք, ապա կարելի է ասել, որ ծանր և շարունակական դեպրիվացիան երեխայի հոգեկանի կառուցվածքի մեջ խորը փոփոխություններ է թողնում, որոնք կարող են մշտական լինել: Ինչքան փոքր է երեխան և ինչքան երկար է դեպրիվացիան տևում, այդքան ավելի քիչ հույս կա շտկելու դեպրիվացիայի հետևանքները: Ջ. Բոուլբին նշում է, որ նույնիսկ շատ կարճ դեպրիվացիոն փորձը, որը անցնում է առանց բացահայտ ազդեցությունների, թողնում է թեկուզ մեկ թաքնված հետևանք, այն է՝ բարձր «խոցելիություն» նման փորձի կրկնվելու կամ այլ անբարենպաստ իրավիճակի դեպքում: Քանի որ դեռ սահմանված չէ այն տարիքը, որից հետո երեխան զգայուն է դառնում դեպրիվացիայի հանդեպ, ապա հնարավոր չէ նաև հաստատել այն սահմանը, որից հետո դեպրիվացիայի ազդեցության ուղղումը կամ թուլացումը անիմաստ կլինի [1, 124 էջ]:

Հետազոտական աշխատանքի արդյունքում մենք եկանք այն եզրահանգման, որ պետք չէ սպասել մինչև դեպրիվացիայի հետևանքների ի հայտ գալը, այլ դիտարկել խնդիրը պրոակտիվ եղանակով: Սրանից հետևում է այն, որ պետք է բոլոր ուժերն ուղղել դեպրիվացիան շուտ կանխատեսելու և դրա վաղ փուլերում ուղղիչ աշխատանքներ կատարելու վրա, քանի որ դա ավելի արդյունավետ կլինի, քան ցանկացած ուղղիչ աշխատանք, որը տարվում է արդեն իսկ դեպրիվացված անձնավորության հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Боулби Дж., Привязанность; – Будапешт, 2003 г.
2. Лангмейер И., Матейчек З. Психическая депривация в детском возрасте. Авивценум. Медицинское издательство Прага, 1984 г.
3. Freud Z., Burlingham A., D.T.: Infants without Families. New York, Internat. Univ. Press, 1944

ПОСЛЕДСТВИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ДЕПРИВАЦИИ И ЕЁ ПРОЯВЛЕНИЯ В ПСИХИЧЕСКОМ РАЗВИТИИ ЛИЧНОСТИ

Сильви Тарджуманян

ЕГУ; кафедра общей психологии, аспирант

В статье представлена проблема здорового развития личности, что в настоящее время является одной из важнейших проблем общества. Одна из таких- депривация, с которой человек сталкивается в раннем возрасте и последствия которой могут проявиться в зрелости.

Целью работы является выяснение последствий депривации и способы их предотвращения.

Чтобы добиться максимальной эффективности, необходима групповая работа и сотрудничество с рядом специалистов, таких, как педиатр, детский психиатр, психолог, социальный работник, педагог, невролог и т.д. Следует учитывать, что эффективность лечебно-реабилитационных мероприятий зависит от своевременного выявления депривации.

Ключевые слова: личность, депривация, тревожность, уязвимость, проактивный способ.

THE CONSEQUENCES OF PSYCHOLOGICAL DEPRIVATION AND THEIR MANIFESTATIONS ON PSYCHIC DEVELOPMENT OF A PERSON

Silvi Tarjumanyan

YSU, Chair of General Psychology; Post-graduate student

The article presents the healthy development of an individual, which is currently one of the most important issues in the society. Deprivation is one of them, which a person faces at an early age but the consequences

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

can emerge in maturity. The aim of this research is to find out the consequences of deprivation and the ways to prevent it.

To get the most effectiveness, it is necessary to work in groups and collaborate with a range of professionals such as pediatrician, child psychiatrist, psychologist, social worker, educator, neurologist, etc. It should be taken into consideration that the efficacy of therapeutic and rehabilitation measures depends on the timely detection of deprivation.

Keywords: personality, deprivation, anxiety, vulnerability, proactive way.

Ընդունվել է պապարության՝ 01.04.2019թ.

Գրախոսվել է՝ 19.04.2019թ.

THE INTRODUCTION OF TED TALKS AND ITS TEACHING PECULARITIES IN ESP CLASSES

Ani Manukyan

*EU, Chair of General Linguistics, PhD in Pedagogy
animanukyan75@gmail.com, +37493969797*

One of the core missions of teaching languages is to make it meaningful and tangibly effective. If we pursue this goal then we have to revise sources, course books, teaching materials, classroom setting and many other factors to create favorable conditions for learning languages. With the advent of communication approach, teaching materials in authentic language gained momentum and have been accentuated by applied linguists since then. In this context, textbooks are just tool that need supplementing, modifying, and finally replacing materials that do not work for your students for whatever reason.

This article presents the role and importance of Ted Talk in ESP courses with special emphasis on techniques of using them. The article highlights Ted Talk peculiarities and proposes strategies to present them in ESP classes as a supplementary material to develop students' speaking skills, critical and analytical thinking. Ted Talks open up new avenues for ESP students to indulge deeper into the topic under discussion and familiarize themselves with authentic language. The article offers classroom setting and management for TED Talk application and expected outcome.

Keywords: *TED Talk, authentic speech, ESP courses, L2 learners, supplement, comprehensive analysis, open up new avenues, ELL (English Language Learning)*

Today, EFL teachers are indeed a very fortunate as they have a very wide choice of teaching materials that are easily accessible owe to the Internet. Yet, problems with filtering and choosing appropriate material from reliable sources to developing language competences is a challenge. In addition, even if an appropriate online material is targeted that seems quite promising we may still struggle to come up with a way to get our students to use it so that it will be beneficial to them. One of the ways to

generate students' interest towards the topic under discussion is TED Talks. They need to be incorporated into ESP classes as; using authentic materials is highly important in developing communicative competence, as un-adapted materials bring the classroom closer to real-life language use and overall make language learning more meaningful and engaging for students.

TED Talks have been available since 2006. If we try to define TED Talks generally, we can outline them as public speeches presented by professionals and not only. TED Talks offer a wide circle of various topics; roughly estimated “2200+ talks to stir curiosity.” (<https://www.eflmagazine.com/teaching-english-using-ted-talks/>). No doubt, key to TED Talks popularity is their content and presentation manners. As a rule speakers share their own personal stories, and with the audience in a very natural manner which appeals many people to gain deeper insight into the topic under discussion. Another advantage is watching a TED Talk video presented by non-native speakers. Language variations give EFL students a chance to familiarize themselves with English spoken by people whose native language is other than English with high percentage of likelihood to experience in extra-curriculum activities and real-life contexts. Listening to people speaking English with different accents definitely helps EFL students to raise self-esteem and confidence and they realize that making mistakes when speaking English does not have to be embarrassing for them and it is a natural process. Besides, almost all TED Talks have their subtitles and transcripts to follow whenever non-native speakers experience difficulty understanding the speech or following its pace. TED Talks are of different lengths ranging from minimum 5 to maximum 18 minutes. Another useful feature TED Talks come to offer is classifying the talks into different categories based on “Topics” and “Duration” (0-6, 6-12, 12-18, 18+) (<https://www.eflmagazine.com/teaching-english-using-ted-talks/>)

Certainly, the advantages discussed above give English teacher an opportunity to decide which TED Talk to watch in class based on its language and duration that has to be in line with students' background knowledge and language level.


Here another concern rises concerning the application of authentic materials in teaching English to university students. In fact, it has been under discussion by many linguists and methodologists for many years. They agree that an authentic language samples can be successfully selected out of a variety of the real life' materials, which communicate messages of different kinds, content, length, and have different aims and purposes, and then they can be used for pedagogical purposes. At the same time they face contradiction referring to authentic materials since they are texts produced by native speakers for a non-pedagogical purpose [1, p.1-2], or as material which has not been especially designed for language teaching but produced for purposes other than to teach language [2, p.99] or texts are produced without L2 learners in mind [3, p.18]. In practice, university students whose level of English is beyond intermediate, generally react more enthusiastically to the use of authentic texts in the classroom than to working with adapted texts, which they find boring and demotivating. S. Thornbury states that texts, artificially tailored for classroom purposes, are too unnatural, providing poor models of real language use, and obsessively concerned with the forms of the language, particularly its grammar patterns, at the expense of more communicative features of the text. S. Thornbury also expresses his concern on ensuring that learners understand such texts and deciding which language features of these texts should be selected for teaching purposes as authentic materials demand both a high level of the English language command (making them practically inapplicable for lower level students), as well as a certain level of subject matter knowledge [4, p.104-105].

Blagojevich says that in spite of doubts about authenticity of TED materials from the perspective of their non-mandatory "nativeness' or increasing usage as official course-book basis, these talks can be viewed as authentic in the way they concentrate on their content, not on a particular language feature. Although a non-native speaker produces a speech, it does reflect a real language use and it is not purposefully simplified nor organized in a particular way to suit certain grammar or lexical exercises [5, p116]

ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

According to J.Wegner authentic texts are inviting materials brought to the classroom [6, 137]. An argument against the use of genuine texts could be their complexity which does not correspond to the learner's current level of linguistic competence and thus can demotivate them. Therefore, another feature of ESP texts, as specified by A. Gilmore, is that: as authentic texts reflect the real-life language, they contain a great diversity of grammatical and lexical elements, which means that they are much more abundant in language forms than the texts constructed for language teaching purposes [7, p. 97–118]

Apart from being productive means of teaching resource for ESP classes, teaching methodology and classroom setting make a complete set to guarantee productivity. Firstly, classroom arrangement needs a change to engage students in discussions. See the offered options to set up the classroom.



Pic 1.

Options 1, 2, 3, 4 are good for generating discussion(s) after watching TED Talks and doing follow-up activities. Eye contact and mobility are important for discussions and moving around for pair or small group discussions. Option 5 is good for watching TED Talks.

Teachers need to apply special methodology if they want to incorporate TED Talk in ESP classes. They need to prepare for it thoroughly. The content of TED Talks can be difficult for students to understand, thus teachers who are planning to introduce a TED Talk in class needs to predict all possible issues that might arise. He/she has to be very careful with the choice of TED Talk and prepare the class with the help of pre-watching and post-watching activities. (<https://journal.iitta.gov.ua/files/journals/1/articles/1991/submission/original/1991-8519-1-SM.docx>)

The teacher can divide TED Talk watching activity into phases; pre-watching for the main idea and for details. Before listening to the presentation, the students brainstorm in small groups (3-4 students) the idea they are going to watch in line with the current lesson. In the course of the discussion, the class can predict the outline of the speech and its details. Then the teacher can initiate an open class discussion to compare students' assumptions with the ideas presented in the TED Talk. If the language level and content are manageable for students, the teacher can ask them to take notes for main idea and details instead of just listening to the speaker. After watching the speech for the first time, in small groups students can compare their notes with their pre-watching predictions. Such activities are meant to create a certain information gap that the students might find challenging to complete and thus the listening task would be more meaningful and cognitively engaging for the students. Students can watch the video second time for specific details namely- language peculiarities, grammar aspect, intonation, terms, speech style, speech structure, presentation style, manners, body language, stylistic devices, and etc depending on the target of the lesson. Then the students can discuss in pairs their findings. Then the students can move forward to the next stage; an open class discussion to identify the main aspects and details of the target lesson and conclude it. The role of the teacher in these cases is facilitating and moderating by guiding the students to take the right track. Students actively participate in activities and take the lead in discussions. Group and open class discussions spread light on stylistic devices, grammar, and topic vocabulary of the presentation.

As a home assignment, students watch and reflect on a Ted Talk on a related topic and prepare a 10 to 15-minute presentation on a subject applying the techniques and linguistic knowledge acquired in class.

Working with Ted Talks gives the teacher a lot of flexibility and he/she can experiment, adapt, complement and tailor the material to the needs of his/her students. One of the options to teach English with the help of Ted Talks is giving students more autonomy, boosting their creativity, and developing their critical thinking. Another example of implementing TED Talks in ESP classes can have the following three steps; Step 1: Out-of-class Listening and Speaking Practice. On a weekly

basis, students choose a TED Talk to watch that should be in tune with topics for in class discussions. Then they get to know the idea behind the TED Talk by reading the transcript provided with it to find out terms, definitions, and phenomena they might not comprehend. The next stage is listening to the speech following the transcript. In this context, students should pay maximum attention to the presenter's tone, voice, presentation, pitch as in many cases TED Talks involve words and expressions that may seem unknown to EFL students. It is advisable to do another listening without transcript or subtitles heavily relying on memory and listening skills. Eventually students are encouraged to record their own speech on the same topic and share it with the teacher and the group for group listening and further discussion.

In the frame of the 2nd step in-class oral practice is exercised. After the students watch the certain TED Talk it is presented in class by using various visual aids; an overhead projector, PC-s if the group is small. As a rule, TED Talks should be short to have a chance to stop it for quick discussions and clarification. The teacher can also choose a student/s to define certain words in the speech using their own words. Intonation and word stress are of special importance. In parallel, one of the student's video or audio recording is presented in class to compare the TED Talk with EFL student's recording to identify strong and weak points of the student's speech.

The 3rd step consists of the following activity; in-class discussions. After in-class oral practices, students are engaged to discuss the main points of the subject expressing their own points. As a rule they respond to various questions, such as "Do you think ...? Explain to your partner why you feel the way you do and so on. Students work in pairs discussing questions. <https://www.eflmagazine.com/teaching-english-using-ted-talks/>). This activity is not only important for language skills improvement but also it boosts critical and analytical thinking among EFL students.

As DiCarlo indicates that English learners who have reached CEFR levels of B2-C1 can use genuine English language materials to enhance their linguistic and paralinguistic skills. TED talks come as examples of expert speakers talking directly to a wide audience of non-experts, which requires the former to be able to analyze their audience to understand

their knowledge, background and interests, and adapt content to them [8, p. 122]. This factor could provide a valuable model for students in terms of assessing their target audience while planning their presentations, as the issue of selecting an appropriate presentation topic is particularly relevant for ESP classes.

Undoubtedly, the driving force behind TED Talk successful speeches is the ability to wow, inspire, and amaze audience. TED Talks do make a valuable contribution to the field of English Language Learning (ELL) but it requires special approach to incorporate them into ESP classes.

References

1. Susan M. Bacon and Mickael M. Finnemann, A Study of the Attitudes, Motives, and Strategies of University Foreign Language Students and Their Disposition to Authentic Oral and Written Input, *The Modern Language Journal*, 1990,
2. Nunan, D. (2004). *Task-Based Language Teaching*. Cambridge: Cambridge University Press, p.99
3. Chi-Duc Nguyen and Frank Boers(2018), The Effect of Content Retelling on Vocabulary Uptake From a TED Talk, *TESOL Quarterly*, **53**, 1, (5-29)
4. Scott Thornbury, (2005) *How to Teach Vocabulary*, Pearson, (104)
5. Blagojević, S. (2013). Original Texts as Authentic ESP Teaching Material – The Case of Philosophy, *ESP Today*(*Journal of English for Specific Purposes at Tertiary Level*)
6. Wegner J. (2008), *Handbook of Research in Second Language Teaching and Learning*, Routledge,(p.138)
7. Gilmore A. (2007) Authentic materials and authenticity in foreign language learning. *Language Teaching*, 40 (2), 97–118
8. Di Carlo S.E. (2018) Too Much Content, Not Enough Thinking, and Too Little Fun, *Advances in Psychology Education*, available at [http://www.psychology.org/doi/abs/10.1152/\(123](http://www.psychology.org/doi/abs/10.1152/(123)

Internet Sources

1. https://www.esptodayjournal.org/pdf/vol_1_1/7.%20SAVKA%20BLAGO%20EVIC-%20full%20text.pdf
2. <https://www.ted.com/#/>
3. <https://www.tedxyerevan.com/>

TED Talk-երի ԿԻՐԱՌՈՒՄՆ ՈՒ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԸ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ(ESP) ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Անի Մանուկյան

ԵՀ, Ընդհանուր լեզվաբանության ամբիոն, մ. գ. թ.

Լեզուների դասավանդման հիմնական առաքելություններից մեկը դասավանդման գործընթացը իմաստալից ու շոշափելիորեն արդյունավետ դարձնելն է: Եթե մանկավարժը հետամուտ է այս նպատակին, ապա նա ստիպված է վերանայել դասավանդման նյութերն ու աղբյուրները, լսարանի դասավորվածությունը, դասագրքերն ու այլ շատ գործոններ լեզուն յուրացնելու համար բարենպաստ պամաններ ստեղծելու համար: Բնագիր նյութերի կիրառումը լեզուների դասավանդման ընթացքում նոր արդիականություն ստացավ լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցման գալուն պես 1980-ականներից սկսած: Այս համատեքստում, դասագրքերը դիտարկվում են զուտ որպես գործիքներ, որոնք համալրման, փոփոխման ու նյութերի փոխարինման կարիք ունեն, որոնք ինչ-ինչ պատճառներով արդյունավետ չեն:

Սույն հոդվածում արծարծվում է Ted Talk-երի դերն ու կարևորությունը անգլերենը հատուկ նպատակներով/ESP/դասընթացներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով դրանց կիրառման տեխնիկաներին: Հոդվածում ընդգծվում է Ted Talk-ի առանձնահատկություններն ու առաջարկվում են ռազմավարություններ ուսանողների հաղորդակցական, քննադատական ու վերլուծական հմտությունները զարգացնելու համար: Ted Talk-երը նոր հնարավորություններ են բացում ESP ուսանողների համար, խորը գիտելիքներ ստանալու տվյալ թեմայի մասին ու ծանոթանալու բնագիր լեզվին:

Հիմնաբառեր: բնագիր, անգլերենը հատուկ նպատակներով (ESP) դասընթացներ, օտար լեզու ուսումնասիրողներ (L2), համապարփակ վերլուծություն, նոր հնարավորություններ ընձեռել, անգլերեն լեզվի ուսումնասիրում (English Language Learning/ELL):

ВВЕДЕНИЕ TED TALKS и ОСОБЕННОСТИ ИХ ОБУЧЕНИЯ В КЛАССАХ ESP

Ани Манукян

ЕУ, Кафедра Общей Лингвистики, к.пед.н.

Одна из основных задач обучения языкам - сделать его осмысленным и ощутимо эффективным. Если мы преследуем эту цель, то мы должны пересмотреть источники, учебники, учебные материалы, обстановку в классе и многие другие факторы, чтобы создать благоприятные условия для изучения языков. Использование аутентичных языковых материалов при обучении иностранному языку набирал популярность с момента появления коммуникативного подхода в 1980-х годах.

В этом контексте учебник - это всего лишь инструмент, который нуждается в дополнении, изменении и, наконец, замене материалов, который по какой-либо причине не работает для студентов.

В этой статье представлена роль и значение Ted Talk в курсах ESP с особым акцентом на методы их использования. В статье освещаются особенности Ted Talk и предлагаются стратегии для их представления на уроках ESP в качестве дополнительного материала для развития навыков речи, критического и аналитического мышления учащихся. Ted Talks открывают новые возможности для студентов ESP, чтобы глубже погрузиться в обсуждаемую тему и ознакомиться с аутентичным языком. В статье предлагается настройка и управление классной комнатой для приложения TED Talk и ожидаемый результат.

Ключевые слова: TED Talk, аутентичная речь, курсы ESP, учащиеся L2, дополнение, всесторонний анализ, открывают новые возможности, изучение английского языка (ELL).

Ընդունվել է րիպագրության՝ 31.03.2019թ.

Գրախոսվել է՝ 23.04.2019թ.

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐԻ ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ «ԴՈՐԻԱՆ ԳՐԵՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Շուշանիկ Հովհաննիսյան

ԵՀ, Ընդհանուր լեզվաբանության ամբիոն
shushan.hov@yahoo.com, +374 77 139776

Լեզուն ազգային մշակույթի հայելին է, որտեղ կարևորագույն դեր ունեն լեզվական փարբեր ոճերը: Լեզվական փարբեր ոճերում, հափկապես գեղարվեստական գրականության մեջ, լայնորեն օգտագործվում են լեզվական միջոցներ, որոնք նպաստում են արտահայտչականության ուժգնացմանը՝ շնորհիվ այն բանի, որ նրա զուտ լեզվական բովանդակությանն ավելանում են փարատեսակ հուզարտահայտչական երանգներ: Խոսքի մնացած բոլոր ձևերից գեղարվեստական խոսքն ամենից առաջ փարբերվում է նրանով, որ այն գեղագիտական գործառույթ է կափարում:

Խոսքի արտահայտչականության ընդգծումն իրականացվում է փարատեսակ միջոցներով. առաջին հերթին փրոպաներով, այսպես կոչված լեզվական միջոցներով, որոնց շնորհիվ կարելի է պարկերավորություն ստեղծել: Տրոպի ամենափարատված տեսակներից է փոխաբերությունը:

Սույն հեփագոփության նպատակն է ուսումնասիրել անգլերեն գեղարվեստական երկում փոխաբերությունների հայերեն թարգմանության ուղիները՝ հիմնվելով Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպի և դրա հայերեն թարգմանության նյութի վրա (թարգմանությունը՝ Ռ. Առաքելյանի):

Հիմնաբառեր. փրոպ, փոխաբերական միավորներ, ազգային նշոյթավորվածություն, համատեքստային փոխներգործություն, բնօրինակի և թարգմանվող տեքստերի համարժեքություն:

Քսաներորդ դարի առաջին կեսերից փիլիսոփայական վերլուծությունների առանձնահատուկ առարկա է դառնում փոխաբերությունը:

ԼԵԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոխաբերությունների ուսումնասիրությունը՝ որպես լեզվական երևույթի, հին ավանդույթ է, որի ակունքները հասնում են ընդհուպ անտիկ դարաշրջանը՝ միևնույն ժամանակ չկորցնելով արդիականությունը մեր օրերում: Փոխաբերությունը ներկայումս ընկալվում է որպես ժամանակակից իմացական գործընթացների կարևոր բաղկացուցիչ, որն ունի իր պատմական հիմքերը: Փոխաբերություն երևույթը քննության է առնվել այնպիսի մտածողների կողմից, ինչպիսիք են՝ *Արիստոտելը, Ռուսոն, Հեգելը, Կասսիրերը, Կլինտիլիանը, Դեմեպրիոսը, Ցիցերոնը, Մակկորմակը, Զ.Սերը, Մ.Բլեքը, Գ.Ն.Սկյարևսկայան, Զ.Լակոֆֆը և այլոք*:

Հույն փիլիսոփա և գիտնական Արիստոտելն առաջինն էր, ով իր աշխատություններում անդրադարձավ փոխաբերություն հասկացությանը: Նա նշել է. «*Փոխաբերությունը սեռից տեսակ, տեսակից սեռ, տեսակից տեսակ կամ համաբանությամբ փոխանցված անվանում է*»: Փոխաբերությունն, ըստ նրա, թույլ է տալիս «*խոսելով իրականի մասին՝ նրա հետ կապել անհնարը*» [6, c. 24]:

Փոխաբերության վերաբերյալ տարբեր սահմանումներ գոյություն ունեն:

Ս.Օժեգովի և Ն.Շվեդովայի բացատրական բառարանում հանդիպում ենք այդ բառի բացատրությանը. «*տրոպի (ոճական հնար) տեսակ, թաքնված պարկերավոր համեմատություն, մի առարկայի ընկալում մեկ այլ երևույթի միջոցով, ինչպես նաև պարկերավոր համեմատություն արվեստի տարբեր տեսակներում: Լեզվաբանության մեջ՝ բառի փոխանցումային կիրառում*» [7, c. 22]:

Փոխաբերությունը, որպես գիտակարգ, դեռևս շարունակում է լինել շատ լեզվաբանների ուսումնասիրության առարկա: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ փոխաբերությունները յուրաքանչյուր ազգի էթնոհոգեբանության գլխավոր նշույթներն են: Մասնագիտական գրականության մեջ առայժմ միասնական կարծիք գոյություն չունի փոխաբերության էական տարբերակիչ հատկանիշների, փոխաբերության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Դեռևս վերջնական լուծում տրված չէ այն հարցին, թե ինչ է փոխաբերությունը: Անհրաժեշտ է նշել, որ փոխաբերությունների սահմանների որոշման անկախությունը, փոխաբերական միավորների ոչ հստակությունը պայմանավորված են փոխաբերությունների սահմանման բազմազա-

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

նությամբ և փոխաբերական միավորների տարբերակման կայուն չափանիշների բացակայության հանգամանքով: Վերջին տարիներին նշանակալիորեն աճել է փոխաբերության համեմատական ուսումնասիրությունների հանդեպ հետաքրքրությունը, որը հաստատվում է մի շարք ուսումնասիրությունների առկայությամբ: Դրանք թույլ են տալիս ավելի ճշգրիտ սահմանել այդ միավորների ուսումնասիրության առարկան, ճյուղերը և մեթոդները:

Փոխաբերության թարգմանության վերաբերյալ առաջ են քաշվել մի շարք տեսություններ և մոտեցումներ, որոնցից յուրաքանչյուրը խնդիրը դիտել է տարբեր տեսանկյունից:

Ըստ Դագուի «*փոխաբերությունը թարգմանչի կարողությունները մանրակրկիտ ստուգող թեստ է*» [1, p. 77]: Ֆուերտես Օլիվերան համաձայնվում է այս մտքի հետ. «*փոխաբերության թարգմանությունը խնդրահարույց է, անկախ փոխաբերության նկատմամբ ընտրված մոտեցումից*» [3, p. 5]:

Փոխաբերությունների թարգմանությունը բավական բարդ գործ է, քանի որ դա պահանջում է այս կամ այն մշակույթի, լեզվի, համատեքստի ըմբռնման նուրբ իմացություն: Թարգմանության գլխավոր պահանջը բնօրինակի և թարգմանվող տեքստերի համարժեքությունն է, որը հնարավոր է իմաստային կամ պրագմատիկ (գործաբանական) փոխակերպման պահպանման դեպքում: Թարգմանական տեսանկյունից փոխաբերական միավորները բաժանվում են երկու խմբի՝ **1)** համարժեքներ ունեցող փոխաբերական միավորներ, **2)** առանց համարժեքների փոխաբերական միավորներ: Փոխաբերական միավորները երբեմն հարկ է լինում թարգմանել՝ լիովին փոխելով նրանց պատկերավոր հիմքը: Հաճախ դա արվում է նրանց արտահայտչական նրբերանգները և գործառական-ոճական առանձնահատկությունները պահպանելու նպատակով: Փոխաբերությունների թարգմանության բարդությունը նաև նրանում է, որ նրանցից շատերը, ունենալով հուզական բնույթ, պատկանում են որոշակի խոսքային ոճի և հաճախ կրում են վառ արտահայտված ազգային բնույթ: Ազգամշակութային բաղադրիչ պարունակող փոխաբերությունների մեջ առաջին հերթին կարելի է առանձնացնել այն փոխաբերական միավորները, որոնք ներառում են ձևական և բովանդակային ազգամշակութային բաղադրիչ: Այսինքն՝ նույն հասկացությունը տարբեր լեզուներում դրսևորվում է

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

տարբեր պատկերների միջոցով: Ձևական ազգային նշոյթավորվածություն ունեցող փոխաբերությունների թարգմանության դեպքում կարելի է հասնել թարգմանության և բնագրի գործառական-հաղորդակցական համարժեքությանը տարբեր միջոցներով, իսկ բովանդակային ազգային նշոյթավորվածություն ունեցող փոխաբերությունների թարգմանության հնարավորությունները շատ սահմանափակ են: Դրանք թարգմանելիս շատ դեպքերում հարկ է ընթերցողին հաղորդել փոխաբերության հետ կապված արտալեզվական տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ փոխաբերությունների թարգմանության ընթացքում հաճախ ի հայտ եկող դժվարությունները կախված են լինում՝ •բնօրինակ տեքստում փոխաբերությունների ճանաչման և նույնականացման աստիճանից, •փոխաբերությունների՝ որպես տարածակրված լեզվական միավորի ընկալումից, •փոխաբերությունների ազգամշակութային նրբերանգներից, որին հաճախ ծանոթ չէ հենց թարգմանիչը, •փոխաբերությունների պատկերավոր հիմքի փոխանցման խնդրից, այն դեպքում, եթե թարգմանության լեզվում բացակայում է համապատասխան համարժեքը:

Գեղարվեստական գրականության փոխաբերությունները տարբեր են իրենց շարահյուսական կառուցվածքով, իմաստային և գործաբանական առանձնահատկություններով: Այս գործոնները որոշիչ դեր են կատարում այս կամ այն փոխաբերական միավորի թարգմանության գնահատման չափանիշների համար: Լեզվաոճական հնարների թարգմանության տեսությունը, որը գործում է, այսպես կոչված, «փոխաբերության պահպանման օրենքով»՝ հիմնված է ոճագիտության այն դիրքորոշման վրա, որ բառերը, որոնք օգտագործվում են տրոպներում, պետք է համապատասխանեն իրար, ինչպես նաև համապատասխան լինեն իրենց ուղիղ իմաստներով [5, c. 144]:

Գեղարվեստական տեքստերի բազմազանությունը, հեղինակային լեզվի անկրկնելիությունը, անսպառ հնարավորություններ են ստեղծում պատկերավոր միջոցների և թարգմանության լեզվում դրանց արտահայտման միջոցների ուսումնասիրության համար: Լինելով բազմակողմանի և բազմաշերտ երևույթ, ինչպես արդեն նշվել է, փոխաբերությունը կարող է զգալի դժվարություններ առաջացնել թարգմանության համար, քանի որ լեզվի այս պատկերավորման միջոցը ներառում է գնահատողական, անվանողական և գեղագիտական բաղադր

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

րիչներ, որոնց արդյունքում փոխաբերությունների թարգմանությունը ենթադրում է երկու զուգորդային պլանների պահպանում. պլան՝ հիմնված բառացի նշանակության վրա և պլան՝ հիմնված ուղիղ, փոխաբերական և համատեքստային փոխներգործության վրա: Հաշվի առնելով գեղարվեստական գրականության թարգմանության տարածվածությունը՝ նշված խնդիրը խիստ *արդիական* է:

Սույն հետազոտության *նպատակն* է ուսումնասիրել անգլերեն գեղարվեստական երկում փոխաբերությունների հայերեն թարգմանության ուղիները՝ հիմնվելով Օսկար Ուայլդի «*Դորիան Գրեյի դիմանկարը*» վեպի և դրա հայերեն թարգմանության նյութի վրա (թարգմանությունը՝ *Ռ.Առաքելյանի*):

Հետազոտության *առարկան* են վերը նշված ստեղծագործությունից դուրս գրված փոխաբերությունների օրինակները և դրանց հայերեն թարգմանված տարբերակների զուգադրական վերլուծությունը: Բացահայտվում են փոխաբերությունների թարգմանության ամենաշատ հանդիպող մեթոդները, ամենատարածված սխալներն ու բացթողումները, և սխալների վերացման հնարավոր ուղիները:

Առաջադրված հիմնանպատակը ներառում է հետևյալ *խնդիրների* լուծումը՝

- Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպում փոխաբերություններ ներառող նախադասությունների վերլուծություն,
- փոխաբերությունների հայերեն թարգմանության ժամանակ թարգմանչի առջև ծառայած հիմնական առաջադրանքների և խնդիրների հայտնաբերում և ձևակերպում,
- օգտագործված թարգմանական հնարների նպատակահարմարության վերլուծություն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համընդհանուր քաղվածքի, լեզվաոճական վերլուծության, համեմատական-զուգադրական, ինչպես նաև վիճակագրական *մեթոդները*:

Ուայլդի լեզուն աչքի է ընկնում մեծ պատկերավորությամբ, ինչն իր վառ արտահայտությունն է գտել նրա «*Դորիան Գրեյի դիմանկարը*» ստեղծագործության մեջ: Ձգտելով իր լեզվին տալ առավել մեծ արտահայտչականություն և ինքնատիպություն, Ուայլդն օգտագործել է ոճական մի շարք հնարներ: Ակնհայտ է, որ պատկերավորության ստեղծման մեջ կարևոր դեր ունի փոխաբերությունը: Ոճական հնար-

ների և, մասնավորապես, փոխաբերության կիրառման օրինակներ կարելի է հանդիպել մեծամասամբ նկարագրական տեսարաններում (բնության, տան, մարդկանց և այլն), ինչը զարմանալի չէ, քանի որ բնության առարկաների և երևույթների, դրանց գույների ու ձևերի բազմազանությունը խթանում է մարդու պատկերավոր մտածողությունը:

Բնագրի նախադասությունների և դրանց հայերեն թարգմանությունների զուգադրումը ցույց է տալիս, որ թարգմանչին հիմնականում հաջողվել է պահպանել և հաղորդել պատկերավորությունը մի շարք թարգմանական հնարների համադրմամբ:

- Տվյալ ստեղծագործության մեջ հիմնականում հանդիպում են ընդլայնված փոխաբերություններ, ինչն ավելի մեծ դժվարությունների առաջ է կանգնեցնում թարգմանչին:
- Ինչ վերաբերում է օգտագործված հնարներին, ապա հանդիպում ենք համարժեքների, քերականական և բառային փոխակերպման, փոխհատուցման, կոնկրետացման կամ ընդհանրացման, նկարագրական և բացատրական հնարին և այլն:
- Անհրաժեշտ է նշել, որ թարգմանիչը մեծ մասամբ կատարել է իմաստային թարգմանություն՝ բառային փոխակերպմամբ փորձելով պահպանել գեղարվեստական տեքստի գեղագիտական արժեքը՝ պատկերավորությունը, որը պետք է ընկալելի լինի հայ ընթերցողի համար: Օրինակ՝

Suddenly a wild hope flashed across his brain. (4, p. 268)

Հանկարծ հույսի մի շող բոցկլկլաց ուղեղում: (8, էջ 229)

Բառային փոխակերպումով թարգմանություն է վերոնշյալ փոխաբերությունը, որտեղ “wild hope” («վայրի հույս») մակդիրը փոխարինվել է «հույսի շող» մակդիրով, ինչն ավելի ընկալելի է հայ լեզվամտածողության համար: Նշենք, որ նման փոխակերպումից հետո ավելի ճիշտ կլիներ «ուղեղ» բառը փոխարինել «սիրտ» բառով, քանի որ հայերենում ավելի ընդունված է ասել «հույսի շող առկայծեց («արթնացավ») սրտում»:

• Նշենք, որ մեծամասամբ հաջողված թարգմանությունը հնարավոր է դարձել թարգմանական հնարներից մի քանիսի համադրման արդյունքում, այսինքն՝ բառային փոխակերպումը հաճախ համադրվում է այլ հնարների հետ:

Կոնկրետացման հնարի և համատեքստային թարգմանության միջոցով կատարված հաջողված թարգմանություն կարելի է համարել հետևյալ օրինակը՝

In the slanting beams that streamed through the open doorway the dust danced and was golden. (4, p. 35)

Դռնից ներս թափանցող արևի շեղ ճառագայթների մեջ խայտում էին ոսկեգույն փոշեհատիկներ: (8, էջ 34-35)

Ինչպես տեսնում ենք, թարգմանության մեջ կատարվել է քերականական փոփոխություն: “*The dust was golden*” (փոշին ոսկեգույն էր) արտահայտությունը թարգմանվել է «*ոսկեգույն փոշեհատիկներ*», որտեղ առկա է կոնկրետացում՝ *փոշի-փոշեհատիկ*: “*To dance*” (պարել, պտրվել, ցատկել, սահել) բայը թարգմանվել է «*խայտալ*», որն ունի *ուրախությունից ցատկոտել* իմաստը: Հաշվի առնելով, որ խոսքը ոսկեգույն փոշեհատիկների մասին է, ապա տվյալ համատեքստում, բացի վերը նշված իմաստից, իրականացվել է նաև «*խայտալ*» բայի փոխաբերական իմաստներից մեկն էլ՝ «*ցոլալ, առկայծել, փայլվել*»:

Ուսումնասիրվող հաջորդ օրինակում ևս թարգմանիչը համատեղել է մի շարք հնարներ.

The evening darkened in the room. Noiselessly, and with silver feet, the shadows crept in from the garden. The colours faded wearily out of things. (4, p. 148)

Իրիկնային մթնշաղը պարուրեց սենյակը: Պարուրեցից ներս էին սողոսկում արծաթե ոտքերով անշունկ սրվերները: Բոլոր երանգները դանդաղ գունաթափվում էին: (8, էջ 130)

Բառացի թարգմանությունից խուսափելու համար “*The evening darkened in the room*” փոխաբերությունը թարգմանվել է համատեքստային համարժեքով՝ «*Իրիկնային մթնշաղը պարուրեց սենյակը*», ինչը հաջողված տարբերակ է: Քերականական փոփոխությամբ է թարգմանված նաև երկրորդ նախադասությունը: “*Noiselessly the shadows crept in*” փոխաբերությունը թարգմանվել է «*ներս էին սողոսկում անշունկ սրվերները*», որտեղ “*noiselessly*” (անաղմուկ կերպով) մակբայը թարգմանվել է ածականով՝ «*անշունկ*»՝ ստեղծելով մակդիր: Այստեղ տեսնում ենք նաև բառացի թարգմանության օրինակ՝ «*արծաթե ոտքերը*», որը, մեր կարծիքով, կարելի է բաց թողնել: Անդրադառնալով վերը բերված հատվածի երրորդ նախադասությանը, ապա այն կատարված է բառացի, և ի-

մաստն այդքան էլ ընկալելի չէ: Հնարավոր է առաջարկել հետևյալ տարբերակը՝ «*Բոլոր առարկաները դանդաղ գունաթափվում էին*» կամ «*Բոլոր առարկաների գույները դանդաղ խամրում էին/խունանում էին*»:

• Որոշ դեպքերում թարգմանիչը կատարել է ոճական հնարի փոփոխություն՝ Օրինակ՝

The darkness lifted, and, flushed with faint fires, the sky hollowed itself into a perfect pearl. (4, p. 128)

Մութը ցրվել էր, մեղմ առկայծող կրակներով ընդելուզված երկինքը նման էր հրաշագեղ մարգարտահապիկի: (8, էջ 112)

Թեև թարգմանությունը կատարվել է ոճական հնարի փոփոխությամբ, այնուամենայնիվ, կարել է ասել, որ հաջողված է “*the sky hollowed itself into a perfect pearl*” փոխաբերության թարգմանությունը համեմատության միջոցով՝ «*երկինքը նման էր հրաշագեղ մարգարտահապիկի*»:

• Երբեմն անգլերենի հեղինակային փոխաբերությունը թարգմանելիս թարգմանիչը հայերեն տարբերակում ստացել է հնացած փոխաբերություն, ինչը նվազեցրել է բնագրի պատկերավորությունը և չի փոխանցել հեղինակի պատկերավոր մտածողության և աշխարհընկալման յուրահատկությունները: Պետք է նշել, որ կիրառվել են նաև գոյաբանական փոխաբերություններ, օրինակ՝

A rose shook in her blood and shadowed her cheeks. (4, p. 88)

Արյունը խփեց երեսին, այտերը շառագունեցին: (8, էջ 79)

Նշենք, որ անգլերենում գործ ունենք հեղինակային փոխաբերության հետ, մինչդեռ հայերեն՝ «*Արյունը խփեց երեսին*» տարբերակը հնացած փոխաբերություն է, ինչը նվազեցնում է բնագրի պատկերավորությունը և չի փոխանցում հեղինակի պատկերավոր մտածողության և աշխարհընկալման յուրահատկությունները: Նախադասության “*A rose shadowed her cheeks*” հատվածի թարգմանությունը՝ «*այտերը շառագունեցին*», ապափոխաբերականացման օրինակ է:

• Մի քանի օրինակում թարգմանիչը բաց է թողել նախադասության որևէ հատվածի փոխաբերությունը, ինչի հիմքն է ռուսերեն թարգմանությունը, որը, սակայն, արդարացված չէ և հանգեցրել է բնագրի պատկերավորության կորստի: Օրինակ՝

The bright dawn flooded the room and swept the fantastic shadows into dusky corners, where they lay shuddering. (4, p. 129)

Սենյակը ողողվեց վաղորդյան պայծառ ճառագայթներով, փարօրինակ սրվերները եր փախան խավար անկյուններ: (8, էջ 114)

Ինչպես տեսնում ենք, նախադասության առաջին մասում թարգմանիչը փոխել է քերականական ենթական և օգտագործել կոնկրետացման ու նկարագրական հնարները՝ (*dawn-լուսաբաց, արշալույս* -> *վաղորդյան պայծառ ճառագայթներ*)՝ ապահովելով համարժեք թարգմանություն: Պայմանավորված առաջին հատվածում ենթակայի փոփոխությամբ՝ փոխվել է նաև երկրորդ մասի ենթական: Հետաքրքրական է, որ թարգմանիչը բաց է թողել նախադասության վերջին հատվածի փոխաբերությունը (“*where they lay shuddering*”), ինչի հիմքն է ռուսերեն թարգմանությունը՝ “*Яркий утренний свет залил комнату и разогнал причудливые тени, прятавшиеся по сумрачным углам.*”, որը, սակայն, արդարացված չէ և հանգեցրել է բնագրի պատկերավորության կորստի: Կարելի էր թարգմանել՝ «*սրվերները եր փախան և վախից դողալով կուչ եկան խավար անկյուններում*»:

- Հետաքրքրական են նաև այն օրինակները, որտեղ անգլերենի բնագիրը զիջում է հայերենին իր պատկերավորությամբ:

Այս օրինակում, ի տարբերություն անգլերենի՝ հայերեն նախադասությունն ունի փոխաբերական իմաստ:

If they know nothing of victory, they are at least spared the knowledge of defeat. (4, p. 7)

Նրանց վիճակված չէ զգալ հաղթության բերկրանքը, բայց դրա փոխարեն զերծ են նաև պարտության դառնությունից: (8, էջ 10)

Հայերենում առկա է «*հաղթության բերկրանք*» արտահայտությունը, մինչդեռ անգլերենում՝ միայն “*victory*” գոյականը: Թարգմանիչը կիրառել է պատկեր ստեղծող բառային միավորների ավելացման եղանակը, որը կատարվել է «*բերկրանք*» բառի միջոցով, ինչն էլ հանգեցրել է պատկերի ուժգնացման:

“*Knowledge of defeat*” («*պարտության գիտակցում*») արտահայտությունը թարգմանվել է «*պարտության դառնություն*» արտահայտությամբ: Այս օրինակը կարելի է վերլուծել երեք տեսանկյունից: 1.Վատ, բացասական երևույթի գիտակցումն անհատի մոտ դառնություն, ցավ է առաջացնում: Այդ պատճառով թարգմանիչը “*knowledge*” բառը թարգմանել է «*դառնություն*»: 2.Նախադասության սկզբում ավելացվել է «*բերկրանք*» գոյականը, ուստի այս դեպքում “*knowledge*” բառը

«*դառնություն*» բառով փոխարինելն արդարացված է, հակադրություն է ստեղծվել «*բերկրանք*» և «*դառնություն*» բառերի միջև: 3. Բացի այդ, հայերենում ունենք «*պարտության դառնություն*» արտահայտությունը, հետևաբար թարգմանիչը կիրառել է համատեքստային՝ բառային փոխակերպմամբ թարգմանություն:

Այսպիսով, պետք է նշել, որ հատկանշական է այն փաստը, որ թեև բնագրի բովանդակությունը, պատկերավորությունը և արտահայտչականությունը պահպանելու տեսակետից առավել շատ կորուստներ են լինում միջնորդավորված թարգմանության դեպքում, այս պարագայում ականատես ենք լինում ճիշտ հակառակին. Ռ. Առաքելյանի կողմից կատարված միջնորդավորված թարգմանությունն հաջողված է փոխաբերական պատկերի և արտահայտչականության պահպանման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով փոխաբերական պատկերի պահպանման խնդիրը, կարելի է առանձնացնել փոխաբերության թարգմանության երեք խումբ: «*Դորիան Գրեյի դիմանկարը*» վեպում առաջին խումբը կազմված է այն փոխաբերություններից, որոնք թարգմանվել են՝ պահպանելով պատկերը (77,5%): Երկրորդ խմբում են այն փոխաբերությունները, որոնք թարգմանվել են պատկերի փոխարինման միջոցով (20%): Երրորդ խմբում այն փոխաբերություններն են, որոնց թարգմանության ժամանակ թարգմանիչը հրաժարվել է պահպանել բնագրի արտահայտչամիջոցը՝ դիմելով ապափոխաբերականացման կամ փոխհատուցման (2,5%):

Ուսումնասիրված օրինակների վերլուծությունը ցույց տվեց նաև, որ ըստ Նյումարկի համոզմունքի, մեռած փոխաբերություններն ամենից շատն են թարգմանվում, իսկ հեղինակային փոխաբերությունների թարգմանության աստիճանը կախված է այդ գործընթացում ընդգրկված լեզվական համակարգերի մոտիկությունից [2, p. 48-49]:

Բնագիր տեքստերի և դրանց հայերեն տարբերակների զուգարումն ակնհայտորեն ցույց է տալիս, որ թարգմանության ընթացքում չկա որոշակի համապարփակ մոդել, որը կլուծեր թարգմանիչների առջև ծառայած բոլոր խնդիրները: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում թարգմանիչի առջև դրված է ոչ թե մի քանի պատրաստ տարբերակներից մեկն ընտրելու առաջադրանք, այլ բնագրի բովանդակությունը, պատկերավորությունը և արտահայտչականությունը պահպանելու

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

տեսակետից լեզվական իրավիճակից նվազագույն կորուստներով ելք գտնելու ստեղծագործական փնտրտուքների անհրաժեշտություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Dagut, M., More About The Translatability of Metaphor, Babel 1987.
2. Newmark P., A Textbook of Translation, Prentice-Hall International 1988.
3. Olivera, F., Pedro A., Metaphor and Translation: A Case Study in the Field of Economics, In P. 1998.
4. Wilde O., The Picture of Dorian Gray, Broadview Press 1998.
5. Гальперин И. Р., Текст как объект лингвистического исследования, Изд-е 4-е. М.: КомКнига 2006.
6. Жоль, К.К., Мысль. Слово. Метафора. Проблемы семантики в философском освещении //– Киев: Наукова Думка 1984.
7. Ожегов С.И., Шведова Н.Ю., Толковый словарь русского языка, 1992.
8. Ոսպլիլ Օ., «Դորիան Գրեյի դիմանկարը», Թարգմ.՝ Ռ.Առաքելյան; Երևան, 1972.

THE PROBLEMS OF TRANSLATING METAPHORS FROM ENGLISH INTO ARMENIAN IN FICTION (BASED ON THE NOVEL “THE PICTURE OF DORIAN GRAY” BY OSCAR WILDE)

Shushanik Hovhannisyan

EU, Chair of General Linguistics

Language is the mirror of the national culture where the role of different linguistic styles is of great importance. Linguistic means are widely used in different language styles, particularly in fiction. They contribute to intensification of expressiveness, due to the fact that various linguistic nuances are added to the linguistic content. The artistic speech differs from all other forms of speech by the fact that it performs an aesthetic function.

The emphasis of the expressiveness of the speech is implemented by various means: first of all by tropes, so-called stylistic devices, which can create an imagery. One of the most common types of tropes is *metaphor*.

The current article aims at studying the metaphors in English fiction and their translation methods into Armenian. The analysis is based on the novel “*The Picture of Dorian Gray*” by Oscar Wilde.

Keywords: trop, figurative units, national features, contextual interaction, equivalence between source and target texts.

ПРОБЛЕМЫ ПЕРЕВОДА МЕТАФОР С АНГЛИЙСКОГО НА АРМЯНСКИЙ В ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ (НА ОСНОВЕ РОМАНА ОСКАРА УАЙЛЬДА “ПОРТРЕТ ДОРИАНА ГРЕЯ”)

Шушаник Оганнисян

ЕУ, Кафедра Общей Лингвистики

Язык является зеркалом национальной культуры, где различные языковые стили играют важнейшую роль. В разных языковых стилях, особенно в художественной литературе, широко используются лингвистические средства, способствующие усилению выразительности, благодаря тому, что в лингвистический контент добавляются различные языковые нюансы. Художественная речь отличается от всех других форм речи тем, что она выполняет эстетическую функцию.

Акцент на выразительность речи осуществляется различными способами: прежде всего тропами, так называемыми лингвистическими средствами, которые могут создавать образ. Одним из наиболее распространенных типов троп является метафора.

Данная статья направлена на изучение метафор в английской художественной литературе и методов их перевода на армянский язык. Анализ основан на романе Оскара Уайльда «Портрет Дориана Грея».

Ключевые слова: троп, образные единицы, национальные особенности, контекстное взаимодействие, эквивалентность между исходным и целевым текстом.

Ընդունվել է րիսադրուիթյան՝ 01.04.2019թ.

Գրախոսվել է՝ 23.04.2019թ.

**ՔԵՄՓ-ԴԵՎԻԴԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ
ԱՐԱՔԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ**

Արտակ Հովհաննիսյան

Ե Հ, Գյումրու մասնաճյուղ, պ.գ.թ., դոցենտ
artakh76@mail.ru, +374 55 012070

1973թ. Արաքա-իսրայելական պատերազմից հետո մի շարք հանգամանքներ նպաստեցին հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններ սկսելուն: Նախ՝ 1974թ. հունվարի 11-18-ը ստորագրվեց զորքերի փարաբաժանման վերաբերյալ իսրայելա-եգիպտական համաձայնագիրը, որից հետո 1975թ. սեպտեմբերի 1-ին ժնևում սկսվեց կոնֆերանս, իսկ սեպտեմբերի 4-ին Եգիպտոսը և Իսրայելը ստորագրեցին Սինայի համաձայնագիրը: ԱՄՆ-ի ջանքերն ուղղված էին Եգիպտա-իսրայելական սեպարատ հաշտություն կնքելուն, որի արդյունքում սկսվեցին Քեմփ-Դևիդյան բանակցությունները և 1979թ. մարտի 26-ին Վաշինգտոնում ստորագրվեց խաղաղության պայմանագիր, որը ուժի մեջ մտավ 1979թ-ի դեկտեմբերի 25-ին:

Հիմնաբառեր. Քեմփ-Դևիդ, նավթային էմբարգո, Քարտեր, Բեզին, ժնևի կոնֆերանս, Սուեզի ջրանցք

Հակամարտությունների լուծումը այսօր համարվում է համաշխարհային հանրության առջև ծառայած գերխնդիրներից մեկը, որոնց լուծման ուղիների շուրջ առաջացած տարաձայնությունները և քաղաքական ակտիվությունը կարելի է համարել համոզիչ փաստարկ հոգուտ այն բանի, որ հակամարտությունները ոչ միայն տարաբնույթ են և բազմակողմանի, այլև շոշափում են բազմաթիվ պետությունների շահերը:

21-րդ դարի սկզբին դեռևս չլուծված է մնում համաշխարհային հասարակությանը հուզող ամենաբարդ թնջուկներից մեկը՝ արաքա-իսրայելական հակամարտությունը: Առաջանալով 1947թ. որպես իսրայելա-պաղեստինյան խնդիր՝ հակամարտությունը հետագա տարիներին վերածեց արաքա-իսրայելականի՝ իր ոլորտը ուղղակի կամ անուղղակի կերպով ներառելով Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

երկրներին, ինչպես նաև համաշխարհային գերտերություններին, որոնք ունեն իրենց ռազմավարական շահերը այս ռեգիոնում: Այս առումով, ցայսօր միջազգային դիվանագիտության օրակարգում են մնում հակամարտության լուծմանն ուղղված ջանքերը և քննարկվող հարցի արդիականությունը շարունակում է մնալ համաշխարհային գերակա խնդիրներից մեկը:

Հոդվածում նպատակ է դրված ներկայացնել Քեմփ-Դևիդի համաձայնագրի պատմական նշանակությունը արաբախորայելական հակամարտության կարգավորման գործընթացում, ինչպես նաև այն խնդիրները, որոնք առաջացան համաձայնագրի կնքման ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում: փորձ է արվում ցույց տալ համաձայնագրի կնքման գործընթացում ԱՄՆ-ի ունեցած դերակատարումը: Արաբախորայելական հակամարտության ուսումնասիրությամբ զբաղվել են հայկական, ռուսական, արևմտյան և արաբական արևելագիտական դպրոցների ականավոր ներկայացուցիչները: Ինդիրո առարկա հարցին իրենց աշխատություններում անդրադարձել են Ն. Հովհաննիսյանը, Ե. Աբգարյանը, Ս.Ավանեսովը, Ա. Թոփալյանը, Ռ. Կարապետյանը, Շ. Կարամանուկյանը, Հ. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը:

1973թ. հոկտեմբերյան պատերազմի ավարտից հետո հստակորեն երևում էին այն գործոնները, որոնք խոսում էին արաբա-խորայելական հակամարտության խաղաղ կարգավորման օգտին՝

1. պատերազմի ժամանակ երևացին արաբական երկրների աճած ուժն ու հզորությունը,

2. արաբական երկրների հայտարարած նավթային էմբարգոն նախատեսում էր ինչպես նավթի արդյունահանման, այնպես էլ արտահանման ծավալի կրճատում կիրառել արևմտյան այն երկրների դեմ, որոնք այս կամ այն կերպ օժանդակում էին Իսրայելին:

3. պարտությունը Վիետնամում ստիպում էր ԱՄՆ-ին ավելի ու ավելի սահել միջազգային լարվածության թուլացման դիրքեր: [3, c. 128]

ԱՄՆ-ը սկսում է քայլեր ձեռնարկել Իսրայելի, Եգիպտոսի և Սիրիայի միջև՝ զորքերի տարաբաժանման ուղղությամբ, որի նպատակը ըստ ԱՄՆ-ի պետքարտուղար Քիսինջերի. «Իսրայելի կողմից գրավված տարածքների պահպանությունը ապահովելու հնարավորության ստեղծումն էր»: [2, c. 129] ԱՄՆ-ի կողմից ավելի ու ավելի էր նկատ-

վում մտումներ՝ դուրս մղելու ԽՍՀՄ-ին մերձավորարևելյան կարգավորման շրջանակներից, իսկ Եգիպտոսն ավելի էր հակվում միայն ԱՄՆ-ի հետ համագործակցության: Ինչպես նշում է Ե.Մ.Պրիմակովը. «Արդարացնելով իրենց կուրսը Ժնևի կոնֆերանսում՝ ամերիկյան պաշտոնատար անձինք ասում էին, թե այն ժամանակ պայմաններ չկային և ընդհանրապես պայմաններ չկան Մերձավոր Արևելքում համապարփակ կարգավորման համար: Այդ պատճառով էլ հարկ եղավ ընթանալ մասնակի լուծումների ուղիով: Այդ ուղու կողմնակիցները մեղադրում էին ԽՍՀՄ-ին, որ նա զանց է առնում ըստ էության միջոցառումները»: [1, էջ 82]

1973թ. դեկտեմբերի 21-ին համաձայնություն ձեռք բերվեց, իսկ 1974թ. հունվարի 11-18-ը, Կահիրե-Սուեզ խճուղու 101-րդ կմ-ի վրա ստորագրվեց զորքերի տարաբաժանման վերաբերյալ իսրայելա-եգիպտական համաձայնագիրը: Ժնևում ստորագրվեց նմանատիպ համաձայնագիր՝ սիրիական և իսրայելական զորքերի տարաբաժանման վերաբերյալ: Սիրիային վերադարձվեց Գոլանյան բարձունքների մի մասը՝ Կունեյտրան, այն պայմանով, որ այստեղ ստեղծվի ապառազմականացված գոտի և տեղակայվեն ՄԱԿ-ի զինված ուժեր:

1975թ. սեպտեմբերի 1-ին Ժնևում սկսվեց նոր կոնֆերանս, իսկ սեպտեմբերի 4-ին Եգիպտոսը և Իսրայելը ստորագրեցին Սինայի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իսրայելական զորքերի հետքաշում, Միլթա և Գիդի լեռնանցքների անցում Եգիպտոսին: Եգիպտոսը իրեն վերադարձրեց Սինայի 10%-ը: Իսրայելի ռազմական նավերը ստանում էին Սուեզի ջրանցքով ազատ երթևեկության իրավունք: 2-րդ փաստաթղթով ԱՄՆ-ը պարտավորվում էր հասնել Եգիպտոսի կողմից համաձայնագրի անխախտ կատարմանը և արգելել նրա մասնակցությունը Իսրայելի դեմ ուղղված գործընթացներին: [4, c. 194]

Սինայի համաձայնագրի ստորագրումից հետո ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ նկատվեցին փոփոխություններ: «Քարտերը և պետքարտուղար Ս. Վենսը եկել էին այն համոզման, որ քայլ առ քայլ լուծումը սպառել է իրեն և ժամանակն է փնտրել համապարփակ կարգավորման ուղիներ»: [2, c. 159] ԱՄՆ-ի մոտեցման այս միտումները պայմանավորված էին հետևյալ գործոններով.

1. Նախ հարկավոր էր պահպանել սերտ հարաբերությունները արաբական պահպանողական վարչակարգերի հետ:

2. Հաշվի առնելով «նավթային էմբարգոյի» դառը փորձը՝ խուսափել դրա կրկնումից:

3. Հարկ էր հաշվի նստել այն փաստի հետ, որ պաղեստինյան հիմնախնդիրը ևս կարիք ուներ որոշակի առաջխաղացման:

4. ԱՄՆ-ը հասկանում էր, որ առանց ԽՍՀՄ-ի մասնակցության հնարավոր չէր Մերձավոր Արևելքում հասնել լուրջ կարգավորման:

Հոկտեմբերի 1-ին հրապարակվեց Մերձավոր Արևելքի վերաբերյալ խորհրդա-ամերիկյան համատեղ հայտարարություն՝ անհապաղ և համապարփակ լուծումով կարգավորել արաբա-իսրայելական հակամարտությունը, իսրայելական զորքերի դուրս բերել 1967թ. գրավված տարածքներից և ապահովել արաբ բնակչության օրինական իրավունքները: Ժնևյան կոնֆերանսին պետք է մասնակցեին բոլոր շահագրգիռ կողմերը՝ այդ թվում, նաև պաղեստինյան կողմը: Թվում էր, թե ԱՄՆ-ը վերադառնում է ԽՍՀՄ-ի հետ համագործակցության դիրքեր, սակայն Մերձավոր Արևելքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք «թաղեցին» խորհրդա-ամերիկյան համատեղ հայտարարությունը:

Իսրայելում 1977թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ հաղթանակած «Լիկիուդ» դաշինքը՝ Մ.Բեգինի գլխավորությամբ հանդես էր գալիս պաղեստինյան հարցի կապակցությամբ չափազանց կոշտ դիրքորոշումով: 1977թ. հուլիսին Բեգինը հանդիպեց Քարտերի հետ և երաշխիքներ ստացավ, որ Քարտերը այլևս չի խոսի իսրայելական զորքերի դուրսբերման և ինչ-որ «պաղեստինյան հայրենիքի մասին»: Բեգինը հրաժարվեց գրավված տարածքներում հրեական նոր բնակավայրերի կառուցումը սառեցնելու առաջարկից: Բեգինը և նրա առջնորդած «Հերուտ» կուսակցությունը առաջնորդվում էին «Մեծ Իսրայել» ստեղծելու գաղափարով: Նրանք ՄԱԿ-ի ԳԱ 181-րդ բանաձևը անվանում էին որոշում արևմտյան Պաղեստինի բաժանման մասին: Արտգործնախարար Դայանը պահանջում էր շրջանառությունից հանել «պաղեստինյան հայրենիք» արտահայտությունը և բացառել որևէ կերպ ՊԱԿ-ի ներկայացուցչի մասնակցությունը Ժնևի կոնֆերանսին: Հրապարակվեց իսրայելա-ամերիկյան համատեղ հայտարարություն: Ըստ ԱՄՆ-ի ազգային անվտանգության հարցերով նախագահի խորհրդական ԲԺեգինսկու, այդ հայտարարությունն էլ իր հերթին վրդովեցրեց արաբներին:

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հաջորդ գործոնը, Եգիպտոսի նախագահ Սադաթի նամակն էր Քարտերին. «որտեղ ասվում էր, որ ոչինչ չպետք է խանգարի Եգիպտոսի և Իսրայելի միջև ուղղակի բանակցություններին»: Եվ վերջապես ամենակարևոր գործոնը, որը ստիպեց ԱՄՆ-ին սահել հարցի կարգավորման սեպարատ դիրքեր՝ 70-ական թթ. վերջերին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ միջազգային լարվածության թուլացման կուրսից ԱՄՆ-ի հեռանալու միտումն էր: Դա պետք է արտացոլվեր նաև մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Վերը նշված գործոնները նպաստում էին, որպեսզի ԱՄՆ-ը ամեն կերպ աջակցեր պաղեստինյան խնդրի սեպարատ կարգավորմանը՝ իր «դրոշի ներքո» և նվազագույնի հասցնեի ԽՍՀՄ-ի մասնակցությունը այդ գործընթացին: ԱՄՆ-ի պետքարտուղար Վենսը Եգիպտոսին ներկայացրել էր պաղեստինյան հարցի վերաբերյալ իր սեփական ծրագրերը՝ հանրաքվեի անցկացում արևմտյան ափի և Ղազայի վերջնական ապագան որոշելու համար, որևէ խոսք չկար ՊԱԿ-ի և գրավված տարածքներից իսրայելական զորքերի դուրսբերման մասին: Անցման շրջանում արևմտյան ափում պետք է հաստատվեր համատեղ իսրայելա-հորդանանյան կառավարում: Իսրայելի որոշ ազդեցիկ քաղաքական գործիչներ՝ Ի.Ալոնը, Շ.Պերեսը և այլն, կողմ էին Հորդանանի հետ հարաբերություններ հաստատելու միջոցով մշտական խաղաղություն սահմանել արևմտյան ափի վրա, բայց ոչ դրանց ուղղակի անքսիայի ձևով:

ԱՄՆ-ը ուզում էր ցույց տալ, որ սեպարատ բանակցությունները ոչ թե իր, այլ Իսրայելի և Եգիպտոսի նպատակն են: Նոյեմբերի 19-ին Սադաթը ուղևորվեց Երուսաղեմ և ելույթ ունեցավ Քնեսետում: Պահպանելով ձևական կողմը՝ ԱՄՆ-ը դեռ խոսում էր Ժնևի կոնֆերանսի մասին,բայց միաժամանակ առաջ էր քաշում «համակենտրոն շրջանագծերի» տեսությունը՝ կարգավորել Իսրայելի հարաբերությունները նախ Եգիպտոսի, ապա Հորդանանի և պաղեստինցիների, իսկ վերջում՝ Սիրիայի հետ: 1978թ. մարտին Վաշինգտոնում տեղի ունեցած Բեզին-Քարտեր հանդիպման ժամանակ,ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ Իսրայելի պահանջները հանգում են «6 ոչերի».

1. Իսրայելը չի ցանկանում հեռանալ արևմտյան ափից: 2. Չի դադարեցվում հրեական նոր բնակավայրերի կառուցումը գրավված տարածքներում: 3.Իսրայելը չի հեռանա Սինայից կամ 4.չի թողնի ՄԱԿ-ի

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ու Եգիպտոսի հովանու տակ: 5. Իսրայելի չի ընդունում, որ 242-րդ բանաձևը վերաբերում է արևմտյան ափին ու Ղազային: 6. Պաղեստինից արաբներին հնարավորություն չի տրվի որոշելու իրենց ապագան:

1978թ. սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ում, Քեմփ-Դևիդում Իսրայելի և Եգիպտոսի միջև սկսվեցին բանակցություններ, որոնք տևեցին 13 օր: Բեգինի նպատակն այն էր, որ հաշտության միջոցով արաբական երկրների միացյալ ճակատից դուրս բերել ամենահզոր արաբական երկրին: Սադաթը իր հերթին հույս ուներ ստանալ Սինայի թերակղզին և պատրաստ էր աչք փակել արևմտյան ափի և Ղազայի հարցում Իսրայելի հավակնությունների վրա: Բայց Սադաթին պետք էր որևէ կերպ քողարկել այդ ամենը: Քարտերը մի կողմից նա համոզում էր Սադաթին, որ հաշտությունը հետ կբերի Սինան, իսկ մյուս կողմից համոզում էր Բեգինին, որ հաշտությունը կմեծացնի Իսրայելի ապահովությունը: Գլխավոր խոչընդոտը բանակցությունների ժամանակ արևմտյան ափի և Ղազայի ապագայի հարցն էր: Սեպտեմբերի 13-ին Քարտերի առաջարկով 242-րդ բանաձևից որոշվեց հանել «պատերազմի միջոցով տարածքներ գրավելու անթույլատրելիություն» արտահայտությունը: 242-րդ բանաձևի տեքստը պարզապես կցվեց «Մերձավոր Արևելքում հաշտության պայմանագիր կնքելու շրջանակներ» փաստաթղթին: [5] Սա ճանապարհ հարթեց II փաստաթղթի համար, որը կոչվեց «Եգիպտոսի և Իսրայելի միջև հաշտության պայմանագիր կնքելու շրջանակներ»: [5] Երեք երկրների ղեկավարների նամակները, որպես պաշտոնական փաստաթղթեր կցվեցին այդ շրջանակներին: Քարտերի նամակում ասվում էր «Ամեն մի պարբերությունում, որտեղ հղվվում է արևմտյան ափ արտահայտությունը, Իսրայելի կառավարության կողմից պետք է և կարող է մեկնաբանվել որպես Հուդա և Սամարիա»: Շահարկելով Իրանում տեղի ունեցող դեպքերը, հակաշահական շարժումը անհանգստացնում էր նաև Սադաթին, 3 օրվա ընթացքում Վենսըր հասավ նրան, որ Սադաթը հրաժարվեց արևմտյան ափում ընտրությունների կոնկրետ ժամկետ նշանակելու իր պահանջից, բայց առաջ քաշեց նոր պահանջ. «ինքնավարություն մտցնել նախ Ղազայում»: Իրանական խաղաքարտի գործարկումը տվեց իր արդյունքները: 1979թ. մարտի 26-ին Վաշինգտոնում ստորագրվեց խաղաղության պայմանագիր Եգիպտոսի և Իսրայելի

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

միջև, որը ուժի մեջ մտավ 1979թ-ի դեկտեմբերի 25-ին: Ըստ պայմանագրի՝

1. Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատվում է խաղաղություն:
2. Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ:
3. Իսրայելական զորքերը դուրս են բերվում Սինայից:
4. Ճանաչվում է Եգիպտոսի սուվերենությունը այն սահմաններում «որը եղել է Եգիպտոսի և Պաղեստինի մանդատային տարածքի սահման:

5. Իսրայելական նավերը ազատ երթևեկելու են Սուեզի ջրանցքի շրջանում: Աքաբայի ծովածոցը համարվում է ազատ նավագնացության գոտի:

6. Եգիպտական կառավարությունը իրավունք ունի մեկ դիվիզիա ունենալ Սուեզից 50կմ արևելք:

7. Աքաբայի ծոցից արևմուտք գտնվող 20-40 կմ տարածք գտնվելու է ՄԱԿ-ի ուժերի հսկողության տակ:

8. Իսրայելական զորքերը չեն հեռանա արևմտյան ափից և Ղազայից, այլ կտեղաբաշխվեն անվտանգության գոտիներում:

9. Այդ տարածքներում պետք է ապահովվի ոչ թե տարածքային, այլ բնակչության ինքնավարություն:

Նշենք, որ այս վերջին կետը նշված էր ոչ թե պայմանագրի տեքստում, այլ Սադաթի և Բեգինի՝ Քարտերին ուղղված համատեղ նամակում: Ինչ խոսք պայմանագիրը ամերիկյան դիվանագիտության խոշոր հաղթանակն էր, բայց ոչ հարցի վերջնական լուծումը:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ.

1. Քեմփ-Դևիդի համաձայնագիրը պառակտեց արաբական աշխարհը և Սիրիան, Լիբանանը, Ալժիրը, Իրաքը, Եմենը և ՊԱԿ-ը հայտարարեցին, որ այն անօրինական է և խզեցին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ,

2. 1978թ. ապրիլյան հեղափոխությունը Աֆղանստանում և 1979թ. Իրանական հեղափոխությունը ստիպեցին ԱՄՆ-ին Քեմփ-Դևիդի համաձայնագրի հիման վրա հաստատվել ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Սինայի թերակղզում և արդեն 1980թ. Անցկացնել ամերիկա-եգիպտական համատեղ զորավարություններ,

3. Քենսի-Դևիդի համաձայնագիրը, բացի վերոհիշյալից, ԱՄՆ-ին հնարավորություն տվեց՝ խուսափելով համապարփակ կարգավորումից և պահելով լարվածությունը Մերձավոր Արևելքում, պահպանել ազդեցությունը իր եվրոպական դաշնակիցների և Ճապոնիայի վրա, որոնք մեծապես կախված էին մերձավորարևելյան նավթից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն՝ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թթ և 80-ական թթ սկզբներին, Երևան, «Հայաստան» հրատ., 1987: 400 էջ:
2. Овинников Р., Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана, изд. политической литературы, Москва, 1986. 400 с.
3. Васильев А., Россия на Ближнем и Среднем Востоке, от мессианства к прагматизму, Наука, изд. фирма “Восточная литература”, Москва, 1993, 373 с.
4. Кременюк В., Политика США в развивающихся странах, проблемы конфликтных ситуаций, АН СССР, Институт Канады и США, изд. "Международные отношения", Москва, 1977. 219 с.
5. Framework For The Conclusion of a Peace Treaty Between Egypt and Israel, Camp David, 17.09.1978-
https://www.mfa.gov.eg/Lists/Treaties/Attachments/2278/Peace%20Treaty_en.pdf

СОГЛАШЕНИЕ КЕМП-ДЭВИДА КАК ПЕРВЫЙ ЭТАП РАЗРЕШЕНИЯ АРАБСКОГО ИЗРАИЛЬСКОГО КОНФЛИКТА

Артак Оганнисян

Филиал ЕУ в г. Гюмри, к.и.н., доцент

После арабо-израильской войны 1973г. ряд обстоятельств способствовал началу переговоров по урегулированию конфликта. 11-18 января 1974 г. было подписано Израильско-египетское соглашение о разделении войск. 1 сентября 1975 года в Женеве была начата конференция, а 4 сентября Египет и Израиль подписали соглашение.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Усилия США были направлены на египетско-израильское сепаратистское примирение, в результате которого начались переговоры в Кемп-Дэвиде. Мирный договор был подписан в Вашингтоне 26 марта, который вступил в силу 25 декабря 1979 года.

Ключевые слова: Кемп-Дэвид, Нефтяной эмбарго, Картер, Бегин, Женевская конференция, Суэцкий канал

THE CEMP-DAVID AGREEMENT AS THE FIRST STAGE TO SOLVE THE ARAB- ISRAELIC CONFLICT

Artak Hovhannisyan

EU, Gyumri Branch, PhD in History, Associate Professor

After the Arab-Israeli war of 1973, a number of circumstances contributed to the start of negotiations on the conflict settlement. On January 11-18, 1974, the Israeli-Egyptian agreement on the division of troops was signed. September 1, 1975 in Geneva, a conference started, and on September 4, Egypt and Israel signed an agreement. The US efforts were directed to the Egyptian-Israeli separatist reconciliation, which resulted in negotiation launch at Camp David. The peace treaty was signed in Washington on March 26, which entered into force on December 25, 1979.

Keywords: Camp-David, Oil Embargo, Carter, Begin, Geneva Conference, Suez Canal

Ընդունվել է պաշարության՝ 21.03.2019թ.

Գրախոսվել է՝ 10.04.2019թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԴԻԱՆ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑ

Ռոման Մելիքյան

ԵՀ, Միջազգային հարաբերությունների ամբիոն, ք.գ.թ.
romson2010@gmail.com, +374 94 441919

Տեղեկատվական դարաշրջանի զարգացման արդի փուլում, երբ ժողովրդավարական բարեփոխումները կրում են բավականին բարդ բնույթ, հատկապես՝ կերպարավորող հասարակությունների համար, որտեղ գերակայում են տրոհված և անհավասարաչափ տեղեկատվական հոսքերը և ապատեղեկատվության սպառնալիքների բավականին մեծ վրանգը, առավելագույնս կարևորվում է տեղեկատվական համակարգի կայացման ու անվտանգության հիմնախնդիրը հասարակության ժողովրդավարական համախմբման կայացման գործում: Արդյունքում՝ տեղեկատվական տարածության և նոր տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա էապես մեծանում է՝ զգալիորեն գերազանցելով իր տեսական գիտակցության գործընթացը: Այդ իմաստով՝ հատուկ կարևորություն են ստանում, հատկապես՝ միջազգային մեդիայի խաղացողները, որոնք իրապես առաջնահերթային դերակատարում ունեն ժողովրդավարության որակի կայացման և ժողովրդավարության բարձրացման գործում: Հենց այդ համատեքստում մեծ կարևորություն ունի նաև Հայաստանի կյանքում միջազգային մեդիայի մասնակցությունն ու գործունեությունը: Ներկայացվող խնդրի բազմաչափությամբ էլ պայմանավորված՝ սույն աշխատանքի շրջանակներում առաջ են քաշվում և դիտարկվում են միջազգային մեդիայի խնդիրները ժամանակակից աշխարհում՝ հիմնվելով դրանց տեսագործնական դրույթների ուսումնասիրությունների հիմնավորումների և վերլուծությունների վրա՝ փորձելով համեմատականներ անցկացնել հայաստանյան իրականության օրինաչափությունների և դրանց պարզաբանումների հետ:

Հիմնաբառեր. Միջազգային մեդիա, ժողովրդավարություն, Հայաստան, Տեղեկատվական անվտանգություն, ժողովրդավարական համախմբում, ՀԼՄ:

Տեղեկատվական հեղափոխության հետևանքով միջազգային մեդիայի ստեղծումն ու օգտագործումը փաստորեն աննախադեպ չափերի մեծ առաջընթաց են արձանագրել հատկապես վերջին տասնյամյակում: Այսօր առավել արդիական են դառնում քաղաքական և միջազգային կառավարման այնպիսի քաղաքացիական ինստիտուտների դինամիկ գործընթացներ, ինչպիսին մեդիոկրատիան է, որը տարեցտարի մեծացնում է իր հնարավորություններն ու զարգացման տեմպերը, որի արդյունքում այնպիսի միջազգային մեդիահսկաներ, ինչպիսին CNN, BBC, RT, CNBC, Al Jazeera և այլն, կարող են ոչ միայն ներազդեցություն ունենալ գլոբալ ժողովրդավարացման գործընթացների վրա, այլ նաև որոշակիորեն դերակատարություն ունենալ կերպափոխվող երկրներում՝ հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ փոխակերպվող իրավիճակներում: Սակայն տեղեկատվական հոսքերի ավելացող ծավալները և անվերահսկելիությունը մեծացրել են հնարավորությունը՝ «պատվիրատուին» անհրաժեշտ ամենակարևոր հարցերում ներգործելու հասարակության գիտակցության և հասարակական կարծիքի ձևավորման վրա՝ հետապնդելով քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական որոշակի նպատակներ: Տվյալ համատեքստում հատկապես հրատապ է դառնում վերանայումն այնպիսի հասկացության, ինչպիսին «միջազգային մեդիայի ազդեցությունն է ժողովրդավարության վրա», որը թե՛ անհատական, թե՛ հասարակական գիտակցության վրա ներազդելու հիմնական մեխանիզմներից է: Վերջին տարիներին միջազգային հարաբերությունների ոլորտում կարելի է տարաբնույթ հետազոտողների մտահոգությունների ականատես լինել առ այն, որ ՉԼՄ-ներն իրենց հնարավորություններն այնքան են ընդլայնել, որ կարող են ներգործել անգամ գերտերությունների դիվանագիտության և արտաքին քաղաքականության վրա: Այն նաև վերաբերվում է ժամանակակից աշխարհի ամենաթռիչքային զարգացում ունեցող ճյուղերից մեկին՝ համացանցային մեդիային, որը ժողովրդավարության որակապես նոր զարգացման առանցքային հրամայականով է հանդես գալիս {6, էջ 196-204}: Մեծ հաշվով իրական ժամանակում աշխատող այս նոր համընդգրկուն ՉԼՄ-ների ազդեցությունը շատ էական է, եթե ոչ պարտադրող: Մեծապես լրագրողները, քաղաքական գործիչները և գիտնականները ՉԼՄ-ների ներգործությունն արտաքին կամ ներքին քաղաքականության վրա հիմ-

նականում գնահատում են որպես պարտադրող: Համաձայն ՁԼՄ-ների, PR-ի և միջազգային հարաբերությունների մասնագետ Սթիվեն Լիվինգսթոնի՝ ժողովրդավարության վրա միջազգային մեդիայի ներազդեցության տեսակետից կարելի է շեշտադրել երեք կետ. 1) քաղաքական օրակարգի հաստատման մեխանիզմը, 2) ցանկալի քաղաքական նպատակին հասնելուն խոչընդոտելը, 3) քաղաքական որոշումների կայացումն արագացնելը {1}: Առաջին կետի էությունն այն է, որ լրատվամիջոցներն իրենք կարող են թելադրել պետությունների արտաքին և ներքին գործերի գերատեսչություններին և քաղաքականություն իրականացնող անձանց, որոնց գործունեությունը կարևորել են, իրագործելու որևէ նպատակ, որը չի բխում այդ երկրի ազգային շահերից (որի պաշտպանն ու խթանողը պետք է լինեն դիվանագետներն ու քաղաքական գործիչները), այլ ձևավորվել է որևէ լրատվամիջոցի ազդեցությամբ: Սա բավական հակասական կետ է, որի վրա կանգ կառնենք ստորև: Մյուս կետը ներկայացնում է քաղաքականության և որոշումների ընդունման վրա ՁԼՄ-ների արագացնող ներգործությունը: Եթե առաջ քաղաքական գործիչների համար բավարար ժամանակ կար ծանրակշիռ որոշումների հանգելու և դրանք ընդունելու համար, ապա այսօր տեղեկատվության հասանելիությունը նրանց հարկադրում է տեղի ունեցող իրադարձություններին արձագանքել ամենակարճ ժամկետում: ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Ա. Բեյքերը միջազգային մեդիայի գործոնի՝ իբրև ժողովրդավարացման խթանման կարևորագույն միջոցի վերաբերյալ հետևյալն է նշում. «Ինչ է անում այդ ներգործությունը՝ այն քաղաքական գործիչներին հարկադրում է քաղաքական դիրքորոշում ընդունել: Ես պետք է դա շատ արագ ձևակերպեմ, քանի որ իրական ժամանակի մեջ եմ: Դու ծանրութեթև անելու ժամանակ չունես: Բացի դրանից, Քո առջև ստեղծված են բոլոր հնարավորություններն այդ որոշումները կայացնելու համար, իսկ դա ժողովրդավարության դրևստրման հիանալի մոտեցում է» {2}: Ինչ վերաբերում է միջազգային մեդիայի բացասական գործոնին, կարելի է դրա դրևստրման երկու ձև առանձնացնել: Դրանցից առաջինը երկրների և հասարակությունների ներքին և արտաքին զանգվածների վրա հուզական ազդեցություն է թողնում՝ թե ակնհայտ, թե թաքնված: Երկրորդն առնչվում է գաղտնի տեղեկատվությանը, հաճախ՝ ռազմական նշանակության: Երկու բաղադրիչներն էլ մեծ վտանգ են պարու-

նակում, սակայն դրանք լիովին մրցակցություն ստեղծող և օրակարգ ձևակերպող սկզբունքային գործիքներ են: Առաջինը տեղեկատվական-հոգեբանական ազդեցության մեխանիզմ է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Մյուս կողմից, միջազգային մեդիայի համար տեղեկատվության բաց լինելը և իրական ժամանակում աշխատելը կարող են խնդիրներ առաջացնել: Դա հնարավոր է, օրինակ, հակասահաբեկչական գործողություն իրականացնելու ընթացքում, երբ օպերատիվ տվյալների բացահայտումը կարող է ձախողել ամբողջ գործողությունը: Այս հարցում առավել արմատական է այն հետազոտողների դիրքորոշումը, ովքեր ենթադրում են, թե արտաքին քաղաքականությունը կամ որոշակի դիվանագիտական քայլերը ամբողջությամբ միջազգային մեդիայի ազդեցությունից են բխում: Այսպես, ըստ Ջ. Բեյքերի, միջազգային մեդիան է հանգեցրել եզրակացության, թե նախկին Հարավսլավիայի անկումը և Բալկանների պատերազմը ճգնաժամ էին: «Եվ հեռուստատեսությամբ անընդհատ դա էին լուսաբանում՝ դրանով Քլինթոնի վարչակազմին հարկադրելով դիմել որոշակի քայլերի: Նման բան (հեռուստատեսության ուշադրությունը), սակայն, չի եղել Ռուանդայում, որտեղ իրավիճակը շատ ավելի ծանր էր, քան Բալկաններում» {3}: Ջ. Բեյքերը դրանից եզրակացնում է, թե արտաքին քաղաքականության շարժիչ ուժերը չպետք է միջազգային ՋԼՄ-ներին ընդառաջ գնան: Թեև նման մոտեցումն առավել քան ակնհայտ է թվում, այդուհանդերձ, այդտեղ շատ հակասություններ կան: Այսպես, Բուշի վարչակազմից մի պաշտոնյա՝ Անդրյու Նացիոսը, որ գլխավորում էր Սոմալիին օգնություն ցուցաբերելու գործողությունը, վիճարկում է ԱՄՆ-ի արտասահմանյան գործողությունների վրա միջազգային մեդիայի ազդեցությունը ժողովրդավարության տարածման և հաստատման ուղղությամբ: Նա այն կարծիքին է, որ միջազգային մեդիային՝ ի դեմս CNN-ին և դրա ազդեցությանը, շատ ավելի է ուշադրություն հատկացվում, քան այն արժանի է՝ որպես բացատրություն այնպիսի երևույթների, որոնք բխում են Վաշինգտոնի կողմից իրականացրած քաղաքականության գործընթացներից՝ միտված «գլոբալ ժողովրդավարացմանը»: Նույն Լիվինգսթոնը հաստատում է, թե չնայած նրան, որ Սոմալիի և Աֆղանստանի բնակիչներին շատ մեծ վտանգ էր սպառնում, այդուհանդերձ այդ երկու պետությունների վերաբերյալ ռեպորտաժները Բոսնիայի մասին հաղորդածների միայն 12 տոկոսին են

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հասնում: Ակնհայտ է դառնում, որ միջազգային մեդիան բնակչության զանգվածային գիտակցությունը նախապատրաստում է որոշակի քաղաքական գործողության՝ նպատակ ունենալով հասարակության մեջ և տարբեր երկրների հասարակություններում չհարուցել դիմադրություն, առավել ևս՝ տագնապ: Սրա առնչությամբ ուշագրավ է ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Հիլարի Բլինթոնի հայտարարությունը Սենատի միջազգային գործերի հանձնաժողովի լուսմների ժամանակ, որտեղ նա խորհրդարանականներին պարզաբանում էր 2012թ. համար Պետքարտուղարությանը 47 մլրդ դոլարի գումար հատկացնելու անհրաժեշտությունը: Ըստ Բլինթոնի՝ համաշխարհային կարծիքի կարևորագույն պատերազմն ԱՄՆ-ն տանուլ է տալիս, և ՉԼՄ-ներն առաջվա պես դիվանագիտության համար հզոր ուժ են, հատկապես, որ դրանք մեծ առաքելություն են իրականացնում գլոբալ ժողովրդավարացման գործում: Հատկանշական է, որ միջազգային մամուլն էլ ունի իր մրցակցությունը՝ որքան էլ այն սուբյեկտիվ լինի և որքան էլ այն բխի սույն երկրի ազգային շահերից: Եվ հաստատական է, որ հենց նման մրցակցությունն էլ կարող է նպաստել զարգացող և զարգացած երկրներում ժողովրդավարության բարձրացմանն ու զարգացմանը: Ռուս հեղինակ Ի.Ա. Նիկոլայչուկի դիտարկմամբ՝ միջազգային մեդիայի ժողովրդավարության բարելավման հաստատման համատեքստում արդար մրցակցային պայմաններում հիմնական հաջողության իրական գրավականը ճիշտ մեդիահաշվարկների և մեդիաչափողականության մշակույթի տիրապետումն է, որին հնարավոր է հասնել նույնիսկ ոչ այդքան մեծ ֆինանսական ռեսուրսների պայմաններում [5, c.165-168]: Սակայն հարկ է նաև նշել, որ լրատվության ոլորտում ծախսերի կրճատումը հարկադրում է ծանր գին վճարել, երբ կրճատվում է, օրինակ, BBC-ի հեռարձակումը, բայց զուգահեռաբար ընդարձակվում են ռուսական ու չինական տեղեկատվական ալիքները: Այս համատեքստում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի լրատվամիջոցներ, ինչպիսին Al Jazeera է կամ լատինամերիկյան TeleSUR ալիքը: Այս վերջինը կոչված է տարածաշրջանում դառնալու CNN և BBC հակակշիռը: Իր հերթին Al Jazeera պատկանում է Քաթարի իշխող ընտանիքին և աջակցում է արմատական իսլամին: Հ. Բլինթոնը նախազգուշացրել է, թե ԱՄՆ-ն համաշխարհային ազդեցության համընդհանուր մրցավազքը տանուլ է տալիս: Կասկածելով ամերիկյան ՉԼՄ-ների ազ-

դեցությունը նվազելու մասին պետքարտուղարի խոսքերին, ինչը նաև ՆԱՏՕ-ի երկրների լրատվամիջոցներին է վերաբերում, այդուհանդերձ հարկավոր է նշել, որ նրա խոսքերը հաստատում են միջազգային մեդիայի ժողովրդավարության բարձրացմանը նպաստող երկրորդ դրույթը, այն է՝ ոչ թե քաղաքականությունն է լրատվության հետևից գնում, այլ ընդհակառակը, միջազգային հարաբերությունների որոշակի գործող անձանց համար ՁԼՄ-ներն են դառնում աշխարհաքաղաքական, տնտեսական և այլ տեսակի շահերի խթանողը: Այս համատեքստում հատկապես կարևոր է նոր ՁԼՄ-ների դերը: Դրանք մի կողմից հնարավորություն են ընձեռում մեծացնելու ազդեցության չափը, քանի որ ոչ մի հեռուստաալիք կամ ռադիոալիք, ինչպես նաև պարբերական, չեն կարող հավակնել գրավելու այնքան ընդարձակ լսարան, ինչքան որ այսօր ապահովում են միջազգային մեդիա աշխարհի գերակտիվները՝ սոցիալական ցանցերը՝ ի դեմս «Ֆեյսբուք»-ի կամ «Թուիթեր»-ի, թեպետ առանց իրենց էլ, միջազգային հեռուստատեսության բազմազանությունն ու բազմաքանակությունն արդեն իսկ խոսում են ժողովրդավարության մակարդակի բարձրացման մասին: Մյուս կողմից էլ՝ բազմապատիկ մեծանում է տեղեկատվության չափազանցվածությունը, քանի որ դրա տարածման համար միջոցներ կան, իսկ արգելափակելն անհնարին է գլոբալ ժողովրդավարացման պայմաններում: Այդ համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի տեղեկատվական դաշտում առկա են արտաքին քաղաքական խաղացողների, ինչպիսիք են ԱՄՆ և ՌԴ կառավարությունները, ֆինանսավորմամբ գործող հեռուստարձկերությունների և ռադիոընկերությունների մասնակցությունը, ինչպես նաև որոշ չափով առցանց տեղեկատվական կայքերի գործունեությունը {4}: Այդ առումով, կարելի է հաստատել, որ միջազգային մեդիայի խոշոր խաղացողների մասնակցությունը մեր ինֆոհամակարգում, մի կողմից, միջազգային հարթակներում կարող է հավաստիացնել ՀՀ ժողովրդավարացման գործընթացին հավատարիմ լինելու և իրապես քաղաքացիական հասարակության կերտման մասին, մյուս կողմից՝ ոլորտում իրական մրցակցային պայմաններ ստեղծելով՝ կարող է լայն հնարավորություններ տալ բարձրացնելու ժողովրդավարության որակն ու մակարդակը: Այդ ամենը հատկանշական է նաև նրանով, որ, վաղուց աշխարհում ՁԼՄ գործունեությունը չի սահմանափակվում տվյալ երկրների սահմաններով, մա-

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

լուխային, արբանյակային և համացանցային հեռարձակման միջոցներով տեղեկատվական հոսքերը գլոբալացվում են, իսկ լսարանները՝ ձեռք բերում ինքնուրույն դատելու և գործելու այլընտրանքային լայն հնարավորություն՝ առաջ մղելով ժողովրդավարական սկզբունքներն ու արժեքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Livingston S., Clarifying the CNN Effect: An Examination of Media Effects According to Type of Military, 1997, <http://www.genocide-watch.org/images/1997ClarifyingtheCNNEffect-Livingston.pdf> (19.02.2019).
2. The Honorable James A. Baker, III, in the Media. - <http://www.bakerinstitute.org/news/the-honorable-james-a-baker-iii-in-the-media/> (19.02.2019).
3. James A. Baker. Rule of Law in World Affairs. <http://www.bakerinstitute.org/news/the-rule-of-law-in-world-affairs/> (23.02.2019).
4. Ժամակոչյան Ա. ՋԼՄ բնութագիրը Հայաստանում. Լրատվամիջոցների ազատության խնդիրը. «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (46), 2012թ.
5. Николайчук И.А. Политическая Медиаметрия. Зарубежные СМИ и безопасность России: Моногр./И.А. Николайчук; Рос. Ин-т стратег. исслед.. – М.: РИСИ, 2015.
6. Մելիքյան Ռ.Ս., Համացանցային մեդիայի դերը Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման գործում: ՎԷՄ, համահայկական հանդես: Ե(ԺԱ) տարի, 2013, թիվ 2(42), ապրիլ-հունիս:

МЕЖДУНАРОДНЫЕ МЕДИА КАК СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ ДЕМОКРАТИИ

Роман Меликян

ЕУ, кафедра Международных отношений, к. п. н.

На нынешнем этапе развития информационной эпохи, когда демократические реформы носят довольно сложный характер, осо-

бенно для трансформационных обществ, где доминирует крайне высокая степень раздробленности и неравенства информационных потоков и угроз дезинформации, наиболее важным является вопрос создания и обеспечения безопасности информационной системы при становлении демократической консолидации социума. В результате этого влияние информационного пространства и новых телекоммуникационных технологий на общество преимущественно возрастает, значительно превышая над его теоретическом сознанием. В этом смысле особое значение придается международным медиа-игрокам, которые играют приоритетную роль в продвижении качества демократии и повышения ее уровня. Именно в этом контексте большое значение имеет участие и функционирование международных СМИ также в Армении. Ввиду многомерности существующей проблемы, в контексте данной работы поднимаются и рассматриваются проблемы международных СМИ в современном мире, основываясь на аргументациях и анализе их теоретико-прикладных установок, пытаюсь проводить сравнения с армянской действительностью и их интерпретациями.

Ключевые слова: Международные Медиа, Демократия, Армения, Информационная безопасность, Демократическая консолидация, СМИ.

INTERNATIONAL MEDIA AS A MEANS TO INCREASE DEMOCRACY

Roman Melikyan

EU, Chair of International Relations, Ph.D in Politics

At the current stage of information age development, when democratic reforms are quite complex, especially for transformational societies, where extremely high degree of fragmentation and inequality of information flows and threats of disinformation dominates, creation and maintenance of information system security is highly important in the process of democratic consolidation. As a result, the influence of the information space and new telecommunication technologies on society predominantly increases, significantly exceeding its theoretical

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

consciousness. In this sense, special importance is given to international media players, who play a central role in promoting the quality of democracy and raising its level. In this context participation and functioning of international media in Armenia is very important. Due to multidimensionality of the existing problem, in the context of this work, the issues of international media are raised and considered in the modern world, based on the rationale and analysis of their theoretical and practical facilities, trying to make comparisons with Armenian reality and its interpretations.

Keywords: International media, democracy, Armenia, information security, democratic consolidation, mass media.

*Ընդունվել է տպագրության՝ 28.03.2019թ.
Գրախոսվել է՝ 23.04.2019թ.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Լիլիթ Մատինյան

ԵՊՀ, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն, հայցորդ
lilit_matinyan@mail.ru, +374 77382514

Հենրիկ Աբրահամյան

ԵՊՀ, ԵՀ, պ.գ.դ., պրոֆեսոր
+374 77 27 25 88

Հոդվածը նվիրված է մարդկային հասարակության պատմության, նրա զարգացման կարևորագույն հարցերից մեկին՝ իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների վերլուծությանը: Այն հնարավորություն է տալիս հստակ պատկերացում ունենալ այս կամ այն պեպության, ժողովրդի իրավիճակի, կենսագործունեության, վարքի, երկրում գործող օրենքների, դրանց կիրառման և այլ գործառույթների մասին:

Ընդ որում, իշխանություն-ժողովուրդ հարաբերությունները պատմության փոփոխություններում փոփոխություններ են ունեցել. իշխանությունների կողմից ժողովրդի նկատմամբ բռնություններից, ճնշումներից, մարդու իրավունքների ոտնահարումից մինչև այլ կարգի չարաշահումներ և այլն:

Հոդվածում ցույց է տրված, որ իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում ժողովուրդը միշտ էլ պայքարել է իր իրավունքները պաշտպանելու համար և ստիպել իշխանություններին փոխել կառավարման համակարգը, վարել ժողովրդի շահերից բխող քաղաքականություն և ի վերջո՝ կառուցել ժողովրդավարական երկիր:

Հոդվածում նաև կարևորվել է այն գաղափարը, որ ընդհանրապես առաջընթաց և զարգացում են ունենում այն երկրները, որոնք ստեղծում են իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում փոխըմբռնման, փոխհամաձայնության, փոխլրացման և ներդաշնակության մթնոլորտ, որի դեպքում իշխանության թևերից յուրաքանչյուրը գործում է սահմանադրորեն որոշված կանոններով և իր մասնակցությունը բերում երկրի կառավարմանը:

Հոդվածում կարևոր տեղ է տրված հանրապետությունում թավշյա հեղափոխությամբ ստեղծված նոր գործընթացների վերլուծությանը, նրա ձեռքբերումներին և բացթողումներին:

Հիմնաբառեր. Իշխանություն, ժողովուրդ, համագործակցություն, փոխըմբռնում, փոխզիջում, սահմանադրություն, համերաշխություն:

Իշխանություն-ժողովուրդ, հասարակություն հարաբերությունները միշտ էլ կարևոր են յուրաքանչյուր երկրի, պետության զարգացման համար: Եվ որքան այդ հարաբերությունները ամուր են, կայուն, այնքան երկիրը հաջողություններ և առաջընթաց կարող է ունենալ: Համաշխարհային պատմության ընթացքը դրա վկայությունն է, իսկ այդ փորձի ուսումնասիրումը և դրանից դասեր քաղելը կարևոր է ինչպես բոլոր, առավել ևս մեր օրերի համար, երբ աշխարհը անընդհատ հարափոփոխ վերափոխումների մեջ է ապրում, երբ հնից նորին է անցնում և ավելի կատարելագործվում: Նման դեպքում շահում են այն երկրները, որոնք այդ ամենը կատարում են անցնցում վերափոխումներով:

Բայց նաև ցավոք միշտ չէ, որ այդ անցումը կատարվում է հանգիստ, խաղաղ պայմաններում: Դա կապված է, այլ հանգամանքներից զատ, նաև մարդկանց հասարակական գիտակցության փոփոխության հետ, որը նաև սերունդների փոփոխության հարց է: Ի դեպ ամեն մի սերունդ իր դերն ունի այդ փոփոխություններում, քանզի առանց նախորդի նախապատրաստման, նորը չի կարող առանց հիմքի, դատարկ տեղը իրականացնել այդ վերափոխումները: Եվ որքան սերունդների կապն ամուր է, առողջ, այնքան հնից նորին անցնելը, մեղմ ասած այնքան էլ դժվար չէ, որքան էլ որ դա ժամանակի խնդիր է և պահանջ:

Պատմության տարբեր ժամանակներում դրանք իրականացվել են պատերազմների, հեղափոխությունների և այլ ցնցումների, ընդհարումների միջոցով՝ խլելով հարյուր հազարավոր մարդկային կյանքեր:

Իշխանություն-ժողովուրդ-հասարակություն հարաբերությունների կարևոր սկզբունքներից մեկն այն է, որ իշխանություններն ավելի պահպանողական են քան ժողովուրդը, քանզի իշխանությունները կորցնելու և ժողովրդին պատասխան տալու շատ բան ունեն: Նրանք հեղափոխական են մինչ իշխանության գալը, իսկ գալուց հետո նրանց գլխավոր հոգսը ամեն գնով իշխանությունը պահելն է, որի ընթացքում նրանք դիմում են տարբեր քայլերի, անգամ բռնությունների, ճնշումների, մարդկանց իրավունքները ոտնահարելու, հրապարակավ խոսելը

արգելելու, ձերբակալությունների և այլ միջոցների: Նման դեպքում իշխանությունները մի կողմ են դնում և հաճախ մոռանում ժողովրդի աջակցությամբ իշխանության գալը և այդ ճանապարհին ժողովրդին տված իրենց խոստումները:

Դժվար չէ ենթադրել, որ այդ մեթոդներով կառավարելը, մարդկանց ազատ արտահայտվելու հնարավորություններն ու իրավունքները ոտնահարելը էլ ավելի է մեծացնում իշխանություն-ժողովուրդ-հասարակություն անջրպետը և իշխանափոխության հարցը դարձնում օրակարգի հարց: Այստեղ խնդիրն այն է, թե ինչպես պետք է այն իրականացվի, որը մեծ չափով կախված է՝ նախ տվյալ երկրի ավանդույթներից և հետո նաև նրանից, թե հեղափոխությունը կամ երկրի վերափոխումները իրականացնողները որքանով են ճիշտ գնահատում երկրում ստեղծված վիճակը, մարդկանց տրամադրությունները, որը մեծ արվեստ է, հմտություն, քանզի ամեն մի սխալ, սայթաքում կարող է անցանկալի հետևանքներ ունենալ: Պատմությունը դրա վկայությունն է: Բավական է հիշել, որ հարյուրամյակներ, հազարամյակներ շարունակ միշտ էլ պայքար է ծավալվել իշխանությունների և ժողովրդի միջև, որը միշտ էլ ընդվզել, ապստամբել է իշխանությունների դեմ և ձգտել փոխել իր վիճակը, ապրել արժանապատիվ կյանքով, պաշտպանել իր իրավունքները: Այդ երևույթը միշտ էլ ուղեկցել է մարդկանց անկախ նրանից, թե ինչ համակարգով են նրանք ապրել և ստիպել իշխանություններին կատարել քայլեր, որոնք կոչված են մեղմելու իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում առկա մեծ ու փոքր հակասությունները, տարբերությունները:

Կառավարությունները այդ նպատակով տարբեր ժամանակներում միշտ էլ մշակել են իշխանություն-ժողովուրդ հարաբերությունները կարգավորող տարբեր մեխանիզմներ, կյանքի, ապրելակերպի կանոններ, ընդունել այդ ամենը կարգավորող օրենքներ, ակտեր (հայ իրականության մեջ Դատաստանագրքեր, մեր օրերի Սահմանադրություններ) և այլն:

Հին աշխարհում, առավել ևս Հռոմում այդ հարաբերությունները կարգավորվում էին «Հիմնադիր» իրավական փաստաթղթում, որը դիտվում էր որպես փոխհամաձայնություն միապետական իշխանության և հողատերերի ու առանձին քաղաքների միջև [1, էջ 19]:

Հայ իրականության մեջ իշխանություն-հասարակություն-ժողովուրդ-եկեղեցի հարաբերությունները կարգավորվում, սահմանվում էին տարբեր կարգի ժողովներում՝ եկեղեցական, աշխարհիկ, ազգային, որոնցում ընդունվում էին պետության, երկրի, ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող որոշումներ:

Ներսես Մեծի նախագահությամբ 365թ. Աշտիշատի ժողովի հրավիրումը Հայաստանում դրեց պաշտոնական կանոններ սահմանող ավանդույթի հիմքը: Հետագա դարերի ընթացքում նույնպես հրավիրվեցին նմանատիպ ժողովներ, որոնք կարգ ու կանոն սահմանեցին: Ճիշտ է նկատում այդ հարցերը ուսումնասիրողներից Գագիկ Հարությունյանը՝ դիտարկելով այդ ամենը որպես իրավաստեղծ գործունեության տեսակներ, հարաբերությունների կարգավորում և վարքագծի կանոնների սահմանում [1, էջ 50, 51, 53]:

Հետագա դարերում հայ ժողովուրդը նույնպես ընդունել է նման կարգի այլ որոշումներ: Բավական է հիշել Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստաբլի գրած Դատաստանագրքերը, Շահամիրյանների կազմած «Որոգայթ փառացը» (389 հոդված), որով նախատեսվում էր սահմանել Հայոց տան (օրենսդիր մարմնի) ընտրությունների կարգը (եռամյա ժամկետ), ընտրությունների ձևը, այդ մարմնի իրավունքները և այլն [1, էջ 97-101]:

Սահմանդրություն հիշեցնող վերոհիշյալ փաստաթղթերից յուրաքանչյուրը հետապնդում էր մեկ կարևոր նպատակ՝ կարգավորել պետություն (իշխանություն)-ժողովուրդ-հասարակություն հարաբերությունները, այդ հարաբերություններում յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները: Սակայն հարկ է նշել, որ վերոհիշյալ խնդիրները առավել կարևորություն ստացան, երբ մարդկությունը մուտք գործեց մի նոր դարաշրջան՝ կապիտալիստական հարաբերությունների դարաշրջան, որն ավելի կարևոր և հրամայական դարձրեց սահմանել իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների նոր կարգ, նոր կանոններ: Այդ նպատակն էին հետապնդում 1787թ. ԱՄՆ-ի, 1791թ. Ֆրանսիայի, Լեհաստանի, 1866թ. Շվեդիայի, 1868թ. Լյուքսեմբուրգի, 1874թ. Շվեյցարիայի, 1901թ. Ավստրալիայի և բազմաթիվ այլ երկրների ընդունած Սահմանադրությունները [1, էջ 34-111]:

Ներկայացնելով այդ ամենը, մենք ցանկացել ենք ցույց տալ, որ պատմության տարբեր ժամանակներում յուրաքանչյուր պետություն

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ընդունելով նման կարգի փաստաթղթեր, օրենքներ, հետապնդել է մեկ նպատակ՝ ամրապնդել երկրի կայունությունը, ձևավորել իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում փոխադարձ վստահություն, լեգիտիմ իշխանություն, իսկ իշխանությունը իրականացնել ազատ և արդար ընտրությունների միջոցով:

Իսկ եթե չխորանանք պատմության տարբեր ժամանակների մեջ, ապա միայն XX դարի և XXI դարի մոտ երկու տասնամյակի ընթացքում մեր ժողովուրդը ապրել է մի քանի իշխանափոխություն, որով էլ արմատապես փոխվել են իշխանություն-ժողովուրդ-հասարակություն հարաբերությունները: Եվ եթե XX դարի սկզբի իշխանափոխությունները կապված են պատերազմի և դրա հետևանքով տեղի ունեցած հեղափոխությունների ու երկու հայկական պետությունների ձևավորման հետ, ապա XX դարի ավարտի և XXI դարի սկզբի փոփոխությունները կապված են այլ հանգամանքների և հայ ժողովրդի գիտակցության մեջ տեղի ունեցած նոր փոփոխությունների և նոր մտածողության հետ:

Այդ փոփոխությունների գլխավոր պատճառը խորհրդային համակարգի ճգնաժամն էր, համաշխարհային զարգացման գործընթացից նրա ետ մնալն էր, իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների սրումն էր, Խորհրդային Միության կազմից տարբեր ժողովուրդների դուրս գալու միտումն էր, ազգային ինքնագիտակցության զարթոնքն էր, սեփական պետություն ունենալու ձգտումն էր, ազատ ինքնադրսևորվելու հասարակական և համաժողովրդական պահանջն էր, իր ազգային ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու այդքան ցանկալի երազանքի իրականացումն էր և այլն:

Այդ իմաստով դժվար է գերազնահատել այն մեծ ոգևորությունը, որը համակել էր նաև մեր ժողովրդին, երբ երկրում՝ Խորհրդային Միությունում սկսվեց պատմությանը հայտնի գորբաչովյան «վերակառուցումը», ինչն այլ հետևանքներից զատ վեր հանեց նաև խորհրդային կարգերի ավելի քան 70-ամյա պատմության արատները, ժողովուրդ-իշխանություն կուսակցություն հակասությունները, բայց նաև նպաստեց այդ ամենի մասին ի լուր աշխարհի բարձրաձայնելուն, Խորհրդային Միության կազմից դուրս գալուն և սեփական երկիրը, պետությունը կառուցելու պատրաստակամությանը: Եվ պետք է ասել, որ հենց այստեղ էլ կրկին դրսևորվեցին ժողովուրդ-իշխանություն հա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

կասությունները, որոնցից յուրաքանչյուրն իր մոտեցումն ու դիրքորոշումն ուներ երկրում առաջացած խնդիրների լուծման գործում:

Եթե մեր ժողովրդին կառավարող վերնախավը, կուսակցական ընտրանին այդ հարցում պաշտպանում էր Միության, հատկապես ԽՄԿԿ Կենտկոմի, նրա գլխավոր շտաբ՝ Քաղբյուրոյի վարած գիծը երկրում գործերին տալ նոր շունչ, նոր մտածողություն և բավարարվել միայն մակերեսային, այսպես կոչված կոսմետիկ վերափոխումներով, ապա ժողովուրդը, նրա բոլոր հատվածները և հատկապես Լեռնային Ղարաբաղի հայությունը ոտքի կանգնեց իր նկատմամբ խորհրդային իշխանությունների կատարած սխալն ուղղելու և մայր հայրենիքի հետ վերամիավորվելու համար:

Այդ իրավիճակն իր հերթին դարձավ յուրօրինակ պայքար իշխանությունների և ժողովրդի միջև, որտեղ շատ պարզ երևաց կողմերից յուրաքանչյուրի իրական դեմքը, դիրքորոշումը, որը ևս իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների ոլորտից է, որտեղ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց պաշտպանելու իր իրավունքները, վերականգնելու իր անկախությունը, իսկ Արցախն էլ միավորելու մայր հայրենիքի հետ: Եվ հենց այս հարցում է, որ ավելի մեծ չափով դրսևորվեցին ժողովուրդ-իշխանություն հարաբերություններում երկու կողմերի հակասություններն ու տարբեր կարգի մոտեցումները:

Խորհրդային Հայաստանի հատկապես կուսակցական ղեկավարությունը, նրա առաջին դեմքերը՝ Կարեն Դեմիրճյան, Սուրեն Հարությունյան, Վլադիմիր Մովսիսյան, Ստեփան Պողոսյան և ուրիշներ չկանգնեցին ժողովրդի կողքին և երևի չէին էլ կարող, որքան էլ որ ներքուստ, հոգու խորքում միգուցե նաև ժողովրդի կողմն էին, ինչն էլ շատ արագորեն մեծ ճեղքում առաջացրեց ժողովրդի և իշխանությունների միջև: Այստեղ ժողովուրդն իր մտածողության մեջ շատ ազատ էր, անկաշկանդ և իր մեջ կուտակած ողջ էներգիան ուղղեց հայ ժողովրդի նկատմամբ խորհրդային իշխանությունների թույլ տված սխալները, անարդար որոշումներն ուղղելու և պատմական ճշմարտությունը վերականգնելու համար:

Այդ սխալների շարքում առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հարցն էր, որն անարդարացի կերպով տրվել էր Խորհրդային Ադրբեջանին: Եվ եթե Լեռնային Ղարաբաղում Արցախի հարցի նկատմամբ իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում թերևս բոլորը միան-

ՊԼԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ման էին մտածում, ապա նույնը չէր Խորհրդային Հայաստանում: Այստեղ ժողովուրդ-իշխանություն հարցում պառակտումն ակնհայտ էր, որը նշանակում էր, որ եթե հանրապետության ղեկավարությունը կանգնած էր ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի Լեռնային Ղարաբաղի մասին որոշումները անվերապահորեն կատարելու դիրքերում, ապա հայ ժողովուրդը, ամեն օր համաժողովրդական հանրահավաքներ կազմակերպող հայ հասարակությունը, նրա կազմակերպիչները, «Ղարաբաղ» կոմիտեի անդամները կանգնած էին ժողովրդի կողքին և պայքարում էին Լեռնային Ղարաբաղի անկախության, մայր հայրենիքի հետ նրա միավորման համար:

Նման հանգամանքն էլ հանրապետությունում ստեղծեց բավական լարված մթնոլորտ: Բայց ի պատիվ շարժումը կազմակերպող ուժերի, «Ղարաբաղ» կոմիտեի և նրա հետ միասին անկախության համար պայքարի մյուս մասնակիցների, Երևանում և հանրապետության մյուս քաղաքներում ամենօրյա հանրահավաքները, երթերը անցնում էին բավական կազմակերպված, որն էլ առիթ չէր տալիս հանրապետության իշխանություններին դիմելու արտակարգ միջոցների: Այս հարցում Միությանական կառավարությունը շատ ավելի կոշտ, բռնի քաղաքականություն էր վարում, դիմում տարբեր քայլերի՝ պարեկային ժամ, արտակարգ վիճակ մինչև այլ կարգի սահմանափակումներն ու խիստ միջոցառումները:

Բայց անկախ այդ ամենից հայ ժողովուրդը չկորցրեց իր հավատը և պայքարեց մինչև վերջ, մինչև Արցախի և Հայաստանի անկախությունը իրականություն դարձնելու: Այդ պայքարում իշխանության եկած նոր ուժերի և ժողովրդի միասնությունը դեռևս ամուր էր: Վերջին հաշվով ժողովրդի պահանջով, ժողովրդի պայքարով ծնվեց հայոց Երրորդ Հանրապետությունը: Դա միասնական պայքարի արդյունք էր, որտեղ ժողովուրդ-իշխանություն հարաբերություններում կար ամուր կապ, փոխադարձ վստահություն և հավատ, որ ժողովրդի բռունցքված կամքով իշխանության եկած ուժերը կիրականացնեն հրապարակավ ժողովրդին տված իրենց խոստումները, որն էլ կնպաստի երկրի ավելի արագ զարգացմանը, նախկին արատներից ազատվելուն և այլն:

Բայց ինչպես հաճախ է լինում, իշխանությունները միշտ չէ, որ հավատարիմ են մնում իրենց խոստումներին, որն էլ կրկին աստիճա-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նաբար նոր ճեղքում է առաջացնում իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում: Եվ եթե դա համաշխարհային պատմությանը ուղեկցող երևույթներից, օրենքներից մեկն է, ապա «Ղարաբաղ» կոմիտեն բացառություն չէր, նա էլ վաղ թե ուշ պետք է հեռանար իշխանությունից՝ իր տեղը զիջելով նոր ուժերին: Սակայն այդ փոփոխությունները այնքան էլ չհանգեցրին ժողովուրդ-նոր իշխանություններ հարաբերություններում համերաշխ մթնոլորտի ստեղծմանը, մանավանդ որ նոր իշխանությունները՝ Ռոբերտ Քոչարյանի ղեկավարությամբ էլ ավելի խորացրին իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում անջրպետը, առավել ևս, երբ այդ ամենին գումարվեց 1999թ. հոկտեմբերի 27-ի Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգությունը, որին զոհ գնացին Հանրապետության ընտրանու մի շարք անդամներ՝ երկրի վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և մի շարք այլ պատգամավորներ: Այդ մինչ այսօր չբացահայտված ոճրագործությունը էլ ավելի խորացրեց ժողովուրդ-իշխանություն հարաբերություններում անջրպետը, որն էլ շարունակվեց ու կրեց շարունակական բնույթ ընդհուպ մինչև 2008թ. մարտի 1-ի նոր ողբերգությունը, որին այս անգամ զոհ գնացին 10 հոգի և հարյուրավոր վիրավորներ: Ցավոք այդ ողբերգությունը կրկին առ այսօր բացահայտված չէ, որը համընկնում է Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան իշխանափոխության ժամանակաշրջանի հետ, որն էլ իր խորը և բացասական հետքը թողեց Սերժ Սարգսյանի հետագա շուրջ տասը տարիների կառավարման վրա, որի ժամանակ հանրապետությունում էլ ավելի սրվեցին ժողովուրդ-իշխանություն հարաբերությունները, իսկ դժգոհությունն ու անվստահությունը նոր իշխանությունների նկատմամբ կարծեք թե ուղեկցում էին նրա կառավարման բոլոր տարիներին:

Գլխավոր պատճառը վերը թվարկված հարցերը անպատասխան թողնելն էր, որն էլ օր-օրի լցնում էր ժողովրդի համբերության բաժակը՝ կրկին դարձնելով անհրաժեշտություն երկրում, հանրապետությունում նոր իշխանափոխության, որը կոչված էր բացահայտելու այդ ամենը և վարելու ժողովրդի շահերից բխող քաղաքականություն:

Այդպիսի հեղափոխություն տեղի ունեցավ 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին, որը կատարվեց բացառիկ արագությամբ և նույնքան բացառիկ հանգիստ պայմաններում, որի արարողը, իրականացնողը ժողովուրդն էր, որի տրամադրությունները շատ լավ էին հասկանում և

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ըմբռնում հեղափոխությունը նախապատրաստողները և առավել ևս նրա նախաձեռնողն ու կազմակերպիչը, Ազգային ժողովի պատգամավոր, Քաղաքացիական պայմանագիր(Բ.Պ) կուսակցության հիմնադիր, «Ելք» խմբակցության անդամ, «Իմ քայլը» նախաձեռնության հեղինակ Նիկոլ Փաշինյանը, ով էլ ժողովրդի կամքով, նրա պարտադրանքով 2018թ. մայիսի 8-ին Ազգային ժողովում ընտրվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ և սկսեց քայլերկատարել՝ իրականացնելու իշխանության գալու ճանապարհին ժողովրդին տված իր խոստումները, որը դեռևս այնքան էլ շոշափելի և տեսանելի չէ: Ի դեպ, բավական է մի սխալ, տված խոստումներից նահանջ, ժողովուրդը, որն այսօր անհամեմատ փոխվել է և հավատում է իր ուժերին, նույն ուժով նորից կդնի իշխանափոխության հարցը և չի սպասի ու չի հավատա, որ իշխանությունները առանց ժողովրդի պահանջի իրեն կնվիրի ժողովրդի սպասելիք պահանջները: Իսկ դա նշանակում է, որ այսօր իշխանությունները ոչինչ չեն կարող անել, եթե ժողովուրդը չպաշտպանի նրանց ձեռնարկած քայլերը: Իսկ այն հարցին, թե այսօր մեր ժողովուրդը ինչու՞ է պաշտպանում երկրի իշխանություններին, կարծում ենք պարզ է, քանի որ հավատում է նրան: Դա շատ կարևոր գործոն է և իշխանությունները այդ հանգամանքը շատ լավ են հասկանում, հակառակ դեպքում ամեն ինչ կարող է շատ արագ փոխվել ոչ հօգուտ իշխանությունների, քանի որ ժողովուրդը ևս փոխվել է և վաղուց նա երեկվա ժողովուրդը չէ: Նա ևս դասեր է քաղել անցյալից, դարձել ավելի պահանջկոտ և այլևս չի սպասի, որ իշխանությունները իր իրավունքները որպես ողորմածություն նվիրեն իրեն: Կարծում ենք, որ դա արդեն անցյալի դասերից է, պատկերավոր ասած՝ պատմության դասերից, որոնց հետ պետք է հաշվի նստել, հակառակ դեպքում պատմությունը ինքը կստիպի քեզ դասեր քաղել, որի գինը բավական մեծ է:

Մյուս խնդիրն այն է, թե որքան ժամանակ իշխանությունները պատրաստ կլինեն ունկնդրել ժողովրդին, անսալ նրա ձայնին և իշխանությունը հանձնել նոր ուժերին, եթե դա ժողովրդական պահանջ լինի: Ի դեպ, այդ հանգամանքը ժողովրդավարական երկրների գործունեության արդեն դարերով ամրագրված և դարեր շարունակ իրականացվող կարգ է, որը չի խախտում իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում միմյանց նկատմամբ վստահությունն ու հարգանքը

և իրականացվում է համաժողովրդական հանրաքվեի միջոցով, որն էլ ապահովում է հերթափոխ իշխանությունը մեկ ուժից անցնելու մյուսին անցնելը, չբացառելով, որ իշխանությունը կորցրած ուժերը, դասեր քաղելով անցյալից, կարող են, որն (ի դեպ հաճախ է լինում) նորից գալ իշխանության:

Հակառակ պարագայում իշխանափոխությունը տվյալ երկրում դառնում է ցավագին մի գործընթաց, որը հանգեցնում է իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների սրմանը, դրանով էլ ավելի խորացնելով իշխանություն-ժողովուրդ հակասությունները, առավել ևս երբ իշխանությունները իրենց իշխանությունը պահելու համար դիմում են ժողովրդի, առանձին քաղաքական ուժերի նկատմամբ տարբեր ճնշումների, բռնությունների և նույնիսկ ձերբակալությունների: Նման պայմաններում ժողովուրդը գնում է այն ուժերի ետևից, որոնք հավատ են ներշնչում է և բարձրաձայնում այդ անարդարությունների մասին և ժողովրդին կոչ անում պայքարել իշխանությունների դեմ՝ իրենց իրավունքները վերականգնելու համար: Նման հանգամանքը ստեղծում է իշխանություն-ժողովուրդ նոր տիպի հարաբերություններ: Այստեղ շահում են այն ուժերը, որոնք կանգնում են ժողովրդի կողքին և նրա հետ պայքարում ժողովրդի շահերը պաշտպանելու և իշխանափոխությունը իրականացնելու համար:

Մյուս կարևոր հանգամանքը, որը մեծ չափով ազդում է իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների վրա, դա երկրում իրականացվող տարբեր մասշտաբի, մակարդակի ընտրություններն են, դրանց անցկացման արդարացի կամ անարդարացի լինելն է, որը կարող է նպաստել իշխանությունների նկատմամբ վստահության կամ անվստահության ձևավորմանը: Ցավոք հանրապետության ավելի քան քառորդ դարյա պատմության ընթացքում տեղի ունեցած թե՛ նախագահական և թե՛ Ազգային Ժողովի ընտրությունները գրեթե միշտ էլ անցել են մեծ խախտումներով, որքան էլ որ դրանց հետևել են միջազգային դիտորդները և հայտարարել, որ դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Խնդիրն այն է, որ հանրապետությունում անցկացվող բոլոր կարգի ընտրություններում տեղ են գտել կաշառակերությունը, կեղծ ցուցակների առկայությունը, կրկնակի ընտրություններ անցկացնելը, այսպես կոչված «կարուսելներ» կազմակերպելը, մարդկանց անձնագրային տվյալները վերցնելը, թաղային հեղի-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նակությունների օգտագործումը, ձայները հաշվարկելու ժամանակ տարբեր կարգի խախտումները և այլ կարգի անօրինականություններ: Պատահական չէ, որ յուրաքանչյուր ընտրությունից հետո ընդդիմության կողմից միշտ էլ բարձրացվել է հանրապետության, առավել ևս, նախագահի լեգիտիմության հարցը, որը կամա թե ակամա ազդել է նրա կերպարի և առավել ևս միջազգային հեղինակության վրա: Բնական է, որ այդ հանգամանքը ևս իր հերթին մեծ չափով վնասել է իշխանություն-ժողովուրդ հարաբերություններին: Այդ հարաբերություններին մեծ չափով ազդել է նաև այն հանգամանքը, որ հանրապետության Սահմանադրական դատարանը ոչ մի անգամ այդ հարցում ժողովրդի օգտին որոշում չի ընդունել և անկախ տարբեր կարգի բողոքներից, միշտ էլ պաշտպանել է իշխանություններին, դրանով կորցնելով հարգանքը ինչպես Սահմանադրական դատարանի, այնպես էլ օրենքի, արդարադատության նկատմամբ: Դա ևս իշխանություն-ժողովուրդ փոխհարաբերությունների ոլորտից է, որտեղ իշխանությունները շատ բան ունեն անելու: Խոսքը վերաբերում է մեր օրերում հանրապետությունում ձևավորված նոր իշխանություններին, որոնք հիմք են դնում իշխանություն-ժողովուրդ նոր տիպի հարաբերությունների ձևավորմանը, որը որքան էլ երկար գործընթաց է, բայց սկիզբը խոստումնալից է: Իսկ խոստումնալից է այն պատճառով, որ հանրապետությունում իշխանության եկած նոր ուժերը առ այսօր դեռևս հավատարիմ են իշխանության գալու ճանապարհին ժողովրդին տված իրենց խոստումներին, իրենց ամեն քայլը ստուգում են ժողովրդի հետ հանդիպումներում, որը հրապարակային դեմոկրատիայի ոլորտից է: Դա որքան էլ ոգևորիչ է և իրենց կատարածը ժողովրդի հետ ստուգելու ձև է, այնուամենայնիվ պետք է զուգակցվի ներկայացուցչական դեմոկրատիայի հետ, ինչը հնարավորություն է տալիս երկրի առջև ծառայած խնդիրները քննարկել և որոշումներ ընդունել համապատասխան օրենսդրական մարմիններում՝ իրար համադրելով տարբեր կարծիքներ, տեսակետներ, քանզի 2018 թ. դեկտեմբերին ձևավորված նոր Ազգային ժողովը գրեթե միակուսակցական է, որքան էլ որ կան իրենց ընդդիմադիր կամ այլընտրանքային հայտարարած ուժեր՝ Բարգավաճ Հայաստան և Լուսավոր Հայաստան:

Նաև չմոռանանք ընդգծել, որ իշխանություն-ժողովուրդ հարաբերություններում շատ է կարևորվում և գնահատվում անհատը, նրա

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

գործունեությունը, հատկապես արդար, իր գործը սիրող և բարեխղճորեն կատարող մարդ-անհատը, ինչպես ասում են իր աշխատանքով օրվա հացը վաստակող մարդը, որն էլ մեր օրերի համաժողովրդական պայքարի գլխավոր դերակատարն է, որին չի կարելի կորցնել: Իսկ իշխանությունների գլխավոր հոգսերից մեկը՝ արդարության և օրենքի գերակայության հաստատումն է: Այս հարցում ժողովուրդը վճռական և հետևողական է:

Կասկած չկա, որ երկրի նոր իշխանությունները շատ լավ գիտակցում են դրա նշանակությունը, այն է՝ իրենց հաջողությունների կարևոր պայմաններից մեկը ժողովուրդ-իշխանություն հարաբերություններում վստահությունը չկորցնելն է:

Այդ իմաստով մենք համամիտ ենք սոցիոլոգ Գևորգ Պողոսյանի հետ, որն իր «Հայ հասարակությունը 21-րդ դարի սկզբին» ծավալուն աշխատանքում խոսելով պետություն-հասարակություն համագործակցության, փոխհարաբերությունների, քաղաքացիական հասարակության ձևավորման և այլ խնդիրների մասին, ճիշտ է նկատում, որ հայ հասարակության առջև ծառայած հիմնախնդիրների բանալին սոցիալական համագործակցությունն է, հասարակության զանազան շերտերի, առանձնապես իշխանության և ժողովրդի միջև համերաշխության ստեղծումն է [2, էջ 118]:

Բայց նաև պետք է ընդունենք, որ եթե թե՛ իշխանությունները և թե՛ ժողովուրդը կորցնեն այդ ձեռքբերումը, ապա երկուստեք կհայտնվեն ոչ նախանձելի վիճակում, որից դուրս գալը շատ ավելի մեծ ջանքեր և ժամանակ կպահանջեն:

Միաժամանակ իշխանությունները պետք է հասկանան, որ ժողովրդի ոգևորությունը անսպառ չէ, և որ հասարակության բոլոր խավերը, շերտերը չեն, որ պաշտպանում են իշխանության բոլոր քայլերը, ուստի նրանք պետք է իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք աստիճանաբար կփոխեն մարդկանց վիճակը: Իսկ իշխանության, կառավարման համակարգը պետք է այնպես գործի, որ չճնշի հասարակությունում գոյություն ունեցող հայացքների, դիրքորոշումների ու պահանջարկի բազմազանությունը, որն էլ կնպաստի, որ հասարակության մեջ համաձայնությունն ու սոցիալական համերաշխությունը, - ինչպես գրում է Տիգրան Թորոսյանը,- դառնան գերակշռող արժեքներ [3, էջ 118]:

Մնում է լինել լավատես և հավատալ, որ հանրապետությունում իշխանության եկած նոր ուժերը հավատարիմ կմնան իրենց սկզբունքներին և խոստումներին և ամեն ինչ կանեն իշխանություն-ժողովուրդ կապը էլ ավելի ամրապնդելու համար, որն էլ կդառնա կարևոր գործոն անցյալից դասեր քաղելու և նորանոր հաջողությունների հասնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Գագիկ, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005:
2. Պողոսյան Գևորգ, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան 2006:
3. Թորոսյան Տիգրան, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006:

ОТНОШЕНИЯ ВЛАСТЬ – НАРОД (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)

Лилит Матинян

ЕГУ, кафедра Истории сопредельных стран Армении, соискатель

Генрик Абрамян

ЕГУ, ЕУ, д.и.н., профессор

Статья посвящена одному из центральных вопросов общественного устройства, вопросу «власть – народ». Она даёт возможность создать представление о взаимоотношениях народа и государства, их формировании и противостоянии. Взаимоотношения «народ – власть» всегда были проблемой общественной жизни и общественного сознания любой страны. При этом история этих отношений предстаёт разной в зависимости от периода и обстоятельств. Иногда между властью и народом возникает непонимание, а иногда оно исчезает и на первый план выступает патриотизм и единство.

Отмечено, что накопление проблем в обществе, расхождение интересов и целей развития власти и народа приводят к потрясениям.

Взаимоотношения приобретают остроту и это оборачивается насилием, жестокостью, нарушением прав человека. Но также показано, что народ в сложных ситуациях способен мобилизоваться и бороться, отстаивая свои права.

В статье подчёркнута идея, что большего успеха добиваются те страны и государства, где народ и власть взаимно дополняют друг друга, где власть действует в интересах народа, создаёт законы и реформы, нужные народу.

Большое место в статье отведено бархатной революции, анализу её последствий, а также её приобретений и потерь.

Исходя из вышеизложенного, можно сделать вывод, что без сплочённости общества, без понимания целей развития власти и народа, без взаимного доверия движение вперёд невозможно.

Ключевые слова: власть, народ, взаимодействие, взаимопонимание, солидарность, компромисс, конституция.

AUTHORITY– NATION RELATIONS (COMPARATIVE ANALYSIS)

Lilit Matinyan

YSU, Chair of the History of Armenia's Neighboring Countries,
Researcher

Henrik Abrahamyan

YSU, EU, Doctor of History, Professor

The article is devoted to one of the central issues of social structure, the issue of "authority - nation". It gives the opportunity to create a relationship between the people and the state, their formation and opposition. The "authority - nation" relationship has always been a public life issue and the public consciousness of any country. At the same time, the history of these relations differ depending on period and circumstances. Sometimes, there is lack of understanding between the authorities and the people, but patriotism and unity come forward.

It is noted that the accumulation of problems in society, the divergence of interests and goals of power development may lead people

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

to shock. Relationships become acute and this turns into violence, cruelty and violation of human rights. But it is also proved that people in difficult situations can mobilize and fight, defending their rights.

The article highlights the idea that the countries and states achieve great success if people and authorities complement each other, if authorities act according to people's interests, adopt laws and reforms which are necessary for people.

A big portion of the article refers to the Velvet Revolution, the analysis of its consequences, as well as its gains and losses.

The conclusion is that it is impossible to move forward without society cohesion, without understanding of the goals of power and people development, without mutual trust.

Keywords: power, people, interaction, mutual understanding, solidarity, compromise, constitution.

Ընդունվել է Կոպագրության՝ 28.03.2019թ.

Գրախոսվել է՝ 23.04.2019թ.

**ԵԳԻՊՏԱԿԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ «ԱՐԵԳ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ
ԷՋԵՐՈՒՄ 2010-2015 թթ.**

Մյասնիկ Եսոյան

*ԵՀ, Միջազգային հարաբերությունների ամբիոն, պ.գ.թ.
Esosan-87@mail.ru +374 94 100359*

«Արեգ» պարբերականն իր էջերում ներկայացնում է եգիպտահայ համայնքի պատմությունը՝ մեծապես արժևորելով հայ համայնքի ներդրումը եգիպտոսի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքի աշխուժացման գործում: 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը արաբ հասարակության շրջանում ճանաչելի դարձնելու համար, 2015 թ. ընթացքում Կահիրեում և Եգիպտոսի փարբեր մշակութային հաստատություններում իրականացվեցին մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, գիտաժողովներ, որոնք չեն վրիպել արաբերեն պարբերականի ուշադրությունից: Բացի այդ՝ «Արեգ» պարբերականն իր ուշադրության կենտրոնում է պահել 2010-2015 թթ. եգիպտահայ համայնքի կազմակերպած մշակութային փարբեր միջոցառումների, գիտաժողովների լուսաբանումը:

Հիմնաբառեր. մշակութային միջոցառումներ, գիտաժողովներ, «Արեգ» պարբերական, եգիպտահայ համայնք, ցեղասպանություն:

Հայկական բարեգործական ընդհանուր միության Կահիրեի մասնաճյուղի ֆինանսավորմամբ 2010 թ. առաջօր լույս է տեսնում «Արեգ» պարբերականը, որը շարունակում է կատարել «Արև» օրաթերթի արաբերեն հավելվածի առաքելությունը:

«Արև»-ի արաբերեն հավելվածի նման «Արեգ» պարբերականի հիմնական նպատակը հայ-արաբական՝ մասնավորապես հայ-եգիպտական հարաբերություններն ամրապնդելն է: ՀԲԸՄ արաբերեն պարբերականի օգնությամբ ցանկանում է խորացնել հայ և արաբ ժողովուրդների միջև մշակութային կապերը: Հայկական բովանդակությամբ թեմաներից բացի «Արեգ» պարբերականը անդրադարձել է նաև արաբական բովանդակությամբ տարաբնույթ թեմաների լուսաբանմանը: «Արեգ» պարբերականը ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ համայնքի պատմությունն ու արդի վիճակը:

Հայերը Եգիպտոսում հաստատվել են վաղ ժամանակներից: Հայ համայնքի ոսկե շրջանն եղել է Ֆաթիմյան (969-1171 թթ.) շրջանը և 19-րդ դարը: 4-5-րդ դարերում Հայաստանից Եգիպտոս են մեկնում որոշ թվով հոգևորականներ, որոնք այնտեղ միաբանություն են հիմնում: Հայերի թիվը Եգիպտոսում աճեց 11-րդ դարի կեսերին, երբ մայր հայրենիքից մեծ թվով հայեր մեկնեցին Եգիպտոս: Նրանցից շատերը բարձր պաշտոնների հասան Ֆաթիմյան և Այուբյան դինաստիաների կառավարման տարիներին: «Արեգ»-ը ներկայացնում է վերոնշյալ դինաստիաների օրոք վեզիրի պաշտոնը զբաղեցրած թվով 9 եգիպտահայերին Բադր ալ Ջամալի գլխավորությամբ: Ֆաթիմյանները հանդուրժողականություն էին ցուցաբերում քրիստոնյաների նկատմամբ, ինչից հետո հարևան երկրներից մեծ թվով հայեր ժամանեցին Եգիպտոս[1, № 13, 6-8 էջեր]: Արաբերեն պարբերականը նաև հիշատակում և տեղեկություններ է հաղորդում 11-13-րդ դարերում Եգիպտոսում 5 վանքերի, 20 եկեղեցիների և աղոթարանների մասին, որոնց մի մասը հետագայում մամլուքների ու Օսմանյան կայսրության կառավարման տարիներին վերածվեցին մզկիթների[1, № 13, 6-12 էջեր]:

Մամլուքների տիրապետության շրջանում (1250-1517 թթ.) Եգիպտոսում հայերի թիվը ավելանում է, քանի որ Կիլիկիայի հայկական թագավորության հետ պատերազմներում մամլուքներին հաջողվում է մեծ թվով հայերի գերի վերցնել: Մամլուքները ընդհանուր առմամբ նույնպես հանդուրժողականություն էին դրսևորում քրիստոնյաների՝ այդ թվում հայերի նկատմամբ [4, 52-54 էջեր]:

Եգիպտահայ համայնքի դրությունը վատթարացավ, երբ Եգիպտոսը նվաճվեց Օսմանյան կայսրության կողմից, ինչը պատճառ հանդիսացավ, որ մեծ թվով հայեր լքեն Եգիպտոսը [5, էջ 21]: Օսմանյան տիրապետության շրջանում հայերը Եգիպտոսում հիմնականում բնակվում էին Կահիրեում, իսկ որոշ հայ ընտանիքներ էլ՝ Ալեքսանդրիայում ու Եգիպտոսի այլ վայրերում: Եթե 16-րդ դարում Կահիրեում բնակվող հայերի թիվը 2000 էր, ապա 18-րդ դարում այն դարձավ 2700-3000 [2, № 127, էջ 5]:

Հայերի արտագաղթը Եգիպտոսից դադարեց 17-րդ դարում, երբ հայ համայնքի ներսում որոշակի աշխուժություն նկատվեց: Այս շրջանում հայերը մեծապես նպաստեցին Եգիպտոսում առևտրի աշխուժացմանը: 17-18-րդ դարերում բազմաթիվ հայեր տարբեր պաշտոններ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

են զբաղեցրել երկրի վարչական ու զինվորական մարմիններում[1, № 42, էջ 4]:

1798-1801 թթ. ֆրանսիական արշավանքի ընթացքում եգիպտահայ համայնքի դրույթունը վատացավ, որը պայմանավորված էր հիմնականում երկու գործոնով: Նախ, ֆրանսիացիները չեղյալ հայտարարեցին հայ առևտրականներին տրված առևտրական առանձնաշնորհումները, ինչպես նաև միջկրոնական բախումներ հրահրեցին Եգիպտոսում: Մյուս կողմից մուսուլման եգիպտացիները Եգիպտոսում բնակվող քրիստոնյաներին համարում էին ֆրանսիացիների դաշնակիցներ, հետևաբար քիչ չէին դեպքերը, երբ հայերը եգիպտացիների կողմից ենթարկվում էին հարձակումների[2, № 37, էջ 8]:

Եգիպտահայ համայնքի դրույթունը զգալիորեն բարելավվեց Եգիպտոսում Մուհամմադ Ալիի իշխանության գալուց հետո: 1805 թ. Օսմանյան կայսրության կողմից Եգիպտոսի վալի նշանակվեց Մուհամմադ Ալին, ում կառավարման տարիներին 1805-1869 թթ. Եգիպտոսը տնտեսական, քաղաքական ու մշակութային զարթոնք ապրեց: Արաբերեն պարբերականը մեծապես արժևորում է Մուհամմադ Ալիի գործունեությունը, որը նոր էջ բացեց Եգիպտոսի նոր պատմության մեջ և եգիպտական Նահդայի (վերածննդի) հիմքը դրեց: Եգիպտոսի նոր կառավարիչը վերափոխեց, արդիականացրեց երկրի կառավարման պետական ապարատը, զինված ուժերը բազմաթիվ տնտեսական, մշակութային և կրթական ծրագրեր իրականացրեցին, ինչի արդյունքում Եգիպտոսում տնտեսական մեծ առաջընթաց գրանցվեց 19-րդ դարի երկրորդ կեսին[1, № 8, 12-14 էջեր]: Վերելք ապրեց նաև եգիպտահայ գաղութը. աճեց նրա թվաքանակը, բարձրացավ նրա տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի մակարդակը: Հայերն ակնառու դեր էին կատարում Եգիպտոսի արհեստագործության զարգացման, առևտրական կապերի ընդլայնման և ֆինանսների կազմակերպման գործում [3, էջ 13]:

1952 թ. Եգիպտոսում տեղի ունեցած հեղափոխության 63-ամյակի կապակցությամբ «Արեգ»-ը մանրամասն ներկայացնում է հեղափոխության պատճառները, ընթացքը՝ արժևորելով հեղափոխության դերը եգիպտական նորագույն պատմության ընթացքում: Հիրավի, 1952 թ. Եգիպտոսում տեղի ունեցած հեղափոխությունը, որի արդյունքում երկրում հաստատվեցին հանրապետական կարգեր, նոր խթան հան-

դիսացավ Եգիպտոսի քաղաքական, տնտեսական կյանքի զարգացման և ամրապնդման գործում: Հեղափոխությունից հետո 1952 թ. նոյեմբերի 16-ին Եգիպտոսի նախագահ Մուհամմադ Նագիբը այցելեց Կահիրեի հայ առաքելական եկեղեցի, ուր հայ արքեպիսկոպոս Սիրունյանի ու հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հանդես է գալիս ճառով, որտեղ դրվատանքի խոսքեր է ասում Եգիպտոսի հայ համայնքի մասին [1, № 59, 1-6 էջեր]:

«Արեգ» պարբերականն իր ուշադրության կենտրոնում է պահել 2010-2015 թթ. եգիպտահայ համայնքի կազմակերպած մշակութային տարբեր միջոցառումների, գիտաժողովների լուսաբանումը:

2010 թ. ապրիլի 18-ին Կահիրեի հայկական մշակութային կենտրոնը Նուբար փաշայի «Հուշերի»-ի արաբերեն թարգմանության կապակցությամբ գրական երեկո էր կազմակերպել, որին ներկա էր Եգիպտոսում ՀՀ դեսպան Արմեն Մելքոնյանը, եգիպտահայ մտավորականներ, մշակութային գործիչներ: «Արեգ» պարբերականը լայնորեն լուսաբանում է մշակութային միջոցառումը, որի ընթացքում ելույթ ունեցան դեսպան Մելքոնյանը, արաբ մտավորականներ, որոնք իրենց ելույթներում արժևորեցին Նուբար փաշայի գործունեությունը և ներդրումը Եգիպտոսի պետականության կայացման գործում [1, № 2, 22-26 էջեր]:

Հիշատակության է արժանի 2011 թ. սեպտեմբերի 27-29 Ալեքսանդրիայում տեղի ունեցած համաշխարհային տպագրության պատմությանը նվիրված միջազգային գիտաժողովը, որի նիստերից երկուսը վերաբերում էր հայ տպագրության պատմությանն ու արդի վիճակին: Հայ տպագրության վերաբերյալ նիստերում Հայաստանի և Եգիպտոսի զեկույցների թեմաները վերաբերում էին մայր հայրենիքում, Օսմանյան կայսրությունում և Եգիպտոսում հայ տպագրության պատմությանը: Արաբերեն պարբերականը մանրամասն ներկայացնում է կոնֆերանսի մասնակիցների զեկույցումները՝ շեշտադրումը կատարելով «Եգիպտոսում հայ տպագրության պատմություն» զեկույցման վրա, որով հանդես եկավ Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը: Բանախոսը իր զեկույցում նշեց, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Եգիպտոսում հայերը 14 տպագրատուն են հիմնել: Առաջին տպարանը՝ «Արարատը», 1896 թ. հիմնել է Սարգիս Դարբինյանը Կահիրեում, իսկ Ալեքսանդրիայում հայկական առաջին տպարանը՝ Նազարեթյան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

տպագրատունը, հիմնվել է 1899 թ.: Այս երկու տպարաններից հետո հայերը Եգիպտոսում հիմնել են նաև բազմաթիվ այլ տպարաններ, որոնք կոչվել են հիմնադիրների (Բերբերյան, Թովալյան և այլն), հայկական աշխարհագրական տեղանունների (Սևան, Արաքս և այլն), նշանավոր հայերի (Սահակ, Մեսրոպ և այլն) և պարզապես հայկական սովորական անուններով (Արշալույս, Հուսաբեր և այլն): Հայերը մեծ դեր են խաղացել նաև եգիպտական մամուլի զարգացման գործում^{[1, № 16, էջ 19]: 1865-2010 թթ. Եգիպտոսում հիմնադրվել են հայկական 165 թերթ և ամսագիր («Արմավենի», «Նեղոս», «Արշալույս», «Հուսաբեր» և այլն), որից առաջինը՝ «Արմավենին»՝ 1865 թ.: Ներկայումս Եգիպտոսում լույս է տեսնում հայկական չորս թերթ և ամսագիր՝ «Հուսաբեր», «Արև», «Արեգ» և «Տեղեկատու»: Հայկական տպարաններում 125 տարվա ընթացքում շուրջ 1560 քաղաքական, կրոնական, մշակութային, սպորտային թեմաներով գիրք ու պատմվածք է լույս տեսել^{[1, № 16, էջ 20]: Եգիպտոսի հայ մամուլի պատմությանը նվիրված մեկ այլ զեկույցում գիտնական Սուրեն Բայրամյանն ընդգծեց, որ Եգիպտոսում հայկական հրապարակումների գազաթնակետը 20-րդ դարի 20-30-ականներն էին, երբ լույս տեսավ 594 տպագիր աշխատանք¹: Եգիպտոսում հայերը մեծ դեր են խաղացել նաև այլ լեզուներով տպագրվող թերթերում: Սուրեն Բայրամյանը հիշատակում է Արիստակես Թունյանին («Եգիպտական իրադարձություններ» արաբերեն), Ադիբ Իսհակին («Առևտուր» արաբերեն), Ալեքսան Սարաֆյանին, («Ժամանակ» արաբերեն), Տիգրան Քիլիմջյանին («Նոր գաղափար» թուրքերեն), Ալեքսանդր Սարուխանին («Քարավան» ֆրանսերեն) և այլոց [1, № 16, 19-23 էջեր]:}}

Եգիպտոսում լույս տեսած հայկական առաջին պարբերականի («Արմավենի») հիմնադրման 150-ամյակի կապակցությամբ Պերճ Թերզյանը ներկայացնում է թերթի խմբագիր Աբրահամ Մուրադյանի կյանքն ու գործունեությունը, տեղեկություններ հաղորդում թերթի կարճատև կյանքի մասին (լույս է տեսել 4 անգամ) [1, № 55, 3-5 էջեր]:

¹ 2013 թ. Կահիրեի հայ առաքելական եկեղեցու ջանքերով լույս տեսավ Սուրեն Բայրամյանի «Եգիպտոսի հայկական մամուլը» գրքի արաբերեն տարբերակը, որտեղ հեղինակը ներկայացնում է եգիպտահայ մամուլի ցանկը 1865-2005 թթ.: Հայերեն առաջին պարբերականը Եգիպտոսում «Արմավենին» լույս է տեսել 1865 թ., 1865-2005 թթ. Եգիպտոսում լույս է տեսել 165 պարբերական, որից 43-ը ամսագիր, 32-ը շաբաթաթերթ: Տես՝ «Արեգ», 2013 թ. մարտ, № 33 էջ 3-6:

Մերձավոր Արևելքում ամենամեծ ու հեղինակավոր՝ Կահիրեի համալսարանում 2007 թ. ապրիլին հայագիտական կենտրոնի ստեղծույթը կարևոր քաղաքական և ռազմավարական նշանակություն ունեցավ Մերձավոր Արևելքի հայկական համայնքների քայքայման շարունակվող գործընթացի լույսի ներքո: Այս տարիների ընթացքում կենտրոնը բազմաթիվ միջազգային գիտաժողովներ, դասախոսություններ է կազմակերպել հայ-արաբական հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև տասնյակ գրքեր է տպագրել Հայաստանի և հայերի մասին, որոնց լուսաբանմանը անդրադառնում է նաև արաբերեն պարբերականը[1, № 53, էջ 18]: «Արեգ»-ը վերոնշյալ գիտաժողովներից առանձնացնում է 2010 թ. մարտի 29-ին Կահիրեում տեղի ունեցած «Հայ-արաբական տնտեսական հարաբերությունները» խորագրով գիտաժողովը, որին մասնակցեցին անվանի հայ և արաբ գիտնականներ: Հոդվածագիր Շիմա Շուարաբին ընթերցողին ներկայացնում է գիտաժողովի ընթացքը, որի ընթացքում զեկուցողները խոսեցին միջնադարում հայ-արաբական տնտեսական հարաբերությունների, պատմության ընթացքում Լիբանանի, Եգիպտոսի և Սիրիայի տնտեսական կյանքում կարևոր դերակատարում ունեցած հայազգի գործիչների մասին[1, № 2, 22-24 էջեր]: «Արեգ» պարբերականը մեծ հետաքրքրությամբ լուսաբանում է 2011 թ. նոյեմբերի 14-15 Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի կազմակերպած «Հայկական նկարագիրը արաբական և օտար աղբյուրներում» խորագրով միջազգային չորրորդ գիտաժողովը, որին մասնակցեցին 20 հետազոտողներ Հայաստանից, Եգիպտոսից, Լիբանանից, Սիրիայից և այլ երկրներից: «Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում» նիստի ընթացքում զեկուցողները նշեցին, որ արաբ հեղինակները Օսմանյան կայսրության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությանը վերաբերյալ հիմնականում չեզոք դիրքորոշում են որդեգրել՝ ներկայացնելով իրական պատկերը: Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը նշում է, որ արաբ հետազոտողներ Մուստաֆա Քեմալի «Արևելյան հարցը», Մուհամմադ Ֆարիդի «Օսմանյան կայսրության պատմությունը», Ֆահիզ Ղուսեյնի «Հայկական կոտորածները» և այլ արաբ հետազոտողների աշխատանքներում այն տեսակետն է իշխում, որ հայկական կոտորածներում կրոնական գործոնը անմեղսունակ է: Իսկ ինչ վերաբերում է արաբական մամուլին, ապա հետազոտողներ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նարինե Երանոսյանը և Նորա Արիսյանը նշեցին, որ Եգիպտական և սիրիական արաբալեզու մամուլը նույնպես հիմնականում չեզոք դիրքորոշում է ունեցել, և կարևոր աղբյուր է հանդիսանում Հայկական հարցի պատմության ուսումնասիրման համար[1, № 18, էջ 7]: Գիտաժողովի ընթացքում հնչեցին զեկուցումներ նաև «Հայերը Եգիպտոսում» թեմայի շրջանակներում: Մասնավորապես հայ հետազոտող Արթուր Իսրայելյանը հանդես եկավ «Մամլուքյան բանակում ծառայած հայերը՝ ըստ արաբական աղբյուրների» զեկուցումով, Զամալ Քամալ Մահմուդը՝ «Եգիպտոսի հայ զինվորականների կերպարը՝ ըստ օսմանյան աղբյուրների» զեկուցումով, որտեղ բանախոսը նշեց, որ Եգիպտոսում օսմանյան կառավարման շրջանում բազմաթիվ հայեր՝ հիմնականում իսլամ ընդունած, զբաղեցրել են զինվորական բարձր պաշտոններ: Մասնավորապես, հայազգի Ահմադ Աշան Եգիպտոսի 7 զինվորական շրջաններից մեկի հրամանատարն է եղել, Եգիպտոսի ռազմածովային ուժերում բարձր պաշտոններ են զբաղեցրել Ռամահան Աշան, Սուլեյման Բիքր, նրա որդի Օսման Զալաբին և այլք[1, № 18, էջ 8]: Զեկուցումներից հիշատակության է արժանի նաև արաբ հետազոտող Մաջիդ Աջաթի «Հայ առևտրականների նկարագիրը Եգիպտոսի արխիվներում 19-րդ դարի ընթացքում» զեկույցը, ուր բանախոսը նշեց, որ Մուհամմադ Ալիի կառավարման տարիներին Եգիպտոսի պետական ապարատում հայերը զբաղեցնում էին բազմաթիվ պաշտոններ և Եգիպտոսում հայերը հայտնի էին «Առևտրային գործակալներ» մականվամբ[1, № 18, 6-11 էջեր]:

2013 թ. փետրվարի 25-ին Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հայ տպագրության 500-ամյակի կապակցությամբ միջազգային գիտաժողով կազմակերպեց «Հայաստանը և քաղաքակրթությունների երկխոսությունը» խորագրով, որին մասնակցեցին բազմաթիվ գիտնականներ տարբեր երկրներից: Զեկուցողների թեմաները վերաբերում էին պարսկերենից հայերեն փոխառություններին, Հայաստանի և Միջագետքի երկրների միջև տեղի ունեցած շփումներին, հայ-հնդկական պատմամշակութային առնչություններին, հայերի՝ Եգիպտական մշակույթի և կրթության զարգացման գործում 1516-1798 թթ. ունեցած դերին և այլն [1, № 32, 6-12 էջեր]: Կահիրեի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հրատարակեց «Հայերի նկարագրերը արաբական և արտասահ-

մանյան աղբյուրներում» աշխատությունը, որի 254 էջերում զետեղված արաբ և հայազգի համահեղինակների նյութերը վերաբերում են հետևյալ թեմաներին.

1. Հայկական հարցը արաբական և արտասահմանյան աղբյուրներում:
2. Հայերը եգիպտոսում արաբական և արտասահմանյան աղբյուրներում:
3. Հայաստանը և հայերը միջին դարերի ընթացքում:

Նշենք, որ ճիշտ է արաբ հեղինակների՝ հայկական կոտորածների վերաբերյալ աշխատանքներում ընդունվում է կոտորածների փաստը, բայց ոչ բոլոր հեղինակներն են համաձայն, որ այն պետական քաղաքականություն է եղել: Հայկական կոտորածներին անդրադարձել է նաև եգիպտական և սիրիական մամուլը:

Հայերի վերաբերյալ սիրիական մամուլի հրատարակումներին անդրադարձել է Նորա Արիսյանն իր ատենախոսությունում, որն ուսումնասիրելուց հետո պարզ է դառնում, որ Սիրիայի արաբալեզու մամուլը անդրադարձել է Հայկական հարցի տարբեր փուլերի, կոտորածների, գաղթի տեսարանների լուսաբանմանը: Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից տպագրի գրքում առանձին գլուխ է հատկացված «Հայերը եգիպտոսում» թեմատիկային, որի վերաբերյալ գրքում ներառված են Ամինա Ահմադ Իմամ ալ Շուրուբշիի «Հայկական տարրը Ֆաթիմյան եգիպտոսում և նրա դերը քաղաքականության և քաղաքակրթության մեջ», Արթուր Իսրայելյանի «Մամուլային բանակի հայ զինվորականները ըստ արաբական աղբյուրների», Ջամալ Քեմալ Մահմուդի «եգիպտոսի հայ զինվորականների նկարագիրը օսմանյան աղբյուրներում» աշխատանքները: Գրքի երրորդ գլխում արաբ հետազոտող Ահմադ ալ Մանամ ալ Ադաուին ներկայացնում է «Քաղաքական իրադրությունը Հայաստանի վելայեթում 684-749 թթ.», որը կարևոր աղբյուր է նշված ժամանակաշրջանի Հայաստանի պատմության ուսումնասիրման համար, երբ Հայաստանի համար պայքար էր սկսվել արաբների ու բյուզանդացիների միջև: Բացի այդ՝ սույն գրքում ներառված են արաբ հետազոտողներ Ադբ ալ Ազիզ ալ Դուրուբիի «Հայաստանը և հայ ազգի ձևավորումը», Մուհամմադ Ահմադ Իբրահիմի «Հայաստանը մուսուլմանական աշխարհագրական ձեռագրերում» աշխատանքները^[1, N° 32, 13-18 էջեր]:

Եգիպտոսի նախագահ ընտրվելուց հետո Արդել Ֆաթահ աս Սիսին 2014 թ. օգոստոսի 7-ին հանդիպում ունեցավ Եգիպտոսի քրիստոնեական համայնքների առաջնորդների՝ այդ թվում հայ կաթոլիկ և առաքելական եկեղեցիների առաջնորդների հետ, որի ընթացքում Եգիպտոսի նախագահը հավաստիացրեց, որ Եգիպտոսում քրիստոնյաների կյանքը վտանգված չէ և նախկինի պես մուսուլմանների հետ կողք կողքի համերաշխ կշարունակեն ապրել և ստեղծագործել: Բացի այդ՝ հանդիպման ընթացքում Եգիպտոսի հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Գրիգոր Քուսանը նախագահին նվիրեց Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամի հեղինակած «Հայերը Եգիպտոսում 1896-1961 թթ.» գիրքը, որում հեղինակը ներկայացնում է եգիպտահայ համայնքի պատմությունը նշված ժամանակահատվածում[1, № 49, էջ 11]:

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը արաբ հասարակության շրջանում ճանաչելի դարձնելու համար Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ ստեղծված հանձնաժողովը 2015 թ. ընթացքում Կահիրեում մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, գիտաժողովներ իրականացրեց Եգիպտոսի տարբեր մշակութային հաստատություններում, որոնց ընթացքում ցուցադրվեցին Հայոց ցեղասպանության վերաբերյալ ֆիլմեր, փաստաթղթեր: Այս միջոցառումների շարքում կարևոր իրադարձություն էր Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք գրքուկների տպագրումը, որոնք ունեին հետևյալ վերնագրերը՝ «Հայկական հարցը արաբական աղբյուրներում 1878-1923 թթ.», «Ալեքսանդրիայի հայերը և նրանց դերը Եգիպտոսի կյանքում», «Հայկական հարցը միջազգային պայմանագրերում», «Հայոց ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.», «Հայկական կոտորածները. Ֆաիզ Ղուսեյնի վկայությունները», «Հայոց ցեղասպանությունը 1915 թ. ամերիկյան և բրիտանական մամուլում» և «Հայոց ցեղասպանությունը գերմանացիների և ավստրիացիների հուշերում» [1, № 57, 7-11 էջեր]: Նշենք, որ համիդյան կոտորածներից հետո Եգիպտոսն ապաստան է տվել 1000-ից ավելի հայ գաղթականների, 1909 թ. կիլիկիահայության կոտորածից հետո՝ մի քանի հարյուր գաղթականի, իսկ Մեծ Եղեռնի տարիներին Սուեդիայի 4200 հայ բնակիչ 45-օրյա պայքարից հետո տեղափոխվեց Եգիպտոս: Բացի այդ՝ 1920-ականներին այլ վայրերից Եգիպտոս տեղափոխվեցին մոտ 1000 հայ որբեր[1, № 57, էջ 13]:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Արեգ», Կահիրե, 2010-2015: (արաբերեն):
2. «Արև», Կահիրե, 1998-2009, (արաբերեն):
3. Թոփուզյան Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978:
4. Զէյթեան Ս., Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան և արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Մոնրեալ, 2004:
5. Ռիֆաթ ալ-Իմամ Մ., Հայերը Եգիպտոսում 1896-1961 թթ., Կահիրե, 2003, (արաբերեն):

АРМЯНО-ЕГИПЕТСКАЯ ДИАСПОРА НА СТРАНИЦАХ ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ «Арег» 2010-1015гг.

Мясник Есоян

ЕУ, кафедра Международных отношений, к. и. н.

Периодическое издание "Арег" описывает историю армянской общины Египта, подчеркивая вклад армянской диаспоры в дело активизации политической, экономической и социальной жизни Египта. Для того чтобы рассказать о первом геноциде 20-го века арабскому народу, в 2015 году были проведены несколько мероприятий в Каире, а также организованы лекции, конференции в различных культурных учреждениях Египта, которые были широко освещены на страницах арабского журнала. Помимо этого, издание «Арег», как и раньше в течение 2010–2015 гг. освещало различные культурные мероприятия и конференции, организованные армяно-египетской общиной.

Ключевые слова: культурные мероприятия, конференции, издание «Арег», армяно-египетская диаспора, геноцид.

THE EGYPTIAN-ARMENIAN COMMUNITY ON AREG MAGAZINE PAGES
IN 2010-2015

Myasnik Esoyan

EU, Chair of International Relations, PhD in History

"Areg" periodicals present the history of the Egyptian Armenian community, emphasizing the contribution of the Armenian community to the political, economic and social life of Egypt. To make the first genocide of the 20th century known to the Arab community in 2015, During a series of events in Cairo, lectures, conferences were held in various cultural institutions in Egypt, which did not miss the attention of the Arabic magazine. In addition, the Areg periodical keeps its focus on 2010-2015. the coverage of various cultural events and conferences organized by the Egyptian Armenian community.

Keywords: cultural events, conferences, "Areg" periodical, Egyptian-Armenian community, genocide.

*Ընդունվել է տպագրության՝ 28.03.2019թ.
Գրախոսվել է՝ 23.04.2019թ.*

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1920–1922 ԹԹ.)

Համո Սուքիասյան

ԵՃ Միջազգային հարաբերությունների ամբիոն,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դրցենտ
hamosukiasyan@gmail.com, +374 93 34 44 26

1920 թ. դեկտեմբերին խորհրդայնացման շրջանում Հայաստանում գործում էին Վրաստանի Հանրապետության, Խորհրդային Ռուսաստանի, Պարսկաստանի և քեմալական Թուրքիայի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները: Խորհրդայնացումից կարճ ժամանակ անց վրացական և ռուսական դիվանագիտական ներկայացուցչությունները փակվեցին, իսկ Երևանում գործող պարսկական ու թուրքական ներկայացուցչությունները շարունակեցին իրենց աշխատանքները: 1921 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում հիմնվեց նաև թուրքական հյուպատոսություն: Վերջինների հետ հայկական կառավարությունը հարաբերություններ էր իրականացնում արտաքին գործերի ժողկոմարի միջոցով: Պարսկական հյուպատոսությունը Հայաստանի հանդեպ բարեկամաբար էր տրամադրված, իսկ թուրքական ներկայացուցչություններն առավելապես զբաղված էին լրտեսական գործունեությամբ, կամ էլ փորձում էին իրենց ներկայացնել իբրև Խորհրդային Հայաստանում բնակվող մահմեդականների շահերի արահայտիչ:

Հիմնաբառեր. Խորհրդային Հայաստան, Խորհրդային Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան, Վրաստան, Երևան, հյուպատոսություն, ներկայացուցչություն, արտաքին գործերի ժողկոմար:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական ու հյուպատոսական հաստատություններ էր հիմնել բազմաթիվ պետություններում, Հայաստանի խորհրդայնացման նախօրեին ՀՀ-ում գործող օտարերկրյա ներկայացուցչությունների թիվը շատ սահմանափակ էր: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ մինչև 1922 թ. մարտի 12-ին Անդրկովկասյան դաշնության կազմավորումը, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՀՍԽՀ) ուներ ինքնուրույնու-

թյան որոշակի տարրեր, որի դրսևորման ձևերից էր արտերկրում սեփական դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների առկայությունը:

Օտարերկրյա ներկայացուցչություններ էին գործում նաև Խորհրդային Հայաստանում, որոնց հետ ՀՄԽՀ-ի անունից հարաբերություններ էր պահպանում արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը՝ հյուպատոսական բաժնի վարիչ և ժողկոմատի քարտուղար Միհրան Խոջամիրյանի միջոցով: Վերջինի ստորագրությամբ ժողկոմատը համապատասխան վկայականներ էր տրամադրում Թուրքիա կամ Պարսկաստան մեկնող վերջինների դիվանագիտական առաքելությունների աշխատակիցներին: Արտասահման մեկնողներին թույլտրվություն տալու հարցով ժողկոմատը գրագրություններ էր վարում նաև ՀՄԽՀ արտակարգ հանձնաժողովի հետ [6, թ. 31 և շրջ., 170; 13, թ. 41, 45, 53, 54, 58; 14, թ. 15, 48]:

Հանրապետությունում գործող օտարերկրյա ներկայացուցչությունների հետ Խորհրդային Հայաստանի հիմնարկությունների և անհատ քաղաքացիների հարաբերությունները կանոնակարգելու նպատակով ՀՄԽՀ արտգործժողկոմատը հատուկ կարգ էր սահմանել, համաձայն որի՝ ոչ մի հիմնարկություն կամ ծառայող առանց ժողկոմատի համաձայնության ու թույլտվության իրավունք չունեի պաշտոնական հարաբերությունների մեջ մտնել օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսությունների և մասնավոր անձանց հետ [21, էջ 364]: Փաստորեն, ՀՄԽՀ արտգործժողկոմատն իրեն էր վերապահել օտարերկրյա ներկայացուցչությունների հետ հարաբերությունների «մենաշնորհը»: Այսպիսի կարգ էր գործում նաև Խորհրդային Ռուսաստանում: Հանրապետությունում գտնվող օտարերկրյա ներկայացուցչությունների հետ հարաբերություններում ՀՄԽՀ արտգործժողկոմատն առաջնորդվում էր ՌՍԴԽՀ-ում գործող կարգով (մասնավորապես 1921 թ. հունիսի 30-ին ընդունված ՌՍԴԽՀ կառավարությանը կից հավատարմագրված օտարերկրյա պետությունների հյուպատոսական ներկայացուցչությունների մասին կանոնադրությամբ) [21, էջ 398-399]:

Խորհրդայնացման շրջանում Հայաստանում գործում էին Վրաստանի Հանրապետության, Խորհրդային Ռուսաստանի, Պարսկաս-

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

տանի և քեմալական Թուրքիայի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները:

Հայաստանի խորհրդայնացման նախօրեին մենշևիկյան Վրաստանը ներկայացուցչություն ուներ Երևանում և հյուպատոսություն՝ Ղարաքիլիսայում: Խորհրդայնացմանը հաջորդող օրերին գեներալ Կարալովի ղեկավարությամբ Երևանում շարունակեց գործել Վրաստանի ներկայացուցչությունը: Ղարաքիլիսայի վրացական հյուպատոսությունը ստեղծվել էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին:

1920 թ. դեկտեմբերի 5-ի, լույս 6-ի գիշերը վրացական իշխանությունների կողմից Թիֆլիսում Բորիս Լեգրանի գնացքը կալանավորելուց հետո Հայաստանի հեղկոմի կարգադրությամբ ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովը տնային կալանքի տակ վերցրեց Վրաստանի կառավարության ներկայացուցչին և ներկայացուցչության աշխատակիցներին: Միայն խնդիրը կարգավորվելուց հետո ՀՍԽՀ արտգործ ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանի ղեկտեմբերի 17-ի կարգադրությամբ վրացական ներկայացուցչության անդամներն ազատվեցին տնային կալանքից [9, թ. 1, 5; 17, N 4]: 1920 թ. դեկտեմբերին Լոռու չեզոք գոտու պատկանելության շուրջ հայ-վրացական գրագրություններին մասնակցում էր նաև Երևանում Վրաստանի ներկայացուցիչը: Այսպես՝ դեկտեմբերի 21-ին վրացական առաքելությանն ուղղված գրությամբ ՀՍԽՀ արտգործ ժողկոմատի քարտուղար Մ. Խոջամիրյանը ժողկոմի հանձնարարությամբ փոխանցեց Վրաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված Ա. Բեկզադյանի 1920 թ. դեկտեմբերի 18-ի հայտագիրը՝ Լոռու չեզոք գոտու պատկանելության հարցի վերաբերյալ [10, թ. 3-4 շրջ.]:

Երևանում և Ղարաքիլիսայում վրացական ներկայացուցչությունները գործեցին մինչև 1921 թ. փետրվարը (Վրաստանի խորհրդայնացումը):

Դիտարկվել է գծային կոռեկտ միապարամետրական վերջավոր հավասարումների համակարգերի լուծումը նվազագույն քառակուսիների մեթոդի համալուծ Դ-նմանակի հիման վրա, որն օգտագործում է ակարդ. Գ.Ե. Պուխովի դիֆերենցիալ ձևափոխությունների նորագույն օպերացիոն մեթոդը: Ներկայացվել են մեկ մոդելային օրինակի լուծման արդյունքները, որոնք ցուցադրում են առաջարկված նվազագույն քառակուսիների մեթոդի համալուծ Դ-նմանակի հաշվողական արդյունավետությունը:

Հիմնաբաներ. գծային միապարամետրական վերջավոր հավասարումների համակարգեր, դիֆերենցիալ ձևափոխություններ, նվազագույն քառակուսիների մեթոդի համալուծ Դ-նմանակ, մոդելային օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից մեթոդներ:

THE SOLUTION OF LINEAR SINGLE-PARAMETRIC SYSTEMS
OF FINITE EQUATIONS

Sargis Simonyan

NPUA, Chair of Information Technology and Automation
Doctor of Technical Sciences, Professor

Mariam Adamyan

NPUA, Chair of Information Technology and Automation, Post-graduate
student

The solution of linear correct one-parameter systems of finite equations is based on the use of the adjoint D-analogue of the least squares method, which operates with the latest operational method; i.e. differential transformations by Acad. G.E. Pukhov. The results of solving a single model example are presented, demonstrating the computational efficiency of the proposed conjugate D-analogue of the method of least squares.

Keywords: linear one-parameter systems of finite equations, differential transformations; conjugate D-analogue of the least squares method; model example; modern means of information technology.

Ընդունվել է պայագրությամբ՝ 01.04.2019թ.

Գրախոսվել է՝ 18.04.2019թ.

МОДЕЛИРОВАНИЕ ТЕПЛОвого ПОЛЯ ПОДЛОЖКИ ИНТЕГРАЛЬНЫХ СХЕМ

Ашот Арутюнян

НПУА, Кафедра «Микроэлектронных схем и систем», д.т.н., доцент
harash@seua.am, +374 94285504

Предложен метод моделирования теплового поля подложки полупроводниковых интегральных схем (ИС), основанный на подобию тепловых и электрических процессов. Построена соответствующая электрическая схема замещения теплообмена ИС, состоящая из источников тока и сопротивлений. Для реализации метода использован коммерческий программный инструмент моделирования электронных схем HSPICE. Разъяснена эффективность предложенного метода.

Ключевые слова: интегральная схема, электротепловое моделирование, тепловое поле подложки.

1. Введение

В развитии микроэлектроники наблюдаются две взаимосвязанные тенденции: миниатюризация и увеличение сложности систем. При этом наблюдается возрастание влияния ряда физических эффектов, среди которых особую важность приобретает тепловой эффект, который сильно влияет на параметрические, эксплуатационные показатели полупроводниковых приборов и на их надежность. В настоящее время с целью получения высокоинтегрированных микроэлектронных систем применяются такие инновационные методы построения ИС, как кремний на изоляторе и трехмерная интеграция [1]. Применение таких высокоинтегрированных структур, с одной стороны, облегчает увеличение сложности системы, с другой – требует более тщательного теплового моделирования.

Классические методы теплового моделирования можно разделить на две группы: аналитические и численные [2 – 4]. Типичные аналитические методы основаны на функции Грина, получение которой может быть выполнено методами отображения, преобразования Лапласа и разделе-

ния переменных. Аналитические методы обеспечивают высокую точность решения, однако в них отсутствует явная формула решения для реальных, сложных структур, что приводит к практической неприемлемости моделирования теплового поля сложных ИС.

Численные методы теплового моделирования основаны на использовании методов решения дифференциального уравнения теплообмена. В зависимости от формы дискретизации численные методы разделяются на две группы – конечных разностей и конечных элементов. Основным преимуществом этого подхода является в возможность анализировать сложные структуры, а в качестве недостатка можно отметить то, что эффективность и точность решения напрямую зависят от формы и шага дискретизации.

Несмотря на то, что за счет теплопроводимости полупроводниковой подложки распределение температуры до некоторой степени сглаживается, однако в распределении на поверхности подложки остаются достаточно большими. Отсюда следует, что в настоящее время большое значение имеет создание таких средств теплового моделирования ИС, которые на этапе размещения элементов дадут возможность оперативной оценки распределения температур. Это позволит при необходимости управлять распределением температур путем переразмещения элементов. С этой целью в настоящей работе предложен метод моделирования теплового поля подложки ИС, основанный на физическом подобии электрических и тепловых явлений. Это позволяет тепловое поле ИС представить в виде соответствующей электрической схемы замещения теплообмена ИС, построенной на источниках тока и сопротивлений.

2. Применение метода подобия для теплового моделирования

Применение метода подобия при моделировании процессов любой физической природы основано на том, что, несмотря на разнообразие различных физических явлений, часто имеет место сходство между законами двух областей физики, т.е. наблюдается физическая аналогия двух физических явлений. С этой точки зрения наиболее удобным и достаточно совершенным методом моделирования тепло-

ԻՆՖՈՐՄԱՏԻՎ

вых полей является метод электротепловой аналогии, основанный на подобии математической записи двух разных физических явлений: теплопроводности и электропроводности. Основа аналогии между этими двумя явлениями состоит в следующем [5].

Передача тепла теплопроводностью подчиняется закону Фурье, согласно которому

$$P = \Delta t/R_T, \quad (1)$$

а передача электричества в электропроводящей среде определяется законом Ома

$$I = \Delta U/R_{\Sigma}. \quad (2)$$

В приведенных формулах P и I – мощность или тепловой поток и электрический ток соответственно; R_T и R_{Σ} – тепловое и электрическое сопротивления, а Δt и ΔU – перепады температур и электрических напряжений.

Соответствие между основными параметрами, определяющими эти два процесса, приведено в таблице 1.

Таблица 1

Соответствие основных параметров тепло – и электропроводностей

Теплопроводность			Электропроводность		
Обозначение	Параметр	Размерность	Обозначение	Параметр	Размерность
P	Мощность	W	I	Ток	A
T	Температура	°C	U	Напряжение	V
R_T	Тепловое сопротивление	°C /W	R_{Σ}	Электрическое сопротивление	Ohm

Если на подложке ИС размещено N элементов, то конечный тепловой эффект от одновременного воздействия всех мощностей P_1, P_2, \dots, P_N на j -й элемент можно найти алгебраическим сложением результирующих эффектов действия каждого потока P_i , т.е. реализовав суперпозицию тепловых полей [6]. Тогда при стационарном тепловом режиме и при допущении температурной независимости

тепловых сопротивлений температура некоторого j – ого элемента как единой нагретой зоны будет

$$t_j = t_{En} + \sum_{i=1}^N R_{ij} P_i, \quad (3)$$

где t_{En} – температура окружающей среды; R_{ij} – тепловое сопротивление между k – ым и i – ым элементами.

В качестве нагретых зон могут фигурировать либо размещаемые элементы при регулярной структуре ИС, либо элементарные топологические области подложки, искусственным образом выделенные в виде тепловых ячеек с помощью ортогональной сетки. В обоих случаях получается регулярная структура нагретых зон, что облегчает построение электрической схемы замещения и позволяет автоматизировать ее синтез. При размещении разногабаритных элементов, с целью представления теплового поля с помощью резистивной схемы замещения, удобнее перейти от теплового взаимодействия отдельных элементов к взаимодействию нагретых зон регулярной структуры.

Электрическое моделирование тепловых процессов обладает стабильностью, надежностью и достоверностью полученных результатов, сравнительно высокой точностью, быстротой и удобством измерения, простотой проведения опытов. Этой аналогией легко воспользоваться для воспроизведения теплового процесса электрическим. Электрическим процессом легче управлять, за ним просто наблюдать и измерять все его параметры. Поэтому удобно именно таким процессом воспроизводить явление теплопроводности, которое само такими достоинствами не обладает.

3. Практическая реализация исследований

На основе вышеприведенного подхода моделирования, основанного на подобии тепло – и электропроводностей, разработан электротепловой метод моделирования теплового поля подложки ИС. Предложенный метод основан на базовой электротепловой модели элементарной тепловой ячейки, которая представлена на рис. 1.




Рис. 1. Электротепловая модель элементарной тепловой ячейки;
а – графическая модель подложки ИС, б – резистивная схема замещения элементарной тепловой ячейки. C_i – топологический центр i -ой тепловой ячейки, I_i – источник тока соответствующей мощности i -ой тепловой ячейки, $R_{i,i-1}$ и $R_{i,i+1}$ тепловые сопротивления i – ой ячейки с соседними ячейками, R_n – тепловое сопротивление подложки под i – ой ячейкой. R_k – тепловое сопротивление корпуса ИС.

На основе электротепловой модели элементарной тепловой ячейки можно построить обобщенную модель для топологии подложки ИС.

Значения сопротивлений всех резисторов R_{ij} и R_i оцениваются с помощью следующей формулы определения теплового сопротивления [6]:

$$R = \frac{d}{\lambda S}, \tag{4}$$

где d – соответственно либо топологическое расстояние между центрами ячеек при расчете R_{ij} , либо толщина полупроводниковой подложки при расчете R_i ; S – площадь теплообмена, которая определяется либо как произведение линейного топологического размера тепловой ячейки и толщины полупроводниковой подложки при расчете R_{ij} , либо как произведение топологической площади тепловой ячейки и толщины полупроводниковой подложки при расчете R_i ; λ – удельная теплопроводность подложки.

Если элементарная тепловая ячейка содержит лишь одну логическую ячейку, то значение тока в соответствующей тепловой ячейке узла схемы замещения берется равным мощности логической ячейки.

Если топологические размеры ячеек и нагретых зон не совпадают, то выделяемая нагретой зоной мощность оценивается по формуле

$$P = \sum_{i=1}^m P_i \frac{S_i \cap S_T}{S_T}, \quad (5)$$

Где $i = 1, \dots, m$ – множество логических ячеек, имеющих перекрытие топологической площади с площадью рассматриваемой тепловой ячейки; S_T – топологическая площадь тепловой ячейки; $S_i \cap S_T$ – площадь перекрытия i -й логической ячейки и тепловой ячейки.

В соответствии с электротепловой аналогией, численные значения температур тепловых ячеек в $^{\circ}\text{C}$ будут равны соответствующим напряжениям в вольтах с добавлением температуры окружающей среды. Следует отметить, что из-за больших погрешностей определения тепловых сопротивлений затруднена оценка температур с достаточной точностью. Однако предложенная методика дает вполне приемлемую точность относительных температур нагретых зон, что можно использовать при тепловом размещении ячеек.

Моделирование произведено для трех случаев линейного размещения ячеек с применением последовательного алгоритма размещения, описанного в [7]. При этом использована обобщенная критерия размещения элементов, учитывающего как электрическую связанность элементов так и тепловой режим ИС. В качестве тестового примера рассмотрим простейший пример линейного размещения 6-и логических ячеек тестовой логической схемы с 17-iscas85 [8]. Параметры логических ячеек выбраны из библиотеки стандартных ячеек, разработанной в учебном департаменте компании “Синопис Армения” [9]. Ячейки имеют следующие значения мощностей ячеек: $P_1=1,15 \cdot 10^{-6}\text{Вт}$; $P_2=1,26 \cdot 10^{-6}\text{Вт}$; $P_3=1,17 \cdot 10^{-6}\text{Вт}$; $P_4=2,52 \cdot 10^{-6}\text{Вт}$; $P_5=3,6 \cdot 10^{-6}\text{Вт}$; $P_6=2,7 \cdot 10^{-6}\text{Вт}$. Толщина

ԻՆՖՈՐՄԱՏԻՎ

полупроводниковой подложки выбрана равной 30 мкм. Удельная теплопроводность кремниевой подложки принята равной 1,4 Вт/см·град. С учетом сказанного и на основе формулы (4) получены следующие значения сопротивлений схемы замещения: $R_{ij}=4,5 \cdot 10^4$ Ом, $R_i=2 \cdot 10^4$ Ом. Тепловое сопротивление корпуса принято равным $R_p=1,2 \cdot 10^7$ Ом.

Моделирование произведено для трех случаев линейного размещения ячеек:

- с учетом лишь электрической связанности логических ячеек;
- с учетом лишь равномерности распределения мощностей;
- при совместном учете как электрической связанности, так и равномерности распределения мощностей.

Так как логические ячейки имеют различные топологические длины, использованы виртуальные тепловые ячейки одинаковых длин. Для удобства ширина тепловых ячеек выбрана равной высоте логических ячеек. С целью электротеплового моделирования длина линейного размещения элементов разделена на пять равных элементарных тепловых ячеек.

Зависимости теплового поля для вышесказанных вариантов размещений приведены на рис. 2.




Рис. 2. Графики теплового поля линейно размещенных ячеек тестовой схемы, где a, b и c соответствуют вышеприведенным вариантам размещения ячеек

Как видно из рис. 2, размещение элементов с учетом их мощностей приводит к выравниванию теплового поля. Результаты электротеплового моделирования ряда тестовых схем показали, что учет мощностей логических ячеек при их размещении приводит к выравниванию теплового поля на 70...80%.

4. Заключение

Метод электротеплового моделирования позволяет представить размещение теплового поля элементов ИС в виде идентичной электрической схемы, где тепловые параметры заменены соответствующими электрическими параметрами. Построенную электрическую схему можно анализировать с помощью эффективных стандартных программных инструментов схемотехнического моделирования. Результаты реализации предложенного подхода на ряде тестовых схем показали высокую эффективность метода. Предлагаемый подход может быть внедрен в существующие средства САПР на этапе размещения, что даст возможность принятия обоснованных решений с точки зрения выравнивания теплового поля подложки ИС, тем самым понижая температуру наиболее перегретых локальных зон.

Список использованной литературы

1. The International Technology Roadmap for Semiconductors (ITRS), 2013.
2. Thermal Analysis of Semiconductor Systems. Freescale Semiconductor, Inc. -2008. -24 p.
3. V. Székely Introduction to thermal simulation. Budapest University of Technology and Economics. Budapest, 2009.
4. Y. Zhan, S. Kumar and S. Sapatnekar Thermally Aware Design. Foundations and Trends. Electronic Design Automation. Vol. 2, No. 3. 2008. 255–370 pp.
5. Thermal Analysis of Semiconductor Systems. © Freescale Semiconductor, Inc. 2008. Document Number: BASICTHERMALWP/ REV 0.

6. Г. Н. Дульнев Теория тепло- и массообмена. Санкт – Петербург, НИУ ИТМО, 2012.
7. А. Г. Арутюнян Повышение равномерности распределения теплового поля при начальном размещении топологических ячеек ИС. Проблемы разработки перспективных микро- и наноэлектронных систем. Сборник научных трудов / Под общ. ред. А.Л. Стемповского. Москва. Институт проблем проектирования в микроэлектронике РАН, 2008.- С. 251-254.
8. Benchmark circuits. ISCAS '85,
<http://www.pld.ttu.ee/~maksim/benchmarks/iscas85/verilog/?C=D;O=A>
9. Digital Standard Cell Library. SAED_EDK90_CORE DATABOOK. © 2008 SYNOPSIS ARMENIA Educational Department. Yerevan, 2008.

ԻՆՏԵԳՐԱԼ ՍԻՆՄԱՆԵՐԻ ՏԱԿԴԻՐԻ ՋԵՐՄԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

Աշոտ Հարությունյան

ՀԱՊՀ, Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր
տեխ.գ.դ., դոցենտ

Առաջարկված է կիսահաղորդչային ինտեգրալ սխեմաների (ԻՍ) տակդիրի ջերմային դաշտի մոդելավորման մեթոդ, հիմնված ջերմային և էլեկտրական գործընթացների նմանության վրա: Կառուցվել է ԻՍ-երի ջերմափոխանակության համապատասխան համարժեք էլեկտրական սխեմա, կազմված հոսանքի աղբյուրներից և դիմադրություններից: Մեթոդի իրագործման համար օգտագործված է էլեկտրոնային սխեմաների մոդելավորման HSPICE ծրագրային գործիքը: Պարզաբանված է առաջարկված մեթոդի արդյունավետությունը:

Հիմնաբաներ. ինտեգրալ սխեմա, էլեկտրաջերմային մոդելավորում, տակդիրի ջերմային դաշտ:

MODELING THE THERMAL FIELD OF THE SUBSTRATE OF
INTEGRATED CIRCUITS

Ashot Harutyunyan

NPUA, Chair of Microelectronic Circuits and Systems

Doctor of Technical Sciences, Associate Professor

A method for modeling the thermal field of a semiconductor integrated circuits (ICs) substrate, based on the similarity of thermal and electrical processes is proposed. Corresponding electric circuit for replacement of heat transfer of ICs is constructed, consisting of current sources and resistors. To implement the method, HSPICE tool for IC simulation is used. The effectiveness of the proposed method is explained.

Keywords: integrated circuit, electrothermal modeling, thermal field of the substrate.

Ընդունվել է տպագրության՝ 22.03.2019թ.

Գրախոսվել է՝ 17.04.2019թ.

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՐԺԵՇՂԹԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Արմինե Մատենյան

ԵՎ, Զբոսաշրջության և սպասարկման
նոր տեխնոլոգիաների ամբիոն
matentsyana@gmail.com, +374 99 845283

Հոդվածը նվիրված է զբոսաշրջային արդյունքի արժեզրեայի ֆե-նոմենի բացահայտմանը և ժամանակակից զբոսաշրջային շուկայում արժեքի ստեղծման տարբեր շղթաների ձևավորման սկզբունքների վերլուծությանը: Այսօր զբոսաշրջության դինամիկ զարգացման կարևոր միտումներից է սպառողի վարքագծի այնպիսի փոփոխությունը, որի արդյունքում իրենց կառուցվածքն են փոխում զբոսաշրջային արդյունքի արժեքի ստեղծման ավանդական մատակարարման շղթաները՝ զիջելով պահանջարկի շղթաներին: Զբոսաշրջային արժեզրեայի գաղափարի դիտարկմանը նվիրված մի շարք գիտական աշխատությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել շղթաների երեք հիմնական տեսակներ՝ ըստ մատակարարի, միջնորդի և սպառողի գերակայության: Հոդվածում առաջարկվել է արժեզրեայի ձևավորման մեկ այլ կառուցվածք՝ փոխադարձ և հակառակ ուղղվածության երեք հորիզոնականների համադրման սկզբունքով: Հատուկ ուշադրություն է դարձվել շղթայում միջնորդների օղակի կառուցվածքին, որի արդի զարգացումներն ապագայում կարող են հանգեցնել զբոսաշրջային բիզնեսի օֆլայն միջնորդների հեղափոխությանը և օնլայն միջնորդության ծավալների աննախադեպ աճին:

Հիմնաբառեր. զբոսաշրջային արդյունք, արժեզրեայի ստեղծում, մատակարարման և պահանջարկի շղթաներ, կազմակերպված զբոսաշրջություն, ինքնուրույն զբոսաշրջիկ, օնլայն միջնորդություն:

Ժամանակակից զբոսաշրջային շուկայի զարգացման կարևոր միտումներից է շուկայի հիմնական մասնակիցների՝ զբոսաշրջային արդյունք ստեղծողների և սպառողների միջև փոխհարաբերությունների ձևաչափի փոփոխությունը, որը պայմանավորված է զբոսաշրջային ծառայությունների պահանջարկի բարդացման գործընթացով: Եթե 20-րդ դարի վերջին զբոսաշրջային պահանջարկը դեռ ձևավորվում էր

ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

զբոսաշրջային առաջարկի ազդեցության ներքո, ապա 21-րդ դարի սկզբից անցած գրեթե երկու տասնամյակների ընթացքում իրավիճակի զարգացումը «թեքվեց» հակառակ ուղղությամբ: Ակնհայտ դարձավ սպառողական պահանջմունքների թե՛ կազմակերպական, թե՛ բովանդակային դիֆերենցման խորացումը, որի հիմքում ընկած է առաջին հերթին մարդկանց տեղեկատվական և նյութական հնարավորությունների ընդլայնումը: Amadeus IT Group ընկերության փորձագետների պատրաստած՝ «Future Traveller Tribes-2020» զեկույցում զբոսաշրջային ընկերությունների արդի զարգացման կայուն միտում է ճանաչվել «տեխնոլոգիաների հումանիզացումը», որի տակ պետք է հասկանալ «ինտուիտիվ փոխգործակցություն ճանապարհորդող անձանց և նրանց սպասարկողների միջև» [1]: Ավելին՝ փորձագետների կարծիքով, ապագա ճանապարհորդները, դառնալով ավելի ու ավելի տեղեկացված, առավել պահանջկոտ ու ընտրողական վարքագիծ են դրսևորելու, ուստի և տուրիստական ընկերությունները պետք է պատրաստ լինեն բավարարելու պահանջմունքների աճող բազմազանությունը: Այսպիսով, զբոսաշրջության զարգացման արդի պայմաններում ծառայությունների առաջարկը լիովին պայմանավորված է պահանջարկով, քանի որ զբոսաշրջիկները ոչ միայն ակտիվորեն մասնակցում են տուրապրանքի ստեղծման գործընթացին (կազմակերպված զբոսաշրջության շրջանակներում), այլև, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների նորանոր նվաճումները, կարող են ինքնուրույն ձևավորել իրենց սեփական տուրարդյունքը (չկազմակերպված զբոսաշրջության շրջանակներում)¹:

Սպառողի կողմից տուրապրանքի ընկալումն ու համապատասխան պահանջարկի ձևավորումը ենթադրում են մեր կողմից «զբոսաշրջային արդյունք» և «զբոսաշրջային արդյունքի արժեք» հասկացությունների ճշտում: Զբոսաշրջային արդյունքը դա ծառայությունների ամբողջական համալիր է, որը կարող է վաճառվել զբոսաշրջային փաթեթի ձևաչափով: Վերջինն, իր հերթին, ընդգրկում է ծառայությունների մատուցման առնվազն երկու գործառույթ՝ կապված տրանսպորտային (և դրա հետ առնչվող), հյուրանոցային (և դրա հետ առնչվող) ծառայությունների հետ, ինչպես նաև այն ծառայությունների

¹ Երբ զբոսաշրջիկն ինքնուրույն է ծրագրում և կազմակերպում իր ուղևորությունը՝ առանց զբոսաշրջային գործակալության միջնորդության:

հետ, որոնք կապված չեն տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների հետ և զբոսաշրջային արդյունքի էական մասն են կազմում [2]: Տվյալ մեկնաբանության շրջանակներում հասկացությունը սահմանվում է առաջին հերթին արտադրողի տեսանկյունից: Սակայն զբոսաշրջիկն զբոսաշրջային արդյունքն ավելի լայն է ընկալում, քանի որ նրա համար դա ոչ թե պարզապես ծառայությունների համալիր է, այլև՝ տարաբնույթ տպավորությունների ամբողջություն: Այդ իսկ պատճառով, խոսելով զբոսաշրջային արդյունքի մասին պահանջարկի կտրվածքով, ավելի նպատակահարմար է օգտագործել «զբոսաշրջային արդյունքի արժեք» եզրույթը:

Անհրաժեշտ է նշել, որ զբոսաշրջային արդյունքի արժեքի համընդհանուր բնութագիր դեռևս չի մշակվել: Լայն իմաստով այն իրենից կարող է ներկայացնել իրարից անկախ արժեքների տարբեր համադրություններ, որոնց առանձին բաղադրիչների ազդեցության աստիճանը սպառողի որոշման վրա կարող է միանգամայն տարբեր լինել (Շեթ - Նյուման - Գրոսի հինգ արժեքների հայեցակարգը) [3]: Նեղ իմաստով զբոսաշրջային արդյունքի արժեքը հանդես է գալիս իբրև որոշակի սպառողական օգուտ, որը բավականաչափ անհատականացված է կոնկրետ զբոսաշրջիկի համար: Անհատականացված զբոսաշրջային պահանջարկի պայմաններում առաջ է գալիս զբոսապրանքի արժեքը ստեղծման գաղափարը, որը հիմնված է այն դրույթի վրա, որ ամեն մի արդյունք (ծառայություն) պահանջում է արժեք ստեղծող գործողությունների որոշակի ալգորիթմ, որն իրականացվում է որոշակի թվով կատարողների կողմից՝ ձևավորելով արժեքի ստեղծման ամբողջական համակարգ (value-creating system) [4]: Իսկ «զբոսաշրջային արդյունքի արժեքը» հասկացությունը սահմանվում է որպես երկարաժամկետ կողմնորոշմամբ ստեղծված կայուն կառուցվածք, որը կազմված է բիզնեսի իրացման տեսանկյունից հավասար իրավունքներով օժտված և յուրահատուկ շուկաներ սպասարկող գործընկեր-կազմակերպություններից [5]: Ի տարբերություն Մ.Պորտերի կողմից ավելի վաղ առաջարկված մոտեցման², արժեքը ստեղծման ժամանակակից հայեցակարգը ենթադրում է շրջային մոդելում ընդգրկել մասնակից ընկերության համար ոչ միայն ներքին, այլև բու-

² Ի սկզբանե Պորտերը ենթադրում էր, որ արժեքը ստեղծումն իրականացվում է միայն առանձին ձեռնարկության շրջանակներում [6]:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

լոր արտաքին գործընթացները՝ այնպես, որ շղթան հանդիսանում է ընկերությունների մի ամբողջ ցանցի բազմամակարդակ փոխգործակցության արդյունք (value nets): Այս դրույթի ճշմարիտ ապացույցները կարող ենք գտնել զբոսաշրջային բիզնեսի արդի զարգացումներում. թեև համալիր տուրապրանքի առանձին բաղադրիչները տարբեր դերակատարություն ունեն պահանջարկի գեներացման հարցում, բայցևայնպես, զբոսաշրջային արդյունքի սպառողական ընդհանուր արժեքը ձևավորվում է արժեշղթայի ստեղծմանը մասնակցող բոլոր կառույցների համատեղ աշխատանքի շնորհիվ:

Զբոսաշրջության ոլորտում արժեշղթաների ստեղծման ֆենոմենը հետազոտողների կողմից դիտարկվում է գիտելիքային տարբեր տեսանկյուններից՝ տնտեսագիտության և մենեջմենթի, մարքեթինգի և լոգիստիկայի, ռեկրեացիոն աշխարհագրության և տարածքների կայուն զարգացման կառավարման և այլն: Ընդ որում, ինչպես դա հաճախ պատահում է միջգիտակարգային երևույթների հետ, միասնական գիտական մոտեցումը բացակայում է: Այս թեմայի բացահայտմանն ուղղված մի շարք աշխատությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ դրանց մեծ մասը հիմնված է այսպես կոչված SCM (Supply Chain Management) մոտեցման, կամ մատակարարման շղթայի հայեցակարգի վրա: Արևմտյան հեղինակներն ավելի հաճախ կիրառում են նեղ բնագավառային TSC (Tourism Supply Chain) մոտեցումը: Մի շարք գիտական ուսումնասիրություններում դիտարկված «զբոսաշրջային արդյունքի արժեշղթա» հասկացության համեմատական վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1.

Զբոսաշրջային արդյունքի արժեզրթայի հայեցակարգը մի շարք գիտական աշխատություններում (ժամանակագրական հաջորդականությամբ)


Զբոսաշրջային արդյունքի արժեզրթայի հասկացության մեկնաբանություն	Տ/թ	Հեղինակ
Զբոսաշրջային արդյունքի տիպիկ արժեզրթայի կազմված է չորս տարրերից՝ զբոսաշրջային ծառայության մատակարարից, տուրօպերատորից, տուրգործակալից և հաճախորդից [7]	2000	M.Kaukal, W.Hupken, H.Werthner
Շղթա, որը ներառում է բոլոր ապրանք և ծառայություն արտադրողներին, ովքեր կարող են համարվել զբոսաշրջային համալիր արդյունքի մատակարարներ [8]	2004	R.Tapper, X.Font
Արժեզրթայն ներկայացված է հետևյալ տարրերով՝ մատակարարներ (կոնտրգործակալներ՝ սպասարկող պրովայդերներ), ֆինանսական միջնորդներ (տուրիպերատորներ և տուրգործակալներ) և զբոսաշրջիկներ [9]	2006	N.Homayooni
Զբոսաշրջային-ռեկրեացիոն գոտու լոգիստիկ համալիր՝ միասնական համակարգ, որն ինտեգրացնում է զբոսաշրջային գործունեության բոլոր տեսակները և նվազագույն ժամանակատարությամբ իրականացնում է տեղեկատվական, ֆինանսական, կադրային և զբոսաշրջային հոսքերի առավել օպտիմալ կառավարում [10]	2007	Е.А.Ино- земцева
Զբոսաշրջային արժեքի կուտակման համակարգ, որը ներառում է չորս տիպի մատակարարման շղթաներ. 1) տրանսպորտային ծառայություններ, 2) տեղավորման և ժամանցի ծառայություններ, 3) տուրապրանքի իրացման ցանց՝ տուրօպերատորներ և տուրգործակալներ, 4) զբոսաշրջիկներ [11]	2007	А.Ю.Алек- сандрова
Շղթան ներառում է արտադրական գործունեության հինգ հատված՝ տեղավորում, հանրային սնունդ, ուղևորությունների կազմակերպում, տրանսպորտ և հանրային	2009	R.Denman, J.Denman

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

<p>առևտուր: Ընդգծված է, որ ամեն մի հատվածի շրջանակներում կարելի է մի քանի մատակարարման շղթա ձևավորել [12]</p>		
<p>Զբոսաշրջային ծառայությունների մատուցման լոգիստիկ շղթա՝ որպես տնտեսական միավորների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) միավորում, որոնք անմիջականորեն մասնակցում են հիմնական և լրացուցիչ ծառայությունների իրացմանը, ինչպես նաև դրանց ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվական, ֆինանսական և կադրային ռեսուրսները: Առաջնային դերը տրվում է ՋՏԼԿ-ին (զբոսաշրջային տեղեկատվական լոգիստիկ կենտրոն) [13]</p>	<p>2009</p>	<p>Օ.Տ.Акимова</p>
<p>TSC-ը՝ զբոսաշրջային մատակարարման շղթաները սահմանվում են իբրև զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունների ցանցեր, որոնք վերջնական արժեքը ձևավորում են կոնկրետ դեստինացիայում մատուցվող տարաբնույթ ծառայությունների օգնությամբ և ընդգրկում են մասնակիցների լայն շրջանակներ մասնավոր և պետական հատվածներից [14]</p>	<p>2010</p>	<p>X.Zhang, H.Song, G.Q.Huang</p>
<p>Շղթայի տարրերը միավորված են տուրապրանքի ստեղծման հետ կապված լոգիստիկ գործողությունների կիրառման գործառույթային օղակներում. մատակարարում (ծառայությունների մատակարարներն ու նրանց միջնորդները), արտադրություն (տուրօպերատորներ), իրացում (տուրգործակալներ և սպառողներ) [15]</p>	<p>2012</p>	<p>Т.Н.Одинцова</p>
<p>Զբոսաշրջային արդյունքի արժեշղթան իրենից ներկայացնում է զբոսաշրջային ոլորտի միջկազմակերպական ցանցային փոխհարաբերությունների ձև, որն ունի կայուն կառուցվածք, երկարաժամկետ համագործակցության կողմնորոշում և կազմված է տուրծառայությունների մատակարարներից, միջնորդներից և սպառողներից [16]</p>	<p>2015</p>	<p>Н.В.Рубцова</p>

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Բոլոր դեպքերում, զբոսաշրջության ոլորտին բնորոշ են բարդ արժեզրթաները, որոնց ամեն մի գործառույթային օղակում կարող են մեծ թվով գործողներ լինել: Հետևաբար, այն դեպքերում, երբ արժեքի ստեղծման փուլը ներկայացված է մասնակիցների խմբով, գործ ունենք զբոսաշրջային արդյունքի արժեքի ստեղծման ցանցի հետ (tourism value chain network): Այնուամենայնիվ, նմանատիպ համագործակցության առանցքային բնութագիրը դա արժեքի ստեղծման «հորիզոնական» շղթան է: Այս առումով նպատակահարմար ենք գտնում փոքր ինչ վերահիմաստավորել մատակարարման ավանդական միակողմանի ուղղված շղթան, և այն ներկայացնել հետևյալ կերպ. նախ համադրել S (supply) և D (demand) շղթաների փոխադարձաբար ուղղված հորիզոնականները, ինչպես նաև ավելացնել երրորդ՝ միջնորդի երկկողմանի-հակառակ ուղղված R (reselling) հորիզոնականը: Առաջարկված գաղափարը պատկերված է Նկար 1-ում:



Նկար 1. Զբոսաշրջային արդյունքի արժեքի ստեղծման համակարգը՝ փարբեր շղթաների համադրման արդյունքում

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Նկարում պատկերված համակարգը ենթադրում է, որ զբոսաշրջային արդյունքի արժեշտը կարող է գերիշխել այս կամ օղակը՝ կախված համակարգի գործման կոնկրետ պայմաններից: Ինչպես երևում է նկարից, զբոսաշրջության ոլորտում դա կարող է դրսևորվել երեք տարբերակով.

1. Երբ շուկային առաջարկվում են միանմանեցված պատրաստի տուրփաթեթներ, այսինքն՝ արդյունքն ի սկզբանե կանխորոշված է, և գոյություն ունեն դրա մատուցման լիովին ստանդարտացված ընթացակարգեր: Այս դեպքում գերիշխում է մատակարարման օղակը³:

2. Հատուկ, էքսկլյուզիվ զբոսաշրջային պատվերների դեպքում (անհատական կամ VIP-տուրեր) աճում է ընդգծված ուշադրությունը պահանջարկի նկատմամբ՝ ձևավորելով այնպիսի արժեշտը, որում գերիշխում է սպառողի օղակը:

3. Զարգացած մրցակցային զբոսաշրջային շուկայում առավել տարածված՝ երրորդ տարբերակը դրսևորվում է, երբ սպառողն ունի տուրփաթեթի բաղադրիչ-ծառայությունների տարբերակման լայն հնարավորություններ և կարող է ընտրել նույն դեստինացիայի համար կազմված տասնյակ պատրաստի փաթեթներից այն մեկը, որը լավագույնս կհամապատասխանի իր պահանջմունքներին: Այս դեպքում տեղի է ունենում պահանջարկի և առաջարկի առավել ակտիվ փոխգործակցություն հատկապես տուրի կազմակերպման մակարդակում, այսինքն՝ միջնորդի օղակի գերիշխման իրավիճակում, որի դեպքում էլ, մեր կարծիքով, ձևավորվում է զբոսաշրջային արդյունքի արժեքի ամենաարդյունավետ շղթան:

Միջնորդի օղակի գերիշխումը, որպես կանոն, ավելի հաճախ արտահայտված է զբոսաշրջային արդյունքի արժեքի ստեղծման միջազ-

³ Անհրաժեշտ է ասել, որ մատակարարման օղակում գերիշխող կարող է լինել ցանկացած սերվիսային պրովայդեր կամ կոնտրգործակալ (հյուրանոց, տրանսպորտային ընկերություն, ՀՍՍՕ, ժամանցի կազմակերպություն և այլն): Երբեմն էլ առկա են իրավիճակներ, երբ որևէ մեկ պրովայդերի մենաշնորհային դիրքի պատճառով նրան պետք է ենթարկվեն շղթայի այլ մասնակիցները: Օրինակ, Բայկալ լճի հանրահայտ Օլխոն կղզին մայր ցամաքի հետ կապվում է միայն ջրային տրանսպորտի օգնությամբ: Փոխադրումն իրականացնում է միակ մոնոպոլիստ-ընկերությունը, որի աշխատանքային գրաֆիկին պետք է հարմարվեն տվյալ զբոսաշրջային արդյունքի արժեշտը մնացած մասնակիցները՝ այլ ծառայությունների մատակարարները, միջնորդներն ու սպառողները: Նմանատիպ դեպքերի կարելի է հանդիպել աշխարհի տարբեր դեստինացիաներում:

գային շղթաներում՝ ներգնա և արտագնա տուրերի կազմակերպման գործընթացներում: Մինչդեռ աշխարհագրական տարածքների ավելի նեղ ընդգրկումով տուրերի կազմակերպման դեպքում (ասենք՝ անցագրային սահմանափակումներ չունեցող հարևան երկրների տարածքներում, կամ որոշակի տարածաշրջանային միավորման շրջանակներում սերտ համագործակցակցող երկրների տարածքներում, ու առավել ևս՝ ներքին տուրերի շրջանակներում) զբոսաշրջային արդյունքի արժեշղթայում դոմինանտ դերը կարող է ստանձնել մատակարարման օղակի մասնակիցներից որևէ մեկը:

Պետք է շեշտել, որ արժեշղթայի միջնորդի օղակն այսօր կարող է ներկայանալ բնավ ոչ միայն տուրօպերատորական և տուրգործակալական ընկերություններով: Զբոսաշրջային արդյունաբերության զարգացման թերևս ամենաարդիական միտումը արտահայտված է համացանցային կայքերի և մասնագիտացված պորտալների տարեցտարի աճող դերով: Վերջինները հանդես են գալիս որպես միջնորդներ՝ սպառողների և զբոսաշրջության ոլորտի ծառայությունների մատակարարների միջև, «զինված» են անհրաժեշտ ինֆորմացիայի որոնման մեխանիզմներով և ծառայությունների ու տուրապրանքների լայն սպեկտր են առաջարկում: Այնպիսի հանրահայտ ինտերնետ-հարթակները, ինչպես օրինակ՝ Expedia-ն, TripAdvisor-ը, Booking.com-ը, Yahoo Travel-ը, Priceline-ը, Travelocity-ն, EnglandNet-ը, Skyscanner-ը, Kayak-ը, Jizo-ն, Momondo-ն և այլն, իրենցից ներկայացնում են հզորագույն մետա-որոնողական համակարգեր, որոնց առավելությունը՝ սպառողին տրամադրվող արժեքավոր տեղեկությունների վիթխարի ծավալն է: Ի լրացումն կոմերցիոն տեղեկատվության, այս հարթակները ներառում են օգտակար խորհուրդներ ճանապարհորդներին, զբոսաշրջային կենտրոնների և տեսարժան վայրերի նկարագրություններով հագեցած ուղեցույցներ, զանազան ինտերակտիվ քարտեզներ, եղանակի տեսություն, արտարժույթի փոխանակման կուրսեր և այլն: Հարթակներից օգտվողները գրեթե ազատվում են այլ աղբյուրներից ինֆորմացիա հայթայթելու անհրաժեշտությունից: Բացի դրանից, օնլայն ամրագրումներ իրականացնող խոշոր հարթակների հաջողության գրավականներ են հանդիսանում այնպիսի առավելությունները, որոնցով այդ ինտերնետային ռեսուրսները շահավետ կերպով տարբերվում են

ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

տուրօպերատորներից և տուրգործակալներից: Այդ առավելություններից են՝

- ամրագրումների շուրջօրյա հասանելիությունը,
- ամրագրման արագ փոփոխության կամ չեղարկման հնարավորությունը,
- մայրենի կամ այլ մատչելի լեզվով հաճախորդների աջակցման ծառայությունը,
- հատուկ մոտիվացնող ակցիաների մշտական անցկացումը,
- ամբողջ աշխարհով սփռված հյուրանոցների և տրանսպորտային ընկերությունների հսկայական բազաները,
- ինտերնետ միացման կանալների պաշտպանվածությունը,
- սեփական փորձով կիսվող հարյուրավոր մարդկանց կարծիքների և ակնարկների առկայությունը,
- օպերատիվ հետադարձ կապի հնարավորությունը:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ այսօր աշխարհում զբոսաշրջային ընկերությունների ծառայություններից հիմնականում օգտվում են ավելի ցածր եկամուտներ և համեմատաբար ցածր կրթական մակարդակ ունեցող մարդիկ, ովքեր ապրում են փոքր բնակավայրերում, երբեմն՝ անհրաժեշտ կոմունիկացիաների բացակայության պայմաններում, հաճախ՝ համապատասխան գիտելիքների և ֆինանսական միջոցների անբավարարությամբ: Այս գործոնները մարդկանց տվյալ կատեգորիայի մոտ ամրագրումներ կատարելու հարցում անհաղթահարելի դժվարություններ են առաջացնում, ուստի և, որպես ճանապարհորդելու առավել մատչելի և ապահով տարբերակ, մնում է զբոսաշրջային ընկերության ծառայություններից օգտվելը: Դրան հակառակ՝ «ինքնուրույն» (չկազմակերպված) զբոսաշրջիկներն աչքի են ընկնում բարձր կրթական մակարդակով, առնվազը մեկ օտար լեզվի իմացությամբ և SS բարձր իրազեկությամբ, բնակվում են, որպես կանոն, խոշոր քաղաքներում և ունեն միջինից բարձր եկամուտներ [17]:

Զբոսաշրջության ոլորտի որոշ փորձագետներ գտնում են, որ օնլայն միջնորդության վերջին տարիների աննախադեպ զարգացումը և երիտասարդ սպառողների աճող իրազեկությունը թվային տեխնոլոգիաների ասպարեզում աստիճանաբար կհանգեցնեն զբոսաշրջային բիզնեսի օֆլայն միջնորդների՝ տուրօպերատորների և տուրգործակալների հետզհետե անհետացմանը: Դա, իր հերթին, անվերադարձ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Կփոխի զբոսաշրջային արդյունքի արժեշդթայի կառուցվածքը, որում այլևս կբացակայեն համալիր տուրապրանք ստեղծող և վաճառող կազմակերպությունները: Եվ, քանի որ աշխարհի հիմնական ուղարկող տարածաշրջաններում այդ ծառայությունների պահանջարկն իսկապես նվազում է, ապա կարելի է ենթադրել, որ տուրօպերատորական և տուրգործակալական գործունեություն իրականացնող ընկերություններն աստիճանաբար կդիրքավորվեն էքսկյուզիվ, անհատականացված տուրերի կազմակերպման սեգմենտում, որն այսօր բավական հեռանկարային է և կարող է համաշխարհային զբոսաշրջային բիզնեսի հետագա զարգացման վեկտորային ուղղությունը դառնալ: Նման զարգացման դեպքում, զբոսաշրջային արդյունքի արժեշդթայում վերջնականապես կհաստատվի սպառողի գերիշխանությունը, և ամենամեծ տարածումը կգտնեն պահանջարկի շղթաները:

Օգտագործված գրականության ցանկ

1. “Future Traveller Tribes - 2020”, Report for the Air Travel Industry Developed by Henley Centre Headlight Vision in partnership with Amadeus. URL: <http://www.amadeus.com/documents/future-traveller-tribes-2030/travel-report-future-traveller-tribes-2020.pdf>
2. ՀՀ Օրենքը զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին (ընդունված 17.12.2003թ.)
URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64659>
3. Sheth J., Newman B. I., Gross B. L. Consumption Values and Market Choices: Theory and Applications. Cincinnati OH, South Western Publishing Company, 1991.
4. Меллер К., Райала А. Рост стратегических сетей – новые модели создания ценности // Российский журнал менеджмента. 2011, Т. 6, №4.
5. Шерешева М. Ю. Формы сетевого взаимодействия компаний в сфере гостеприимства. Курс лекций: учеб. пособие. – М.: Изд. дом ГУ ВШЭ, 2015.
6. Porter M. Competitive Advantages: Creating and Sustaining Performance. – New York, Simon and Schuster Inc., 1998.

7. Kaukal M., Hupken W., Werthner H. An Approach to Enable Interoperability in Electronic Tourism Markets. // Proceedings of the 8th European Conference on Information System. ECIS - 2000.
8. Tapper R., Font X. Tourism Supply Chains: Report of a Desk Research Project for the Travel Foundation. Leeds Metropolitan University, Environment Business & Development Group, 2004. URL: <http://www.lmu.ac.uk/lisif/the/Tourism-SupplyChains.pdf>
9. Homayooni N. The Impact of the Internet on the Distribution Value Chain: the Case of the Iranian Tourism Industry. Lulea University of Technology, 2006.
10. Иноземцева Е. А. Туристско-рекреационная зона как логистическая система / Материалы Всероссийской научно-исследовательской конференции «Современные тенденции развития и практики управления отечественными предприятиями». Ставрополь: СКГТУ, 2007.
11. Александрова А. Ю. Кластеры в мировой индустрии туризма // Вестник московского университета. Серия «Экономика». 2007, № 5.
12. Denman R., Denman J. Tourism and Poverty Alleviation: Practical Steps for Destinations // SNV & UNWTO, 2009.
13. Акимова О. С. Проектирование и организация логистической системы туристского обслуживания: монография. СПб, 2009.
14. Zhang X., Song H., Huang G. Q. Tourism Supply Chain Management: a New Research Agenda // Tourism Management. № 30, 2010.
15. Одинцова Т. Н. Методологические основы управления логистической системой туристского обслуживания: монография.– СПб, 2012.
16. Рубцова Н. В. Цепочка создания ценности туристского продукта в России // Региональная экономика: теория и практика. 2015, №40.
17. Horner S., Swarbrooke J. Consumer Behaviour in Tourism (Third Edition). Routledge Taylor & Francis Group. – New York, 2017.

НЕКОТОРЫЕ ПРИНЦИПЫ ФОРМИРОВАНИЯ ЦЕПОЧКИ ЦЕННОСТИ ТУРИСТСКОГО ПРОДУКТА

Армине Матенцян

ЕУ, Кафедра туризма и новых технологий обслуживания

Статья посвящена рассмотрению понятия цепочки ценности туристского продукта и анализу принципов создания различных цепочек ценности на современном туристском рынке. Сегодня одной из основных тенденций развития мирового туризма является изменение поведения потребителей, в результате чего меняется структура традиционных цепочек поставок туристических продуктов, уступая место цепочкам спроса. Изучение ряда научных работ, посвященных цепочкам создания ценности в туризме, позволяет выделить три основных типа цепочек – по приоритету поставщика, посредника и потребителя. В статье предложена иная структура формирования цепочки создания ценности, основанная на принципе совмещения трех взаимно- и противоположнонаправленных горизонталей. Особое внимание уделено структуре звена посредников, современные трансформации которого в будущем могут привести к фактическому исчезновению офф-лайн посредников туристского бизнеса – туроператоров и турагентов, и беспрецедентному росту популярности он-лайн посредничества.

Ключевые слова: туристский продукт, цепочка создания ценности, цепочки поставок и спроса, организованный туризм, самостоятельный турист, он-лайн посредничество.

SOME PRINCIPLES OF TOURIST PRODUCT VALUE CHAIN FORMATION

Armine Matentsyan

EU, Chair of Tourism and New Technologies in Servicing

The article is devoted to the consideration of the tourist product value chain and the analysis of the principles of creating various value chains in the modern tourist market. Today, one of the main trends in the

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

development of world tourism is a change in consumer behavior, which brings to changes in the structure of traditional supply chains of tourist product, giving way to demand chains. The study of a number of scientific papers on value chains in tourism enables to distinguish three main types of chains according to the priority of a supplier, a reseller and a consumer. The article proposes a different structure of the value chain by combining three reciprocal and counter horizontals. Particular attention is paid to the structure of the chain reseller link, whose modern transformations may lead to the actual disappearance of off-line travel business intermediaries, i.e. tour operators and travel agents, and an unprecedented increase of popularity of the online mediation.

Keywords: *tourist product, value chain, supply and demand chains, organized tourism, an independent tourist, online mediation.*

Ընդունվել է տպագրության՝ 20.03.2019թ.

Գրախոսվել է՝ 15.04.2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

S. Սարգսյան

արժեքային համակարգը որպես կազմակերպության
կորպորատիվ մշակույթի բաղադրիչ3

H. Mahjoub

Blockchain and smart contracts ability to redefine business processes..... 12

M. Farzanegan

Designing practices for social media in businesses25

B. Tajfirouz

Econometric modeling for analyzing the relationship between female
labor force and human development index case study Armenia42

F. Khoshbakht

Iranians managers ethical issues under the economic sanction58

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հ. Գևորգյան, Ն. Խաչատրյան

Առցանց համալսարանական ուսուցման մոդուլի նախագծման
հիմնախնդիրները 69

Թ. Մանասերյան

Գիտության ժամանակակից մարտահրավերները տնտեսության
առաջընթացի ապահովման համատեքստում.....79

Ս. Գևորգյան

ՀՀ-ում էկոհամակարգային ծառայությունների վճարման մեխանիզմի
ձևավորման սկզբունքները92

Ա. Ճուղուրյան

Շրջանավարտի կարիերայի նախագծման կառավարումը բուհերում.....101

Ա. Հակոբյան, Ա. Մեջլումյան

Կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական
արդյունքների կառավարչական հաշվառման հիմնախնդիրները110

Ն. Կիրակոսյան, Հ. Անգտյան

Թիմային աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիները..124

Կ. Սարգսյան, Վ. Ղազարյան

Իմիջի ազդեցությունը կազմակերպության ռազմավարության
ձևավորմանը..... 135

Մ. Սիմոնյան

Ռազմավարական այլընտրանքների ընտրության հնարավոր
չափանիշները144

Ռ. Մանուկյան

ՀՀ գործադիր իշխանության մարմինների գործառույթային
վերլուծություն 153

Մ. Ֆրանգուլյան

Ստվերային տնտեսությունը որպես հարկային մարմնի
գործառույթների անարդյունավետ գնահատման արդյունք..... 162

Վ. Վահանյան

Ճգնաժամային կառավարման գործառույթների
առանձնահատկությունները172

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մ. Մուրադյան

Իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստների հարաբերակցության
հիմնահարցը..... 180

Վ. Թորոսյան

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման
իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում կրթության աշխարհիկության
լույսի ներքո 189

Վ. Պողոսյան

Մարդու կյանքը ազատ տնօրինելու իրավունքը, որպես կյանքի
իրավունքի բովանդակության կառուցվածքային տարր206

Ա. Թադևոսյան

Կամավոր սնանկության վարույթի առանձնահատկությունները
Հայաստանի Հանրապետությունում217

Ա. Բիշարյան

Տեղական ինքնակառավարման կազմակերպման հիմնահարցերը.
տեսագործնական վերլուծություն 227

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

К. Налчаджян

Локализация контроля: этнопсихологический аспект 242

Դ. Զամալյան

Ապրիլյան մարտերի ռազմաքաղաքական ռեսուրսը259

Ս. Թարջումանյան

Հոգեբանական դեպրիվացիայի հետևանքները և դրանց դրսևորումները անձի հոգեկան զարգացման գործընթացում.....266

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

A. Manukyan

The introduction of ted talks and its teaching peculiarities in esp classes.... 274

Շ. Հովհաննիսյան

Փոխաբերություն ոճական հնարի անգլերենից հայերեն թարգմանության խնդիրները գեղարվեստական գրականության մեջ (Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպի հիման վրա).....283

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Հովհաննիսյան

Քենդի-Դևիդի համաձայնագիրը որպես արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման առաջին քայլ295

Ռ. Մելիքյան

Միջազգային մեդիան որպես ժողովրդավարության բարձրացման միջոց304

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լ. Մատինյան, Հ. Աբրահամյան

Իշխանություն-ժողովուրդ հարաբերություններ (համեմատական վերլուծություն) 313

Մ. Եսոյան

Եգիպտահայ համայնքը «Արեգ» պարբերականի էջերում 2010-2015 թթ.328

Հ. Սուքիասյան

Խորհրդային Հայաստանում գործող օտարերկրյա ներկայացուցչությունները (1920-1922 թթ.).....339

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Օ. Гомцяң, Д. Мосояң

Цифровые фильтры нижних частот с переменными параметрами 352

С. Симонян, М. Адамян

К решению линейных однопараметрических систем конечных уравнений 361

А. Арутюнян

Моделирование теплового поля подложки интегральных схем371

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ա. Մատենցյան

Զբոսաշրջային արդյունքի արժեզրթայի ձևավորման որոշ սկզբունքներ 381

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38
Ֆաքս (374 10) 24 00 38
Վեբ կայք <http://www.eua.am>
Էլ. փոստ. info@eua.am

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Գ. Պետրոսյանի

Ստորագրված է տպագրության 30.04.2019թ.

Ֆորմատ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 25 մամուլ: Տպաքանակ՝ 100:

© ԵՀ գիտական հոդվածների ժողովածու, 2019

Եվրոպական համալսարան հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:

Հեռ.՝ (+374 10) 52-88-00:

E-mail: astghik59@gmail.com, www.astghik.am